

COLUMBIA LIBRARIES OFFSITE



CU58667300

892.9B88 O

Kristianasin ou Kris

Columbia University
in the City of New York

LIBRARY



J. Bunyan

ՔՐԻՍՏԻԱՆՈՍԻՆ

ՃԸՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ԸՍ

ԱՇԽԱՐՀԵՍ

ՀԱՆԴԵՐՁԵԱԿ ԱՇԽԱՐՀԸ,

ԵՐԸՋԻ ՁԵՒՈՎ :

Թարգմանիչստ- Ընդդիման բնագրին :



ԵՍՏՄԻՆ

Ն ԶՄԻՒՌՆԻՆ

Ն Տպարանի կուլիէմոս կռիֆիթի :

1843

Յօհաննէս Պընիանին լաբը :

Յօհաննէս Պընիան աս գրքիս հեղինակը խիստ նշանաւոր անձանց շատերուն պէս ստորին աստիճանի նախնիքներէ առաջ եկած էր : Իբ հայրը հասարակ թիթեղնագործ մըն էր , որ կրքնակէր Լ'նգղիայի մէջ Պէտֆօրտ քաղքին մօտերը : Բայց և այնպէս ինքը բարի անունի և աղէկ մտաց տէր մարդ էր . ինչու որ թէպէտ և ինքը իր զաւակը իրեն նըլաստ արհեստին հետեցունելու միտք ըրաւ , սակայն ջանաց որ կարդալու և գրելու մէջ ալ վարժըվէ տղան : Ըսկէց զատ հաւանական կրթութի ևս որ Պընիանին հայրը աշխատած է կանուխ տպաւորել անոր միտքը Վրիստոնէութեան սկզբունքներով . չէ նէ՛ երբոր իր տղայութեան հասակին երդումով ու հայհոյութիւնով իր ընկերներէն էվելի յառաջադէմ եղաւ , ան նշանաւոր երազները ու ան զղջումի դարձունող զգացումները չի պիտի պատահէին իրեն՝ որոնք որ ինքը կրպատմէ : “Շատ անգամ” (կրսէ ինքը՝) մէկ երկու օր մը մեղքի մէջ անցունելէս ետքը իմ անկողինիս մէջը քնացած ատենս մեծապէս կը շարշարվէի դեբրուն ու չար հոգիներուն վախով՝ որոնք կրկարծէի թէ անդադար կաշխատէին զիս իրենց հետը առնել տանելու” : Ըսանկ կը ստորագրէ ևս իրեն արթնութեան մտածութիւններուն մէկ քանինները : “Երբոր ես ինը կամ տասը տարեկան տղեկ մը էի՝ ունայնասէր ընկերներու հետ իմ տեսակ տեսակ խաղերուս ու տղայական ունայնութիւններուս մէջ տեղը շատ անգամ կը

134325

նուաճէի՝ ու մտքովս կըտառապէի, և սակայն շէի կրնար իմ մեղքերս ձգել” :

Ըհա ստիկա պատուական օրինակ մըն է ամէն Վրիստոնեայ ծնողքներուն, որչափ ստորին որ ըլլայ իրենց աստիճանը : Նոր՝ նողքներ՝ կանուխ սորվեցուցէք ձեր զակրներուն կարգալ ու գրել, ու կանուխ վարժեցէք զանոնք Վրիստոնէութեան մէջ . քանզի չէք գիտէր թէ Ըստուած որչափ կը կամի բարձրացունել զանոնք իրենց մեծնալուն . ոչ ալ գիտէք թէ ասանկ ընելովնիդ որչափ օգտակար ըլլալու կըպատրաստէք զանոնք :

Պընիան քանի որ կըմեծնար այրութեան հասակին կըհասնէր, էվելօք կըխստանար մեղաց մէջ . և մանաւանդ ինքրզինքը տըւած էր ստու թեան՝ անէծք կարգալու՝ երգում ընելու և Ըստուծոյ անունին հայհոյելու մոլորութիւններուն : Բայց և այնպէս իր խղճմտանքը միշտ քնացած չէր : Ետ անգամ իր երազին մէջը կըտեսնար որ երկինքը բռնկեր է, ու հաստատութիւնը ահարկու որոտումներու ձայնով կըպատուի ու կըջախջախիկոր : Արբեմն ինքրզինքը զուարճալիտեղ մը կըկարծէր՝ ուր որ հեշտութեան ու զուարճութեան մէջ կուրախանակոր, ու ետքը բուն իսկ աս երևակայական խնջոյքիս մէջը կըթըւէր իրեն թէ սոսկալի երկրաշարժութիւն մը կը պատուէր կըբաժնէր երկիրս, ուրկից դուրս կըլլային բոցեր՝ ու սարսափելի կերպով ճիչ բարձող և անիծաբանութիւն ընող մարդկային կերպարանքներ, որոնք իրեն ահաբեկեալ զգայարանքներուն առջևը հասարակաց դատաստանին օրինակը կընկրկայացունէին :

Իր կեանքին սո մասին մէջը նաև քանի մը անգամ հրաշալի կերպով մահուանէ ազատեցաւ, որ ետքը ան դիպուածները իբրև ոչորմութեամբ խառ-

ներված դատաստաններ կրսեպէր: Ընգամ մը Պէտ-
ֆօրտ քաղքին մօտը ()ս գետին մէջը ինկաւ նաւա-
կէ մը, ու մազ մնաց պիտի խեղդըվէր: Սրիշ ան-
գամ մը ծովը կըխեղդըվէրկոր: Ըսկից ետքը օր մը
ճամբան իր առջևէն իժ մը կանցնէր. ինքը գաւազա-
նով զարկաւ անոր, ետքը գաւազանովը ստիպեց որ
բերանը բանայ, ու իր մատներովը բռնեց գուրս քա-
շեց լեզուն՝ որն որ կարծեց օձին խայթոցը ըլլաւ:
«Ըս գործողութիւնովս (կրսէ ինքը) թէ որ Ըստ-
ուած ինծի չողորմէր, ես զիս իմ յանդգնութիւնովս
իմ վախճանիս պիտի հասցունէի»: Սէկ ուրիշ
նշանաւոր ազատութիւն մ'ալ իր 18 տարեկան հա-
սակին մէջը պատահեցաւ իրեն: Ընատենը Ընգ-
ղիայի մէջ քաղաքական պատերազմ կար, ու Պը-
նիան զինուորներուն մէկ կարգին մէջը գրված էր:
Լորբոր զինքը Լայսէսթրոի պաշարմանը պիտի խըր-
կէին՝ իր ընկերներուն մէկը ուզեց որ իր տեղը եր-
թայ: Պընիան հաճեցաւ իր տեղը անոր հետ փո-
խել, ու աս կամաւոր տեղակալը օր մը պաշարման
մէջը գիշերապահ ըլլալով՝ հրացանով իր գլխէն
զարնըվեցաւ ու մեռաւ:

Ըս դիպուածիս վրայ շատ չանցած Պընիան ա-
մուսնացաւ կին մը առաւ, որուն խոհեմ և բարե-
պաշտական խօսակցութիւնները ազու ներգոր-
ծութիւն մը ունեցան իր վարքին վրայ: Տեսէք որ-
չափ աղէկ բան է որ կանայք վարժըված ըլլան:
Սնաց որ ինքը տուն տեղ ըլլալու համար բան մը
չի պատրաստած՝ կամ մինչև անգամ անձնական
հանգստութեան վերաբերեալ բան մը չունեցած
ամուսնացաւ: Լորբոր իր կինը և ինքը մէկ տեղ ե-
կան՝ կարասիքի վերաբերեալ պնակ մը կամ դգալ
մը չունէին (կրսէ ինքը): Ըայց արհեստով թի-
թեղնագործ ըլլալով, կրկարծըվի թէ բոլոր իրեն

Հարկաւոր եղած աս կերպ կարասիքները չուտով շիտկած պիտի ըլլայ : Իր կնոջը բերած բոլոր պըռուցքը կը բազկանար միայն երկու հատ փոքրիկ Վըրիստոնէական գրքերէ : Բայց ասոնք հազարաւոր ոսկիներէն էվելի մեծագոյն օրհնութիւն մը եղան Պընիանին . ինչու որ իր կինը զինքը համոզելով անոնք կարգալու՝ ու յաճախ խօսելով անոր հետը իր հօրը բարեպաշտութեանը վրայ՝ որ Մտուածասէր մարդ մըն էր, անոր միտքը պառկեցուց անխափան եկեղեցի երթալ, ու հետզհետէ իր մովեկան ունակութիւնները ձգել :

Մ,ս իր բարեկարգութեանը օգտակար եղաւ ևս ան յանդիմանութիւնը՝ որն որ ինքը աս ատեններս մէկ խիստ վատանուն կնիկէ մը ընդունեց : «Մնգամ՝ մը երբոր դրացինի մը խանութ կայնած անէծք և հայհոյութիւն կընէի, (կըսէ ինքը,) տանը կնիկը լսեց իմ խօսքերս . և թէպէտ ինքը խիստ անառակ և ամբարիշտ թշուառական մըն էր՝ ըսաւ ինծի՝ թէ իմ ըրած խօսքերս լսելով կըսարսափիկոր . ըսաւ ինծի՝ թէ ես ամենաչար ամբարիշտ մէկն եմ իմ ըրած հայհոյութեանս համար՝ որ բնաւ իր կեանքին մէջը անոր նմանը լսած չէր ինքը . և թէ՛ ասանկ ընելովս քաղաքին մէջի բոլոր պատանիները պիտի աւրեմ թէ որ իմ հետս ընկերութիւն ընեն» : Մ,ս կնկանը յանդիմանութիւնը լաւագոյն անձէ մը եկած յանդիմանութեանէ էվելի ազգեց Պընիանին : Մնիկա լռեցուց զինքը և ամէցուց : «Ուստի (կըսէ ինքը) երբոր ան տեղը գլուխս կախած կայներէի, իմ բոլոր սրտովս կըսէի, Արանի թէ հիմայ պզտի տղեկ մը ըլլայի, որպէս զի իմ հայրս ինծի սորվեցունէր, աս չար հայհոյութեան ճամբովը չի խօսիլ» :

Մ,ս դիպուածիս վրայ շատ չանցած աղքատ մարդու մը հետ ընկերութիւն ընել սկսեց, որն որ իր

հետք կրխօսէր կրօնքի և Սուրբ գրոց վրայ ան կերպով՝ որ իր միտքը համոզեց, ու վնքը պարասուրեց Մատուածաշունչ կարգալու սկսել : Պլնիան սկսեց մեծ զուարճութիւն իմանալ անիկա կարգալովը, և մանաւանդ անոր պատմական մասերէն . քանզի առաքելոց թուղթերը տակաւին իր իմացողութենէն բարձր էին : Մսիկա բոլոր իր վարքին մէջը անանկ փոփոխութիւն մը պատճառեց՝ որ իր բարեկամները նոր մարդ կրսեպէին զինքը, ու իր անհնարին անառակութենէն բարոյական ու բարեպաշտական վարքի մը դառնալուն վրայ զարմանքով կը լինային : Սկսեցին իր վրայովը աղէկ խօսիլ, ու ինքը հետեապէս կը պուարճանար որ բարի համարում մը ստացաւ, և ինտոր որ ինքը կը կարծէր՝ անոնց իր վրայ նոյն բարի համարումը ունենալու արժանացաւ : «Վա սակայն ուրիշ բան չէի՝ (կրսէ ինքը,) բայց եթէ կեղծաւոր փարիսեցի մը . բոլոր իմ ըրածս հոն կընայէր՝ որ մարդիկ բարի խօսին անոր վրայ : Ոչ Վրիստոսը գիտէի՝ ոչ Շնորհքը և ոչ Հաւատքը և ոչ Հոյսը . և ինտոր որ հիմայ աղէկ իմացած եմ, թէ որ անատենը մեռնէի, շատ սոսկոյի եղած պիտի ըլլար իմ վիճակս» :

Մհնարին պիտի ըլլայ մեզի աս տեղս միքստմիտջէ պատմել անոր յառաջանալուն զանազան աստիճանները՝ մինչև որ ինքը լուսաւորեալ խոնարհ և զղջացող աշակերտ մը եղաւ մեր Տէր Հիսուսին : Խաւակած է ըսել՝ թէ Սուրբ գրոց ընթերցմունքը ու բարեպաշտ Վրիստոնէից հետ ըրած խօսակցութիւնները եղան աս իր զարմանալի փոփոխութեանը գլխաւոր միջոցները . և թէ՛ ինքը սատանային բազմաթիւ և աղէտալի ու մասնաւոր փորձութիւններուն տակը ինկաւ, ու անոնց տակը շատ անգամ գրեթէ յուսահատութեան ու խելացնու

րու թեան մէջ կիյնար ու անձնասպանութիւն ընել կրմտածէր : Բայց իր Լորկնաւոր Տէրը ասանկով զինքը կրպատրաստէրկոր ուրիշներուն երևելի օգուաններ գործելու . ու Լստուծոյ շնորհքովը բոլոր աս փորձութիւններուն մէջէն ապահովութեամբ անցաւ , ուրիշ իրեն պէս փորձըվողներուն իմաստուն վարժապետ ու առաջնորդ և մխիթարիչ ըլլալու համար :

Արօնքի մէջ իր հաստատութեանը վրայ՝ Սուրբ գրոց ծանօթութեանը ու հրապարակաւ անոնք բացատրելու կարող . ըլլալուն վրայ բաւական ապացոյցներ ըլլալէն ետև՝ Վրիստոսի Լեւտարանին քարոզիչ ձեռնագրըվեցաւ : Լստուած ամենակարող շատ հեղ տկար և անպատիւ անձերը կրնարէ՛ զօրաւոր ու պատուաւոր եղողները ամէջունելու համար : Լհա ասանկ եղաւ նաև աս խոնարհ թիթեղնադործիս ալ : Կառայական աշխատութենէ ու անարգ մեղքերէն կանչըվեցաւ Լստուծոյ մարդոց խրկած դեսպանը ըլլալու . ու Լստուած իր դեսպանութեան պաշտօնին յարմարցուց զինքը , ու իր պաշտօնին մէջը շատ երևելի եղաւ :

Պրնիան քարոզութեան սկսած ժամանակը Լնգղիսյի մէջ խիստ մեծագոյն քաղաքական ու եկեղեցական շփոթութեան ժամանակն էր : Արօնքի համարձակութիւնը ու խղճմտանքի ազատութիւնը սեպէ թէ անծանօթ էր անատենը : Սուտի Պրնիանին քարոզութիւնը ճշմարտութեան թշնամիներուն գայթակղութիւն ըլլալով շատ անիրաւութեամբ բռնեցին բանտը դրին զինքը , և հոն տառներկու տարիի չափ բանտարգեալ մնաց : Լս իրեն եղած անիրաւութիւնը ու անգթութիւնը կերևայ թէ կրկամի նշանակել՝ երբոր ինքը Սնայնութեան Ս աճառանոցին մէջը Էնուսալիցին վրայ եղած դատատանը կրպատմէ :

Սե՛ծ համբերութիւնով կրտանէր աս տաժա-
նակիր կալանաւորութեանս դժուարութիւնները՝
ինտոր որ ասանկ վիճակի մէջ կրվայլէ ամէն Վրիս-
տոնէի : Զոն իր ընկերներն էին՝ ան նոյն պատճա-
ռովը բանտարգրված քանի մը անձինք , իր քովը ու-
նէր իր Մտուածաշունչը՝ ու նախնի մարտիրոսնե-
րուն պատմութիւնը . ասոնցմէ զատ պատեհութիւն
ունէր նաև իր խորհուրդներուն վրայ որոճալ : Եր-
բեմն իր հետը բանտարգրված իր ընկերներուն կը
քարոզէր ալ , ու ասանկ անոնք և ինքը մէկտեղ ի-
րենց քաշած սաստիկ նեղութիւններուն տակը ե-
րանելի աւետարանին ճշմարտութիւններովը ու
խոստմունքներովը կը մխիթարվէին :

Բայց իր կալանաւորութեան ժամերը գործածե-
լու գլխաւոր գործիքը՝ իր գրիչն էր : Բանտին մէջն
էր որ ինքը ուրիշ մեծագին Մտուածաբանական
գործքերու հետ շարադրեց աս անմահ Մշակութանու-
թիւնը , որն որ հիմայ թարգմանութեամբ կը մա-
տուցանենք բանասէր Հայազգիներուն : Եւ բանտն
էր ան Վարայրը , ուր որ ինքը իր սքանչելի երազին
առջի խօսքին մէջ կըսէ թէ պառկեցաւ քնանալու ,
աշխարհիս անպատին մէջ պըտըտած ատենը :
Երբոր իր զուարճալի ու կրթութիւն տըող երազը
կը կարդանք ու կը վայելենք , գրեթէ պատրաստ
կը լանք ուրախանալու որ իր թշնամիները իր ազա-
տութիւնը առին ու զինքը ստիպեցին ձեռքը գրիչի
զարնել :

Բանտէն ազատելուն պէս անմիջապէս իր բարե-
կամները Պէտֆօրտի մէջ տեղ մը ծախու առին ու
իրեն համար եկեղեցի մը շինեցին , ուր որ ինքը կա-
նոնաւոր ամէն շաբաթ կը քարոզէր զինքը մտիկ ը-
նելու եկող բազմութեանը , առանց այլ ևս նեղու-
թիւն կրելու իշխանութեան տէր եղողներէն : Տա-

րին անգամ մը Նոնտոն կերթար, ուր որ շատ գովարանութիւն ընդունելով կը քարոզէր : Եւ յետեւ երևելի անձինք յաճախ կերթային լսելու իր քարոզութիւնը : Արարուս ք. Նեգղիայի թագաւորը, աս երևելի անձանց մէկին իր զարմացումը ցուցուց՝ թէ ինչպէս ինքը այնչափ մտաց և գիտութեան տէր մարդ ըլլալով թիթեղնագործի մը շաղակրատութիւնը մտիկ ընելու կերթար : Պատասխան տրուելուն միւսը՝ ըսելով . «Տէր թագաւոր, թէ որ կարող ըլլայի թիթեղնագործին ունեցած քանքարը ստանալ, տարապայման ուրախութեամբ պիտի հրատարէի բոլոր իմ գիտութեանէս» : Արթուրի թէ Պընիանին քարոզութեանը եղանակին մէջ յատկապէս բան մը կարոր ժողովուրդին միտքը կը յափշտակէր և անոնք իրեն կը հրապուրէր : Արկարծովի թէ իր օրովը Նեգղիայի մէջ ամէնէն էվելի ժողովրդոց հաճելի քարոզիչը ինքն էր : Արբոր ինքը Նոնտոն կերթար՝ իր հոն ըլլալուն համառօտ ազդարարութիւնը բաւական էր հաւաքել ունկնդիրներու խումուն բազմութիւն մը : Նեգղիայի մէջ սովորութիւն է որ ժողովուրդը կէս օրէն մէկ ժամ կամ երկու ժամ առաջ եկեղեցի կերթայ . բայց Հոսանէս Պընիանը մտիկ ընելու համար սովորութեանէն դուրս շատ անգամ հազար երկու հարիւր հոգիէն էվելի կը հաւաքէին առտրվանց արշալոյսէն առաջ, և ան ալ ձմեռվան մէջը, անձրևին ու ձունին մէջէն քալելով :

Ետեւեւալ փոքրիկ պատմութիւնը մէկէն կը ցուցնէ իր ճարտարաբանութիւնը իբրև քարոզիչ՝ ու յանձնապատանութեան դէմ իր զգուշաւորութիւնը : Մէկ օր մը երբոր ինքը մասնաւոր ջերմուանդութեամբ ու զօրութեամբ մը քարոզեր էր, եկեղեցին աւարտելէն ետքը իր բարեկամներուն

մէկ քանին իրեն եկան ու ըսին թէ ինչ անուշ քարոզ մը տըւեր էր ան օրը : Պընիան օրինաւոր անկեղծութեամբ պատասխան տըլաւ թէ, «Պէտք չէր ձեզի ատիկա կրկին իմ միտքս բերել . քանզի ես ամպիոնէն վար չիջած Սատանան ինծի զըուցեց ատիկա» :

Յօհաննէս Պընիան շատ հոգ ունէր հիւանդներուն ու նեղեալներուն այցելութիւն ընելու, ու խղճմտանքի պատճառով չարչարվողներուն օգնութիւն ընելով անոնց կարեկից ըլլալու . նաև հանապազ ջանք կրնէր իր Վրիստոնեայ եղբայրներուն մէջ եղած տարբերութիւնները համաձայնելու : Ըսանկ խաղաղութիւն ընելու պատաղած ատենն էր որ հիւանդութիւն մը եկաւ իր վրայ, ու զինքը գերեզմանը իջեցուց : Սէկ խիստ գէշ եղանակի մը տեղ մը գնաց՝ հօր մը ու որդիի մը մէջ տեղը եղած խռովութիւնը խաղաղելու, որոնց հետը քիչ մը ծանօթութիւն ունէր : Ըս մարդասիրական գործը յաջող կերպով աւարտելով յոնտոն դարձաւ՝ դրսըվանց առողջութիւնը տեղը ըլլալով . բայց որովհետև սաստիկ անձրևներու պատահեր ու բոլորովին թրջեր էր, շուտով ջերմութիւնով մը բռնըվեցաւ, որ տասը օրվան մէջ իր կեանքը վերջացուց () գոստոսի 12 ին 1688 ին, իր 60 տարեկան հասակին մէջը :

Ըս գիրքը Ընգլիարէն լեզուին՝ մէջ արդարապէս ամենընտիր գիրքերուն կարգը դասված է : Օմայլելով կըկարդացվի ու միշտ կըկարդացվէր միանգամայն գիտնականներէն ու ուսմիկներէն : Ըս բանաստեղծական գործքս ճարտարութեամբ յօրինված է՝ ու նկարագրութիւնները պատշաճապէս գրծագրված ու սքանչելի կերպով հաստատված են : Խոր պատմութիւնը անանկ պարզ և անար-

ուեստ կերպով մը կարգադրված է , որ ամէնէն ռամիկ անձին ալ դիւրիմանալի է . ու անոր գեղեցիկ օրինակներով ու նմանութիւններով ցուցված ճշմարտութիւնները խիստ ոգեշահ են , ու անմիջապէս Աստուծոյ բանէն հանած են : Անգղիարէն լեզուին մէջ աս գործքս անհամար անգամ տպագրուեցաւ , ու քաղաքավարեալ աշխարհի գրեթէ ամէն լեզուներուն թարգմանվեցաւ՝ և ամէնէն ալ միշտ ընդունվեցաւ :

Պընիան Վրիստիանոսին երկնային քաղաքը ճամբորդութիւնը բոլոր ժողովրդոց ընդունելի ըլլալ տեսնալովը քաջալերելով՝ երկրորդ գիրք մըն ալ էվելցուց իր առջի երազին վրայ , որուն մէջը կը ստորագրէ Վրիստիանոսին կնկանը ու ընտանեացը երկինքը ճամբորդութիւն ընելը , իրենց երկանը ու հօրը օրինակէն շարժելով : Աս երկրորդ մասն ալ շատ գեղեցիկ գիւտերով ու նկարագրութիւններով զարդարված է , որ յայտնապէս կըվկայէ նոյն ճարտար գրիչին գործը ըլլալ : Այց իր առջի երազը ան աստիճանը իմաստալից ու աղէկ յօրինված է , որ թէ իր միտքը և թէ նիւթը չէին վերցունէր երկրորդ մաս մը էվելցունել՝ որ յարմարապէս բաղդատվէր առջինին հետը : Ասն որոյ աս երկրորդ մասը շատ ստորին է առջինէն , և ան պատճառովը քիչ մը համառօտեցինք , թէպէտ և տեղ տեղ կան հատուածներ որ իրենց գեղեցկութեանը՝ յարմարութեանը՝ ու զօրութեանը պատճառովը գրեթէ անհամեմատ կոչվելու արժանաւոր են :

**ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՍԻՆ
ՃԵՄԲՈՐ ԳՆՈՒԹԻՒՆԸ,
ԵՐԵՅԻ ՁԵՒՈՎ**

Ընտարհիս անապատէն անցած ատենս մէկ տեղ մը հասայ՝ ուր որ քարայր մը * կար, և ան քարայրին խանոր մէջը պառկեցայ քրնանալու, ու քնացած ատենս երազ մը տեսայ: Երազես մէջը մէկը տեսայ՝ որ հինումին լաթեր հագած մէկ տեղ մը կայներ էր, երեսը իր տունէն դարձուցեր էր, ձեռքը գիրք մը ունէր ու կոնակը մեծ բեռ մը. Եսայ. 47. 6: Գլ. 1. 47. 33: Սող. 1. 4: Սէյմալ տեսայ որ գիրքը բացաւ ու սկսեց կարդալ: Կարդացած ատենը կուլար ու կըղողար մարդը, և չի կրնալով էվելն ինքըզնքը բռնել՝ ողբալի աղաղակ մը փրցուց՝

* Հեղինակը աս գիրքը գրեց Պետֆօրտի բանտին մէջ՝ ուր որ ինքը հաւատոյ համար բանտարդ ված էր:

լսելով , “ Ե՛նչ պիտի ընեմ ես ” * : Գործ .
 Բ . 37 : ԺԷ . 30 : Լ՛խալ . ան . 2 , 3 :

* Լսանկ է արթնցած մեղաւորին աղաղակը . որ կրտսնայ թէ իր արդարութիւնը աղտոյի լաթերու պէս է , իր հոգին բարկութեան ու թշուառութեան ենթակայ է՝ մշտնջենաւոր կորստեան տակ ինկած : Իր մեղքին բռնը իր կոնսկին վրայ զգալով՝ օգնութիւն մը գտնալու համար երես կը դարձունէ իր տունէն՝ իր անձէն՝ ու իր բոլոր սուտ յոյսերէն ու սնոտի ակնկալութիւններէն , ու Լստուծոյ Լսանը ձեռք կառնէ որ ցուցունէ իսկն թէ ո՛ր պարտի դիմել օգնութիւն ու փրկութիւն գտնալու : Սեղաւորը սրչափ որ կը կարգայ անիկա՝ այնչափ կը համոզվի որ իր պատուական անմահ հոգին թշուառ կացութեան ու կործանեալ վիճակի մը մէջ է , ու կը կարտի Վրիստոսի դիմել յաւիտենական կենաց ու փրկութեան համար : Կարդացած ատենը կուլայ ու կը դողայ , մտածելով թէ ի՛նչ պիտի ըլլայ իրեն : Կարգացող , քեզի ալ ասանկ պատահեցա՞ն մի երբէք : Տեսա՞ք երբէք քու մեղքերդ , ու զգացի՞ր անոնց ծանրութիւնը , անանկ որ՝ քու հոգիիդ անձկութեանը մէջ աղաղակէիր լսելով , Ե՛նչ ընեմ ես որ փրկը վի՞մ : Թէ որ՝ չի տեսար ու չպզացիր՝ աս պատուական գիրքը պիտի : Համարիս իբրև տառապել մը կամ պատմութիւն մը՝ որ ամենևին վերաբերութիւն մը չունի քեզի . անծանօթ լեզուով մը գրվածի պէս չի պիտի հասկընաս անոր նշանակութիւնը . ինչու որ՝ դուն տակաւին՝ մարմնաւոր ես՝ քու մեղքերուդ մէջը մեռած՝ չարին թեքրուն մէջը պառկած՝ սուտ ապահովութեան մէջ մեացած : Լայց աս գիրքը հոգևոր է . հոգևորապէս կենդա-

Նս վիճակին մէջը ժարդը իր տունը գընաց , և կրցածին չափ ինքըզինքը զսպեց որ իր կինը և զաւկընէրը իր նեղութիւնը չիմանան . սակայն երկան ատեն լուռ մնալու չի կրցաւ , ինչու որ իր նեղութիւնը կէվէնար : Սւտի վերջապէս իր միտքը իր կնկանը և զաւկընէրուն բացաւ , ու ստանկ սկրսեց խօսիլ անոնց : « Ս՛վ իմ սիրելի կինրս , և դուք՝ ս՛վ իմ որովայնիս զաւկընէրը , .ս՛ ձեր սիրելի բարեկամը , իմ վրաս ծանրըղած բեռի մը պատճառովը կործանած եմ : Ս՛էյմալ ստոյգ իմացած եմ՝ որ աս մեր քաղաքը երկինքէն իջած կրակով Վ. Կ. Կ. պիտի էրի . և անոր սոսկալի կործանմանը՝ ես՝ և դուն իմ կինս՝ և իմ անուշ զաւկընէրս , թշուառաբար պիտի կորսըվինք . միայն թէ կարելի է որ փախչելու ճամբայ մը գտնըվի՝ (որնոր դեռ ես չեմ

նացած հոգիները միայն կրնան հասկընալ ան , որոնք որ իրենց մեղքերը զգալով՝ կորսըվեն վախնալով՝ ու դատապարտութենէ զարհուրելով սկրսեցին սրտերնուն մէջը փրկութիւն ստանալ : Վ. Կ. Կ. սանկները՝ և միայն ասանկները կըսկըսին կործանման քաղաքէն երկնային թագաւորութեանը երթալու ճամբորդներ ըլլալ :

գիտեր,) որով կարող ըլլանք ազատիլ”* :
 Եւ խօսքին վրայ իր ընտանիքը մեծապէս
 զարմացան՝ չէ թէ անոր զրուցած խօսքերուն
 ճշմարտութեանը հաւտալով, հապա կար-
 ծելով թէ իր մտքին այլայլութիւն մը եկած
 է : Ուստի գիշերը մօտ ըլլալուն՝ և իրենք
 ալ յուսալով որ քունը իր միտքը կըհան-
 դարտէ, արտորալով զինքը անկողինը դրին † :
 Բայց գիշերն ալ ցորեկին պէս վշտալի էր
 իրեն . անոր համար քնանալուն տեղը՝ հա-
 ռաչանքով ու արցունքով անցուց անիկա :
 Եւ անկ՝ երբոր առտու եղաւ, ընտանիքը ու-
 զեցին գիտնալ թէ ինտոր էր : Ինքը սա-
 տասխան տըլաւ անոնց թէ, « Գէշին գէ-

* Պէտք է նկատել որ մեղքին ճշմարիտ ճանա-
 չումը Եւստուծոյ ըսածին ու Սուրբ Գրոց աստուա-
 ծային հեղինակութեանը հաւատալէն կըծագի :
 Սահը ու դատաստանը խղճմտանքին առջևը կը
 ներկայանան, Եւստուծոյ առջևը կայնելու ահաւոր
 հետեանքները անանկ պայծառ իր առջևը կը
 դրվին, որ բոլոր ուրիշ փոքրագոյն բաները՝ ան մի
 միայն հարկաւոր բանին հոգողութեանը մէջ կը
 թաղվին :

† Արբ որ կըսկըսինք փրկութեան համար իմաս-
 տուն ըլլալ, մարմնաւոր բարեկամները խելացնոր
 կըկոչեն մեզ՝ ու մեղքով հիւանդացած մեր հոգի-
 ներուն մարմնաւոր դեղ կըմատուցանեն :

ըր" * . ու ձեռք զարկաւ նորէն զանոնք յորդորելու , բայց անոնք սկըսեցին խստա նալ : Կաև մտածեցին որ իրեն չեխ տալով և խոժոռելով՝ իր մտքին հիւան շիտնդ զութիւնը մէկգի ընեն . երբեմն հոգիին հարկ զինքը կընախատէին , երբեմն կը նստար գեղ չեխէին , և երբեմն բոլորովին զինքը կըձգէին կերթային : Սատի սկըսեց առանձին իր սեն Եակը մտնալ անոնց համար աղօթք ընելու և անոնք կսկըծալու , ու նաև իր թշուառութիւնները ողբալու . ասկից ՚ի զատ կերթար առանձին դաշտերուն մէջը կըպըրտրտէր՝ երբեմն կարդալով և երբեմն աղօթելով , և քանի մը օր իր ժամանակը ասանկ անցուց ր :

* Սեղքին փրկարար ճանաչումները չեն կընար թոթվելի ու չեն կընար բժշկելի՝ բայց եթէ Վրիստոսի արիւնսովը : Ինչու որ որչափ բան որ պէտք է Մտուծոյ արգարութիւնը բաւականացունելու , նոյնչափ պէտք է նաև արթընցած իրդմ մտանքին խաղաղութիւն շնորհելու :

† Մշխարհասէր մարդոց անարգանքը Կամ բարկութիւնը՝ որ խղճմտանքով նեղութեան մէջ եզրղնեցուն կըցուցընեն , սովորաբար կըպատճառէ անոնց որ իրենց անհանգստութիւնը կըցածնուն չափ պահեն մինչև անգամ իրենց մերձաւորներէն . բայց ասիկա շուտով անհնարին կըլայ : Կաև մէկ մարդ մը որ իր խանդակաթ սիրոյն ա-

ՎՐԻՍՏԻՆՆՈՍԻՆ

էյմալ տեսայ որ օր մը դաշտերուն մէջ
պլտրտելով՝ (իր սովորութեանը պէս)

ուարկաները կրտսնայ թէ ծայրագոյն վտանգներու
ենթակայ եղած են՝ բայց չեն գիտեր իրենց վի-
ճակը , իր բնական սիրովը կրբռնադատի ազու օ-
րինակներ՝ խրատներ ու աղաչանքներ առաջ բե-
րել : Բայց անոնք Մտուծոյ Մանին տգէտ ըլլա-
լով՝ ու սորված չըլլալով իրենց վարքը Մտուծոյ
օրէնքին հետ բաղդատելու , ասանկ խօսքերուն
վրայ կըզարմանան . ու անոր տրված խրատները
ընդունելուն տեղը՝ սովորաբար յափշտակեալ
մտքի կամ յիմարութեան կընծայեն զանոնք . ու
ինտոր որ մարգարէները՝ առաքեալները՝ ու նոյն
ինքն Արդին Մտուծոյ Հիսուս իրենց ժամանակա-
կիցներէն երազող կամ խելացնոր անձինք կըհամար-
վէին նոյնպէս կըհամարվի հիմակվան հաւատաց-
եալը : Բնդհանրապէս նախ և առաջ իր մերձաւոր
ազգականները աս կարծիքը կըհաստատեն իր վրայ ,
ու զանազան հնարքներ կըծարեն իր միտքը հանգար-
տեցունելու . զուարճութիւններ՝ ընկերութիւններ՝
խնջոյքներ՝ բարեպաշտ բարեկամներէն կամ
գրքերէն ետ կենալ կըկարգադրեն . ու աս միջոց-
ներովս շատ անգամ իրենց նպատակին կըհասնին ,
ու մարդը սուտ խաղաղութիւնով մը հանդարտ
կըմնայ : Բայց երբոր մէկը մեղքին չարութեանը
ու անարգութեանը վրայ ճշմարիտ ճանաչում մը
կըստանայ՝ ասանկ միջոցները չէ թէ պիտի թեթե-
ցունեն հապա էվելցունեն անոր նեղութիւնը , ու
ետըր ան մարդը էվելջք պիտի զգայ թէ իր անձին
և թէ ուրիշներուն փրկութեանը վրայ : Մտկա
հասարակօրէն իր մերձաւորներուն նախապաշար-

ձեռքին գիրքը կրկարդար, և իր միտքը մեծ նեղութեան մէջ էր. ու կարդացած ատենը առջի անգամին պէս աղաղակ մը փրցուց ըստ լով. « Ի՞նչ պիտի ընեմ ես ոյ փրկը վիմ » * . Գործ. Ժ. 30, 31 :

Նաև տեսայ որ մէկ կողմը ու մէկալ կողմը կը նայէր, որպէս թէ փախչիլ ուզելով. և սակայն հանդարտ կայնէր էր, ինչու որ՝ (ինչպէս ես կարծեցի,) չէր գիտեր թէ ոյ կողմը երթայ : Մէյմալ նայեցայ՝ ու տեսայ որ մէկը կուգարկոր դէպի իրեն՝ անուներ Մ.

մունքը կը փորացունէ, ու խոտասարտութիւն կը բերէ անոնց վրայ. ու իրենց գթութիւնը կը դառնայ վրէժխնդրութեան, չար վարմունքի՝ անարգութեան կամ զանցառութեան : Ընմխիթար հաւատացեալը անատեն կը բռնադատի առանձնանալ, ու կը ջանայ թեթեցունել իր ծանրաբեռնեալ միտքը՝ Սուրբ Սիրքը կարդալով՝ ու իր ողբալի վեճակին վրայ մտածելով, ջերմեռանդ աղօթքներ ընելով և ս զինքը նախատողներուն համար. և ասանկ՝ արցունքով կը ցուցնէ ան սերմը՝ ուրկից անշուշտ պիտի պտղաբերի իր ապառնի ուրախութեանը հունձը :

* Ըոգի մը ան ատենը ճշմարտապէս կը ինդրէ իր փրկութիւնը՝ երբ որ իր սրտին մէջը կը սկսի դատապարտութենէ ազատելու համար աղաղակել :

ւետարանիչ , և ըսաւ . « Ինչո՞ւ համար կու-
լաս կողքասկոր դուն » * :

Պատասխան տրլաւ մարդը . « Տէ՛ր , ես
իմ ձեռքիս գիրքէն կիմանամ որ պիտի մեռ-
նիմ , ու անկէ ետեւ դատաստան պիտի ել-
լթամ . Լքչ . Թ . 27 . և կըզտնամ որ առջինը
ընելու կամք չունիմ , (Եւթ . Ժ . 21 , 22 . ու
երկրորդը ընելու յարմարութիւն չունիմ » † .
Լքչի . Իթ . 14 :

Ընատեն Մետարանիչը ըսաւ . « Ինչո՞ւ
համար կամք չունիս մեռնելու , որովհետեւ աս
կեանքս այսչափ չարիքներով լեցուն է » : Պա-
տասխան տրլաւ մարդը . « Ընոր համար որ
կըվախնամ թէ աս իմ կունակիս բեռը ‡ դե-

* Եկատէ աս տեղը թէ Վրիստոս՝ հոգիներուն
մեծ Հովիւր ու Տեսուչը՝ Մետարանիչը խրկելուն
ինչ գորովագութ սէր ու հոգ ունենալ կըցուցընէ
մեղսամակարդ ու ծանրաբեռնեալ մեղաւորներուն
վրայ : Մետարանիչը կընշանակէ աւետարանական
շնորհաց ու փրկութեան ուրախարար լուրին քա-
րողիչը :

† Դուսաւորեալ ու դիւրագգած մեղաւորին ճըշ-
մարիտ խոստովանութիւնը ասանկ է :

‡ Լորբոր Մստուծոյ Հոգին մարդուն սիրտը
յաղթահարէ իր կորուսեալ վիճակին վրայ , ան-
ատենը նոյն անձը կըզգայ մեղքին անտանելի ծան-
րութիւնը իր կունակը , ու կըզարհուրի Մստուծոյ

լեզմանէն ալ խորունկ տեղ մը զիս իջեցու-
նէ, ու ես խորունկ ձորին մէջը իյնամ .
Լուս. Գ. 33 : Եւ թէ որ տէր իմ, ես յարմա-
րութիւն չունենամ բանտը երթալու, դա-
տաստանի՞ և անկից դատապարտութեան ալ
երթալու յարմարութիւն չեմ ունենար . և
ահա աս բաներուն մտմըտութենէրը զիս կըլա-
ցունենն ” :

“ Թէ որ քու վիճակդ աս է՝ ըսաւ Լեւ-
տարանիչը, ինչո՞ւ համար հանդարտ կեցեր
ես ” : Պատասխան տըլաւ մարդը . “ Լեւոր
համար, որ չեմ գիտեր թէ ո՞ւր երթամ ” :
Լեւտանը միւսը ոլորած մագաղաթ մը տըլաւ
իրեն, որուն մէջը գրված էր՝ “ Կալու բար-
կութենէն փախիր ” * . Սուր. Գ. 7 :

Լըդ՝ մարդը կարգաց անիկա, և զգուշու-

բարկութենէն որ մեղքին դէմ յայտնըված է եր-
կինքէն :

* Լեւտարանը յաղթահարեալ մեղաւորը ա-
ռանց յոյսի ու օգնութեան ան թշուառ վիճակին
մէջը բնաւ չի թողուր՝ ուր որ անիկա կրգտնայ .
հապա ազատութեան ու փրկութեան համար (ի-
սուսը կը ցուցնէ անոր, որպէս զի իր անձէն ու իր
ներսը զգացած Լստուծոյ բարկութենէն Վրիս-
տոսի շնորհացը լիութեանը դիմէ, որ ‘Եւր Վրան
օրինակով նշանակված է :

Թեամբ Մեծարանիչին վրայ նայելով՝ ըսաւ .
 « Ո՛ւր փախչելու եմ » : Մեծարանիչը իր
 մատովը մէկ մեծ դաշտի մը միւս կողմը ցու-
 ցրնելով , ըսաւ . « Կըտեսնասկոր անտեղի
 նեղ դուռը » . ՍճԳ . Է . 13 , 14 : Սար . Վաստէ
 դը ըսաւ . « Ըէ » : Մնատենը միւսը Վրէի , ճրու-
 ըսաւ . « Կըտեսնասկոր անտեղի Գը ՍճԳ
 վառած ճրագը » * . ՍճԳ . ԸԺԺ . Վերէ
 105 . Ի ՊԵԳ . Թ . 19 : ըսաւ . « Կարծեմ թէ
 կըտեսնամկոր » : Մեծարանիչը ըսաւ . « Մչ
 քրդ ատ ճրագին վրայ պահէ , ու շիտակ
 դէպի անոր դնա , և պիտի տեսնաս ին
 դուռը . հոն՝ երբոր անիկա չալես , քեզի
 պիտի զըուցվի թէ ի՛նչ պիտի ընես » : Մ
 սանկ՝ երագիս մէջը տեսայ որ մարդը սկըսեց
 վազել : Վանք որ ինքը շատ չի հեռացած իր
 տունէն՝ կնիկը և զաւկըները բանը իմանա-
 լով սկսեցին իր ետեւէն կանչել որ գառնայ :
 Բայց մարդը մատերը ականջներուն դրաւ՝ և

* Մեծարանին միջնորդութեամբը միայն կը
 գտնուի Վրիստոս՝ ու իրեն երթալու ճամբան :
 Մեծարանը Վրիստոսի կողովէ՝ ու Սուրբ
 Հոգին սրտին մէջը կը ճառագայթէ , որով մե-
 ղաւորը Մտուծոյ Բանին մէջը կըտեսնայ Վրիս-
 տոս :

աւ .
ը
յու
ոեղի
ը
ը
թէ
Ն.Ն.
ուակ
ուն
շեղի
Ն.
սեյ
ը
նա
այ :
է .
կը
ան :
ը
մե
իս



առաջ կը վազէր ըսելով . « կեանք , կեանք , յաւիտեանական կեանք » . Վրդ . ԺԴ . 26 : Ասանկ ինքը ետին չի նայեցաւ , Նանդ . ԺԹ . 17 . հասպա վազեց զնոց դէպի դաշտին մէջ տեղը * :

Իբրացիները ևս դուրս ելան իր վազելը տեսնալու . Նրդ . Բ . 10 . և ինքը որ կը վազէր , ոմանք ծաղը կրնէին , ուրիշները իրեն կը սպառնային , և ոմանք ^{Վալու- Բարիտ-էն} ետեւէն կը կանչէին որ դառնայ : ^{Իւ Բարիտ-էն} ասանկ ընողներուն մէջը երկու հո ^{ըն աշխարհի} զի կային , որոնք վճռեցին երթալ ^{Խոյրատու} բռնութեամբ ետ բերել զինքը :

Մեկին անունը Պինտագլուխ էր , և մէկալինը Խոսքիպաուկող : Արդ՝ մարդը մինչեւ հիմայ աղէկ մը հեռացեր էր անոնցմէ , բայց սակայն անոնք միտքերնին դրեր էին իր ետեւէն

* Երբոր մեղաւորը կորստվելէն փախչելու կը սկըսի , մարմնաւոր ազգականները կը ջանան արգիլել զինքը . բայց խելացութիւնը մարմինին ու արիւնին յառաջ բերած տրամաբանութիւններուն դէմ սկանջնիս գոցելն է , բան թէ անոնց հետը վիճելը : Մեղաւորը՝ որ ճշմարտապէս իր փրկութեանը կը բազմայ , որչափ որ թախանձանք ընդունի աշխարհէն՝ այնչափ արագագոյն կը փախչի չի լսելու զանոնք :

իյնալ . և ասանկ ընելով քիչ ատենին մէջը իրեն հասան : Ընատեն մարդը ըսաւ . « Գըրացիներ , ինչո՞ւ համար եկաք » : Պատասխան տրւին թէ , « Ընոր համար որ քեզ ետ դառնալու համոզենք » : Բայց ան ըսաւ . « Ըտիկա անհնար է ըլլալ . դուք կը բնակիք կործանման քաղաքը , ուր որ ես ալ ծներ եմ : Ես կը տեսնամ որ անիկա ասանկ քաղաք մըն է . և կանուխ կամ ուշ հոն մեռնելով՝ գերեզմանէն ալ խորունկ տեղ մը պիտի իջնաք որ կրակով ու ծծումբով կերի . ուստի խօսքս բռնեցէք՝ սովիմ բարի դրացիներս , ու դձուք իմ հետս եկէք » * :

Ի՛նչ , ըսաւ Պինտզլուխը , մեր բարեկամները ու բարիքները եւեւնիս ձգենք հա՞՛ր :

Ը՛յ՛ , ըսաւ Վրիստիանոս , (քանզի աս

* Սեղքը ճանչցող ու կործանմանէ փախչող մեղաւորին հարազատ ոգին ան է՝ որ ուրախութեամբ կը յորդորէ ուրիշ խղճալի մեղաւորները իր հետը երթալու : Ըստուծոյ շնորհքը մէկուն սրտին մէջը սերմանվելուն՝ իսկոյն կը բուսնի , ու կը բերէ պտուղ ընկերսիրութեան :

† Երբոր աս աշխարհիս սէրը սրտին մէջը կիշխէ , ոչինչ օրինակներ կամ փաստեր կարող են համոզել մարդը լաւագոյն ժառանգութիւն մը փնտրուելու :

էր մարդուն անունը .) ինչու որ ան ձեր բոլոր ձգած բաները իմ վայելելու համար խնդրած բաներուս մէկ պզտի մասին հետը բաղդատվելու արժանի չեն . ք . Կրօն . 7 . 18 : Եւ թէ որ դուք իմ հետս երթաք՝ ու յարատեւէք , դուք ալ իմ վայելչութեանս մասնակից պիտի ըլլաք . քանզի հոն՝ ուր որ ես կերթամկոր , բաւական կայ և կէվելնայ ալ . Գլ . 1 . ԺԵ . 17 : Եւ իմ խօսքս փորձեցէք :

Պիւնդուլ-ի . Կու փնտրուած բաներդ ի՞նչ են , որ անոնք գտնալու համար բոլոր աշխարհը կրճգեսկոր :

Կրօնական . Ես անապական՝ անարատ՝ և անթառամ ժառանգութիւն մը կրփնտրուեմ , Ծ . Պի . Ծ . 4 . որնոր երկինքը գանձրված է և հոն ապահով կը կենայ , Եր . ԺԾ . 16 . որ սահմանված ատենը անիկա ջանքով խընդրողներուն տրվի : Ի՞նչ որ կուզես՝ իմ գրքիս մէջը անիկա կարդա և իմացիր որ սասնկ է :

Ս՛ա՛շ , ըսաւ Պիւնդուլ-ի , մէկդի՛ գնա քու գրքիդ հետը * . մեր հետը ետ պիտի դառնան թէ չէ :

* Ի՞նչ որ աշխարհասէր մարդոց հետ իրենց ճամբով վիճարանիս , խարէական փաստերով , ու տրա-

Վրիստինոս . Չէ , ես չի պիտի դառնամ ,
ինչու որ ես ձեռքս մածին վրայ դրի . Ղ . Կ .
Թ . 62 :

Պենագլուխ . Եկոր ուրեմն՝ Խօսքիպաուկող
դրացին , դառնանք մեր բնակարանը երթանք
առանց ասոր . ասոր պէս հիւանդամիտ խե-
լագարներու ընկերութիւն մը կայ , որ երբ
այլանդակ բանի մը ծարը փակչին նէ , մէկ
բանին պատճառները ցուցնող եօթը հոգիէն
էվելի իմաստուն են իրենց աչքին առջևը :

Անարգանքով մի խօսիր , ըսաւ Խօսքի-
պաուկողը . Թէ որ բարի Վրիստինոսին ը-
սածը ճշմարիտ է , իր փնտուած բաները մե-
րիններէն աղէկ են . իմ սիրտս կը հակիկոր որ
իմ դրացինիս հետը երթամ :

Պենագլուխ . Ի՛նչ , ա՛ն քեզի խելագար մըն
ալ . իմ խօսքս մտիկ ըրէ , ու ետ դարձիր .
ո՛վ գիտէ Թէ ասոր պէս խելագարը քեզ ո՛ւր
պիտի տանի : Ետ դարձիր , ետ դարձիր , ու
խելացի եղիր * :

մաքանութիւնով կը հոդնեցունեն քեզ : Բայց դիր
սուրբ Վիրքը իրենց առջևը՝ ու իսկոյն պիտի պա-
պանձին . ոչ սատանայ ու ոչ անոր ձեռքովը կու-
րացեալները Վստուծոյ բանին զօրութեանը դէմ
կրնան դիմանալ :

* Ա՛ն որ Վրիստոսի համար աշխարհի աչքին

դրացինս , և երկուքը մէկէն ճամբայ ելան :

Ես ալ ետ կերթամ իմ տեղըս , ըսաւ Պինտզլուխը . ես ասանկ ծուռ ճամբայ գացող խելագար մարդոց հետը ընկերութիւն չեմ ըներ * :

Հիմայ երագիս մէջը տեսայ՝ որ երբ Պինտզլուխը ետ դարձաւ , Վրիստիանոսը ու Խօսքիպաուկողը դաշտին վրայէն խօսակցելով կերթային , և իրենց խօսակցութիւնը ասանկ սկսեցին :

Վրիստիանոս . Եկորնայինք , Խօսքիպաուկող դրացին , ինչպէս ես : Ուրախ եմ որ խելքդ պաուկեցաւ իմ հետս երթալու : Թէ որ Պինտզլուխը ան գեռ չի տեսնըված բաներուն վախը ու զօրութիւնը ինծի պէս զգացած ըլլար , ասանկ դիւրութեամբ մեզ չէր ձգեր դառնար :

Խօսքիպաուկող . Եկոր , Վրիստիանոս դրա-

* Տես աս տեղը թէ աւետարանական ճշմարտութիւնները բնական մարդուն վրայ ինչ տարբեր զօրութիւններ ունին : Պինտզլուխը բոլորովին կը մերժէ զանոնք . Խօսքիպաուկողը ուրախութեամբ մտիկ կընէ անոնց , ատեն մը քիչ մը հաւատք կընծայէ անոնց , ու քիչ մը տեղ Վրիստիանոսին հետը կընկերանայ :

ցին , որովհետև երկուքէս ուրիշը չի կայ հոս , ըսէ ինծի թէ մեր երթալու տեղը ինչ մաներ կան , և ինչպէս պիտի վայլենք անոնք :

Վրէստիանոս . Ես չեմ կրնար այնչափ իմ լեզուովս անոնց վրայ խօսիլ , որչափ Մ. Ծայլն
որ մտօքս կիմանամ . բայց որովհետև Բաները
տև կը փափաքիսկոր գիտնալու , իմ անճառելի
զրքիս մէջը կարդամ անոնց վը էն
րայով :

Խօսակառու . Եւ կը կարծես թէ քու զրքիդ խօսքերը անտարակոյս ճշմարիտ են * :

* Ի՞նչ որ սուրբ Վիդքը իրաւ Մտուծոյ բանն է , պէտք է որ ճշմարիտ ըլլայ ան . բայց ասիկա ինչպէս պիտի ստուգվի : Խելացիները զօրաւոր փաստերով կը հաստատեն ան՝ որոնց բոլորովին անծանօթ են արթընցած հոգիներուն շատերը . (ինչու որ աւետարանը ըստ մեծի մասին տգէտներուն ու աղքատներուն կը քարոզվի .) և սակայն անոնք ունին սուրբ Վիդքերուն ճշմարտութեանը ամէնէն ստոյգ ու խիստ բաւականացուցիչ փաստերը : Խղճմտանքին վրայ ունեցած իր իշխանութիւնը ու զօրութիւնը , անոնց վիճակին՝ վախերուն՝ կարօտութիւններուն՝ յոյսերուն ու փափաքներուն յարմար գալը , իրենց սրտերէն անցած բոլոր բաներուն անվրէպ նկարագրութիւնը որ կը գտնան անոր մէջը , ու իրենց վերաբերեալ բոլոր բաներուն

Վրբիսպիանոս . Այո՛ , անշուշտ . քանզի աս
գիրքը շենողը ամենևին չի կրնար սուտ խօ-
սիլ . Տէրոս . Թ . 2 :

Խոսիպոստոլոզ . Պինտ աղէկ . ի՞նչ են ան բա-
ները :

Վրբիսպիանոս . Սէկ անվախճան թագաւո-
րութիւն մը կայ ժառանգելու , և յաւիտե-
նական կեանք մը մեզի տրվելու՝ որ յաւիտեան
ան թագաւորութեան մէջը բնակինք . Խոսյ .
Խե . 17 : (Յօհ . Գ . 27 , 29 :

Խոսիպոստոլոզ . Պինտ աղէկ . ուրիշ ի՞նչ
կայ :

Վրբիսպիանոս . Փառայ թաղեր կան մեզի
տրվելու , և անանկ հանդերձներ որ մեզ երկ-
նից արեգակին պէս պիտի փայլեցունեն : Թ .
Տէր . ք . 8 : (Յոյս . իք . 5 : Սոփ . Ժք . 43 :

Խոսիպոստոլոզ . Աս ըսածդ պատուական բան
է . և ուրիշ ի՞նչ կայ * :

Վրայ անոր ձգած լուսաւորութիւնը , անմերժելի ա-
պացուցութեամբ կրբաւականացունեն զիրենք թէ
Աստուծոյ ներշնչութեամբ տրված է ան :

* Երկինքը թագաւորութեան մը կամ վերոյի-
շեալ բաներուն նմանցունելը կրնայ մէկ թեթե-
տաւորութիւն մը ընել մարմնաւոր սրտին վրայ ,
որ կրզուարձանայ մտածելով թագերուն վրայ՝
փառաւոր հանդերձներու՝ նուագարաններու վը-

Վրիստիանոս : Հոն ոչ լաց և ոչ տրտմու-
թիւն պիտի ըլլայ . քանզի ան տեղին Տէրը
մեր աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ .
Եւայ . իԵ . 8 : (Եւայ . Է . 16 , 17 . իա . 4 :

Խօսիպոստոս . Եւ ի՞նչ ընկերներ պիտի ու-
նենանք հոն :

Վրիստիանոս . Հոն սերոբէներուն և քերո-
բէներուն հետը պիտի բնակինք մենք , Եւայ .
Է . 2 : ա . թի . 7 . 16 , 17 : (Եւայ . Ե . 11 . որոնք
անանկ ստեղծուածներ են՝ որ քու աչքերդ
պիտի խտտըղին իրենց վրայ նայելու : Հոն
նաև պիտի տեսնաս հազարաւոր և բիւրաւոր
անձինք որ մեզմէ առաջ ան տեղը զացին .
ասոնցմէ մէկը վնասակար չէ , հապա բոլորն
ալ ընկերասէր ու սուրբ են . ամէն մէկը
Լստուծոյ դէմը կրպրտըտի , և իր առջևը
կրկայնի , յաւիտեան իրեն հաճելի ըլլալով :
Մէկ խօսքով , հոն պիտի տեսնանք էրեցները

րոյ՝ ու ամէն ցաւերէ ու տրտմութիւններէ տղատ
վիճակի մը վրայ : Եւայց ասանկ անձը երկնից
ճշմարիտ երջանկութեանը՝ այսինքն Վրիստասի
փառքը տեսնալու՝ ու սրբութեամբ և սիրովանոր
նմանելու գաղափարը չունի : Սեղաւորը մինչև
որ շնորհքով չի նորոգվի՝ երկնից մէջը երջանիկ
չի կրնար ըլլալ թէ որ հնար ըլլար իրեն հոն
ըլլալ . իր երկինքը երկրիս վրայ է :

իրենց ոսկեղէն պսակներովը , (Յոյր . 7 . 4 .
 հոն պիտի տեսնանք սուրբ կոյսերը իրենց ոսկի քնարներովը , (Յոյր . 47 . 1 , 5 . հոն պիտի տեսնանք ան մարդիկը՝ որոնք ան տեղին Տէրոջը վրայ ունեցած սէրերնուն համար աշխարհիս ձեռօքը կտոր կտոր ջարդըվեցան , բոցերուն մէջը էրեցան , գազաններէն կերվեցան , ծովերուն մէջը խեղդըվեցան . ամէնը աղէկ , և անմահութիւնը իբրև հանդերձ վրանին հազած են . ք . Կրն . Ե . 2 , 3 , 5 :

Խօսքիպատուող . Եւ բաներուն լսելը անգամ բաւական է մէկուն սիրտը զմայլեցունելու : Բայց սսոնք պիտի վայլըվե՞ն մի : Ընտո՞ր մենք պիտի ժառանգենք անոնք :

Վրիստիննոս . Տէրը , ան քաղաքին կառավարը , աս գրքին մէջը պատմեց ան . Կոյ . ծԵ . 1 , 2 : () 5 . 7 . 37 : 7 . 37 : (Յոյր . 1ք . 6 , 17 . որուն բովանգակութիւնը աս է՝ որ եթէ մենք ճշմարտապէս անոնք ուզելու ըլլանք , ինքը ձրի պիտի տայ մեզի :

Խօսքիպատուող . Եւ ալ աղէկ՝ իմ բարի ընկերըս , ուրախ եմ ասանկ բաները լսելու . առաջ եկոր , քայլերնիս շուտով առնենք * :

* Տես աս տեղը ժամանակաւոր հաւատացեալին

Վրիստոս . Ես իմ կռնակիս բեռին պատ-
ճառովը ուղածիս չափ շուտով չեմ կրնար
երթալ :

Եւ միջոցին երազես մէջը տեսայ՝ որ ի-
րենց աս խօսքը լրմնցուցածնուն պէս , դաշ-
տին մէջերը տղմալից փոսի մը հասան . և
զգուշութիւն չընելովնին յանկարծ երկուքը
մէկէն ան ցելսին մէջը ինկան : Են փոսին ա-

մարմնաւոր ուրախութիւնը ու մարմնաւոր մտի-
թարութիւնը . ամենէին իր մեղքերուն բեռը զգա-
ցած չըլլալով՝ թեթևութեամբ երկար ճամբոր-
դութիւն ընելու կը յօժարի՝ բայց չի կրնար դիմա-
նալ : Վրիստոս Տէրն մեր ասանկեքը ապառաժ
քարի կրնմանեցունէ : Ուրախութեամբ կընդու-
նին Եստուծոյ խօսքը . բայց ան խօսքը իրենց սրը-
տերնուն մէջը արմատ չունի . ատեն մը կը հաւ-
տան , բայց փորձութեան ատենը կը հեռանան .
Պ 1 . շ . 13 : Եսանկ ըրաւ Խօսքի պառկողը (Յու-
սահատութեան փոսին մէջը : Ես փոսը կընշանակե-
ան մեզ նեղող յուսակտուր վախերը ու սիրտ կոտ-
րող երկբայութիւնները , որ կը ծագին Եստուծոյ
բանին հաւատք չընծայելէն՝ սատանային թե-
լադրութիւններէն՝ ու մեր ապականեալ բնութեա-
նը Եստուծոյ պատուական խոստմունքներուն ու
յայտնեալ ճշմարտութիւններուն դէմ առաջ
բերած մարմնաւոր փաստերէն : Եսոնք են մեր
յաղթահարվելուն ստուգութեանը՝ ու մեր հա-
ւառքին անկեղծութեանը փորձերը :

բաներու յուսալու ենք մինչև մեր ճամբուն վերջը : Ո՞ր էր որ կեանքս չի կորսնցուցած մէյմը դուրս ելլայի . իմ տեղս գուն ժառանգէ ան պատուական երկիրը” : Եւ ըսելով՝ բոլոր զօրութիւնովը մէկ երկու անգամ ջանք ըրաւ , ու տիզմին մէջէն դուրս ելաւ՝ փոսին ան կողմը որ իր տանը մօտ էր . այսպէս առաւ քալեց , ու Վրիստիանոս մէյմալ զինքը չի տեսաւ * :
 Ուստի Վրիստիանոս (Յուսահատութեան փոսին մէջը Թապըլտրկելու մինակ մնաց . բայց տակաւին կը ջանար և կաշխատէր փոսին ան կողմը երթալ՝ որ տունէն հեռու և ան նեղ դուանը մօտ կիյնար † : Ինչև իցէսա բանս ըրաւ , բայց կռնակի բիւին պատճառովը չի

* Ընդհանր չէ խօսքի պակտող ըլլալը . ինչու որ առջի պատահած փորձութիւնը իր եռանդը ցրտացուց՝ իր ուրախութիւնը դադրեցուց՝ իր հաւատքը խախտեց , ու ետ դարձուց զինքը Կործանման քաղաքը :

† Վրիստիանոս իր նեղութեանը մէջ տակաւին կը ջանայ իր տունէն հեռանալ : Տես ճշմարտապէս յաղթահարված մեղաւորին ու խօսքի պակտող չի յաղթահարված հաւատացեալին մէջը եղած տարբերութիւնը . մէկը իր երեսը Վրիստոսի կը դարձունէ յոյս և օգնութիւն գտնալու համար , մէկաւր կործանման քաղաքը կը փախչի հանգրստութիւն գտնալու համար :

կրցաւ տիղմին մէջէն դուրս ելլալ : Եւ միջոցիս երազիս մէջը տեսայ որ մէկը եկաւ իրեն՝
()գնական անունով * , ու հարցուց իրեն թէ
ինչ կընէկոր հոն :

Տէր իմ՝ ըսաւ Վրիստիանոս , Եւետարա-
նիչ անունով մէկը ինծի հրամայեց որ աս
ճամբան երթամ , ու նաև ան տեղի նեղ գու-
ռը երթալու շիտկեց զիս , որպէս զի գալու
բարկութենէն փախչելու կարող ըլլամ : Ես
ալ՝ որ դէպի հոն կերթայի , աս տեղս ին-
կայ :

()Գնական . Բայց ինչո՞ւ համար ոտք դնելու
աստիճանները չի նկատեցիր † :

Վրիստիանոս . Սխալը անանկ կը հալածէր
զիս , որ կարճ ճամբայէն շիտակ երթալով
մէջը ինկայ :

Չեւբդ ինծի տուր , ըսաւ ()գնականը .
ուստի ձեռքը անոր տրւաւ , և ան զինքը

* Վրիստոսի ամենակարող շնորհաց թերձողոր-
մելի մեղաւորները ապականութենէ ազատելու կը
հասնի :

† Ոտք դնելու աստիճանները պսիինքն՝ Եւստու-
ծոյ մեծ և պատուական խոստմունքները՝ որ Հի-
սուս Վրիստոսի միջնորդութիւնովը ողորմելի՝ կա-
րօտեալ ու տառապեալ մեղաւորներուն տրված են :



դուրս քաշեց՝ ու հաստատուն երկրի վրայ դրաւ, և հրաման ըրաւ որ իր ճամբան երթայ : Սուրբ. լԹ. 2 :

Անատինը ես Բրիստիանոսը տիրումէն հանողին քովը դացի և ըսի . « Տէր իմ , որովհետև կործանման քաղաքէն ան նեղ գուռը երթալու ճամբան աս տեղէն կանցնի , ինչո՞ւ համար աս տեղը չի շինվիր , որ խղճալի ճամբորդները ապահովութեամբ երթան հոն » : Եւ ինքը ինծի պատասխան տրւաւ թէ , « Ըստ տղմալից փոսը անանկ տեղ մըն է որ չի կրնար շինվիլ : Ըսիկա ցած տեղ մըն է , ու մեղաւորին ինքրդինքը պարտաւոր ճանչնալէն առաջ եկած փրկուրը և աղտեղութիւնը միշտ հոս կը վազէ . և անոր համար կը կոչվի (Յուսահատութեան փոս : Բանդի թէ և մեղաւորը իր կորստոված վիճակը իմանալով արթըննայ ալ նէ , իր սրտին մէջը շատ վախեր և երկբայութիւններ՝ ու զարհուրելի մտածութիւններ կը ծնանին , որոնց ամէնը մէկ կը լսան և աս տեղս կուգան կը լեան . և ահա աս տեղին ասանկ գէշ ըլլալուն պատճառը աս է : (Կազաւորը հաճութիւն չունի որ աս տեղը գէշ մնայ . Եսույ . ԼԵ. 3, 4 :

Իր գործակալները ևս՝ իր Տէրութեանը կառավարներուն կարգադրութիւնովը հազար վեց հարիւր տարիէն հետէ աս տեղիս վրայ աշխատեցան, որ ըլլայ թէ անիկա շտկեն նորոգին: Եւ իմ գիտցածիս նայելով՝ աս տեղս քսան հազար սայլի բեռ, մանաւանդ թէ միլիօնաւոր աւողջարար իւրատներ կըլլեց, որ (Թագաւորին սահմաններուն ամէն կողմերէն ամէն ատեն բերվեցան, (և անոնք որ ասանկ գործի վարպետ են՝ կրսին թէ, պինտ աղէկ նիւթեր են անոնք դետինը ամուրցունելու աղէկցունելու,) որ ըլլայ թէ աս տեղս շինվի . բայց դեռ ասիկա Յուսահատութեան փոս է, և ի՛նչ որ ընեն նէ նոյնպէս պիտի մնայ * :

“ Աշմարիտ է՝ որ ()բէնագիրին հրամանովը մինչև անգամ տիղմին մէջ տեղ փրկութեան ղը քանի մը աղէկ և հաստատուն խոստումներ աստիճաններ կան ոտք դնելու . ներք Վ. Կ. Գ. ”

* Եսիկա կընշանակէ թէ մեղանչական մարդուն անկեալ բնութեանը մէջ ուրիշ բան չի կայ՝ բայց երկիւղ ու յուսահատութիւն: Երբոր յոյսերնիս մեր անձերուն վրայ դրած ըլլանք, մեր ըրած ամենէն աղէկ բանը Յուսահատութեան փոսին մէջը կը թողու մեզ :

* Բայց անանկ տոենները՝ որ աս տեղս իր աղտեղութիւնը էվելօք կրփսխէ ինչպէս որ միշտ եղանակի փոփոխութիւններուն կրպատահի , աս աստիճանները հազիւ թէ կը տեսնըվին . կամ թէ որ տեսնըվին ալ նէ՝ մարդիկ իրենց գլխուն դառնալովը քովսնց կրկոխեն , ու անանկ՝ գիտնալով տիղմին մէջը կիյնան , թէպէտ և աստիճանները հոն են . սակայն անգամ մը դռնէն ներս որ մըտնան՝ ալ գետինը աղէկ է ” † :

Ասոր վրայ երազիս մէջը տեսայ որ հիմայ Խօսքիպառկողը իր տունը հասաւ : Ուստի իր դրացիները եկան զինքը տեսնալու , որոնցմէ ոմանք զինքը խելացի կրկոչէին ետ դառնալուն համար , և ոմանք յիմար կրկոչ

* Աղանակի փոփոխութիւնը ան ատենները կը նշանակէ՝ երբոր մասնաւոր փորձութիւններ մեղանջական կիրքերը գրգռելով նոր բարեպաշտութեան դարձողին միտքը կըշփոթեն :

† Առաջ Ահուս Վրիստոս մեր Տէրն է : Ամենին չենք կրնար գտնալ աղէկ գետին՝ կամ ապահով ոտքի վրայ կայնիլ՝ կամ հանգիստ քալել , մինչև որ հաւատքով Վրիստոսի ժառանգութեանը չենք մտնար , ու մինչև որ մեր ոտքերը չենք հաստատեր Վրիստոսի վրայ՝ որ Արարուն Ա էմը՝ Աստիտնական Ապաւէնն է :

չէին Վրիստիանոսին հետ զինքը վտանգի մէջ ձգելուն համար : Ուրիշներն ալ իր վախկոտութեանը համար վրան կը խնդային ըսելով : « Ընտարակոյս՝ ասանկ բանի մը սկըսելէն ետքը , ես չէի կամէր այնչափ տկար երևալ քանի մը դժուարութիւններու համար ” : Լյսպէս՝ Խօսքիպառկողը ամենալով անոնց մէջը նստաւ . բայց վերջը քիչ մը համար ձակութիւն առաւ , ու ետքը ամէնը մէկէն իրենց զրոյցը դարձուցին , ու սկըսեցին Վրիստիանոսին ետեէն զինքը նախատել : Եւ այսչափ հերիք ըլլայ Խօսքիպառկողին վերայով :

Հիմայ Վրիստիանոս մինակ ինքնիրէնը որ կերթար՝ հեռուն մէկը տեսաւ , որ դաշտին վրայէն կանցնէր գէպի իրեն կուգարկոր . և անանկ պատահեցաւ՝ որ մէկը մէկ կողմը և մէկայլը միւս կողմը երթալու համար մէկը զմէկու ճամբան կտրած տեղերնին իրարու հանդրպեցան : Եւ պարոնին անունն էր՝ Լ. Շխարհիկ Իմաստուն . ինքը կը բնակէր Սարմնաւոր ճարտարութիւն կոչված քաղաքը , որ Վրիստիանոսին քաղքին ճիշտ քովը կիշնար : Ուստի աս մարդը Վրիստիանոսին հան-

դրպիւով՝ ու անոր վրայով թեթև տեղեկու թիւն մը ունենալով , (քանզի Վրիստիանոսին կործանման քաղքէն ճամբայ ելլալուն համբաւը շատ ճանձրեմէր էր՝ չէ թէ միայն իր բնակած քաղքին մէջ , հապա նաև սկսեր էր ուրիշ տեղմանք ալ հասարակութեան բերնին խօսքը ըլլալ .) ու նաև անոր դրժուարին քալածքը տեսնալով , և հառաչանքը ու հեծութիւնը ու ասոնց նման բաները նկատելով՝ պարոն Աշխարհիկ Իմաստունը քիչ մը կարծիք ունեցաւ իր վրայ , և այսպէս սկսեց Վրիստիանոսին հետ քիչ մը խօսակցութեան մտնալ :

Աշխարհիկ Իմաստուն . Բարև քեզ՝ մարդ , ո՛ւր կերթաս ասանկ բեռնաւորված :

Վրիստիանոս . Իրաւ որ ասանկ բեռնաւորված , որուն պէս չեմ կարծեր թէ բնաւ բեռնաւորված էի խեղճ ստեղծուածս : Բայց որովհետև կը հարցունես ինձի՞ թէ ո՛ւր կերթամ , քեզի ըսեմ՝ տէր իմ , որ աս իմ առջև եղած նեղ դուռը կերթամկոր . քանզի հոն՝ ինչպէս որ ինձի զրուցվեցաւ , անանկ ճամբու մը պիտի դրվիմ , որ իմ ծանր բեռէս ազատիմ :

Աշխարհիկ Իմաստուն . Գուն կնիկ և զաւկընեւր
ունի՞ս մի :

Վրբիստանաս . Այո՛ ունիմ , բայց աս բեռին
տակը անանկ կըհեծեմկոր՝ որ չեմ կրնար
առ-Ջւքի պէս յօժարութիւն ունենալ անոնց
վրայ . ես զիս կըզգամ որ բոլորովին զրկեալ
մէկն եմ . Թ . կորն . է . 29 :

Աշխարհիկ Իմաստուն . Թե՛ որ ես քեզի խրատ
տամ նէ ինձի մտիկ կնե՞ս :

Վրբիստանաս . Թե՛ որ աղէկ խրատ ըլլայ՝
կրնեմ . ինչու որ ես աղէկ խրատի կարօ-
տութիւն ունիմ :

Աշխարհիկ Իմաստուն . Ուրեմն քեզ կըխրա-
տեմ՝ որ բոլոր ջանքովդ արտորաս դուն քեզ
բու բեռէդ ազատելու . քանզի քու միտքդ
բնաւ չի կրնար հանդարտիլ մինչև անատենը .
ոչ ալ Լստուծոյ քեզի տըւած բարութիւննե-
րուն օգուտը կրնաս վայելել , բայց միայն
անատենը :

Վրբիստանաս . Ես ալ ատ բանը կըվնտը-
ռեմ . այսինքն՝ աս ծանր բեռէն ազատ ըլ-
լալ . բայց չեմ կրնար ինքիրմէս անիկա
ձգելու , ոչ ալ մեր քաղքին մէջը մէկը կայ
որ իմ ուսերէս կրնայ վար առնել անիկա .

ուստի՝ ինչպէս որ քեզի ըսի, աս ճամբան կերթամկուր՝ որ իմ բեռէս ազատիմ* :

Եշխարհիկ Ինասպուան. Ո՞վ քեզի ըսաւ որ քու բեռէգ ազատելու համար աս ճամբան ելլ թաս :

Վրիստոսն. Սէկ մարդ մը՝ որ շատ մեծ և պատուաւոր մէկը երևաց ինծի : Սիրոքս կուգայ որ իր անունն էր Եւետարանիչ :

Եշխարհիկ Ինասպուան. Ենիծեալ ըլլայ ան մարդը իր տըրած խրատին համար : Եշխարհիս մէջը ասկից էվելի վտանգաւոր և դժուարին ճամբայ մը չի կայ որ քեզ մէջը դրաւ . և շատ բաներու պիտի պատահիս, թէ որ իր խրատովը երթաս : Դուն հիմակուց բանի մը պատահեր ես, ինչպէս որ կիմանամ . քանզի կրնայիմ որ Յուսահատութեան գոսին ցեխը վրադ է . բայց ատ ցեխը աս ճամբան քացողներուն պատահելու թշուառութիւններուն միայն սկիզբն է : Իս մտիկ ըրէ, ես քեզմէ ծեր եմ . դուն քու գացած ճամբուդ մէջը

*Նեղ դրանը նշմարանքը՝ կամ Վրիստոսի ձեռքովը մեղաց բեռէն ազատելու աղօտ տեսու թիւնը մեղաւորին մերժել կուտայ բոլոր ուրիշ ճամբաները, ու առաջ կըքշէ զանի դէպի Վրիստոսի միայն :

պիտի պատահիս նեղութեան՝ տառապանքի՝ անօթութեան՝ վտանգի՝ մերկութեան՝ սուրի՝ առիւծներու՝ վիշապներու՝ խաւարի , և մէկ խօսքով՝ մահի , և ինչի՞ ըսես որ չէ : Եւ բաները անտարակոյս ճշմարիտ են՝ և շատ վրկայութիւններով հաստատված : Եւ մէկ մարդ մը ինչո՞ւ համար անզգուշութեամբ ինքրզինքը պիտի կորսնցունէ օտար մէկուն խօսքը բռնեցով :

Վրիստինոս . Ի՛նչ կըսես դուն՝ պարոն , իմ կռնակիս բեռը ատ քու ըսած բաներուդ բռնորէն ալ էվել զարհուրելի է ինծի : Սնանակնդ ինծի կըթրւի որ հոգս չէ թէ ինչ բաներու կըպատահիմ ճամբուն մէջ : Թէ որ անոնց պատահելովս իմ բեռէս ալ պիտի ազատիմ* :

Եւջիարհիկ Իմաստան . Եւ այց ատ բեռը ուսկի՞ց քու վրադ առիլ :

Վրիստինոս . Եւ իմ ձեռքիս գիրքը կարդալովս :

Եւջիարհիկ Իմաստան . Եւ ալ անանկ կարծեցի † . և քեզի ալ ուրիշ տկար մարդոց է

* Եւսպէս է նոր բարեպաշտութեան գարձող Վրիստինոսին սրտին կազմութիւնը :

† Եւջիարհիկ Իմաստունը չախորժեր որ մարդիկ

զածին պէս եղաւ , որոնք իրենցմէ վեր եղած բաներու ձեռք զարնելով յանկարծակի շըփոթութեան մէջ կիյնան քեղի պէս : Ըսանկ շփոթութիւնները չէ թէ միայն տղայամիտ կրնեն մարդը՝ ինչպէս որ քուկդ կը տեսնամ թէ քեզի ըլաւ , հապա նաև անկարելի բաներու ձեռք զարնել կուտան անոնց՝ անանկ բաներ ստանալու որ իրենք ալ չեն գիտեր :

Վրէնսիտոս . Ես իմ ստանալու բանս գիտեմ , որ է իմ ծանր բեռէս ազատութիւն :

Երեսնակի Երեսնակ . Ես ինչո՞ւ համար աս ճամբովը ազատութիւն պիտի փնտրուես , տեսնալով՝ որ այսչափ վտանգներ կան անոր մէջը . մանաւանդ որ ես (միայն համբերութիւն ունիս նէ իս մտիկ ընելու ,) կրնամ քեզի առաջնորդել քու բաղձացածդ ստանալու , առանց ան վտանգներուն՝ որոնց որ դուն պիտի պատահիս աս ճամբուն մէջը : Ենաւանդ որ տեղն ալ պատրաստ է : Ես ալ ըսեմ , որ ան վտանգներուն տեղը՝ ասպահովութեան , բարեկամութեան , և բերկրութեան ալ պիտի պատահիս :

Վրէնսիտոս . Կաղաչեմ , պարոն , ատ ծասուրբ Վիրքը կարգալու ժրաջան ըլան :

ծուկը ինծի մեկնէ :

Ընտրելի Խմաստուն . Պինտ աղէկ . աս մօտը եղած գեղը՝ (գեղին անունը Վարեգործութիւն է ,) ազնուական մը կը բնակի՝ որուն անունը () ըինական է . ինքը շատ ճարտար և բարի անունի տէր մարդ է , որ քուկինիդ պէս բեռները մարդոց կունակէն թեթևցունելու վարպետ է . ու իմ գիտցածիս՝ ինքը աս ճամբով շատ բարիք ըրած է . ու նաև գիտէ բժշկել անոնք որ իրենց բեռներուն պատճառովը միտքերնուն քիչ մը խելագարութիւն եկած է * : Ընոր կրնաս դուն երթալ՝ ինչպէս որ

* Ընտրելի Խմաստունը էվելօք կընտրէ Վարեգործութիւնը՝ քան զՎրիստոս , որ է ան նեղ դուռը : Ըսիկա ճիշտ մարմինին տրամաբանութիւնն է : Սարմնաւոր միտքը միշտ կը հակառակի հոգևոր ճշմարտութեան : Ըստուծոյ օրէնքին յատուկ մեր հնազանդութիւն ընելովը արդարանալու կարծիքը միշտ հակառակ ներգործութիւն մը կընէ մեր ներսը , Վրիստոսի ըրած հնազանդութիւնովը արդարանալու ճամբուն : Ընձնական արդարութիւնը մարմինին ցանկութիւններուն տեղի տալու չափ հակառակ է Վրիստոսի հաւատքին : Ըռաջինը՝ ամբարտաւանութեան սպիտակ դէն է , երկրորդը՝ ապստամբութեան ու անհնազանդութեան սև դէն է : Տես մարմինին տրամաբանութիւններուն ականջ կախելու ահաւոր հետեանքները :

ըսի , և իսկոյն օգնութիւն գտնալ : Իր տունը ասկից լման մղոն մը հեռու չէ . ու թէ որ ինքը տունը չըլլայ , ինքը պատուական պատանի մը ունի որ իր որդին է՝ Վաղաքավարութիւն աւունով՝ որ գրեթէ կրնայ ընել ծերունի ազնուականին ըրածը : Վեզի ըսեմ հոն կրնաս դուն բեռեդ ազատութիւն գտնալ . ու թէ որ չես ուզեր քու առջի բնակարանդ դառնալ , (ինչպէս որ իրաւ ես ալ չեմ ուզեր որ դառնաս ,) կրնաս քու կինդ և զաւկրներդ աս գեղը բերել տալ՝ ուր որ հիմայ պարսպ կեցած են տուները , որոնց մէկը չափաւոր գնով մը կրնաս առնել : Ատի լիքն ալ աժան ու աղէկ է հոն . և քու կեանքդ էվելի երջանիկ ընող բանը ան է՝ որ դուն անտեղը բարի դրացիներու հետ հաւատարմութեամբ և աղէկ կերպով պիտի ապրիս :

Աս խօսքերուն վրայ Վրիստիանոսը քիչ մը տարակուսութեան մէջ ինկաւ , բայց իսկոյն իր մտքովը որոշեց թէ , թէ որ աս պարոնին ըսածը ճշմարիտ է՝ խելացիութիւնը իր խրատը բռնելն է . և ասով իր խօսքը ասանկ առաջ տարաւ :

Վրիստիանոս . Տէր իմ , աս բարի մարդուն

քաղքին պարխսպին դուրսը քեզ գտայ՝ որ
կուլայիր :

Վրիստիննա . Ե՛յո՛ , սիրելի՛ տէր իմ , ես
եմ ան մարդը :

Եւտարանիչ . Ես քեզ ան նեղ դուռը եր-
թալու ճամբուն մէջ չի դրի՞ մի :

Ե՛յո՛ , սիրելի՛ տէր , ըսաւ Վրիստիննա :

Եւտարանիչ . Ուրեմն ինչո՞ւ համար այսչափ
շուտով մէկդի դարձար . քանզի դուն հիմայ
ան ճամբայէն խոտորեր ես :

Վրիստիննա . Յուսահատութեան փոսը ան-
ցածիս պէս ազնուականի մը պատահեցայ , որ
իմ խելքս պառկեցուց թէ սա առջևս եղած
գեղին մէջը մարդ մը կրնամ գտնալ՝ որ կըր-
նայ իմ բեռս մէկդի տունել :

Եւտարանիչ . Ինտո՞ր մարդ էր ան :

Վրիստիննա . Ինքը ազնուականի մը պէս ե-
րկցաւ՝ * ու շատ բաներ խօսեցաւ ինձի , և

* Պէտք է զգուշանալ՝ որ մարդիկ իրենց կեր-
պարանքովը չի բռնենք : Արեւի է որ հեղ գառ-
նուկներու պէս երևան անոնք՝ բայց իրենց լեզուին
տակը իժերու թոյն ըլլայ , որով շատ հոգիներ ա-
պականեն վնասակար մոլորութիւններով ու չար
հերետիկոսութիւններով . ու ասանկ՝ Վրիստոսէն
ու միայն անոր միջնորդութեամբը եղած կատարեալ

Ճառովը ան նեղ դուռը կերթամկոր : որ հոն սորվիմ թէ ինչպէս կրնամ ազատութեան տեղը հասնիլ : Ուստի ըսաւ ինծի՝ թէ ինքը անկից լաւ և կարճ ճամբայ մը պիտի ցուցրնէ ինծի : որուն մէջը այնչափ դժուարութիւններ չի կան ինչպէս ան ճամբուն մէջ՝ ուր որ՝ տէր իմ , դուն զիս դըրիր : Աւ ըսաւ թէ աս ճամբան զիս մէկ աղնուականի մը տունը պիտի հասցունէ , որ շատ վարպետ է աս բեռները մէկդի առնել . այսպէս ես ալ իւրեն հաւտացի՝ և ան ճամբայէն աս ճամբան դարձայ , որ ըլլայ թէ ժամ մը առաջ իմ բեռէս ազատիմ : Իայց երբոր հոս եկայ՝ և եղած բաները տեսայ , (ինչպէս որ ըսի՝) վըտանգէն վախնալուս կանկ առի . և հիմայ չեմ գիտեր թէ ինչ ընեմ :

Անառն Աւետարանիչը ըսաւ . Հանդարտ կեցիր քիչ մը՝ որ Աստուծոյ խօսքերը քեզի ցուցրնեմ : Ուստի Վրիստիանոս դողալով կայնեցաւ . ետքը Աւետարանիչը ըսաւ . « Օգոյշ եղիք՝ չըլլայ որ ետ քաշվիք անկէց » ք յեզ Կե » կըխօսի . ինչու որ եթէ անոնք չի կրնացին խալըսիլ ետ կենալով անկէց՝ որ երկրի վրայ հրաման կուտար . հասլա ո՞րչափ

աւելի մեհք՝ Թէ որ երկնաւորին կունակ դարձունենք” . Եբր . ԺԲ . 25 : Կաւ ըսաւ . “ Իմ արդարս հաւատքէն պիտի ապրի . և Թէ որ մէկը երկու մտքով է՝ իմ անձս անոր չի հաւնիր . Եբր . Ժ . 38 : Եւ աս խօսքերը ասանկ անոր վրայ դարձուց Մետարանիչը . դուն ան մարդն ես որ Թշուառութեան մէջ ինչալու կրվագեսկոր : Դուն սկսեցիր Մեհնաբարձրեալին խորհուրդը մերժելու , և քու ոտքդ խաղաղութեան ճամբայէն ետ քաշելու . մինչև մազ մնաց որ պիտի կործանելիր * :

Հիմայ Վրիստիանոս մեռելի պէս իր ոտքը ինկաւ կանչելով . Ո՛ւյ ինձի , քանզի կորսրվեցայ : Ե՛ս որ տեսաւ Մետարանիչը՝ իր աջ ձեռքէն բռնեց և ըսաւ . “ Մէն մեղքերը ու հայհոյութիւնները մարդոց պիտի ներվին” . Սա . ԺԲ . 31 : “ Ե՛նհաւատ մի ըլլար , հապա հաւտացող” . Եփ . Բ . 27 : Ե՛նատենը Վրիստիանոս նորէն քիչ մը զօրացաւ :

* Տես Թէ որչափ վտանգաւոր է արդարանալու ու յաւիտենական կենաց համար Վրիստոսի հաւատալէն՝ սակաւիկ ինչ յատուկ մեր գործքերուն ապաւինիլը : Օգուշ կեցիր օրէնքին վարժապետներէն , ու բուն իսկ քու օրինասէր ոգիէդ :

և առջևքի պէս դողալով Աւետարանիչին առ-
ջևը կայնեցաւ * :

Ետքը Աւետարանիչը իր խօսքը առաջ
տարաւ՝ ըսելով . Օգոյշ կեցիք որ քեզի ը-
սելու բաներս աղէկ միտք առնես : Հիմայ
պիտի ցուցընեմ քեզի՝ թէ ո՛վ էր ան՝ որ քեզ
խաբեց , և ո՛վ էր ան՝ որուն որ քեզ խրկեց :
Ան քեզի պատահող մարդը Աշխարհիկ Ի-
մաստուն կըսվի , և ինքը իրաւամբ ասանկ
կոչված է . քիչ մը՝ միայն աս աշխարհիս
վարդապետութեանը համը ունենալուն հա-
մար , Թ. Գ. Դ. 5 . (որ նոյն պատճառովն
ալ Բարեգործութեան դեզը միշտ եկեղեցի
կերթայ .) և քիչ մալ՝ որ ան վարդապե-
տութիւնը ամէնէն աղէկ կըսիրէ , քանզի ա-
նիկա զինքը խաչէն կազատէ . Վաղ. Գ. 12 :

* Ակատէ աւետարանական շնորհաց փառքը
մեղաւորներուն վրայ . տես Վրիստոսի սքանչելի սե-
րը մեղաւորներուն համար մեռնելուն վրայ : Միտքդ
բեր թէ Վրիստոս ինչ գնով ստացաւ քու մեղ-
քերուդ թողութիւնը . իր ամենապատուական ա-
րիւնովը , ու չէ թէ անկից պակաս բանով մը : Հա-
ւատա՛ իր սքանչելի սիրոյն . ուրախացիր իր գործած
փառաւորեալ փրկութեանը վրայ : Ի՞ր սիրոյն մէջը՝
քու մեղքերուդ ատելութիւնովը՝ ու խոնարհ մտքով
ապրէ իր առջևը :

Եւ քանզի ինքը աս մարմնաւոր բնաւորութեան տէրն է, անոր համար կուզէ որ իմ ճամբաներս խանգարէ, թէ և անոնք ուղիղ են: Հիմայ աս մարդուն տըւած խրատին մէջը իրեք բան կայ, որոնք պարտիս բոլորովին ատել:

Եւ աջին՝ Ղամբայէն քեզ դուրս հանելը:

Երկրորդ՝ Խաչը քեզի ձանձրայլի ցուցընելու աշխատիլը:

Երրորդ՝ Վու ոտքերս մահուան ճամբուն մէջը դնելը *:

Եւ իս. Ղամբայէն քեզ դուրս հանելը, և մանաւանդ քու անոր հաճութիւն տալը պարտիս ատել: Վանզի ասիկա Եշխարհիկ Ե.

* Հոգին մինչև որ մեղքին չարութիւնը չի ճանչնայ, ու օրինականին վարդապետութիւնը կամ արդարանալու համար բոլորովին կամ ըստ մասին մեր գործքերուն յուսալը ու ապականիլը չի մերժէ, աւետարանական միսթարութիւնը չի կրնար վայելել: Օգուշ կեցիր օրինականին հետը բանի խառնըվելու, որ չըլլայ թէ առաջ շնորհքով արդարանալ որ սկըսեցիր՝ ետքը գործքով արգարանալու նայիս. ինչու որ ասիկա շնորհքը ու գործքը մէյտեղ խառնել է, մեր անարգ անձերը բարձրըցունելու՝ ու պատուական Վրիստոսը ու իր փառաւոր արդարութիւնը անպատիւ ընելու: Եւ գարշելի սխալմունքը մեծապէս տարածված է հիմակու ատենս:

մաստուն մարդու մը խրատին համար Աստուծոյ տրւած խրատը մերժել է : Տէրը կըսէ թէ, « Վանացէք նեղ դռնէն մոնալ », Ղուկ. ԺԴ. 24. որ իմ քեզ խրկած դուռս է ան : « Վանզի նեղ է դուռը որ կեանքին կըստանի, և քիչերը կը գտնան անիկա » . Սաղ. Է. 13, 14 : Ատ անօրէն մարդը քեզ փոքրիկ նեղ դռնէն ու անոր երթալու ճամբէն դարձուց, ու գրեթէ կործանման հասցուց քեզ . ուրեմն քեզ անոր ճամբայէն դարձունելը ատէ, և քու անձդ ևս ատէ՛ որ անոր մտիկ ըրիր :

Երկրորդ . Խաչը քեզի ձանձրալի ցուցը նեղու համար իր աշխատիլը պարտիս ատել . քանզի դուն անիկա Եգիպտոսի գանձերէն է վելի պարտիս յարգել . Երբ. ԺԵ. 25, 26 : Սանաւանդ որ փառաց Թագաւորը քեզի զըրուցեց՝ թէ ո՛վ իր կեանքը ազատել կուզէ նէ պիտի կորսընցունէ անիկա : Եւ ան որ իր հոռեէն կերթայ՝ ու իր հայրը և մայրը և կիներ և զակերները ու եղբայրները և քոյրերը և իր կեանքն ալ չատեր նէ չի կրնար իմ աշակերտս ըլլալ . Սաղ. Ը. 38 : Ես. ԺԲ. 25 : Սաղ. Ժ. 39 : Ղուկ. ԺԴ. 26 : Սատի քեզի ըսեմ՝ որ եթէ մէկը կաշխատի քեզ համոզել

լու թէ ան յաւիտենական կենաց հասցունող բանը մահուան պատճառ պիտի ըլլայ քեզի , ան վարդապետութիւնը պարտիս ատել :

Երբորդ • Վու ոտքերդ մահուան ճամբուն մէջ գնելը պարտիս ատել : Եւ աս բանիս պատճառովը պարտիս մտմբտալ թէ քեզ որի խրկեց , և ան մարդը սրչափ կարողութիւն չունի քեզ քու բեռէդ ազատելու :

Ըն մարդը՝ որուն որ խրկըվեցար ազատութիւն գտնալու համար , ()րինական կը կոչվի , և ինքը ազախինին որդին է , որ հիմայ իր զակըններովը ծառայութեան մէջ է , Գալ . ք . 21 , 27 . ու խորհրդաբար աս Սինա լեան է՝ որմէն վախցար թէ գլխուդ վրայ պիտի իյնայ : Երդ՝ թէ որ ինքը իր զակըններովը ծառայութեան մէջ է , ի՛նչպէս կըրնաս յուսալ անոնցմէ ազատութիւն գտնալ : Ուստի աս ()րինականը կարողութիւն չունի քեզ քու բեռէդ ազատելու : Սինչև հիմայ իր ձեռքովը բնաւ մէկը չի կրցաւ իր բեռէն ազատիլ , ոչ ալ բնաւ հնար է թէ ասանկ բան ըլլայ • դուք օրէնքին գործքովը չէք կրնալ արդարանալ • քանզի օրէնքին գործքերովը մէկ կենդանի մը իր բեռէն չի կրնար ազատիլ :

Ուստի պարոն Աշխարհիկ Իմաստունը օտարական մէկն է, և պարոն ()ըինականը խաբեբայ մըն է: Այլ իր որդին Վաղաքավարութիւնը՝ Թէպէտ և ծիծաղ երես կերևայ, բայց ուրիշ բան չէ՝ հապա կեղծաւոր մը, ու չի կրնար քեզի օգնել: Հաւատա ինծի՛ որ աս ցնորեալ մարդոցմէն լսած բոլոր շըշունջիդ մէջը ուրիշ բան չի կայ՝ հապա իմ դրած ճամբէս քեզ դարձունելով քու փըրկութենէդ քեզ դատարկ հանել է իրենց դիտաւորութիւնը: Ասկից ետքը Աւետարանիչը բարձր ձայնով մը ազաղակեց դէպի վեր ելկինքը, որ իր ըսածներուն հաստատութեանը համար նշան մը ցուցվի. և անոր վրայ՝ անանկ խօսքեր ու կրօն ելաւ ան լեռնէն՝ որուն տակը կայներ էր ողորմելի Վրիստիանոսը, որ անոր մարմինին մազերը կայնեցուցին: Ան խօսքերը ասանկ զըուցվեցան. «Անոնք՝ որ օրէնքին դործքերէն են, անէծքի տակ են. քանզի գրված է՝ Անիծեալ է ան ամէնը՝ որ օրէնքին մէջը գրված բոլոր բաներուն մէջը չի կենար անոնք ընելու» * . Վաղ. 7. 10:

* ()ըինականութիւնը անառակութեան պէս մեծ թշնամի մըն է Վրիստոսի խաչին, ինչու որ արգելք

Հիմայ Վրիստիանոս ուրիշ բանի յոյս չունէր՝ բայց միայն մահուան , ու սկսեց ողբալ ձայնով լալ . և Մշխարհիկ Իմաստունին դէմը ելած ժամը կանխօժէր , ու հազար անգամ յիմար կրկոչէր զինքը որ անոր խրատին ականջ դրաւ : 'Վաւ մեծապէս կամըջնար , մտածելով՝ որ ան պարոնին խօսքերը՝ որ միայն մարմնոյ կողմանէ առաջ եկած էին , այնչափ ուժգին ներգործած ըլլան իրեն որ պատճառեն շիտակ ճամբան երեսէ ձգել : Եւ բաներէն ետև նորէն սկըսեց Մետարանիչին հետը խօսակցիլ աս հետևեալ կերպով :

Վրիստիանոս . Տէր իմ , ի՞նչ կրկարծես , արդեօք յոյս կայ մի . կրնամ մի հիմայ ետ դառնալ ու ան նեղ դուռը ելլալ : Արդեօք աս իմ ըրածիս համար երեսէ չի պիտի՞ ձրգվիմ , ու ամօթով չի պիտի՞ ետ խրկըվիմ ան

կըլլայ հոգիին՝ որ թողութիւն գտնալու համար Վրիստոսի արիւնին՝ ու արդաբանալու համար Վրիստոսի արդարութեանը դիմէ ու հաւատայ ու բողոքովին ապաւինի . անանկ որ՝ հոգին գերութեան վիճակի մէջ կըպահէ , ու միտքը ամբարտաւանութիւնով կըփքացունէ . բայց անառակութիւնը խաչին վրայ նախատինք կըբերէ :

կից : փոշիման հմ որ աս մարդուն խրատին լսեցի . բայց արդեօք իմ մեղքիս թողու թիւն կրլւայ մի :

Պատասխան տրւաւ Նւետարանիչը ըսելով իրեն . Վու մեղքդ շատ մեծ է , ինչու որ դուն անով երկու չարիք գործեցիր : Վուն բարի ճամբան ձդեցիր , որ արգելեալ ճամբաներուն մէջ քայլես : Սակայն և այսպէս ան դուռը կեցող մարդը կրնդունի քեզ , քանզի ինքը մարդոց վրայ բարի կամք ունի . միայն թէ զգուշ կեցիր՝ որ մէյմալ չի խոտորիս , որ չըլլայ թէ « ճամբուն մէջը կորսըվիս , երբոր անոր բարկութիւնը քիչ մը բորբոքի » . Սաղ. ք. 12 : Ննատենը Վրիստիանոս պատրաստըվեցաւ ետ գառնալու , ու Նւետարանիչը զինքը պագնելէն ետև՝ երեսին ծիծաղեցաւ , և բարի յաջողութիւն խնդրեց : Նյսպէս Վրիստիանոս սկսեց արտորնօք առաջ երթալ . ոչ ինքը ճամբուն վրայ մէկուն բան մը խօսեցաւ , ոչ ալ թէ որ մէկը բան մը հարցուներ նէ իրեն պատասխան կուզէր տալ : Նուաջ կերթար ինքը իբրև մէկ մարդ մը՝ որ ոտք կոխելու արգիլված գետնի վրան կըքայլէ միշտ , և մէկ կերպով մը ազատ ա



պահով ըլլալ չէր կարծէր զինքը՝ մինչև որ նորէն եկաւ ան ճամբան հասաւ որնոր Մշխարհիկ Իմաստունին խրատին հետեւելով ձգեր էր : Եւ թանկ՝ տոենէ մը ետև ան նեղ դրանը քով ելաւ : Գրանը վրայ գրված էր՝ « Զալեցէք , ու պիտի բացվի ձեզի » . Սոփ . է . 7 :

Վ անորոյ Վրիստիանոս մէկ երկու անգամէն էվելի չալեց անիկա՝ * ըսելով .

Կրնայ ըլլալ որ հոս ներս մտնայի ,
կրբանայ հիգոյս արդեօք ներսինը ,
թէ և անարժան ապստամբ մ' էի .

Բայց յայնժամ վերը պիտ' օրհնեմ զինքը :

Վ Էրջապէս մեծարու մարդ մը դուռը եկաւ՝ որուն անունը Բարեկամութիւն էր , ու հարցուց թէ ո՞վ կայ հոն , և ո՞ւրկից եկաւ , և ի՞նչ կուզէ :

Վրիստիանոս . Հոս ողորմելի բեռնաւորված մեղաւոր մը կայ . ես կործանման քաղաքէն եկայ , բայց Սիօն լեւը կերթամկոր՝ որ գա-

* Սէկ երկու անգամ դուռը չալելը կրնշանակէ հաւատքով յաճախ աղօթել ու աղաչել Մատուծոյ՝ որ Յիսուս Վրիստոսի արիւնին միջնորդութիւնովը ողորմի ու թողութիւն շնորհէ մեղքերուն :

լու բարկութենէն ազատ մնամ : Աստի՛ Տէր իմ , որովհետև տեղեկացած եմ՝ թէ հոն երթալու ճամբան աս դռնէն է , կուզեմ իմամանալ թէ կրկամի՞ս զիս ներս առնել :

Բոլոր սրտովս կրկամիմ * , պատասխան տրլաւ ծերունին , և ան խօսքովը գուռը բացաւ : Այլբոր Վրիստիանոս ներս մտնալու վրայ էր , մարդը արտորնօք քաշեց անիկա † : Վրիստիանոս հարցուց թէ , Ի՞նչ կրնշանակէ ատ ըրածդ : Պատասխան տրլաւ իրեն միւսը . Ես դռնէն քիչ մը հեռուն մէկ ամուր պարիսպ մը շինված է , ու յարանան ըրուն տէրը Բէեղզեբուղն է . անկից թէ ինքը և թէ իր ընկերները աս դուռը ելլողներուն վրայ նետեր կրնետեն , որ ըլլայ թէ ներս

Սարգանան
կը նախանջի
նէր գրու-
նէն մորտու
նէրուն վե-
րայ :

* Միտը կոտրած մեղաւորներուն կրբացվի գուռը : Տես աս տեղը (Նիսուսի սէրը՝ թէ իրեն դիմող ամէն խեղճ մեղաւորները ինչպէս յօժարութեամբ ու սրտանց կրնդունի : Ըոգ չէ անոնց որչափ անարգ ըլլալը , ոչ ալ անոնց ինչ մեղքեր գործելը . յօժարութեամբ կրսիրէ՝ ու բարեգթութեամբ կրնդունի զանոնք . ինչու որ ուրիշ բան չունի՝ բայց բարեհաճութիւն անոնց վրայ : Ենոր համար երկնից զօրութիւնները իր ծննդեանը կերգէին՝ “ Ի մարդիկ հաճութիւն” . Պ ուկ . ք . 14 :

† Աւրաբանչիւր փրկեալ մեղաւոր Վրիստոսի

չի մտած մեռցունեն անոնք : Ընտանը Վրիստիանոս ըսաւ . կուրախանամ և կըշողամ ես . այսպէս ներս մտնալէն ետքը դրանը պահապանը հարցուց իրեն՝ Թէ ո՞վ զինքը հան խրկեց :

Վրիստիանոս . Ընտանը հրամեց ինձի որ հոս գամ և չալեմ , ինչպէս որ ըրի . ու ըսաւ Թէ դուն կըզրուցես ինձի՞ տէր իմ , Թէ ինչ պարտիմ ընել :

Բարեկան-Բիւն . Սէկ բաց դուռ մը կայ քու առջևդ , և մէկը չի կրնար գոցել անիկա :

Վրիստիանոս . Հիմայ կըսկըսիմկոր իմ քաջածներուս պտուղը քաղել :

Բարեկան-Բիւն . Բայց ինտո՞ր եղաւ որ դուն մինակ եկար :

Վրիստիանոս . Ընոր համար որ իմ դրացիներուս մէկը իր վտանգը չի տեսաւ , ինչպէս որ ես իմս տեսայ :

Բարեկան-Բիւն . Ընոնցմէ մէկը քու գալը իմացա՞մ մի :

Վրիստիանոս . Ըյո . առաջ իմ կինս և

մարդասէր ձեռքովը կրակէն քաշված կիսայրեաց փայտ մըն է :

զակերներս տեսան , ու ետեւս կանչեցին որ
ես դառնամ . նաև դրացիներէս մէկ քանին
ալ կայներ ետեւս կրգոչէին ու կրկանչէին
որ դառնամ . բայց ես մատներս ականջնե-
րուս դրի , և անանկ իմ ճամբաս եկայ :

Բարեկամ-իւն . Բայց անոնցմէ մէկը ե-
տեւեդ չեկա՞ւ , որ խելքդ պառկեցունէ քեզ
ես տանելու :

Վրիստիանոս , Ե՛յո՛ . Պինտզլուխը և Խօս-
քիպառկողը եկան . բայց երբոր տեսան թէ
չի կրցան յաղթել , Պինտզլուխը ծաղրա-
բանութեամբ ետ դարձաւ , ու Խօսքիպառ-
կողը հետս քիչ մը տեղ եկաւ :

Բարեկամ-իւն . Բայց ինչո՞ւ բոլոր ճամբան
հետդ չեկաւ :

Վրիստիանոս . Իրաւ երկուքս մէկ տեղ մինչև
Յոլասահատութեան զոսը եկտնք , և յան-
կարծ անոր մէջն ալ ինկանք : Բայց անա-
տենը Խօսքիպառկող դրացինիս սիրտը կտ-
րեցաւ , և չուզեց որ առաջ գայ * : Ուստի
իբ տանը մօտ ինկած կողմէն նորէն դուրս

* Սէկ մարդ մը երկինքը երթալու ելլալուն կա-
րելի է որ ընկեր ունենայ , և սակայն ինքը մինակ
հոն երթայ : « Կանչըվածները շատ են , բայց ընա-
րըվածները քիչ » . Սոփ . ի . 16 :

ելլալով՝ ըսաւ թէ ան պատուական երկիրը իր տեղը մինակ ես ժառանգեմ : Այսպէս ինքը իր ճամբան գնաց , ու ես իմ ճամբաս եկայ . ինքը Պինտզլուխին ետեէն , ու ես դէպի աս գուռը :

Բարեկուսքիւն . Ափսոս , խղճալի մարդ . երկնաւոր փառքը այսչափ քիչ յարգութիւն ունի իր քովը , որ արժան չի սեպեր քանի մը դժուարութիւններ քաշելով անիկա ստանալ :

Ապաքէն խօսքիպառկողին վրայ ճշմարիտը խօսեցայ , ըսաւ Վրիստիանոս . և թէ որ իմ վրայովս ալ ճշմարիտը խօսիմ , պիտի երևայ որ անոր և իմ մէջս մէկ գերազանցութիւն մը չի կայ : Իրաւ ինքը ետ դարձաւ իր տունը գնաց , բայց ես ալ մահուան ճամբան երթալու խոտորեցայ , պարոն Աշխարհիկ Իմատուն ըսված մէկու մը մարմնաւոր խօսքերուն ախանջ կախելով * :

* Երբոր մէկուն սրտին մէջը ճշմարիտ շնորհքը թագաւորէ , խոնարհութեամբ բոլոր փառքը Աստուծոյ գերագոյն շնորհացը պիտի ընծայէ որ ինքը ուրիշներէն տարբերութիւն մը ունի : Աստուծոյ շնորհքը սրտին ամբարտաւանութիւնը կը սպաննէ՝ ու մեղաւորը կը խոնարհեցունէ , երբոր նոյն ատենը կը բարձրացունէ զՎրիստոս , ու անոր արգարութիւն

Բարեխան-Էին . Ի՞նչ կրեսս , ինքը քեզի պատահեցան մի . ինքը ուզած պիտի ըլլայ որ դուն պարոն () ըինականին ձեռօքը ազատութիւն փնտրուես : Եսոնք երկուքն ալ խաբէրայ են . բայց դուն իր խրատը բռնեցիր մի :

Վրէստինոս . Եւ յո բռնեցի , որչափ որ համարձակեցայ . ճամբէս դարձայ պարոն () ըինականը գտնալու , և այնչափ գացի՝ մինչև որ մտածեցի թէ անոր տանը քովը ինկած լեռը գլխուս պիտի փլէէր . ուստի հոն տեղը ստիպեցայ կանկ առնել :

Բարեխան-Էին . Եւ լեռը շատերուն մահուան պատճառ եղաւ , և ուրիշ շատերուն ալ մահուան պատճառ պիտի ըլլայ . աղէկ է որ անոր քեզ կտոր կտոր ջախջախելէն ազատեցար :

Վրէստինոս . Եւ դարև չեմ գիտեր թէ ինչ պիտի ըլլար ինծի ան տեղը , թէ որ բաղդ բանելով տրտմութիւններուս մէջ վարանած ատենս Եւտարանիչը նորէն չի պատահեր ինծի : Բայց Եստուծոյ ողորմութիւնն էր՝ որ ինքը նորէն եկաւ , չէ նէ բնաւ հոս դալիք

նոյն ու փրկութիւնովը յաղթող գտնովիլ կուտայ մեղաւորներուն :

չունէի ես : Սակայն հիմայ եկայ , անանկ մէկու մը պէս՝ որ ճշմարտապէս էվելօք արժանի եմ որ ան լեռը զիս մեռցունէր , քան թէ ասանկ իմ Տէրոջս հետ խօսելով աս տեղս կանգնէի : Բայց ո՞վ խնդութեանս , ինչ շը նորհք է աս ինձի , որ տակաւին թոյլտուութիւն կայ հոս մտնալու * :

Բարեկան-Բէն . Սենք մէկու մը դէմ չենք կենար . ամէն անոնք որ բոլոր իրենց առջի ըրածներնուն ետքը հոս կուգան , մէկ կերպով մը դուրս չեն ձգվիր . (Յօ. Է. 37 : Սատի՛ բարի Բրիստիանոս , իմ հետս քիչ մը տեղ եկոր , ու ես քու երթալու ճամբուդ վրայով քեզ տեղեկացունեմ : Բնջեղ նայէ . սա նեղ ճամբ

* Շ նորհաց հարազատ գործին ճշմարիտ նշանը ան է՝ որ սիրտը ամէն բան շնորհքի ընծայէ : Ղըմարիտ հաւատացեալը Մատուծոյ շնորհքը հաւատարմութեամբ կը գործածեմ ըսելով չի պարծենար իր ազատ կամքին կամ կարողութեանը բան մը չընծայէր , հապա իր կործանմանէ փախչիլը՝ ու տակաւին փրկութեան ճամբուն մէջ ըլլալը բոլորովին Մետարանական շնորհաց՝ Մյ ողորմութեանը՝ ու անոր ձրի պարգևին ու ամենակարող զօրութեանը կընծայէ : Բնուչ բան է մտածել (Յիսուսի ձրի շնորհացը վրայ , որ կը պարգևէ թշուառական ու անարժան մեղաւորներուն : Բնթերցող՝ ասանկ ըլլալ չե՞ս մի գտնար դուն :

բան կըտեսնասկոր : Ըհա ասիկա է քու երթալու ճամբարդ : 'Կահապետները' Սարգարէները՝ Վրիստոս և առաքեալները ատ ճամբայէն գացին . ու անիկա քանոնով շինվածի պէս շիտակ է . ահա աս է քու երթալու ճամբարդ :

Բայց հոն դարձուածներ ու պտոյտներ չի կա՞ն մի , որոնցմով օտարական մէկը իր ճամբան կորսընցունէ * , հարցուց Վրիստիանոս :

Բարեկամա՛ւիւն . Ըյո՛ , շատ ճամբաներ կան որ ասոր կըխառնըվին և անոնք ծուռ են ու լայն . բայց դուն այսպէս կրնաս ուղիղ ճամբան ծուռէն որոշել , որ ուղիղը շիտակ ու նեղ է . Սաք . է . 14 :

Ըս խօսքերուն վրայ երազիս մէջ տեսայ որ Վրիստիանոս նաև հարցուց՝ Թէ արդեօք իր կանակի բեռէն կրնայ մի Թեթևցունել զինքը : Վանդի դեռ չէր ազատեր անկից , և առանց օգնութեան ալ մէկ կերպով մը չէր կրնար ազատիլ : Սարգը պատասխան տըլաւ Թէ , Վու բեռիդ վրայով , պարտիս համբե-

* Վրիստիանոս կըվախնայ որ ճամբան չի կորսընցունէ . ասիկա շնորհազարդ սրտի մը երջանիկ նշանն է , որ իր անձին վրայով միշտ երկիւղի մէջ է :

ընէ մինչև որ ազատութեան տեղը հասնիս * .
բանդի հոն՝ անիկա ինքնիրենը քու կունակէդ
կիյնայ :

Անատենը Վրիստիանոս սկըսեց մէջքը ա-
մուրցունել , ու իր ճամբորդութիւնը ընելու
պատրաստըվել : Ասանկ միւսը իրեն զրուցեց
թէ դուռնէն խել մը հեռու երթալէն ետև՝
Սեկնիչին տունը պիտի հասնի . պարտի անոր
դուռը չալել , ու ինքը պատուական բաներ
պիտի ցուցընէ իրեն : Անատենը Վրիստիանոս
Սնաս բարով ըսաւ իր բարեկամին , և ան
բարի յաջողութիւն խնդրեց իրեն :

Ուստի յառաջ գնաց ինքը՝ մինչև որ Սեկ-
նիչին տունը եկաւ † , ուր որ կրկին և կրկին
չալեց դուռը : Ա երջը մէկը եկաւ դուռը , և
հարցուց թէ ո՞վ է ան :

Վրիստիանոս . Տէր իմ , ես ճանապարհորդ
մըն եմ , որ զիս աս տանը տէրոջը մէկ բարե-
կամը խրկեց հոս իմ օգուտիս համար . անոր
համար տանը տէրոջը հետ կուզեմ խօսիլ :

* Սիայն Վրիստոսի մահովը ու Լարիւնովը յան-
ցաւորութենէ ու մեղաց բեռէն ազատութիւն կը
ստացվի :

† Վրիստիանոս կուգայ Սեկնիչին տունը , որ կը
նշանակէ Սուրբ Հոգին՝ Աստուծոյ ժողովըդոցը ու-
սուցիչը :

Ուստի մարդը կանչեց տանըտէրը՝ որ քիչ մը ատենէն ետքը Վրիստիանոսին եկաւ, և հարցուց անոր թէ ի՞նչ կուզէ :

Տէր իմ, ըսաւ Վրիստիանոս, ես մէկ մարդ մըն եմ՝ որ կործանման քաղաքէն կուգամ ու Սիօն լեռը կերթամկոր. և աս ճամբուն գլուխը եզած դուռին մարդը ինձի ըսաւ՝ որ եթէ հոս գամ, դուն ինձի անանկ պատուական բաներ պիտի ցուցընես՝ որոնք ինձի օգուտ պիտի ընեն իմ ճամբորդութեանս մէջ :

Ընատեն Սեկնիչը ըսաւ. «Երս եկոր, և քեզի օգտակար եղած բաները ցուցընեմ * : Եւ յսպէս տանըտէրը իր ծառային հրաման ըրաւ որ ճրտող մը վառէ, ու Վրիստիանոսին ալ ըսաւ որ իր ետեէն նոս կըլտերթայ : Ետքը անիկա մէկ առանձին սենեակ մը տարաւ, ու իր ծառային հրաման ըրաւ որ դուռ մը բանայ. ծառան երբոր դուռը բացաւ, Վրիստիանոս պատին վրայ կախված մեծարու անձի մը պատկերը տեսաւ. ու պատկերին ձևը աս էր : Եւ չքերը երկինքը վերցուցած էր, գիրքերուն պատուականը իր

* Ըստուծոյ Հոգին ինչպէս մարդասէր ու ինչպէս զիջանող է ողորմելի թշուառ մեղաւորներուն :

ձեռքն էր, ճշմարտութեան օրէնքը իր պըռկունքներուն վրայ գրված էր, ու երեսը աշխարհէն դարձուցած էր. անանկ կայներ էր՝ որպէս թէ մարդոց կողմանէ փաստաբան մըն էր, և իր գլխուն վրայովը ոսկեղէն պտակ մը կախված էր * :

Եւստոյնը Վրիստիանոս հարցուց՝ թէ ի՞նչ կընշանակէ ասիկա :

Սէֆէլ . Ըն մարդը՝ որուն որ պատկերն է ասիկա, հազարներէն մէկ հատիկ է. ինքը կըրնայ զաւակ ծնանիլ՝ ու ծնանելէն ետև սնուցանել զանոնք : Եւ ան որ կըտեսնաս թէ աչքերը երկինքը վերցուցեր է, գիրքերուն պատուականը իր ձեռքն է, ու ճշմարտութեան

* Եւստոյնի ճշմարիտ պաշտօնեան իր աչքերը առ Եստուած կըվերցունէ օգնութիւն ու զօրութիւն գտնալու համար. իր գիտութիւնը ու պատգամաւորութիւնը Եստուծոյ բանէն կընդունի՝ ու ան ընդունածը հաւատարմութեամբ կըմատակարարէ. իր սիրտը իր գործին վրայ է, անանկ որ՝ աշխարհիս ոչ շնորհքները ու ոչ սպառնալիքները կազդեն իրեն. Վրիստոսի սէրը՝ հոգիներուն արժողութիւնը՝ ու յաւիտենականութեան մեծութիւնը ճանչցածը լլալով սրտի մտօք կըյորդորէ զմարդիկ, ու կենաց պսակին յոյսը բոլոր իր աշխատութիւնը կանուշցունէ ու կըկենդանացունէ : ՍՎ Տէր՝ քու հունձիդ մէջը շատ ասանկ մշակներ խրկէ. ամէն :

օրէնքը իր պուկունքներուն վրայ գրված է ,
 ասիկա քեզի կըրցուցընէ՝ Թէ իր գործը է՝ ա-
 նիմանալի բաները գիտնալ և յայտնել մե-
 ղաւորներուն , ինչպէս նաև կըրտեսնաս որ իբ-
 ըև փաստաբան կայներ է մարդոց կողմանէ :
 Եւ ան որ կըրտեսնաս Թէ իր երեսը աշխարհէն
 դարձուցած է , և ոսկեղէն պսակ մը իր գլխուն
 վրայ կախված է , ասիկա քեզի կըրցուցընէ՝
 Թէ իր Տէրոջը ծառայութեանը ունեցած սի-
 րոյն համար աշխարհիս բաները փուճ և ա-
 նարգ համարելով , ապահով է Թէ հանդեր-
 ձեալ աշխարհին մէջը փառքով պիտի վար-
 ձատրի : Եւրդ՝ ըսաւ Սեկնիչը , պիտա առաջ
 քեզի աս պատկերը ցուցուցի , քանզի ան մար-
 դը՝ որուն որ պատկերն է ասիկա , մի միայն
 ան մարդն է՝ որուն որ քու գացած տեղիդ
 Տէրը իշխանութիւն տրուաւ քու ճամբուդ մէ-
 ջը պատահելու բոլոր դժուարին տեղվանքը
 քեզի առաջնորդ ըլլալու : Ուստի աղէկ միտ-
 քրդ պահէ իմ քեզի ցուցուցածս՝ ու տեսածդ
 մի մտնար , որ չըլլայ Թէ քու ճամբուդ մէջը
 անանկ մարդոց պատահիս՝ որ կեղծաւորին
 շիտակ ճամբան քեզի առաջնորդելու , բայց
 իրենց ճամբան շիփշիտակ մահին դուռը կիջ-
 նայ :

Ըսկից ետքը անոր ձեռքէն բռնեց՝ ու տա-
րաւ մեծ սրահի մը մէջ խօթեց որ փոշիով
լեցուն էր, քանզի բնաւ աւել զարնրված չէր
հոն : Ըսիկա քիչ մը տեսնալէն ետև՝ Սեկ-
նիչը մէկը կանչեց որ դայ աւլէ : Հիմայ մար-
դը աւլելու որ սկըսեց, փոշին անանկ ամպի
պէս կելլար՝ որ Վրիստիանոս մազ մնաց պի-
տի խեղդովէր : Ընատեն Սեկնիչը հոն կայ-
նող օրիորդի մը ըսաւ՝ որ քիչ մը ջուր բերէ
ու սրահին մէջը ցըրցըքնէ . աղջիկը ասիկա
ըրածին պէս՝ գիւրութեամբ աւլըվեցաւ ու
մաքրովեցաւ սրահը :

Ըսիկա ի՞նչ կընշանակէ հարցուց Վրիս-
տիանոս :

Պատասխան տըլաւ Սեկնիչը ըսելով . Ըս
սրահը կընշանակէ մէկ մարդու մը սիրտը՝ որ
աւետարանական քաղցր շնորհքով բնաւ սըր-
բազործըված չէ : Փոշին իր սկզբնական մեղ-
քը և ներքին ապականութիւնն է որ բոլոր
մարդը կըպզծէ : Ըն որ առաջ սկսեց աւլել,
()րէնքն է . բայց ան որ ջուր բերաւ և ցա-
նեց, Ըւետարանն է : Ուստի ան որ տեսար
թէ առջինը աւլելու սկսածին պէս փոշին ա-
նանկ տարածեցաւ սրահին մէջը որ ինքը չէր

կրնար մաքրել, և գուն գրեթէ կրխեղզըվէ իրկոր, ասիկա կըցուցնէ քեզի թէ օրէնքը իր ներգործութիւնովը սիրտը մեղքէ մաքրելուն տեղը, կըկենդանացունէ, Նոր. Է. 9. կըզօրացունէ, Թ. Կորն. ԺԵ. 56. և կէվելցունէ անիկա հոգիին մէջը. Նոր. Ե. 20: 'Վարձեալ՝ ան ուր տեսարթէ օրիորդը սրահին մէջը ջուր ցրցքնեց՝ ու անոր վրայ դիւրութեամբ մաքրըվեցաւ ան, ասիկա կըցուցնէ քեզի՝ թէ երբոր Մեծտարանը իր քաղցր և պատուական զօրութիւնովը սրտին մէջը կուգայ, անատեն մեղքը կըտկարանայ և կըյաղթըվի, ու հոգին կըմաքրըվի անոր հաւատքովը, և հետևապէս փառաց թագաւորին բնակութեանը յարմար տեղ մը կըլլայ ան * : Յօհ. ԺԵ. 3 : Եփե. Ե. 26 : Կորն. ԺԵ. 9 : Նոր. ԺԷ. 25, 26 : Յօհ. ԺԵ. 13 :

Ասկից ետքը նաև երազիս մէջը տեսայ՝ որ Սեկնիչը անոր ձեռքէն բռնեց և մէկ պզտի սենեակ մը տարաւ, ուր որ երկու տղայ իրենց աթոռներուն վրայ նստեր էին : Սեծին անու-

* Հիմայ ասով դատէ գուն թէ օրէնքի՞ տակ ես, եթէ Մեծտարանական շնորհաց : Մտ տեղը ստորագրըվածը գտար՝ երբէք քու վրագ :

նը էր՝ Մեհամբերութիւն, և պզտիկին անունը
 Համբերութիւն : Մեհամբերութիւնը կըթը-
 ւէր որ մեծ նեղութեան մէջ էր . բայց Համ-
 բերութիւնը շատ հանդարտ էր : Սատի Վը-
 ըխտիանոս հարցուց թէ, Մեհամբերութիւ-
 նին նեղութեանը պատճառը ի՞նչ է : Պա-
 տասխան տրլաւ Սեկնիչը . Մտնց վերա-
 կացուն իրեն ըսաւ որ մինչև գալ տարի սպասէ
 նէ խիստ աղէկ բաներ պիտի ունենայ, բայց
 ինքը բոլորը հիմայ կուզէ . սակայն Համբե-
 րութիւնը կըկամի սպասել :

Ետքը տեսայ որ Մեհամբերութիւնին քով
 մէկը եկաւ, ու տոպրակ մը ոսկի բերաւ ու ա-
 նոր ոտքը պարպեց անիկա . ինքը անոնք առ-
 նելով ուրախացաւ անոնցմով և միանգամայն
 Համբերութիւնը ծաղը ընել սկսեց : Բայց
 տեսայ որ քիչ մը ատենէն ետքը բոլորն ալ
 շուայլութեամբ վատնեց, ու իրեն ուրիշ բան
 չի մնաց՝ բայց հնոտի լաթեր :

Մնատենը Վըրիստիանոս Սեկնիչին ըսաւ .
 Մա բանս աղէկ մը բացայայտէ ինձի :

Պատասխան տրլաւ Սեկնիչը թէ, Մա եր-
 կու տղաքը օրինակ են . Մեհամբերութիւնը
 աս աշխարհիս մարդոցը օրինակ է, ու Համ-

բերութիւնը հանդերձեալ աշխարհի մարդոցը օրինակ է . քանզի ինչպէս որ հոս կը տեսնաս թէ Մեհաօրբերութիւնը բոլոր բանը հիմայ՝ աս տարի ունենալ կուզէ , այսինքն՝ աս աշխարհիս մէջ . անանկ աս աշխարհիս մարդիկն ալ բոլոր իրենց բարութիւնները հիմայ ունենալ կուզեն . չեն կրնար մինչև գալ տարի կենալ , այսինքն մինչև անդի աշխարհը երթալնին սպասել իրենց բարիքը ընդունելու համար : Այլեւի մտիկ կընեն ան առակին՝ որ կըսէ . Ահա՛ ի՛նչ լաւն է ծառին զայն երկուսն էն որ է . քան թէ հանդերձեալ աշխարհին բարիքներուն վրայով եղած բոլոր Մտուածային վկայութիւններուն : Բայց ան որ տեսար թէ ինքը շուտ մը շուայութեամբ բոլորն ալ վատնեց՝ ու հիմայ իրեն բան մը չե՞ծղեց բայց հին լաթեր , աշխարհիս վերջը բոլոր ասոր պէս մարդիկներուն ալ ասանկ պիտի ըլլայ * :

* Անրմաւոր մարդիկ է վեւի բան չեն ուզեր՝ բայց եթէ իրենց զգայարանքները յագեցունել . սակայն վերջապէս ամէն բաները պիտի կորսընցունեն՝ ու հոգինին աւերեն : Բայց արդարը կապրի Յիսուսի վրայ ունեցած հաւատքովը , ու գալու ուրախութիւններուն յոյսովը : Ընդհար փառաւոր վախճանի

Հիմայ Վրիստիանոս ըսաւ . Եւ Հիմայ կը տեսնամ որ Համբերութիւնին ըրածը մեծ խելացիութիւն է . և ան ալ մէկ քանի պատճառներով . մէյմը՝ որ ամենալաւ բաներուն համար կըսպասէ . մէյմալ՝ որ ինքը իւր փառքին պիտի հասնի , բայց մէկալը հին լաթերէն ՚ի զատ բան մը չունի :

ՍԵՆԷԿԱ . Ըտոնցմէ ՚ի զառ ուրիշ պատճառմըն ալ կընայիր տալ իւր խելացիութեանը . այսինքն ան՝ որ հանդերձեալ աշխարհի փառքը բնաւ չի պիտի վերջանայ , բայց ասոնք իսկոյն կըկորնչին : Ըսոր համար Ընհամբերութիւնը այնչափ իրաւունք չունէր Համբերութիւնին վրայ խնդալու՝ ինքը իւր բարիքները առաջ ստանալուն համար , որչափ որ Համբերութիւնը իրաւունք պիտի ունենայ անոր վրայ խնդալու իւր բարիքները վերջը ունենալուն համար : Վրանգի առաջինը պարտի անցնիլ որ վերջինը անոր տեղը գայ . բայց՝

մը պիտի հասնին . ինչու որ պիտի ընդունին իրենց հաւատքին նպատակը՝ որ է իրենց հոգիներուն փրկութիւնը , ու փառքով մը մշտնջենաւորապէս զՎրիստոս վայելելը :

վերջինը բնաւ չանցնիր , ինչու որ մէկ ուրիշը չի կայ իր տեղը դալու : Ուստի ան՝ որ իր բաժինը առաջ ունեցաւ , հարկաւ ժամանակ պիտի ունենայ անիկա վատնելու . բայց ան որ իր բաժինը վերջը կառնէ , յաւիտեան պիտի վայլէ անիկա : Եւսոր համար է որ մեծատունին վրայով կըսվի թէ , « Դուն անդին քու կեանքիդ ատենը քու բարիքներդ առիր . անոր պէս ալ 'Վազարոս' չարչարանքները , հիմայ անիկա հոս կըմխիթարվի , և դուն հոտ կըպապակիս » . Գլ . 4 . Ժ 25 :

Վրիժախանս : Ուրեմն կիմանամ որ հիմակ վան եղած բաներուն վրայ սէր ձգելու չէ , հապա գալու բաներուն սպասելու է :

Սեկնէ : Ղշմարիտ խօսեցար . ինչու որ տեսնըված բաները ժամանեակաւոր բաներ են , բայց չի տեսնըված բաները յաւիտեանական են . Բ . Կորն . 7 . 18 : Եւ թէպէտ առ ասանկ է՝ բայց որովհետև ներկայ բաները և մեր մարմնաւոր ախորժակը այսչափ մօտ դրացիններ են իրարու , անոր համար շուտով կըբարեկամանան . և դարձեալ՝ որովհետև հոն դերձեալ բաները և մարմնաւոր զգայութիւնը այսչափ օտար են իրարմէ , անոր համար միշտ

ասանկ հեռու կըմնան իրարմէ * . Հ. 15—25 :

Ասոնցմէ ետքը երազիս մէջը տեսայ որ Սեկնիչը Վրիստիանոսին ձեռքէն բռնեց ու անիկա մէկ տեղ մը տարաւ , ուր որ պատի մը տակը կրակ կըվառէր , ու անոր քովը մէկը կայնած՝ միշտ ջուր կըթափէր անոր վրայ որ մարէ . և սակայն էվելի բարձր կելլար կրակին բոցը , և էվելի կըբորբոքէր ան :

Քրիստիանոս հարցուց՝ թէ ի՞նչ կընշանակէ ասիկա :

Պատասխան տրւաւ Սեկնիչը և ըսաւ . Ես կրակը Վրիստոնէական շնորհաց գործքն է որ սրտին մէջը կըհրահրի . ան որ ջուր կը թափէ վրան անիկա մարելու համար , Սատանան է : Իայց ան որ կըտեսնաս թէ կրակը ևս առաւել բարձր կըվառի ու կըբորբոքի , ա-

* Տես աս տեղը հաւատքին պատուականութիւնը ու փառաւորութիւնը , որ ամէն բանի վրայ պատու շաճաւոր արժողութիւն մը ու վայելուչ գին մը կըտրել կուտայ հոգիին . որ ժամանակաւոր ու զգալի բաներէն անդին կանցնի , ու փառքի և յաւիտենականութեան վրայ կըդադարի : Եսիկա է Աստուծոմէ ծնած հոգիին յատուկ հանգամանքը . արդարը հաւատքով պիտի ապրի . ՆՔԳ . ք . 4 : Եսիկա երկրի վրայ երկնաւոր կեանք վարել է :

Նոր պատճառն ալ պիտի տեսնաս : Ըստ լով անիկա պատին միւս կողմը տարաւ , ուր որ տեսաւ թէ մէկը կայներ էր իր ձեռքը եղի աման մը բռնած , ուրկից ծածկաբար շարունակ կրակին վրայ կըլեցունէր * :

Ուստի Վրիստիանոս հարցուց՝ թէ ի՞նչ կը ցուցնէ ասիկա :

Պատասխան տրւաւ Սեկնիչը . Ըսիկա Վրիստոս է , որ միշտ իր շնորհաց եղովը սրբտին մէջը արդէն սկսված գործը կըպահպանէ . և աս միջոցով՝ Սատանային բոլոր բրած բաներուն վրայ՝ իր ժողովուրդը միշտ հաստատ կըկենայ . ք. Կ. Բ. Ժ. 9 : Եւ ան որ տեսար թէ մարդը պատին ետեւը կայներ էր կրակը պահպանելու համար , ասիկա քեզի կըսորվէ .

* Սմանք ամենեին պատին ետեւը՝ անցած չըլլալով շնորհաց գործը հոգիին մէջը Վրիստոսի պահելը տեսնալու , ուրիշ պատճառներու կրնծայեն ան . զորօրինակ մարդուն հաւատարմութեանը՝ և ուրիշ բաներու , որ կըհնարէ իրենց հպարտութիւնը ու յիմարութիւնը : Ըսկից է որ տգիտաբար կը հաստատեն թէ շնորհաց գործը կրնայ ոչնչանալ , ու Վրիստոսի շնորհաց ենթակաները կրնան կորսորվիլ : Իսկ կըսխալին , ինչու որ ոչ սուրբ գիրքերը գիտեն , ու ոչ մեղաւորներուն վրայ Վրիստոսի սիրոյն ու շնորհացը զօրութիւնը :

ցունէ թէ փորձութեան մէջ ի յնող մարդուն ղժուարին է տեսնալ թէ Վրիստոնէական շը նորհաց գործը ինչպէս կըսնանի կըպաշտպանի հողին մէջը * :

Նաև տեսայ թէ Սեկնիչը իր ձեռքէն բըռնեց՝ և անիկա գեղեցիկ տեղ մը սարաւ , ուր որ բարետեսիլ և հոյակապ պալատ մը շինված էր : Վրիստիանոս մեծապէս զըլարձացաւ առ պալատը տեսնալուն . ու նաև տեսաւ որ անոր վրայ քանի մը հողի կըպըտըտէին , որոնք բոլորովին ոսկեթել հանդերձներով հաղված էին :

Ընատենը Վրիստիանոս հարցուց թէ , 'Ներս կընանք մի մտնալ :

* Ուրեմն մեղաւորը՝ որ շնորհաց ենթակայ է , ձեռք չունի՝ շնորհաց գործը իր սրտին մէջը պահելու : Չէ , չունի : Հեղինակը Սուրբ Վրոց լաւ տեղեկութիւն ունենալով արարածի գործին ու կարողութեանը չընծայէր ան փառքը որ կըվայլէ միայն Տէրոջը , որ է Լ՛ճֆաւ Ո՛վ , Լ՛ռաջին և Վ՛երջին , մեղաւորին սրտին մէջը իր գործը սկսող՝ առաջ տանող՝ ու կատարող . ու իր գործը բնաւ չի կրնար շեջանիլ հոն մինչև որ Սատանային ջուրը Վրիստոսի շնորհաց իւղէն էվելի զօրութիւն չունենայ : Ո՛վ ողորմելի մեղաւոր՝ հաւատա՛ ասոր , ու սիրէ քու Տէրդ՝ փառաւորէ զինքը՝ և օւրախացիր իր վրայ . ինչու որ ինքը յաւիտենական սխալ կըսիրէ , յաւիտենական փրկութիւնով կըփրկէ :

Լս խօսքին վրայ Սեկնիչը անոր ձեռքէն բռնեց ու դէպի պալատին դուռը տարաւ . և մէյմալ նայիս որ դուռը շատ մարդիկ կայներ էին՝ որոնք ներս մտնալ կուզէին , բայց չէին համարձակէր : Վաւ գռնէն քիչ մը հեռու սեղանի մը առջին մէկը նստեր էր , գիրք ու կազամար մը ունէր իր առջևը , որ ներս մըտնողներուն անունը գրէ : Եւ կից՝ ի զատ տեսաւ որ դռանը ճամբուն վրայ խել մը զրահաւոր մարդիկ կայներ էին դուռը պահելու , ու դիտաւորութիւննին ներս մտնալ ուզողներուն վրայ ամէն վնասը ու չարիքը կատարել էր : Էիմայ Վրիստիանոս քիչ մը այլայլեցաւ : Սերջը՝ երբոր բոլոր մարդիկ զննուորված մարդիկներուն վախէն ետ քաշվեցան , Վրիստիանոս քաջասիրտ մէկը տեսաւ որ գրագիրին քովը գնաց ըսելով , « Իմ անունս գրէ՛ տէր իմ » . գրագիրը անոր անունը որ գրեց , իսկոյն մարդը իր թուրը քաշեց , ու գլուխը սաղաւարտ մը դրաւ , և դէպի դուռը վազեց ան զննուորված մարդոցը մէջէն , որոնք սաստիկ զօրութեամբ զնքը վերաւորեցին . բայց մարդը ամենեւին չի թուլնալով կատաղաբար անոնց վրայ յարձակեցաւ զարնելով և կոտ-

րելով : Եւսպէս շատ վէրքեր ընդունելէն և զինքը դուրսը պահելու աշխատողներուն շատերը վիրաւորելէն ետև՝ * Սառ . Ժա . 12 : Գործ ԺԴ . 22 . բոլորին մէջէն իրեն ճամբայ բացաւ , ու զնաց պալատը մտաւ . անատենը մէկ անուշ ձայն մը լսվեցաւ ներսիններէն , այսինքն անոնցմէ որ պալատին վրայ կը պըտըտէին՝ որոնք կըսէին .

Ո՛վ քաջասիրտ մարդ , մտիր ներս՝ մտիր ,
Յաւիտենական փառքը ստացիր :

Եւսանկ ինքը ներս մտաւ , և անոնց հազած հանդերձներուն պէս ոսկեթել հանդերձներով հագվեցաւ : Եւսատենը Վրիստիանոս խնդաց ու զսաւ . կարծեմ թէ ես ասոր ինչ նշանակելը ստոյգ իմացայ՝ :

* Եւստ նեղութիւններով պէտք է մեզի Եւստուծոյ արքայութիւնը մտնալ . Գործ . ԺԴ . 22 :

† Եւսանկ ոգի ու բնաւորութիւն կունենայ ան հոգին՝ որ հաստատած է Վրիստոս շահիլ , ու փառաց թագաւորութիւնը վայելել : Բոլոր ընդդիմութիւններուն դէմ ինքը հաստատուն մտքով առաջ կը բռնէ իր ճամբան ու դէպի նպատակին կը վազէ , որ Յիսուս Վրիստոսով ընգունի իր կոչմանը վարձքը՝ ուր որ Եւստուած զինքը կոչեց . Փիլիպ . Գ . 14 : Բաւական չի համարիր քանի մը թոյլ բաղձանքներու տկար յոյսեր ունենալը . ինչու որ երկ-

Եւ հիմայ Վրիստիանոս խնդրեց որ իր ճամբան երթայ . բայց Սեկնիչը ըսաւ . Չէ , կեցիր , մինչև որ քիչ մը բան ալ ցուցնեմ քեզի : Եւ յապէս նորէն անոր ձեռքէն բռնելով խիստ մութ սենեակի մը մէջ խօսեց (Յոսահոյ) թեց , ուր որ երկաթ վանդակի մէջ պահուած մարդ մը նստեր էր :

Եւ մարդը խիստ տրտում մէկը կերեալ , իր աչքերը գետինը տնկեր էր , ձեռքերը իրարու կապեր էր , ու իր սրտէն սաստիկ կը հառաչէր : Ուստի Վրիստիանոս հարցուց թէ , Ի՞նչ կընշանակէ աս : Սեկնիչը ըսաւ որ ինքը խօսի ան մարդուն հետը * :

Եւ նատենը Վրիստիանոս ըսաւ . մարդուն . Ի՞նչ էս դուն , ո՞վ մարդ : Պատասխան տը

նից թագաւորութիւնը ուժով կանոնվի , և ուժովները կը յափշտակեն զանիկա . Սոփ . ԺԿ . 12 :

* Եստուծոյ Սուրբ Հոգին կրկամի որ ուրիշներուն աղետալի օրինակէն խրատ առնենք մենք : Եւսոր համար Սուրբ Վրոց մէջը ահաւոր բաներ կրգնէ մեր առջևը՝ որ պատահեցան հաւատացեալ սեպւողներուն , որպէս զի մեր վտանգը տեսնանք , խոնարհ ու արթուն ըլլանք , ու ապստամբութենէ մեզ պահելու համար Տէրոջը աղօթենք :

առաւ մարդը թէ, Ես ան եմ, ինչ որ աստե՛նօք չէի * :

Վարդապետանոս . Ի՞նչ էիր դուն աստե՛նօք :

Սարգս . Ես աստե՛նօք գեղեցիկ և ծաղկեալ Վրիստոնեայ մը էի՝ Գլ. 13. Թէ իմ աչքիս և թէ ուրիշներուն աչքին առջևը . ես աստե՛նօք իմ կարծեօքս երկնային քաղաքին յարմար մէկ մը էի, և մինչև անգամ մեծապէս կուրախանայի մտածելով թէ հոն պիտի մըտնամ † :

Վարդապետանոս . Պի՛նտ աղէկ . բայց ի՞նչ ես դուն հիմայ :

Սարգս . Ես հիմայ յուսահատեալ մէկն եմ, և աս երկաթ վանդակին մէջը խափանվելու պէս՝ յուսահատութեան մէջը խափանված եմ :

* Լ՛մենաստակալի փոփոխութիւն մըն է աս : Սարսափելով մտմըտա դուն ասոր վրայ : Հաւատքով կեցած ես՝ մի՛ հպարտանար, հապա վախցիր :

† Ս՛վ բարձրամիտներ՝ զգուշացէք . նայեցէք թէ ո՛ր ձեռք զարկաւ աս մարդը . տեսէք թէ ի՛նչ կըմըտածէր իր վրայովը . նկատեցէք թէ ի՛նչ կըմտածէին ուրիշները իր վրայովը : Ե՛րդարև ինքը մեծ ուրախութիւն կըզգար իր ներսը՝ մտածելով թէ կրկինքը պիտի երթայ, և սահայն յուսահատութիւնը հասաւ իր վրայ : Ուրեմն արթուն ըլլանք ու հսկենք . ա . ի՛նչ . Ե . Յ .

չեմ կրնար անկից դուրս ելլալ . ո՛հ , անհնար է ինձի դուրս ելլալ * :

Վրիստիանոս . Բայց ինտո՞ր աս վիճակին մէջը ինկար :

Սարգս . Ըրթնութիւնը և պարկեշտութիւնը մէկդի ձգեցի . երստանակը իմ ցանկութիւններու շղթայի ձգեցի . Ըստուծոյ բարութեանը և անոր լուսատու խօսքին գէմ մեղանչեցի . Հողին արտմեցուցի՝ ու ինքը գնաց . Ստանան դրդեցի և ինքը ինձի եկաւ . Ըստուած բարկութեան շարժեցի՝ ու ինքը Թողուց զիս . իմ սիրտս անանկ կարծրցուցի որ չեմ կրնար զղջումի գալ † :

Հիմայ Վրիստիանոս հարցուց Սեկնիչին թէ ասոր պէս մարդու մը համար յոյս չի կայ մի : Իրեն հարցուր , ըսաւ Սեկնիչը :

* Վժռիքէն ասդին ասկից ասաւոր վիճակ մը չի կրնար ըլլալ : Օգուշ կենանք ուխտադրուժ ըլլալէն : Սեղբին սկիզբը գիտէ մարդս , բայց անոր վախճանը միայն Ըստուած գիտէ :

† Ըստիկա ասաւոր ազդարարութիւն մըն է Վրիստոնէից : Ս՛վ մարդիկ՝ զգոյշ կեցիք ճշմարտութեան Ըստուծոյն հետ՝ ու Ըստուծոյ ճշմարտութիւններուն հետ խաղալու . ինքը նախանձոտ Ըստուած է . նախանձաւոր է իր պատիւին ու փառքին . նա մանաւանդ՝ մեր Ըստուածը հուր ծախիչ է . Լքր . ԺԻ . 29 :

Ննատեն Քրիստիանոսը մարդուն ըսաւ .
 Եւ յոյս չի կայ՝ հապա յուսահատութեան եր-
 կաթ վանդակին մէջը պարտիս մնա՞լ :

Մարտի . 25 , ամենեւին յոյս մը չի կայ :

Քրիստիանոս . Եւ չո՞ւ համար , Եւ մենօրհնեալ
 Մատուծոյ Արդին խիստ ողորմած է :

Մարտի . Եւ անիկա կրկին անգամ խաչը
 հանեցի իմ անձիս . Եւր . 5 . 6 . ես իր անձը ա-
 նարզեցի , Եւ . 1 . 14 . իր արդարութիւնը
 արհամարհեցի . ես իր արունը անսուրբ բան
 մը սեպեցի . ես շնորհաց շողին տրտմեցու-
 ցի . Եւր . 7 . 28 , 29 . ուստի ես զիս բոլոր
 խոստմունքներէն դուրս ձգեցի , ու հիմայ ու-
 բիշ բան չի մնար ինձի՝ բայց միայն սպառ-
 նալիքներ , սոսկալի սպառնալիքներ , ճշմարիտ
 դատաստանին ու բորբոքած բարկութեանը
 ստոյգ սպառնալիքները , որ իբրև Թշնամի
 պիտի ուտեն զիս * :

* Եւ տերը մեղամաղձոտութեան զօրութիւնով
 աս նոյն կծու խօսքերը իրենց վրայ կրգրեն՝ ինտոր
 որ հոս գրված են , բայց ան խօսքերը ոչինչ կերպով
 իրենց կը յարմարին , որովհետև ճշմարիտ հաւա-
 տացեալներ են : Եւ չու որ մեղքի վրայ տեսութիւն
 մը ունենալը՝ մեղքի զգացում մը ունենալը՝ ու՛ մեղ-
 քի համար զղջում մը կամ տրտմութիւն մը ունե-

Վրիստիանոս • Ինչո՞ւ համար դուն քեզ աս վիճակին բերիիր :

Սարգս • Ե՛ս աշխարհին ցանկութիւններուն՝ հեշտութիւններուն և շահերուն համար , ուրոնք երբոր կը վայլէի՝ իմ անձիս կըսէի որ շատ բերկրութիւններ պիտի ունենամ : Բայց հիմայ ան բաներուն ամէն մէկը իբրև հրեղէն որդ մը կը խաճնէ և կը կրծէ զիս :

Վրիստիանոս • Բայց հիմայ չե՞ս կրնար զրգլ Զալ ու դարձի դալ :

Սարգս • Ե՛ստուած ինձի զղջում տալը մէկ դէ ձգեց : Իր խօսքը ինձի քաջալերութիւնն էր տար հաւատալու • մտնալանդ որ ինքը զիս աս երկաթ վանդակին մէջը գոցեց , ու բոլոր աշխարհի մարդիկը չէն կրնար զիս դուրս հանել : Ո՛վ յաւիտենականութիւն յաւիտենականութիւն • ինչպէս պիտի կուուիմ անթշուառութեանը հետ՝ որ յաւիտենականութեան մէջը սլարտի իմ դէմս ելլալ :

նալը՝ ինտոր որ ասոնք ունին , հանդերձ բոլոր՝ մեղքերէն ու Ե՛ստուծոյ բարկութենէն Վրիստոսով ազատելու փափաքով մը՝ ճշմարտապէս կը ցուցնեն թէ սրտին մէջը Վրիստոսի շնորհաց ներգործութիւնը կայ : Բայց վայ անոնց՝ որոնց վրայ կը յարմարին աս մարդուն ըսած խօսքերը :

Ննատենն Մեկնիչը Վրիստիանոսին ըսաւ թէ, Ըս մարդուն թշուառութիւնը միտքդ թող մնայ, և յաւիտենական զգուշութիւն մը ըլլայ քեզի :

ԸՆՏ. Պարսափելի բան է ասիկա՝ ըսաւ Վրիստիանոս : Ըստուած ինձի օգնէ որ ալ թուն և պարկեշտ ըլլամ, ու աղօթք ընեմ որ աս մարդուն թշուառութեանը պատճառէն փախչիմ * : Տէր իմ, հիմայ ալ ատենը չեկնաւ իմ ճամբաս երթալու † :

* Վնթերցող՝ միշտ կարօտ ես գուն աս աղօթքը քեզի համար ընելու : Գուն մեղաց մարմինին մէջն ես . ամենախաբեբայ ու տարապայման չար սիրտ մը ունիս, ու աշխարհիս որոգայթներուն և Սատանայի խորամանկութիւններուն ենթակայ եղած ես :

† Վրիստիանոս ինչո՞ւ համար այսչափ կարտորար : Խեղճ ու ողորմելի հոգին տակաւին մեղաց բեռը իր կունակը բարձած էր, ու ասիկա էր որ զինքը կարտորցունէր : Կուզէր խաչին հասնիլ՝ որ իր բեռէն ազատի . բայց Հոգին առաջ շատ բաներ ունէր իրեն ցուցընելու, որ անկից ետքը օգտակար պիտի ըլլային իրեն : Ըստուած իր ներողութեան սիրոյն ճանաչումովը իր ժողովուրդը մխիթարելու համար ժամանակ մը որոշած է . մինչև ան ժամանակը Հոգին աստիճան աստիճան մեզ առաջ կը տանի, բան մը ցուցընելէն ետև ուրիշ մը մեզի կը ցուցընէ, մինչև որ ան ժամանակը գայ հասնի :

Սեկնիչ . կեցիր որ քեզի մէկ բան մալ ցուցընեմ , ու հապա քու ճամբադ երթաս :

Լսանկ անոր ձեռքէն բռնեց՝ ու զինքը սենեակ մը տարաւ՝ ուր որ մէկը իր անկողինէն կելար . ու հանդերձը հագած տտենը կը դուրս եկրտարսափէր : Լնատենը Վրիստիանոս հարցուց թէ ինչո՞ւ համար առ մարդը կը դողայ : Ուստի Սեկնիչը հրաման ըրաւ մարդուն որ իր անանկ դողալուն պատճառը զրուցէ : Ուստի մարդը սկսեց ըսել . « Լն գիշեր քունիս մէջը երազ մը տեսայ , ու մէյմալ երկինքը բոլորովին խաւարեցաւ , և անանկ սոսկալի կերպով որոտաց ու փայլատակեց՝ որ զիս մահուան դուռը հասցուց : Լսանկ՝ երազիս մէջը վեր նայեցայ՝ ու տեսայ որ ամպերը անսովոր կերպով մը կը վազէին . ասոր վրայ ահաւոր ձայն մը լսեցի փողի , ու նաև մէկ մարդ մը տեսայ ամպի մը վրայ նստած՝ ու երկնքին հազարաւորները իր հետն էին , որոնց ամէնը կրակի բոցի կը նմանէին . երկինքը ևս կրակի բոցի մէջ էր : Այլ մը մնծ ձայն մը

Սպասէ Լստուծոյ ճամբուն վրայ՝ Լստուծոյ միւլթարուլթիւններուն համար : « Լրդարը հաւատքով պիտի ապրի » . Եբր . ք . 4 :

լսեցի որ կըսէր . « Ելեք՝ ո՛վ մեռելներ , ու դատաստանի եկէք » : Եւ աս խօսքին վրայ քարերը պատահեցան , գերեղմանները բացվեցան , ու անոնց մէջի մեռելները դուրս եկան : Ոմանք շատ ուրախութիւն ունէին ու դէպի վեր կընայէին , և ոմանք լեռներուն տակը պահվրտիլ կուզէին : Ետքը տեսայ՝ որ ամազերուն վրայ նստող մարդը գիրքը բացաւ ու հրաման ըրաւ աշխարհի որ մօտ գան * : Եւ սակայն իր առջևը բորբոքած սաստիկ բոցին պատճառովը խել մը միջոց մնաց անոնց մէջը , ինչպէս որ դատաւորին և ատեանը կայնող բանտարգեալին մէջ տեղը միջոց մը կը մնայ : Թ . Կորնթ . ԺԵ : Թ . ԹԻ . Կ . 7 . 16 : Էբր . 15 : Էբր . Ե . 28 , 29 : Թ . ԹԻ . Կ . 8 , 10 : Էբր . Ի . 11 , 14 : Եսայ . ԻԿ . 21 : Սի . Ե . 16 , 17 : Սաղ . Ե . 4 : Թ . 1 . 3 : Սաղ . 7 . 2 , 3 : Գանի . Ե . 9 , 10 : Եւսե

* Գատաստանի օրվանը պատրաստըվելնուս համար ամենէն աղէկ միջոցներուն մէկը աս է . յաճախ մտածէ նոյն օրը տալու համարիդ վսեմութեանը՝ ահարկութեանը ու ճշմարտութեանը վրայ : Էբրոնիմոսին համար կըսվի թէ իր մեռնելէն առաջ շատ տարիներ ինչ որ գործելու ըլլար , կըթուէր իրեն թէ ականջին աս ձայնը կուգարկոր . Surgite mortui et venite ad iudicium ! « Ելէք մեռելներ , ու դատաստան եկէք » :

լսեցի որ ամպին վրայ նստող մարդուն հետը եղած սպասաւորներուն աս հրամանը եղաւ . « Վաղեցէք որումը ու յարդը , ու բորբոքած լիճը ձգեցէք անոնք » : Սոփ . 7 . 12 : Ժ7 . 30 : Ի7 . 30 : Սող . 7 . 1 : Եւ ասոր վրայ ճիշտ իմ կայնած տեղս անյատակ փոսը բացվեցաւ , որուն բերնէն մուխ ու կրակի կայծակներ և սոսկալի ձայներ կելլային : Եւ աս նոյն սպասաւորներուն ըսվեցաւ . « Իմ ցորենս ամբարները ժողվեցէք » . Սող . 7 . 17 . ու ասոր վրայ տեսայ որ շատերը վեր կըլլափշտակվէին ու ամպերուն մէջը կըտարվէին . սակայն ես ետ մնայի . Թ . Թ . 7 . 16 , 17 : Սատի ես ալ ուղեցի որ զես ծածկեմ , բայց չի կըցայ . Ինչու որ ամպերուն վրայ նստող մարդը իր աչքերը վրաս տնկեր էր . իմ մեղքերս ալ միտքս եկան , ու խղճմտանքս ամէն կողմանէ կըղատախազէր ինծմէ . Սող . 7 . 14 , 15 : Եւ ասոր վրայ քունէս արթընցայ » :

Վրիստինոս . Բայց որ բանը աս տեսարանէն քեզ այսչափ վախցուց :

Սորբը . Ի՛նչ կըսես . կարծեցի թէ դատաստանին օրը եկեր է , ու ես տատրաստ չեմ անոր . բայց ամէն բանէն էվելի աս վախցուց

զիս , որ հրեշտակները շատերը ամպերուն մէջը հաւքեցին , ու զիս ետ ձգեցին . նաև դժօխքին փոսը՝ որ իր բերանը ճիշտ իմ կայնած տեղս բացաւ : Խղճմտանքս ալ զիս տանջեց * . ու ինչպէս որ կարծեցի՝ Վատաւորը միշտ իմ վրաս կընայէր , իր ելեակին վըրայ բարկութիւն ցուցընելով :

Ընտան Սեկնիչը Վրիստիանոսին ըսաւ .
 « Իմացար մի ամէն աս բաները » :

Վրիստիանոս . Ը. յ՛ իմացայ , ե. զիս յոյսի ու վախի մէջ ձգեցին անոնք † :

* Սարդուս խղճմտանքը շատ անգամ կը շփոթի ու կը դողայ . բայց իր վախերը ու դողերը շուտով կանցնին կերթան , ու ճշմարիտ դարձ մը չեն պատճառեր անոր :

† Օղջացած Վրիստոնէին փորձառութեանը մէջ յոյսը ու վախը իրենց յատուկ տեղեր ունին : Ըստուծոյ խոստմունքները ։ Յիսուս Վրիստոսով , կենդանի յոյսի մը զօրաւոր ու անշարժելի հիմը կը լինան . ու անոնք որ իրենց սրտերուն խաբեբայութիւնը գիտեն , իրենց թշնամիներուն ուժը ու խորամանկութիւնը կը ճանչնան , աշխարհիս մէջը իրենց վեճակէն ինչ օրոգայթներու ենթակայ ըլլալին կը զգան , ստոյգ պատճառ կը տեսնան մշտնջենաւորապէս զգուշանալու ու վախնալու : Ընտանց ասանկ վախի կեղծաւոր ու անհոգ կը լլայ մարդ : Ընոր համար կըսվի՝ Լորանի ան մարդուն որ միշտ կը վախնայ :

Մեկէկ · Լդէկ · անանկ միտքդ պահէ բոլոր բաները , որոնք քու քովդ իբրև խթան մը ըլլան՝ քու ճամբուդ մէջը քեզ առաջ քըշելու : Հիմայ Վրիստիանոս սկսեց իր մէջքը ամուրցունել ու իր ճամբորդութեանը պատրաստըվիլ : Լնատեն Սեկնիչը ըսաւ . « Սը խիթարիչը միշտ քու հետդ ըլլայ՝ բարի Վրիստիանոս , ու քաղաքը երթալու ճամբուն մէջը քեզի առաջնորդէ՞ » : Ուստի Վրիստիանոս իր ճամբան կերթար ու կերգէր .

Ըս տեղս տեսայ հազուագիտ բաներ՝
Օղւարձալի բաներ՝ ահաւոր բաներ ,
Ու իմ ձեռնամուխ եղած գործիս մէջ
Օ իս հաստատ պահող օգտակար բաներ :

Ուրեմն անոնք ես խորհիմ պիտի
Թէ ինչո՞ւ համար ցուցվեցան ինձի ,
Ու երախտապարտ սրտով միշտ ըլլամ
Ո՛վ բարի Սեկնիչ՝ շնորհակալ քեզի :

Հիմայ երազիս մէջը տեսայ որ Վրիստիանոսին երթալու ճամբուն երկու կողմը պատքաշած էր , և ան պատը կըկոչվէր փրկութիւն . Լսոյ . ի՞նչ . 1 : Ուստի ծանրաբեռնեալ Վրիստիանոսը աս ճամբայէն վեր կըվազէր ,



Թէ և իր կոնակի բեռին պատճառովը մեծ դժուարութիւն կը բաշէր * :

Ասանկ վազելով մեկ տեղ մը հասաւ՝ ուր որ բաճրկեկ բլուր մը կար , և ան բլուրին վըրայ խաչ մը տնկած էր , ու քիչ մը վեր բլուրին ոտքը գերեզման մը կար : Մէյմալ երազեա մէջը տեսայ որ Վրիստիանոս խաչին առջևը ելածին պէս՝ իր բեռը քակվեցաւ ու սերէն՝ ու իր կոնակէն ինկաւ , ու սկսեց վար գլտորիլ՝ մինչև որ գերեզմանին բերանը եկաւ . ան տեղը գերեզմանին մէջը ինկաւ , ու ես մէյմալ անիկա չի տեսայ † :

* Մեր զառիվեր դժուարութիւնները մեծամեծ սփոփութիւններու ճամբան են : Ինոնները անատենը խիստ ծանր կուգան՝ երբոր սփոփութիւնները կրմօտենան :

† Վրիստիանոս հաւատք ունէր . խաչին առջևը ելածին առաջ կը հաւատար Թէ Վրիստոսի արիւնովը ազատութիւն պիտի գտնայ , այսինքն մեզաց Թողութիւն . բայց հիմայ ինքը անոր սփոփութիւնը գտաւ ու զգաց : Ինքը հիմայ հաւատքին ուրախութիւնը կը վայել . իր մեղքին բեռը իր խղճմտանքին վըրայէն վերցաւ , ու հաւատալով՝ ամէն կերպ ուրախութիւնով ու խաղաղութիւնով լեցուն է : Ե՛ղբայր՝ դուն որ կը հաւատաս Թէ Յիսուս Վրիստոս է մի միայն Փրկիչ , հաւատալով առաջ գնա՝ մինչև որ անիկա քու Փրկիչդ ըլլալը ճանչնալու

Վրիստիանոս հիմայ մեծապէս ուրախացաւ որ իր բեռնէն թեթեցաւ, ու ցնծալից արտով ըսաւ : «Ինքը իր տրամուծիւնովը ինձի հանգստութիւն շնորհեց, ու իր մահովը կեանք» : Ետքը աստեն մը լուիկ կայնեցաւ որ նայի և զարմանայ, քանզի շատ զարմանալի բան եկաւ իրեն՝ որ խաչին երեոյթը զինքը ասանկ ազատէ իր բեռէն : Ուտի կրկին և կրկին անոր վրայ նայեցաւ, մինչև որ իր աչքերէն սկսեց արցունք բխալ ու երեսնիվար վտղել . Սա. Ժք. 10 : Երդ՝ ինքը ասանկ որ կայներ և կուլար, մէյմալ իրեք հատ լուսաւոր անձինք եկան իրեն, ու զինքը բարևեցին ըսելով . «Խաղաղութիւն քեզի» : Ետքը առաջինը ըսաւ, «Երվին քեզի քու մեղքերդ» . Սա. Ժք. 5 . երկրորդը զինքը իր հին լաթերէն հանվեցուց՝ և ուրիշ լաթեր հագցուց ի-

մսիթարութիւնը իմանաս, ու իր արիւնովը քու մեղքերուդ թողութիւնը զգաս . քանզի երբոր Լստուած մեզ մեր յանցաւորութենէն ու բեռէն ազատէ, ուրախութենէ ցաթկըռտողներուն պէս կը լանք անատենը . բայց դուն ասիկա չես կրնար ունենալ մինչև ան որոշված ատենը . պսիւքն՝ մինչև որ խաչին գաս, ու քու բոլոր յոյսերդ անոր վրայ դնես :

րեն * . Օգոստոս . 7 . 4 . և երբորդը անոր ճակատին նշան մը զարկաւ , Եփե . 2 . 13 . ու կնքած թուղթ մը տըլաւ իրեն՝ և ըսաւ որ ճամբան վազած աստենը անոր փոսյ նայի , ու երկինքին զուռը հասնի նէ ան թուղթը ներս տայ : Եւ սանկ՝ անոնք իրենց ճամբան գազին . ու Վրլ ըրիստիանոս ու բախու թենէն իրեք անգամ ցաթ էէց , ու առաջ կերթայք առ երգը ըսելով .

Սինչև հոս եկայ իմ մեղքըս բարձած ,
 Չի կար մեկը որ զիս հանգչեցունի
 Իմ տըրտմութենէս՝ որով պաշարված
 Սինչև հոս եկայ , ո՛հ աս ինչ տեղ է :

Հոս պիտ' սկսէր երջանկութիւնըս ,
 Հոս պիտի ինար կըռնակի բեռըս ,
 Հոս կըտըրտէին ան պարանները
 Ար կապեցին ան իմին կըռնակըս :

Քրճնեալ ես ո՛վ իաչ , օրհնեալ գերեզման ,
 Բայց երբցոր օրհնեալ Կարդըն պատառախած ,
 Որ քուկին վըրագ մեղքերուս համար
 Խայտառակութեամբ մատնեցաւ մահուան :

* Ըս լուսաւորները են Լճենասուրբ Կրորդու թիւնը . տևս Հօր Լճատուծոյ՝ Սրբուցն Լճատուծոյ՝ ու Սուրբ Հոգւոյն Լճատուծոյսէրը ու շնորհքը : Եկատէ որ երբ Լճատուծ Վրիստոսի արիւնին միջնորդութիւնովը մեղաւորին թողութիւն կըշնորհէ , առաստենը կըհազվեցունէ ևս անիկա Վրիստոսի արդարութիւնովը : Լճոնք որ կուրանան թէ մար-

Ասկից ետքը երազեա մէջը տեսայ որ ինքը ասանկ առաջ գնաց՝ մինչև որ ձորը իջաւ , ուր որ ճամբէն քիչ մը դուրս իրեք հոգի տեսաւ խորունկ քնացած , ու ոտքերնին շղթաներով կոպած : Մէկին անունն էր՝ Պարզամիտ , մէկաւրին՝ Նոյլ , ու երրորդինը Յանդուգն :

Քրիստիանոս անոնք աս վիճակին մէջը տեսնալով՝ դէպի իրենց գնաց , որ ըլլայ թէ անոնք արթնցունէ . ու կանչեց թէ , Վուք կայմին գլուխը ննջողներուն կրնմանիք . Ընտանիք . ի՞նչ . 34 . քանզի ձեր տակը մեռեալ ծովն է . մէկ ծով մը՝ որ յատակ չունի . ուստի արթնցէք ու մէկդի եկէք ատկից . ու նաև կամք ըրէք , և ես ձեր շղթաները քակելու ձեզի կօգնեմ * : Վաւ զըուցեց անոնց թէ , Ընտանիք . ի՞նչ . 34 . քանզի ձեր տակը մեռեալ ծովն է . մէկ ծով մը՝ որ յատակ չունի . ուստի արթնցէք ու մէկդի եկէք ատկից . ու նաև կամք ըրէք , և ես ձեր շղթաները քակելու ձեզի կօգնեմ * : Վաւ զըուցեց անոնց թէ , Ընտանիք . ի՞նչ . 34 . քանզի ձեր տակը մեռեալ ծովն է . մէկ ծով մը՝ որ յատակ չունի . ուստի արթնցէք ու մէկդի եկէք ատկից . ու նաև կամք ըրէք , և ես ձեր շղթաները քակելու ձեզի կօգնեմ * : Վաւ զըուցեց անոնց թէ , Ընտանիք . ի՞նչ . 34 . քանզի ձեր տակը մեռեալ ծովն է . մէկ ծով մը՝ որ յատակ չունի . ուստի արթնցէք ու մէկդի եկէք ատկից . ու նաև կամք ըրէք , և ես ձեր շղթաները քակելու ձեզի կօգնեմ * :

Գիկ Վրիստոսի արդարութիւնովը արդարացած կը սեպվին , ամենևին չեն տեսնար օրէկքին սրբութիւնը՝ ու իրենց մերկութիւնը , ու չեն ատեր բուն իրենց արդարութեանը աղտեղի լաթերը :

* Վարեպաշտ Վրիստոնէին ոգին ուրիշներուն վտանգը կիմանայ , ու կըջանայ և կաշխատի օգնել անոնց :

վրայ անոնք իր երեսը նայեցան, ու սկըսեցին
 աս կերպը պատասխան տալ * : Պարզամիտը
 ըսաւ . Ես վտանգ մը չեմ տեսնար : Եւ յայլ ը-
 սաւ . Բիչ մըն ալ քընանանք : Եւ Հանդու-
 գը ըսաւ . Եմէն մարդ ինքըզինքը Թող հո-
 գայ : Եսանկ անոնք պառկեցան նորէն քնանա-
 լու, ու Բրիստիանոս իր ճամբան գնաց :

Եւ սակայն մտատանջութեան մէջ էր Թէ
 ինչպէս աս վիճակին մէջը ինկած մարդիկ ա-
 նանկ ոչինչ սեպեն մէկու մը բարերարութիւնը
 որ ազատաբար կըկամի օգնել անոնց զիբեմք
 արթընցունելով, իրենց խրատ տալով, ու ի-
 ընց երկաթներեն ազատելու համար՝ իրենց
 օգնութեան հասնելու առաջարկելով : Եւ աս
 մտատանջութեան մէջը որ կերթար՝ երկու
 հոգի տեսաւ՝ որ նեղ ճամբուն ձախ կողմի
 պատին վրայէն անցնելով առաջ կուգային,
 ու արտորնօք եկան իրեն հասան : Եսոնց մէ-
 կուն անունը Փարիսեցի էր՝ և մէկալինը Կեղ-

* Թէ որ Եստուած մեղաւորին աչքերը չի բա-
 նայ, ոչինչ յորդոր բանի տեղ կանցնի անոնց : Հի-
 շէ որ ամէնը շնորհք է : Եստուծոյ շնորհքն է որ
 կըկենդանացունէ՝ կըլուսաւորէ՝ կըզղջացունէ՝ կար-
 դարացունէ՝ կըպահպանէ՝ կըսրբացունէ ու կըփա-
 ռաւորէ :

Ճաւոր : Ուտար ըսածիւ պէս՝ եկան իրեն հասան , ու Վրիասիանոս անոնց հետը ասանկ խօսակցութեան մտաւ :

Վրիասիանոս • Պատմաներ , ուրկի՞ց կուզաք , ե ուր կերթաք :

Վարիսեցի ե կեղծասոր • Սենք Սնափառութեան քաղաքը ծնած ենք , ու Սիօն լեւը կերթանք փառաւորվելու :

Վրիասիանոս • Ինչո՞ւ համար սո ճամբուն սկիզբը եղած դռնէն ներս չի մտաք : Չէ՞ք զիտեր որ զըված է թէ , « Ըն որ դռնէն չի մտնար՝ հապա ուրիշ տեղէն կելլայ , անիկա գող ու աւագակ է » - (304. Ժ. 1 :

Վարիսեցի ե կեղծասոր • Պատասխան տըւին՝ թէ բոլոր իրենց քաղաքացիները հեռու կը տեպեն մինչև դուռը երթալը ու անկից ներս մտնալը • Ե անոր համար իրենց սովորական ճամբան շիտակ դալ ու սրտոէն անցնիլն է , ինչպէս որ իրենք ըրին :

Վրիասիանոս • Իայց մեր երթալու քաղքին Տէրոջը դէմ յանցանք չի պիտի՞ սեպիլի , իրեն յայտնի կամքը ասանկ աւրելլը :

Վարիսեցի ե կեղծասոր • Պատասխան տըւին՝ թէ ասոր վրայով ինքը չի պարտի մտասան

ջուլթիւն քաշել . քանզի իրենց ըրածին պէս է սովորութիւնը . և թէ որ հարկաւոր ըլլայ կրնան վկայութեամբ հաստատել թէ հազար տարիէն էվելի իրենք ան սովորութիւնը ունին :

Քրիստոս . Ռայց ստ ձեր սովորութիւնը օրէնքին առջևը կրնայ արդարանալ :

Փարիսէցի և կէզտոր . Եւ սովորութիւնին հաստատութիւնը հազար տարիէն

հին ըլլալով՝ անաչառ դատաւոր մը Դանէն չէ
հոնողնէրը
ընտրածէն
անտարակոյս օրինաւոր բանի տեղ
պիտի ընդունի ան : Եւ մանաւանդ , Եւ պարտա-
խան իւ իւ
գրանն
թէ որ մենք ճամբուն մէջը մտնանք
նէ , որ կերպով հոն մտնալնիս ի՞նչ

հոգ է : Թէ որ ճամբուն մէջն ենք՝ մէջն ենք .
դուն ալ միայն ճամբուն մէջն ես , որ՝ ինչպէս
կիմանանք , դունէն մտեր ես . և մենք ալ ճամ-
բուն մէջն ենք՝ որ պատին վրայէն հոն ան-
ցանք . ուստի քու վիճակդ մերինէն էվելի ի՞նչ
աղէկութիւն ունի :

Քրիստոս . Եւս իմ Տէրոջս կանոնովը
կերթամ , դուք ձեր այլանդակ մտքին հնար-
քովը : Եւ ճամբուն Տէրը արդէն ձեզ գող
համարած է . ուստի կարծեմ թէ ճամբուն

վերջը, հասնելնուդ շիտակ մարդիկ չի պիտի գտնըվիք դուք : Դուք ինքնիրեննուդ ներս մըտաք առանց իր հրամանին , և ինքնիրեննուդ դուրս պիտի ելլաք առանց իր ողորմութեանը :

Աս խօսքիս երկան պատասխան չի տըլին , հապա լսին որ ինքը ինքըզինքին նայի : Անատենը տեսայ որ առանց երկան բարակ իրարու հետ խօսակցելու ամէն մարդ իր ճամբան գնաց . միայն թէ սա երկու մարդիկը Վրիստիանոսին ըսին որ թուր օրէնքները և հրամանները անտարակոյս իրենք ալ անոր պէս զգուշութեամբ կըկատարեն : Աստի դուն ինչ բանով մէզմէ էվելի աղէկ ես՝ ըսին , բայց միայն կոնակիդ վերարկուովը՝ որ մեր կարծածին պէս՝ դրացիներուդ մէկը քեզի տըլած է , քու մերկութեանդ ամօթը ծածկելու * :

Վրիստիանոս . Դուք դունէն ներս չի մտնալէն հոքը օրէնքներով և հրամաններով չէք փըր-

* Վրիստոսի արգարութեանը փառաւոր պատմուճանը՝ որ հաւատացեալներուն կըպարգևւի ու անոնց վրայ կըծածկըզի , անարգեալ ու քամահարելի է՝ անունով Վրիստոնեաներուն առջին , որոնք իրենց մերկութիւնը ու ծածկոյթի կարօտ ըլլալը չեն տեսնար : Բայց խոնարհ հոգիները իրենց

կըվիր . Վաղ . ք . 16 : Եւ կռնակի վերարկուիս վրայ իմանալ կողգէք նէ , իմ գնալու տեղին Տէրը ինձի տըւաւ ան , ըսածնուդ պէս անով իմ մերկութիւնս ծածկելու համար : Ես ալ անիկա իր մարդասիրութեանը իբրև մէկ նշանը կրնդունիմ , որովհետև առաջուց բան մը չունէի ես՝ հապա հնոտի լաթեր : Ես կից 'ի զատ ես զիս կրմիսիթարեմ անով իմ ճամբուս մէջը : Կըսեմ իմ անձիս՝ Եւանց տարակուսի երբոր քաղաքին դուռը հասնիմ , անոր Տէրը զիս աղէկ պիտի գիտնայ՝ իր վերարկուն՝ իմ կռնակս ունենալուս համար . ան վերարկուն որ ինքը ձրիապէս ինձի շնորհեց , իմ հնոտի լաթերէս զիս մերկացուցած օրը : Եւս ճակատս նշան մալ ունիմ՝ որ գուցէ հրամանքնիդ չի նկատեցիք անիկա , որնոր իմ

անոր կարօտը լլալը կըխոստովանին , ու անիկա ընդունենլնուն Վրիստոս կըփառաւորեն : Վարիսեցիները ու կեղծաւորները բոլորովին անծանօթ ըլլալով իրենց անկեալ բնութեանը , նորոգութեան՝ Վրիստոսի տրդարութեանը՝ կամ Սրբացուցիչ և Միսիթարիչ Հոգւոյն Սրբոյ միօրինակ ներգործութեանը հարկաւորութիւնը չեն տեսնար . ու անոր համար ճշմարիտ Վրիստոնեան ծաղը կրնեն , ու անոր փորձառութիւնը յափշտակեալ մտքի ու խելագարութեան կրնծայեն :

Տէրոջս մէկ մտերիմ ընկերը հոն դրոշմեց ու սերէս իմ բեռս ինկած օրը : Ես ալ ձեզի ըսեմ՝ որ անատենը ինձի կնքած Թուլթ մը տրվեցաւ , որպէս զի իմ ճամբուս մէջը աւնիկա կարդալով մխիթարվիմ : Կաև ինձի հրամայվեցաւ ալ որ երկնային դուռը հասած ատենս անիկա ներս տամ , իբրև նշան իմ աւնոր ետևէն անշուշտ ներս մտնալուս : Կարծեմ Թէ դուք աս բաներուն մէկը չունիք . և անոր համար չունիք՝ որ դուռնէն ներս չի մտաք * :

Ենոք աս բաներուն պատասխան մը չի տըւին իրեն . միայն Թէ իրարու վրայ նայեցան ու ծիծաղեցան † : Ետքը տեսայ որ ամէնն ալ առաջ դացին , բայց Վրիստիանոս աւնոնցմէ առաջ անցաւ ու ալ խօսակցութիւն մը չըրաւ բայց միայն ինքիւրէնը . ու ան ալ

* Ըոգիին վկայութիւնը ու կնիքը ունեցող հոգին Վրիստոսի արդարութիւնովը կը պարծենայ ալ . ինչու որ հաւատքին ուրախութիւնը աս է՝ որ Վրիստոս Տէրը մեր արդարութիւնն է . Երէմ. իբ . 6 : Սարգիկ ոչինչ տեղը կըխօսին ներքին մխիթարութիւններու վրայ , որոնք Վրիստոսի արդարութեան հանդերձը կըմերժեն :

† Սնապարծ յիմարները Վրիստոսի խոնարհ ճամբորդներուն վրայ կըննդան :

երբեմն հառաչելով * և երբեմն ուրախանալով : Վաւա շատ անգամ կրկարդար ան լուսաւորներէն մէկուն տըւած Թուղթը † և անով կըմխիթարվէր :

Լս միջոցին երազես մէջը տեսայ որ անոնց ամէնն ալ առաջ կերթային՝ մինչև որ Գժուարութեան լեռին ոտքը եկան ‡ , ու

* Վրիստիանոս արդէն թողութիւն ընդունած ըլլալով՝ ինչո՞ւ համար կըհառաչէր : Սարգ պիտի կարծէ որ ինքը բոլորովին ուրախութիւն կտրած պիտի ըլլար : Լսոնք սիրոյ հառաչանքներ էին՝ որ հոգևոր ուրախութենէ օտար եղողները բան մը չեն գիտեր անոնց վրայ :

† Լսիկա կընշանակէ Հոգիէն իր ունեցած ստուգութիւնը՝ Վրիստոսի ձրի սիրոյն՝ ձրի շնորհացը՝ ձրի թողութեանը՝ ու ձրի արդարութեանը վրայ , որ իր հոգիին ընծայված են :

‡ Վրիստիանոս Գժուարութեան լեռը հասաւ . ասիկա մարմինի ու արիւնի անհաճոյ ճամբայ մըն է , որ մեր ճամբորդութեանը մէջ մեր հաւատքին անկեղծութիւնը ու մեր հոգիներուն փոյթը կը փորձէ : Վրիստիանոս դռնէն ներս մտնալէն սուաջ քանի մը անգամ փորձըվեցաւ : Բայց հաւատացեալը հաւատքին մէջը փոքր՝ի շատէ հաստատվելէն ետքը մեծամեծ փորձութիւններու կըպատահի : Երբոր Խաչին ու Գերեզմանին գանք՝ պատրաստ ենք մտածելու թէ ամէն գէշերը անցան : Բայց Գժուարութեան լեռը , Լպողիոնին հետ պատերազմիլը , Սահուան Դուբին Զորը , Հսկայ Յու-

րուն յատակը աղբիւր մը կար : Եւ նոյն տեղը
ան դռնէն եկած շիտակ ճամբայէն 'ի զառ
երկու ճամբաներ ալ կային , որոնց մէկը
ձախ կողմը ու մէկայլը աջ կողմը կերթար լե-
ռանը ոտքէն . բայց նեղ ճամբան շիտակ
լեռնիվեր կելլար , ու կրկոչվէր Վժուարու-
թիւն : Էիմայ Վրիստիանոս աղբիւրը գնաց ,
Եւսայ . խթ . 10 . ու անկից ջուր խմեց ինքզնիքը
զովայունելու համար * . ու սկըսեց լեռնիվեր
ելլալ՝ ըսելով .

Թէ և բարձր լեռ՝ բայց ջանամ ելլալ,
Վժուարութիւնը ինձի վեշտ չըլլայ .
Օ՛ի կենաց ճամբան աս տեղէն ըլլալ
կրտեսնամկորես , սիրտս թող ցնծայ :

սահատութիւնին ամրոցը ու կախարդութիւն եղած
Վետինը տակաւին անտես կըմնան : Եւսանկ Խա-
րայէլացիք ուրախացան՝ երբոր տեսան թէ Եգիպ-
տացիները կարմիր Օ՛ովուն մէջ կրխեղըրվէին , ու
միտքերնին չի բերին իրենց անցնելու անապատը ,
ու որ իրենց մեծամեծ նեղութիւնները տակաւին դա-
լու էին :

* Եւստուն ու ամենաբարին Եւստուած ընդ-
հանրապէս սովորականէն էվելի կրխորկէ իր հոգիին
ու շնորհքին օգնութիւնը անոնց՝ որոնք որ ինքը
դժուարութեան ու աշխատութեան կրկոչէ : Վր-
րիստոնէն Վժուարութեան լեռը ելլալու սկսելէն
առաջ Եւստուածային միտքարութեանը աղբիւրէն
իր հոգին կըզովացունէ :

Տըրտմութիւն ու վախ ինծմէ հեռանան .
 Եղէկ է շիտակ ճամբան երթալը
 Թէ և դրժուարին , քան թէ ծուռ ճամբան
 Ար թէ և դիւրին՝ բայց վայ է վերջը * :

Մէկալ երկուքն ալ լեռանը ոտքը հա-
 սան . բայց երբոր տեսան թէ լեռը զառ ՚ի
 վեր և բարձր էր , ու որ ուրիշ երկու ճամբա-
 ներ ալ կային , ու նաև կարծելով թէ ան
 երկու ճամբաներն ալ նորէն ան ճամբուն կը
 խառնըվին՝ ուրկից ՚ի վեր Վրիստիանոս ե-
 լաւ լեռանը միւս կողմը , միտքերնին հաստա-
 տեցին որ ան ճամբաներէն երթան : Հիմայ
 աս ճամբաներուն մէկին անունը Վ տանգ էր ,
 ու մէկալինը կործանում : Ուստի Ուղեց ճամ-
 մէկերնին Վ տանգ կոչված ճամբէն Գոռ-
 բան բռնեց , ուրկից մեծ անտառի նաւ- Վե-
 մը մէջ ելաւ . մէկալը շիտակ դէպի Գանգը :
 կործանման ճամբան բռնեց , ու սև լեռներով
 շրջապատված մէկ ընդարձակ դաշտի մը մէջ

* Հաւատա՛ ո՛վ ճանապարհորդ Վրիստոնեայ՝
 որ մեծ բարութիւն մը մտ է քեզի , երբոր մեծ
 դժուարութեան մը կը պատահիս անոր հետը մար-
 անչելու ու յաղթելու :

ելաւ , ուր որ գլաորեցաւ ու ինկաւ , և մէյ մալ չի կրցաւ ելլալ * :

Ասկից ետքը Վրիստիանոսին ետևէն նայեցայ որ լեռնիվեր կելլար , ու տեսայ որ վազելէն քաշելու իջաւ , ու քաշելէն ձեռքերովը և ծունկերովը վեր ելլալու սկսեց տեղին զառ 'ի վեր ըլլալուն համար : Արդ՝ լեռանը գլուխը ելլալու ճամբուն մէջ տեղվանքը գեղեցիկ ճառատունկ մը կար , որ Շողոմոս քլուրին Տէրը հոգնած ճամբորդ «*Կոբ*» իններուն զովանալուն համար շինեթ էր : (Ըստի Վրիստիանոս դէպի հոն գնաց) ու վար նստաւ որ հանգչի . ետքը իր Թուզթը ծոցէն հանեց ու իր մխիթարութեանը համար սկսեց կարդալ անոր մէջը : «*Կաև հխայ նորէն սկսեց նկատել ան վերարկուն կամ պատմուճանք՝ որ իրաչին առջևը կայնած առենը իրեն արվեցաւ : Ասանկ աստեն մը ինքըզինքը զուար-*

* Աեղծաւորները ու փարիսեցիները ինտոր որ դիւրութեամբ կրմտնան հաւատքի ճամբուն մէջ՝ տառնց ճշմարտապէս մեղքերնին ճանչնալու , որ պիտի պատճառէր իրենց Վրիստոսի դիմել որ ան նեղ դուռնէ , անանկ ալ մարմինի ու արիւնի խիստ դիւրին գալու ճամբան կըգտնան՝ ու վերջապէս կրկորնչին :

Ճացունեւում վերջապէս սկըսեց մրափել , և անկից խորունկ քունի մը մէջ ինչ արնանակաւ , որ դրեթէ մինչև գիշեր զինչ ընկնալքը հոն արգիլեց . ու իր քունին մէջ իր թուղթը ձեռքէն ինկաւ * : Լիմայ քնացած տեղը մէկը եկաւ իրեն , և զննքը արթընցուց՝ ըսելով . « Կնա՛ մըջունին՝ ո՛վ ծոյլ , իր ճամբաները մտածէ , ու իմաստուն եղիր՝ » . Եւստի .

* Վրիստիանոս լեռնիվեր ելլալուն Վրիստոսի մահուանը ու արդարութեանը տեսութիւնովը կը զուարճանար , որ կիմացվի ծոցի թուղթը կարգալու հանելովը՝ ու խաչին առջևը իրեն տրված պատմութեանին կամ վերարկուին վրայ նայելովը : Իսպիտոս , որ ան իրեն պատահածը իրեն պէս ճամբորդներուն ալ յաճախ կը պատահի : Խոնարհութեամբ ու գոհութեամբ ան բարիքները Պարգևողին երկիրպագութիւն ընելու տեղը՝ կը սկըսինք հանգչիլ , բաւական համարելով արդէն իր տըրածը : Կնքնահաճութեան ու անձերնուս արդարութեանը մտքի մը մէջ կիյնանք . ու մոռնալով թէ բոլոր մեր ընդունածը Տէրոջմէն է , սնապարծութեամբ մենք մեզի կընծայենք՝ որպէս թէ յատկապէս մերն էին անոնք : Երբոր ասանկ մենք մեր աչքին առջևը կը ծագենք՝ ու կը կարծենք թէ երկնից առաջին սիրելին մենք ենք , կը ձգենք մեր արթնութիւնը , տպահոյութեան ու մարմնաւոր վստահութեան ոգի մը վրանիս կառնենք , որ երկինքէն ընդունած մեր վկայութիւնները կը նսեմացունէ :

Ճ. 6: Ըսով Վրիստիանոս մէկէնիմէկ վեր
ցաթկեց, ու արտորաց ճամբայ ելլալու, ու
արագ արագ երթալով մինչև լեռանը գլուխը
ելաւ * :

Արդ՝ երբոր ինքը լեռանը գլուխը ելաւ
վազելով երկու հոգի կուգային ու ժգնութեամբ
իր դէմը զարնըվելու: Սէկին անունը Սախ-
կոտ էր և մէկայինը Կասկածոտ †: Վրիստիա-
նոս ասոնց հարցուց թէ, Պարոններ, ինչ կայ,
սխալ ճամբան կը վազէք կոր դուք: Պատաս-
խան տըլաւ Սախկոտը՝ թէ իրենք Սիօն քա-
ղաքը կերթային՝ ու ան դժուարին ճամբայէն
վեր ելան. բայց՝ ըսաւ մարդը, քանի որ ա-

* Տէրը իր ժողովուրդը սիրելով թող չի տար
անոնց որ մահուան քունը քնանան, թէ և ձգէ որ
մինչև իրենց մտիթարութիւնը կորսնցունենին
ննջեն. ասկա անոնց հոգիներուն մեծ տրտմութիւն
ու նեղութիւն է:

† Սախկոտը ու Կասկածոտը Վրիստոնէական
հաւատքին մեծ թշնամիներն են, ու անոր ճամբուն
վրայով չար լուրեր կը բերեն: Սի լէք անոնց,
հապա Ըստուծոյ ճշմարտութեանը ու հաւատար-
մութեանը նայեցէք. անոր պատուական խոստ-
մունքներուն ապաւինեցէք, ու ձեր ոտքերը խա-
ղաղութեան աւետարանին կօշիկներովը հագուցէք:
Ո՞վ կամ ի՞նչ արդեօք պիտի մնասէ ձեզի, թէ
որ դուք բարիին հետևող ըլլաք:

ուաջ կերթանք, այնչափ վտանգներու կը պատահինք. անոր համար դարձանք ու նորէն ետ կերթանք կոր :

Ղշմարիտ է, ըսաւ Կասկածոտը. քանզի ճիշտ մեր առջևը գոյգ մը առիւծ պառկեր են, որոնք չենք գիտեր քնացած են արդեօք եթէ արթուն. և անտարակոյս կը կարծենք թէ անոնց բաւական մօտենալու ըլլայինք նէ, իսկոյն մեզ կտոր կտոր պիտի ընէին :

Անատեն ըսաւ Վրիստիանոս. Վուք զիս վախցուցիք. բայց ո՛ր երթամ ես ապահով մնալու. թէ որ ետ երթամ իմ բուն երկիրս, անիկա կրակի ու ծծումբի պատրաստը ված է, ու ես անտարակոյս պիտի կորսը վիմ հոն : Թէ որ կրնամ երկնային քաղաքը երթալ, անշուշտ գիտեմ որ հոն ապահովութեան մէջ պիտի ըլլամ * : Սիրտ առնեմ. ետ դառնալը

* Վրիստիանոս հոգևորական ողջամիտ առարկութիւնով՝ այսինքն մարմինին վախուն դէմ ու կասկածոտութեան և անհաւատութեան դէմ հաւատքին առարկութիւնովը վախը մէկ դի կը թօթվէ : Մենք միշտ հաստատուն մարգարէական խօսք մը ունինք, որուն թէ որ միտք զնելու ըլլանք աղէկ կրնենք : Արբոր վտանգները ձեզ նեղը կը ձգեն՝ ու վախերը՝ ձեր վրայ կը յարձակին, միտքերնիդ բերեք թէ դուք որինն էք ու որուն կը ծա-

մեռնիլ է . առաջ երթալը մեռնելու վախ է , ու անկից անդին յաւիտենական կեանք է . ուստի ալ առաջ կերթամ : Եսանկ՝ Սախկոտը և Կասկածոտը լեռնիվար վազեցին , ու Վրիստիանոս իր ճամբան գնաց : Բայց ան մարդոցմէն լրածին վրայ նորէն մտածելով , ձեռքը ծոցը խօթեց իր թուղթին համար՝ * որ անիկա կարգայ ու միսիթարվի . սակայն փնտռեց ու չի գտաւ անիկա : Ենտունը Վրլրիստիանոս մեծ խռովութեան մէջ ինկաւ : ու

ուայէք . նայեցէք ան ճամբուն որուն մէջն էք , ու ձեր հաւատքին վախճանին , այսինքն՝ ձեր հոգւոյն փրկութեանը : Եստուծոյ բանը սորվելու՝ պարապեցէք , ու անոր հնազանդեցէք :

* Ողորմելի ճանապարհորդը Կասկածոտին ու Սախկոտին յարձակմունքը ընդունելէն ետեւ իր թուղթը կրփնտրուէ՝ որ միսիթարվի , բայց խարված է իր անկալութենէն . թուղթը իր ծոցը չէ : Ենտունը կըզգայ իր յիմարութիւնը որով ծառատունկին մէջը քնացեր էր : Իր թշուառ վիճակին վրայ կուլայ կողբայ , ու քայլ առ քայլ ետ կըզառնայ մինչև որ իր թուղթը կըգտնայ : Եսանկ կըվարվի Տէրը իր ուխտազանց զակընթերուն հետ . փրկութեան ուրախութիւնները անոնց պարգևելէն առաջ՝ իրմէն հեռանալուն համար իրենց մեղացը վրայ ապաշխարութեան զգացում մը կուտայ անոնց :

ինչ ընելը չէր գիտեր * . քանզի իրեն մխիթարութիւն տրւող բանը՝ ու իր երկնային քաղաքը մտնալու վկայականը կորսընցուցեր էր : Սուտի աս տեղը սկսեց մեծապէս շփոթիլ . վերջը ինքըզինքին եկաւ որ լեւանը վրայի ծառատունկին մէջը քնացեր էր . և ծունկի վրայ գալով իր յիմարական գործին թողութիւն խնդրեց Նստուծմէ , ու հտքը ետ դարձաւ իր թուղթը փնտրուելու : Բայց ո՞վ կրնայ ըստ բաւականին ցուցընել թէ Վրիստիանոսին սիրտը ինչ տրտմութեան մէջ էր բոլոր իր ետ գացած ատենը : Նրբեմն կըհաւաչէր , երբեմն կուլար , և շատ անգամ ինքըզինքը կընախատէր որ անանկ յիմարսբար քնացաւ ան տեղը՝ որնոր միայն ճամբորդները իրենց հոգնութենէն քիչ մը հանգչելու համար շինված էր : Սուտի աս վիճակիս մէջը ետ կերթար՝ զգուշութեամբ մէկ կողմը և մէկալ կողմը նայելով բոլոր գացած ճամբան , որ ըլ-

* Վրիստիանոս իր թուղթին համար շփոթութեան մէջ է . ասիկա օրինաւոր է : Ի՞նչ որ հոգեւոր կորուստ մը ունենանք՝ ու անխռով և անհոգ ըլլանք անոր վրայ , չար նշան մըն է թէ մարմնաւոր ապահովութեան ու սնտոի յուսով կապրինքկոր : Նշբարբ իմ , զգուշ կեցիք ասկից :

լայ թէ իր թուղթը գտնայ, ոչնոր իր ճամբորդու ղութեանը մէջ այնչափ անգամ իր մխիթարութիւնը եղեր էր. ասանկ երթալով մինչև որ նորէն ան ծառատունկը տեսնըվեցաւ, ուր որ ինքը նստեր ու քնացեր էր: Եւ այց անիկա տեսնալը իր տրտմութիւնը էվելօք շատցուց, նորէն մէյմալ իր միտքը բերելով իր քրնանալու չարութիւնը * • (Յայր. ք. 4: Թ. Ե. 6—8: Ուստի ասանկ առաջ գնաց իր մեղանչական քունին վրայ ողբալով և ըսելով, Վայ ինձի պէս թշուառականին որ ցորեկը քրնացայ, որ դժուարութեան մէջ տեղը քրնացայ. որ այնչափ իմ մարմինիս հաճոյքը ըրի՜ որ լեռանը Տէրոջը ճամբորդներուն հոգինները կազդուրելու համար շինածը ես իմ մարմինիս հեշտութեանը համար գործածեցի: Վուճ տեղը որչափ քայլեր առի: Եսանկ պատահեցաւ խալայէլն ալ. որ իրենց մեղքերուն

* Վրիստոնեայ եղբարք՝ նայեցէք ձեր հոգիններուն: Օգուշացէք որ ձեր առջի հեշտութիւններուն համար վերջին տրտմութիւններ չունենաք: Եւ այց լաւագոյն է՝ «Ես մէկ տառապեալ մարդ մըն եմ» կանչելը քան մարմնաւոր վստահութեամբ ապրիլը, ու հոգևոր մխիթարութիւններու փափաղուն ենալուն մեռած ըլլալը:

համար կարմիր Ծովուն ճամբայէն ետ խըլլկըվեցան : Տրտմութեամբ կանցնիմ ես աս ճամբայէն՝ որնոր եթէ ան մեղանչական քունը չըլլար նէ , գուցէ ուրախութեամբ պիտի անցնէի : Էիմայ որչափ առաջ գացած պիտի ըլլայի իմ ճամբաս . իրեք անգամ պիտի անցնիմ ասկից , որ միայն մէկ անգամէն էվել անցնելու կարօտութիւն չունէի . մանաւանդ որ հիմայ ուշ ալ պիտի մնամ . քանզի գրեթէ օրը իրիկուն եղած է . ափսոս , ինչ կըլլար որ չի քնանայի :

Արդ՝ մինչև հիմայ ինքը նորէն ծառատունկին հասաւ , ուր ատեն մը նստաւ և լացաւ . բայց վերջը Աստուծոյ նախախնամութիւնովը տրտմութեան մէջ թաղված վար նայելով իր նստած բազմոցին տակը , հոն տեսաւ իր թուղթը . որնոր դողալով ու արտորնօք յափշտակեց ու իր ծոցը դրաւ : Բայց 'վ կրնայ պատմել թէ որչափ ուրախացաւ աս մարդը երբոր նորէն իր թուղթը գտաւ : Վանզի աս թուղթն էր իր կեանքին ապահովութիւնը , և փափաքելի նաւահանգիստը հասած ատենը ընդունելի ըլլալու նշանը : Ուստի անիկա իր ծոցը դրաւ , փառք տըլաւ Աստուծոյ որ իր

աչքը անոր ինկած տեղը շիտկեց , և ուրախու-
թեամբ ու լալով նորէն ճամբայ ելաւ * :
Բայց ինչ կրեսես , որչափ արտորնօք կելար
հիմայ լեռին մնայած ճամբան : Այս սակայն
լեռանը գլուխը չեւած արեւը մարը մտաւ , ու
ասիկա նորէն Վրիստիանոսին միտքը ձգեց իր
ծուլութեամբ քնանալը , և ասանկ՝ նորէն ըս-
կրեսեց իր վրայ ողջաւ : Ա՛յ դուն մեղանչա-
կան քուն , ինչպէս քու պատճառովդ մութը
զես պիտի կոխէ իմ ճամբորդութեանս մէջ .
առանց արեգակի պարտիմ քալել , խաւարը
իմ ոտքիս ճամբան պիտի ծածկէ , ու ես իմ
մեղանչական քունիս համար տրտմազգեաց ա-
րարածներուն ձայները պիտի լսեմ : Հիմայ
իր միտքը եկաւ նաև ան պատմութիւնը՝ որ
կասկածոտր ու Վախկոտր իրեն ըսին , թէ
առիւծները տեսնալով որչափ վախցեր էին :
Աստի Վրիստիանոս նորէն ինքնիրէն ըսաւ .
Այ գազանները զիշերը կրպըտըտին իրենց

* Ասիկա կրնչանակէ Աստուծոյ սիրոյն ու կա-
րողութեանը վրայ՝ ու հիսուս Վրիստոսի հաւատ-
քովը հոգևով Արքով ուրախանալու վրայ նոր
զգացում մը ունենալ : Այկատէ թէ ինչ ուրախու-
թեամբ ու արտորնօք հիմայ իր ճամբան կերթայ
աս ճանապարհորդը :

որսերուն համար . և թէ որ մուծ տեղը ինծի պատահելու ըլլան՝ ինչպէս պիտի ազատիմ՝ անոնցմէ . ինչպէս պիտի փախչիմ անոնց ճանկերուն տակը կտոր կտոր փառատվելէն : Ըստ խորհուրդովը առաջ գնաց իր ճամբան . բայց երբոր ասանկ իր դժբաղդ սխալմունքին վրայ կըցաւէր՝ աչքը վեր վերցուց , ու մէյմալ իր առջևը հոյակապ պալատ մը տեսաւ , որուն անունը կըկոչվէր Վեղեցիկ . և անիկա ճիշտ ճամբային վրան շինված էր * . (Կարգ . 7 . 2 : Թ . Թ . 7 , 8 :

Ըսանկ՝ երազիս մէջը տեսայ որ ինքը արտորայ և առաջ գնաց , որ եթէ հնար է նէ գիշերը հոն մնալու կարենայ : Բայց շատ չի

* Ըսիկա կընշանակէ Վրիստոսի զգալի կամ երեւելի եկեղեցին՝ որուն Վրիստոնեան կըկապվի , ու սուրբերուն հետ հաղորդութիւն ընելու բարութիւնը ու միսիթարութիւնը կըվայելէ : Վարձեալ կընայ նշանակել աւետարանական կարգաւորութիւններուն մէջ Վրիստոնէից ժողովին առանձնաշնորհութիւնները : Ըս կարգադրութիւնները բլուրին Տէրոջմէն սահմանված են՝ իր ժողովրդոցը հանգրստութեանը ու աւետարանին ապահովութեանը համար . որպէս զի անոնք միսիթարվին ու իմաստութիւն և զօրութիւն առնեն բարի պատերազմը պատերազմելու , ու իրենց ենթակայ եղած վտանգներէն ու որոգայթներէն անվնաս անցնին :

գացած խիստ նեղ ճամբայ մը մտաւ , որն որ
 'Ղունապանին սենեակէն մէկ ասպարէզի չափ
 հեռու էր . և գացած ատենը աղէկ մը իր առ-
 ջևը նայելով՝ ճամբուն վրայ երկու առիւծ
 տեսաւ * : Ըիմայ կըտեսնամ ան վտանգները՝
 ըսաւ իր մտքովը , որոնք կասկածոտը ու
 վախկոտը ետ դարձուցին : Առիւծներն ալ
 կապված էին , բայց ինքը չի տեսաւ շղթա-
 ները : Ուստի սկըսեց վախնալ , և մտածեց որ
 ինքն ալ անոնց պէս ետ դառնայ . քանզի ու-
 ըրիչ բան չէր կարծէր , հապա՛ թէ մահը իր
 առջևն է : Բայց 'Ղունապանը՝ որուն անունը
 Պահապան էր † , իր տեղէն տեսնալով որ

* Աս երկու առիւծները կրնան նշանակել Սատա-
 նան ու Աշխարհը որ մեզի դէմ կըմռնչեն . բայց եր-
 կուքն ալ շղթայով կապված են , ու առանց Աս-
 տուծոյ թոյլտուութեանը մէկ օղակ մը չեն կրնար
 առաջ խաղալ : Երբեմն մենք չենք տեսնար շղթան ,
 ու կըվախնանք . բայց մեր պահապան տէրօջ տը-
 ւած ձայնը է , "Ս"ի վախնար" :

† 'Ղունապանը կընշանակէ Վրիստոսի պաշտօ-
 նեայն՝ որ հոգիներուն լաւութեանը համար կըհսկէ :
 Ամբողջներուն սրտին ճիշտօք պատուական են
 անոնք : Եւ այէ թէ ի՞նչ անուշ քաջութիւններ
 ու երջանիկ խրատներ առաւ անկից Աննապար-
 հորդը :

Վրիստիանոսը կաղաց՝ և որպէս թէ ետ գաւնալ կուզէր, կանչեց անոր՝ ըսելով. Մ. յաջափ վատասիրտ եմ մի . Սաբ. 7. 40 : Սի վախնար առիւծներէն՝ քանզի անոնք շղթայով կապված են, ու հոն դրված են՝ որ հաւատք ունեցողները փորձըվին, ու չունեցողները յայտնի ըլլան : Ղամբուն մէջ տեղէն քայլէ, և քեզի վնաս մը չի պիտի գայ :

Ննատենը տեսայ որ առիւծներէն վախնալուն դողալով ինքը առաջ կերթար . բայց զգուշութեամբ Վռնապանին ցուցրցած ճամբան երթալով՝ լսեց որ կրմունչէին անոնք, բայց իրեն վնաս մը չըրին : Ննատենը ծափ զարնելով առաջ գնաց մինչև որ Վռնապանին կեցած տեղը եկաւ, ու հոն դրանը առջին կայնեցաւ :

Ննկէ ետև Վրիստիանոս Վռնապանին ըսաւ թէ, Տէր իմ, ի՞նչ տուն է այս, ու ես աս գիշեր հոս կրնամ մի կենալ : Պատասխան տրլաւ Վռնապանը . Մտունը Վրլըին Տէրը շինած է, և ինքը ասիկա ճամբորդներուն քաջալերութեանը և ապահովութեանը համար շիներ է : Վռնապանը հարցուց ևս թէ ինքը ուրկի՞ց է, և ո՞ւր կերթակոր :

Վրիստինոս . Ես կործանման քաղաքէն կուգամ ու Սիօն լեռը կերթամկոր . բայց հիմայ արևը մարը մտած ըլլալուն համար , թէ որ կարելի է՝ աս գիշեր հոս մնալ կուզեմ :

Վահագան . Ընունդ ի՞նչ է :

Վրիստինոս . Իմ անունս հիմայ Վրիստիանոս է . բայց առաջ իմ անունս Ընչնորհք էր * : Ես Հարեթի ցեղէն եկած եմ , որնոր Ըստուած Սեմին վրաններուն մէջը պիտի բռնակեցունէ . Նանդ . Թ . 27 :

Վահագան . Բայց ինտո՞ր եղաւ որ ասանկ ուշ եկար , արևը մարը մտաւ :

Վրիստինոս . Ես ասկից կանուխ հոս եկած պիտի ըլլայի , բայց՝ ի՞նչ ըսեմ ինծի պէս թշուառսկանին , որ բլուրին քովը եղած ծառատունկին մէջը քնացայ † : Վրնանալէս

* Ո՛վ իմ հոգիս՝ գիտէիր երբէք թէ քու անունդ առաջ աս էր : Օգացիր երբէք թէ անչնորհք մեղաւորներուն առատաշնորհ է Տէրը : Ուրեմն քու ճամբորդութեանդ ամէն մէկ քայլին գովաբանէ ձրի շնորհքը՝ ու ան սէրը որուն արժանի չէիր :

† Ընէկ պահէ քու վկայականդ . զգուշացիր որ քու վտահուլութիւնդ չի կորսնցունես : Նայէ թէ ի՞նչ փնաս կրծագի անկից . հոգին ետ կըթողու ան : Ետտեբը կորսնցուցին անիկա՝ ու բնաւ չի կրցան գտնալ ան մինչև իրենց կեանքին վախճանը :

ետև ալ իրաւ շատ կանուխ կրնայի գալ հոս , բայց ափսոս որ բունիս մէջը իմ վկայականս կորսընցուցի , և առանց անոր մինչև բլուրին գլուխը եկայ : Ընատենը ձեռքս ծոցս խօթեցի վկայականիս համար՝ և անիկա չի գտնալով ստիպեցայ սրտի կակիծով՝ ետ դառնալ ան իմ քնացած տեղս երթալ : ուր որ գտայ անիկա , ու հիմայ եկայ հասայ հոս :

Դառնապան . Քրէկ . աս տեղիս օրիորդներուն մէկը գուրս կանչեմ , որ ինքը՝ թէ որ քու խօսքերուդ հաւնի նէ , քեզ ներս կրնդունի ընտանեաց քովը , առնին կանոններովը : Ըյսպէս Դառնապանը որ Ըրթուն կրկոչ վէր զանգակ մը չալեց , որուն ձայնովը Խոհականութիւն անունով ծանրաբարոյ և գեղեցիկ օրիորդ մը եկաւ տանը դուռը , ու հարցուց՝ թէ ինչո՞ւ համար զինքը հոն կանչեցին :

Պատասխան տըլաւ Դառնապանը ըսելով . Ըս մարգս կործանման քաղաքէն Սիօն լեռք Գամբորդութիւն կրնէկոր . բայց հոգնած և ուշ մնացած ըլլալով՝ ինծմէ խնդրեց թէ արդեօք կարելի՞ է որ աս գիշեր հոս մնայ : Ըս ալ իրեն ըսի՝ թէ քեզ պիտի կանչեմ . որ իր հետը խօսակցելէդ ետքը՝ ինտոր աղէկ կե-

րեայ նէ քեզի անանկ ըրէ , ան ալ՝ տանը կանոններուն համեմատ :

Անատեն () ըրորզը Վրիստիանոսին հարցուց՝ թէ ինքը ուրկից էր՝ և ո՛ւր կերթար կոր . անիկա ալ պատասխանեց անոր : Վաև հարցուց անոր թէ ի՞նչպէս տն ճամբուն մէջը մտաւ , և թէ ի՞նչ տեսած կամ ի՞նչ պատահած էր իրեն , անիկա ալ պատմեց անոր : Աւ վերջը անոր անունը հարցուց : Ա՛ն ալ ըսաւ թէ իր անունը Վրիստիանոս է . և անոր համար ըսաւ այսչափ փափաք ունիմ՝ աս զիշեր հոս կենալու , որ կիմանամ թէ աս տեղս բլուրին Տէրը շինել է , ճամբորդներուն քաջալերութեանը ու ապահովութեանը համար : Ասոր վրայ () ըրորզը ժրպտեցաւ , բայց իր աչքերը արցունքով լեցուն . և քիչ մը կենալէն հոքը՝ ըսաւ . Արկու կամ իրեք հոգի ալ կանչեմ ընտանիքէն : Ասանկ զէպի դուռը վազեց՝ ու խոհեմութիւնը , բարեպաշտութիւնը , և Սէրը գուրս կանչեց * . որոնք

* խոհեմութիւն՝ բարեպաշտութիւն ու սէր ունենալու են անոնք՝ որոնք բարեպաշտներուն ժողովին մէջը ընդունվելու անձանց արժանաւորութիւնը քննելու կարգը ված են : Ու Վրիստոսի Ակեղեցիին ան գեղեցիկ պալատին մէջը ընդունվելու

ըխտիանոս , որովհետև մենք այսչափ սիրելի եղանք քեզի՝ քեզ աս դիշեր մեր տունը ընդունելնուս , եկոր՝ քու ճամբորդութեանդ մէջը քեզի պատահած բոլոր բաներուն վրայով հետդ խօսինք , զուցէ անոնցմով մեր սնձերուն օգուտ կրնծայենք :

Վրիստիանոս . Պինտ աղէկ . կատարեալ հաճութեամբ . և ուրախ եմ որ դուք այսչափ պատրաստ էք անոնք լսելու :

Բարեպաշտո-նի-ն . Ի՞նչ բան էր որ պինտ առանջ քեզ շարժեց ճամբորդութեան կեանք մը յանձնառու ըլլալու :

Վրիստիանոս . Ես իմ բնիկ երկիրէս ելայ մէկ սոսկալի լուրով մը որ իմ ականջներուն հնչեց , այսինքն թէ՛ անհրաժարելի կործանում մը կրսպասէրկոր ինձի՝ թէ որ ես ան իմ եղած տեղս կենայի նէ :

Բարեպաշտո-նի-ն . Բայց ի՞նչպէս պատահեցաւ որ աս կողմը գալու ելար քու երկիրէդ :

Վրիստիանոս . Ըստուած էր որ ասանկ տնօրինեց . քանզի ես՝ երբոր կործանելու վախին ներքեւն էի , ուր երթալս չէի գիտեր . բայց անանկ պատահեցաւ՝ որ երբ կըդողայի և կու-

լայիկոր ես , մէկը եկաւ ինձի՝ Լւետարանիչ անունով , ու ինձի ան նեղ դուռը ցուցուց , որնոր ուրիշ կերպով բնաւ զտնալիք չունէի . և այնպէս ինքը զիս աս տունը հասցունող ճամբուն մէջը բերաւ ձգեց :

Բարեպաշտութիւն . Բայց Սեկնիչին տանը կողմէն չեկա՞ր մի :

Վրիստիտոս . Էրամերես . ու հոն անանկ քաներ տեսայ՝ որոնց յիշատակութիւնը քանի որ կապրիմ մտքէս ելլալիք չունի . մանաւանդ իրեք քանի յիշատակութիւնը . մէյմը՝ Թէ ինչպէս Վրիստոս Սատանային հակառակ իր շնորհաց գործքը սրտին մէջը կը պահպանէ . երկրորդ՝ Թէ ինչպէս ան մարգը մեղանչեց Լստուծոյ ողորմութեանը յուսէն բոլորովին զրկելով զինքը . երրորդ՝ ան մարդուն երազը՝ որ քունին մէջը դատաստանին օրը եկած հասած կարծեր էր * :

* Յոյսը ու վախը մեր ճամբորդութեանը ամէն քայլափոխին մեր հետը ընկերանալու է : Լճանց ճշմարիտ բարեպաշտութեան ճշմարիտ Վրիստոնէութիւն չի կրնար ըլլալ : Տէրը շատ քաներ կը ցուցնէ մեզի մեր ճամբուն վրայ՝ որ ուրիշներուն պատահեցան , որպէս զի մեզ իյնալէն վախցունէ , ու իր շնորհացը փառքը յայտնելով իր սուրբերը

Բարեպաշտութիւն • Ի՞նչ կըսես , ինքը իր երազը քեզի պատմեց :

Վրիստիննա • Ըստ՛ պատմեց , և խորհեցայ թէ մէկ սոսկալի երազ մըն է ան : Ընիկա իմ սիրտս ցաւցուց երբոր ինքը կըպատմէր , բայց սակայն ուրախ եմ որ անիկա լսեցի :

Բարեպաշտութիւն • Սեկնիչին տունը տեսած թողոր բաներդ ասո՞նք էին :

Վրիստիննա • Չէ • ինքը զիս առաւ՝ ու մէկ տեղ մը տարաւ ուր որ հոյակապ պալատ մը ցուցուց ինծի , և թէ ի՞նչպէս անոր մէջի բնակիչները ոսկեզարդ հանդերձներով հագված էին • նաև ցուցուց ինծի թէ ի՞նչպէս մէկ քաջասիրտ մարդ մը եկաւ՝ և անիկա գուրս ընելու համար պալատին դուռը կայնող զինուորված մարդոցը մէջէն իր ճամբան բացաւ • և թէ ի՞նչպէս ինքը ներս կանչովեցաւ ու յաւիտենական կեանք ստուցաւ : Ինծի թուեցաւ որ աս բաները իմ սիրտս զմայլեցուցին : Ըն բարի մարդուն տունը տարի մը կըկենայի ես , թէ որ իմ ճամբուս երկայնութիւնը չի գիտնայի :

պահելով՞ մեր յոյսերը իր վրայ կենդանացունէ :
(Իսուսի նայեցէք :

Բարեպաշտութիւն . Ա՛լ ուրիշ ի՞նչ տեսար ճամբուն վրայ :

Վրիստիանոս . Ի՛նչ տեսայ . քիչ մալ աւազ գացի , ու մէկը տեսայ որ փատի մը վըրայ կախված էր , ու իր արունները կը վազէին կոր . աս մարդուն երևոյթը իսկոյն իմ բեռս կունակէս վար ձգեց . քանզի ես աւազ ծանր բեռի մը տակ կը հեծէի , բայց անատենը ինծմէ ինկաւ ան : Ասիկա սքանչելի բան մըն էր ինծի , քանզի աւաջ ամենեւին ասանկ բան մը տեսած չէի : Աս ալ ըսեմ՝ որ երբ ես կայներ դէպի վեր կը նայէի , (քանզի չէի կրնար համբերել անոր չինայիլ ,) իրեք հատ լուսաւորներ եկան ինծի : Ասոնց մէկը զրուցեց՝ թէ իմ մեղքերուս ներում տրված էր . միւսը իմ հնոտի լաթերէս զիս հանվեցուց՝ և աս բանված վերարկուն տըլաւ ինծի որ կը տեսնասկոր . ու երրորդը ան նշանը զարկաւ ինծի որ կը տեսնաս ճակատիս վրայ , ու աս կնքած թուղթը տըլաւ ինծի : Աւ աս բանը ըսելով Վրիստիանոս , իր ծոցէն դուրս հանեց անիկա * :

* Ղշմարիտ ու կենդանի հաւատքին իր հոգիին մէջը ըրած ներգործութեանը մէկ երջանիկ փորձն

Բարեպաշտութիւն . Բայց կարծեմ ուրիշ բաներ ալ տեսար . անանկ չէ՞ մի :

Վրիստինոս . Իմ քեզի զուցած բաներս տեսած բաներուս մէջը ամէնէն աղէկներն էին : Եւ սակայն քանի մը ուրիշ բաներ ալ տեսայ . զորօրինակ իրեք հոգի տեսայ , այսինքն «Գարգամիտը՝ Նոլլութիւնը և Յանդգնութիւնը՝ որոնք երբոր ես կուգայի , ճամբուն վրայէն քիչ մը գուրս ոտքերնին շղթաներով կռաված պառկեք կըքնանայինկոր . բայց ի՞նչ կրկարծես , արդեօք կրցա՞յ մի արթնցունել անոնք : Ըսկից զատ փարիսեցին ու կեղծաւորը տեսայ՝ որոնք դռնէն մտնալ չուզելով պատէն անցան ու իջան Սիօն լեռը երթալու , ինչպէս որ իրենք կըկեղծաւորէին : Սակայն իրենք շուտով կորսըվեցան , ինչպէս որ ես իրենց ըսի՝ բայց անոնք չի հաւատացին : Բայց ամէն բանէն էվելի՞ առ բլուրէն վեր ելլալը

է աս՝ Ըստուծոյ բանին համեմատ , որ խիստ հարկաւոր է ամէն Վրիստոնէի : Ըսոր պակսութեանը համար շատերը ոչ ուրիշներուն և ոչ իրենց հոգին օգուտ մը կրնեն : Ի՞նչ որ Վրիստոսի սէրը շնորհքը ու խաղաղութիւնը Սիսիթարիչ Զոգիին ձեռօքը սրտին վրայ կնքըված չըլայ , լոկ զինքը դառանիլը ուրիշ բան չէ՞ բայց եթէ դատարկ տեսութիւն մը :

դժուարին եկաւ ինձի , և նոյնչափ դժուարին՝
աւելածներուն բերնին քովէն անցնել գալը .
արդարեւ թէ որ ան բարի մարգը գոնապանը
չըլլար նէ՞ որ դուռը կրկայնի , չեմ գիտեր՝
կարելի է որ ամէն աս բաներուն վրայ նորէն
ես դառնայի . սակայն գոհութիւն Մտուծոյ
որ հիմայ հոս եմ , ու շնորհակալ եմ ձեզի
որ զիս ներս ընդունեցիք :

Հիմայ Խոհեմութիւնը արժան սեպեց քանի
մը բան հարցունել իրեն , և ուզեց որ անոնց
պատասխանը տայ :

Խոհեմ-Է-ն . Երբեմն դուն քու եկած քա-
ղաքիդ վրայով չե՞ս մի խորհիր :

Քրիստոս . Ե, յի՛ կը խորհիմ , բայց մեծա-
պէս ամենալով և զզուելով : ՂԶմարիտ է՞ որ
եթէ ես իմ եկած քաղաքիս վրայով մտմտութի
մէջ ըլլայի նէ՞ կրնայի պատեհութիւն ունե-
նալ հոն դառնալու : բայց հիմայ ես լաւա-
զոյն քաղաքի մը կը բաղձամ , այսինքն Երկ-
նաւոր քաղաքի մը . Եբր : ԺԹ . 15 , 16 :

Խոհեմ-Է-ն . Քու աւելի սովորական բանե-
րուդ մէկ քանինները տակաւին քու հետդ չե՞ս
կրեր :

Քրիստոս . Ե, յի՛ . բայց մեծապէս իմ

կամքիս հակառակ անոնք իմ հետս կրկրեմ . մանաւանդ իմ ներքին և մարմնաւոր խորհուրդներս , որոնց վրայ բոլոր իմ քաղաքայիներս՝ ինչպէս որ ես ալ մեծապէս կրբերկրէինք : Իայց հիմայ բոլոր ան բաները իմ նեղութիւնս են . և թէ որ ես կարող ըլլայի ինձի վերաբերեալ բաները ընտրելու , աս պիտի ընտրէի՝ որ բնաւ ան բաներուն վրայ ալ չի խորհիմ . սակայն երբոր լաւագոյն եղած բանը ընել կուզեմ , չարագոյն բանը իմ հետս կրգտնամ * . Լուկ. Է. 15, 21 :

* Վրիստիանոս կրգանգատէ իր անդամներուն մէջի օրէնքէն՝ որ իր մտացը օրէնքին դէմ զինուորված է , որ աղաղակել տրւաւ առաքեալին թէ “Ես մէկ խղճալի մարդ մըն եմ . ո՞վ իս պիտի խալսէ աս մահացու մարմինէն” : Եստուծոյ զուկրնեւրուն բոլորին ալ շատ կամ քիչ գանգատը ու բեռը աս է . մեղքին մնացորդները իրենց ամենալաւ գործքերուն մէջը կրխառնըվին , իրենց պատուական պարտաւորութիւններուն հետը կրմիանան , ու շատ անգամ ակամայ գերի կրնեն զանոնք . անսնկ որ երբոր կրկամին բարին գործել , չարը առջևնին կրկենայ : Իայց մեղքը իր զօրութիւնը անհաւատութենէ կրնդունի . Ղանապարհորդը երբոր Խաչը կրոյնէր , երբոր իր պատմութիւնն կամ վերարկուին՝ ու իր ծոցի թուղթին վրայ կրնայէր՝ ու իր երթալու երկրին՝ այսինքն՝ երկնաւոր աշխարհին վրայ տեսութիւն մը ունէր , կրգտնար որ իր ապա-

Խոհեհմ-լի-ն . Երբեմն չե՞ս գտնար որ աս բաներս իբրև թէ յաղթութեան տակ առնը ված են , որոնք ուրիշ ատեն քու մտատան ջութիւններդ են :

Վրիստիանոս . Ե.յ.՛ . բայց շատ քիչ անգամ . և իմ ոսկեղէն ժամերս են անոնք , երբոր ասանկ զգայութիւններ կրպատահին ինծի :

Խոհեհմ-լի-ն . Կրնամ միտքդ բերել թէ ի՞նչ միջոցներով երբեմն քու նեղութիւններդ իբրև թէ յաղթութեան տակ առնըված կը գտնաս :

Վրիստիանոս . Ե.յ.՛ . երբոր խաչին կեցած տեղը տեսածիս վրայ մտմըտամ՝ ասիկա կը պատճառէ ան բանը . ու երբոր իմ բանված վերարկուիս վրայ նայիմ՝ ասիկա կը պատճառէ ան բանը . ու երբոր իմ ծոցիս ոլորած թուղթին վրայ նայիմ՝ ասիկա կը պատճառէ ան բանը . նաև երբոր իմ խորհուրդներս իմ գնալու տեղիս վրայ գառնան նէ՛ ասիկա կը պատճառէ ան բանը * :

Կանութիւնները կերպով մը նուաճած էին : Ե՛վ Տէր՝ էվելցուր մեր հաւատքը քու քաւչական արիւնտով՝ որ Խաչին վրայ թափեցիր , որպէս զի մեր հին մարդուն՝ այսինքն մեր չար ու ապականեալ կիրքերուն խաչվիլը զգանք , ու հետզհետէ ազատինք անոր գարշելի տէրութենէն :

* Եղէկ նկատէ ասիկա . Վրիստիանոսին ճշմարիտ

Երկուսն էլ • Եւ ի՞նչ բան է որ քեզ այս չափ կրփափաքեցունէ Սիօն լեւը երթալ :

Վրիստիսնոս • Ի՛նչ պիտի ըլլայ • Տո՛ն կը յուսամ ես ողջ տեսնալ անիկա՝ * որ խաչին վրայ կախված էր , և Տո՛ն կըլուսամ ազատիլ ամէն ան բաներէն՝ որ մինչև աս օրս իմ ներսի դիս ինծի նեղութիւն տըւողներ են : Ի՛ն տեղը՝ կրտին թէ , մահ չի կայ եղեր • Եսոյ • ին • ծ : Եսոյ • ին • 4 . և Տոն ես իմ խիստ ուզած ընկերներու հետը պիտի բնակիմ : Վանդի՞ քեզի ճշմարիտը ըսեմ , ես անիկա կըսիրեմ , ինչու որ ինքը իմ բեռն թեթևցուց , և անկից ՚ի զատ իմ ներքին հիւանդութենէս ձանձրացեր եմ : Եւ և յօժարութեամբ կըցանկամ Տոն ըլլալ՝ ուր որ բնաւ չի պիտի մեռնիմ :

Հաւատքով Վրիստոսի արիւնովը ունեցած թողութիւնը՝ Վրիստոսի արգարութիւնովը իր արգարանալը՝ Հոգիին վկայութիւնովը Եստուծոյ իրենց ցուցուցած ձրի ու յաւիտենական սէրը՝ ու իր երթալու երկինքին փառքը կըզօրացունեն իր սիրտը բոլոր իր ցանկութիւններուն ու ապականութիւններուն դէմ :

* Հաւատքով Վրիստոս տեսնալը Հոգիին մէջ փափագ մը կըծնանի զինքը փառքի մէջ տեսնալու : Եր ներողական սիրոյն զգացումը իր հետը ու իրեն նման ըլլալու փափաքիլ կուտայ մեզի :

անանկ երևցայ որ մէկ ծաղրաբանութիւն ընող մըն եմ , ու ինծի չի հաւատացին . Վանք . ԺԹ . 14 :

Սէր . Լստուծոյ աղաչելով խնդրեցի՞ր , որ ինքը քու անոնց տըլած խրատդ օրհնէ և օգտակար ընէ :

Վրիստինոս . Լ.յո՛ . և ան ալ շատ յօժարութեամբ . քանզի պարտիս գիտնալ՝ որ իմ կինս և խղճալի դակըններս շատ սիրելի էին ինծի :

Սէր . Բայց բուն քուկին տրամութիւնդ ու կործանելու վախդ իրենց զրուցեցի՞ր մի . քանզի կարծեմ թէ ան կործանումը ըստ բաւականին կերևար քեզի :

Վրիստինոս . Լ.յո՛ , կրկին՝ և կրկին՝ և կըրկին անգամ զրուցեցի : Արնային տեսնալ իմ վախս նաև իմ երեսիս վրայ՝ արցունքներուս վրայ՝ ու նաև մեր գլխուն գալու դատաստանին կարծեօքը իմ դողդըղալուս վրայ . բայց ասոնց բոլորն ալ բաւական չեղան համոզել անոնք՝ իմ հետս գալու համար :

Սէր . Բայց ի՞նչ պատճառ կրցան ցուցընել իրենց չի գալ ուզելուն համար :

Վրիստինոս . Ի՛նչ պիտի ցուցընեն . իմ

կինս տա աշխարհը կորսրնցունելու կըվախնար, և զաւկըներս ինքըզինքնին մանկութեան յիմարական բաղձանքներուն տըւեր էին . աւսանկ՝ մէկը մէկ կերպով ու մէկալները ուրիշ կերպով զիս ձգեցին որ ասանկ մինակ թափառիմ :

Սէր . Բայց չըլլայ որ քու անպիտան վարքդ անոնք քու հետդ բերելու համար համոզելու կերպով ըրած խօսքերուդ բոլորը ոչինչ ըրած ըլլայ * :

Վրիստիանոս . Շ խոսակը ես իմ վարքս չեմ կրնար գովել, քանզի իմ խղճմտանքս կըվըկայէ որ շատ պակսութիւններ ունիմ անոր մէջը : Վաւ գիտեմ որ մէկ մարդ մը իր վարքովը շուտով կրնայ աւրել ոչինչ ընել ան

* Ս՛վ իմ հոգիս՝ խորունկ մտածէ ասիկա . Վրիստոնէին վարքն է որ էվելօք կըյաղթէ ու կըհամոզէ՝ քան թէ իր խօսքը : Թէպէտ և հրեշտակի նման խօսիս Վրիստոսի վրայ՝ աւետարանին՝ շնորհաց վարդապետութիւններուն՝ ու երկինքին վրայ . բայց թէ որ դուն սատանայական բնաւորութիւններու կրծառայես՝ ու մեղանչական ցանկութիւններով ու կիրքերով կապրիս, ատով դուն ուրիշները Վստուծոյ բաներուն դէմ պիտի խստացունես, ու անոնց Վստուծոյ ճամբաներուն մէջը յաւաջանալը պիտի խափանես :

բանք՝ որնոր առաջարկութիւնով կամ համոզելու խօսքերով կը ջանայ ուրիշներուն ընդունել տալ անոնց աղէկութիւնք համար : Եւ սակայն աս կրնամ ըսել՝ որ ես շատ զգուշութիւն կը բանեցունէի՝ որ չըլլայ թէ անվայել գործով մը պատճառ ըլլամ անոնց՝ ճամբորդութեան ելլալու վրայ դժկամակելու : Եւ բուն աս բանին համար ինձի կրակին թէ ես չափազանց խղճահար եմ, և թէ՛ ես (իրենց համար) ինքրզինքս կուրանամ ան բաներուն մէջ ուր որ իրենք չարիք մը չեն տեսնար : Եւ կից՝ ի զստ կարծեմ թէ կրնամ ըսել՝ որ եթէ իմ վրաս տեսած բաներնին զիրենք արդիլելու ըլլար նէ, Եւստուծոյ գէմ չի մեղանչելու ու ընկերիս չի վնասելու համար ըրած մեծ զգուշութիւնս պիտի արդիլեր զիրենք :

Սեբ. Իրաւ է որ կայէն իր հզօրըրը ատեց, Թ. Գլ. 7. 12. քանզի իր գործքերը չար էին ու եղծօրը բարի. ու թէ որ քու կինդ և զաւկըներդ աս բանիս համար քեզի դժուարեցան նէ, անոնք անով ինքրզինքնին բարիին հակառակ ըլլալ կը ցուցնեն. դուն քու անձդ անոնց արունէն ազատեցիր. Եւ. Գլ. 7. 19 :

Եւ որ՝ երազիս մէջը տեսայ որ անոնք աստնկ

նստան խօսելով մինչև որ կերակուրը պատ-
րաստը վեցաւ, ու պատրաստը վեղէն ետև նըս-
տան ուտելու * : Վանք որ սեղանը պարարտ
բաներով և աղէկ զտած դինիով շիտկած էր † ,
ու սեղանին վրայ իրենց բոլոր ըրած խօսքը
բլուրին Տէրոջը վրայով էր . ինչպէս ըսենք
Թէ՛ ինչ բաներ ըրեր էր ան , և ինչո՛ւ համար
ըրեր էր անոնք , և ինչո՛ւ համար շիներ էր ան

* Մտիկա կընշանակէ՝ Տէրունական Մեթրիքը ,
ուր որ Վրիստոնեայք հաւատքով Վրիստոսի մար-
մնովը կըկերակրին , ու զմայլելով՝ սիրով և փա-
ռաբանութիւնով կըմտածեն (Յիսուսի իրենց հա-
մար ըրածին՝ իրենց համար ստացածին վրայ , ի-
րենց մէջը ըլլալուն՝ ու հիմայ Մստուծոյ աջ կողմը
իրենց համար ինչ ընելուն վրայ) : Մայսպէս Վրիս-
տոնեայք հաւատքով իր մարմնովը կըկերակրին , ու
իրմով յաւիտենական կենաց համար կըսնանին :

† Տէրը իր ժողովրդոցը համար առատ պատրաս-
տութիւն մը ըրաւ անապատին մէջ , ու աւետարա-
նական բարութիւնները շատ անգամ խնջոյքի
ձևով նկարագրը ված են : (Տես հարսանեաց ճաշին
վրայով Վրիստոսի ըսած առակը) : Մս խնջոյքին
կամ ճաշին կերակուրները են՝ մեղաց թողութիւն ,
Հոգիին վկայութիւնը , համարձակութեամբ իրեն
ներկայանալը , ու Մստուծոյ փառացը յուսովը ու-
րախանալը . բայց ամէն բանէն վեր՝ Վրիստոսի
քաղցր ներկայութիւնն է ճաշին խիստ անուշ
համը :

տուներ : Այլ իրենց ըսածներուն նայելով իմացայ որ ինքը մեծ յաղթական մը եղած պիտի ըլլայ , ու մահուան իշխանութիւնը ունողին հետը պատերազմած ու անիկա սպաննած՝ Լուք. ք. 14 , 15 . ինքըզինքը մեծ վտանգի մէջ դնելով , որնոր ինծի պատճառուեց էվելթը զինքը սիրել :

Քանզի ինչպէս որ իրենք ըսին՝ և ինչպէս որ ես կըհաւատամ , ըսաւ Վրիստիանոս , ինքը շատ արուն թափելով աս բանը կատարեց : Բայց իր ըրած բանին վրայ շնորհաց փառաւորութիւն մը դնողը աս էր՝ որ ինքը իր երկրին վրայ ունեցած անկեղծ սիրովը ըրաւ անիկա : Այլ ասկից ՚ի զատ ան տունը մէջէն մէկ քանինները կային՝ որ ըսին թէ , իրենք զինքը տեսան և հետը խօսեցան ինքը խաչին վրայ մեռնելէն ետքը , ու վկայեցին՝ թէ իրենք իր պուկունքներէն լսեցին՝ որ ինքը անանկ կըսիրէ խեղճ ճամբորդները , որուն նմանը արեւելքէն մինչև արեւմուտքը չի գտնուիր : Եւ իրենց ըսած բաներուն վրայ մէկ օրինակ մը առաջ բերին՝ թէ ինքը իր փառքէն զինքը մերկացուցեր էր որ ճամբորդներուն համար մեռնի . և թէ՛ իրենք լսեր են իրմէն որ հաս-

տատուութեամբ ըսեր է՝ Թէ ինքը մինակ չի պիտի բնակի Սիօն լեռը : Դարձեալ ըսին՝ որ ինքը շատ ճամբորդները իշխաններ ըրեր է , Թէպէտ և անոնք բնութեամբ աղքատ ծնած ու իրենց սկիզբը աղքատոցն է եղեր .
 Թ. Կ. Գ. Գ. 8 : Ս. Կ. Գ. Գ. 7 :

Ասանկ խօսակցեցան իրարու հետ գիշերը մինչև ուշ ատեն , և իրենց պահպանութեանը համար ինքըզինքին իրենց Տէրոջը յանձնելէն ետքը հանգստանալու գացին : Ղանապարհորդը մէկ մեծ վերնատուն մը հանեցին որուն պատուհանը դէպի արևելքին կը բացվէր : Վերնատունին անունն էր Խաղաղութիւն * . հոն պառկեցաւ Վրիստիանոս մինչև արշալոյսը , և անատենը արթնցաւ ու սկսեց երգել .

Ո՛ր եմ ես հիմայ , ա՛ս է Հիսուսին
 Սերը ու հոգը ճամբորդներուն վրայ .
 Ա՛սանկ ընել որ՝ մեղքերս ներվին ,
 Ու արդէն ըլլամ երկնից մօտակայ :

Աւտրվանց բոլորը մէկէն ելան , և քիչ մը

* Սեղաւորը մինչև որ Աստուծոյ հետ խաղաղութիւն չի գտնայ՝ ամենեին ապահով ու հանգիստ չի քնանար : Ապց “ հաւատքով սրգալացած ըլլալով խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ” , ու

խօսակցութիւն ալ ընելէն ետքը Վրիստիանոսին ըսին՝ որ ճամբայ չելլայ, մինչև որ ան տանը հազուադիւտ բաները իրեն ցուցընեն : Ուստի պինտ առաջ Վրատունը * տարին անիկա, ուր որ խիստ հին պատմութիւններ ցուցուցին իրեն . ասոնց մէջը՝ ինտոր որ կըլիշեմ թէ երազիս մէջը տեսայ, բլուրին Տէրոջը ազգաբանութեան դիրքը ցուցուցին անոր՝ թէ ինքը Յաւիտենականին Որդին է ու յաւիտենական ծնունդով եկած : Ըսոր մէջը ևս լման կատարեալ պատմըլած էր իր ըրած

խաղաղութիւն ունինք մեր խղճմտանքներուն հետ, «մեր Տէրոջը Յիսուս Վրիստոսի ձեռօքը. Լուով. Է. 1 : Իայց Յիսուս Վրիստոսի շնորհացը վերայ հաւատք չունեցողներուն բոլորը օրէնքի անէծքին՝ ու մեղքին դատապարտութեանը տակն են, ու Ըստուծոյ թշնամի են :

* Վրատունը Ըստուածաշունչ գիրքն է. Վրիստոնեան քանի որ կը յառաջանայ, առաւել քան զառաւել կը ծանօթանայ անոր . գլխաւոր նիւթը Յիսուս է, որ խոստմունքներուն ու մարգարէութիւններուն մէջը առաջադրըլած է : Վրիստոս՝ ու Վրիստոսի վրայ մտածութիւնը, իր ծննդեանը՝ իր անձին՝ իր կենացը՝ իր գործքերուն՝ իր մահուանը՝ իր քաւութեանը՝ իր արդարութեանը ու իր փրկութեանը վրայ մտածութիւնը Վրիստոնէից հոգիներուն բերկրութիւնն է : Ըշխոյժ Վրիստոնեան առանց հոգևոր մտածութեան չի կրնար ապրիլ :

քաները՝ ու հարիւրաւոր անձանց անունները կար որ ինքը իր ծառայութեանը ընդունելու է . և թէ՛ ի՛նչպէս անոնք անանկ բնակարաններու մէջ դրել է , որ ոչ ժամանակի երկարութիւնով ու ո՛չ բնութեան ապակհանութիւնովը աւրելիք ունին :

Եւսկից ետքը անոր ծառաներէն մէկ քանիներուն ըրած զարմանալի գործքերը իրեն կարդացին . զոր օրինակ՝ թէ ի՛նչպէս անոնք թազաւորութիւններ նուաճեցին , արդարութիւն գործեցին , խոստմունքներուն հասան , աւիւթներու բերաններ գոցեցին , կրակին զօրութիւնը մարեցին , թուրին բերնէն փախան , տկարութենէն զօրութիւն առին , պատերազմի մէջ յաղթող գտնւվեցան և օտարներուն բանակները փախուցին . Երբ . ԺԿ . 33 , 34 :

Եւ երջը տունին պատմութիւններուն մէկ ուրիշ մասն ալ կարդացին իրեն , որուն մէջը կերևար՝ թէ իրենց Տէրը սրչափ կրկամէր իր շնորհացը մէջը ընդունիլ անոնք , և մինչև անգամ ամէն անոնք՝ որ առաջուց մեծ նախատինքներ մատուցեր էին իր անձին և իր գործքերուն : Եւսոր մէջը նաև շատ ուրիշ ե

ըլեւի բաներու պատմութիւններ ալ կային , որոնց ամէնուն վրայով Վրիստիանոս տեղեկացաւ . զոր օրինակ հին ու նոր բաներու պատմութիւններ՝ հանդերձ մարգարէութիւններով ու նախագուշակութիւններով , որոնք իրենց յատենին պիտի կատարվին , որ թշնամիները սարսափին ու զարմանան , և ճամբորդները մխիթարվին ու զուարճանան :

Հետեւեալ օրը զինքը առին՝ ու զէնքերուն տունը տարին , ուր որ ցուցուցին իրեն ամէն կերպ զէնքերը որ իրենց Տէրը պատրաստեր էր ճամբորդներուն համար , ինչպէս՝ թուր , վահան , սաղաւարտ , զրահ , ու չի մտչելու հողաթափներ * : Եւ աս տեղս տեսայ որ Տէրոջը ծառայութեանը համար այնչափ մարդիկ զինուորելու համար զէնք կար , որչափ որ աստղ կայ երկինքը :

Եւսե քանի մը գործիքներ ցուցուցին իրեն՝ որոնցմով անոր ծառաները զարմանալի բաներ գործեր էին † : Ինչպէս՝ Սոլսէսին գաւազա

* Տէրը իր անպայման իմաստութեամբ բոլոր մեր թշնամիները կը ճանչնայ , ու իր մարդասիրութեամբ պէտք եղած զրահը իր ժողովուրդին կուտայ : Ս՛հ , ինչ ամենօրհնեալ Տէրոջ կը ծառայենք մենք :

† Ըստուած տկար ու ըստ ինքեան անբաւական

նը ցուցուցին իրեն . կռանը ու գամը որով
 Յայեւ Սիսերան սպաննեց . փարչէրը՝ փո-
 ղէրը՝ ու ճրագները՝ որով Կեղէնն Սաղիանա-
 ցոց զօրքերը փախցուց : Ետքը իրեն ցուցու-
 ցին ան եզի ոսկորը՝ որով Սամբար վեց հա-
 ըիւր հողի մեւցուց . նաև ան ծնօտի ոսկորը՝
 որով Սամիսոն սքանչելի կոտորած մը ըրաւ :
 Մէյմալ ան պարսատիկը ու քարը ցուցուցին՝
 որով Գաւիթ Գողեաթը սպաննեց , և ան Թու-
 ըր՝ որով իրենց Տէրը անօրէնութեան Սարդը
 պիտի սատկեցունէ որսորդութեան ելած օրը :
 Ըսոնցմէ 'ի զատ շատ ուրիշ պատուական բա-
 ներ ալ ցուցուցին՝ որոնց շատ հաւնեցաւ
 Վրիստիանոս * : Ըսիկա լումննալէն ետքը՝
 նորէն ամէն մարդ հանգստանալու գնաց :

Մէյմալ երազիս մէջը տեսայ՝ որ հետե-

միջոցներով միշտ մեծամեծ գործքեր կատարած է :
 Ըսանկէ հիմայ ալ : Ըղօթքը ու աւետարանի քա-
 ռողութիւնը ըստ ինքեան տկար միջոցներ են , բայց
 Ըստուծոյ կարգած միջոցներն են անոնք՝ և անոր
 համար բոլոր ընդգիմութիւնները կը յաղթեն :

* Ըստուծոյ բանին մէջը պատմւիլած հին բանե-
 թուն վրայ մտածելը հաւատքին ուրախութիւնը ու
 փառքն է , յոյսը կը կենդանացունէ , ու քրիստոնէա-
 կան ասպարէզին մէջը առաջ վազել կուտայ հո-
 գինն :

ւեալ տառուն Վրիստիանոս ելաւ իր ճամբան
 երթալու , բայց անոնք ուզէցին որ օր մըն ալ
 իրենց հետը կենայ : Ու ըսին թէ՛ թէ որ օրը
 պարզ ու պայծառ ըլլայ նէ պիտի ցուցունեն
 իրեն ան երջանիկ լեռները՝ որոնք իր մխի-
 թարութիւնը պիտի էվելըռնեն . քանզի ա-
 նոնք իր հիմակվան կեցած տեղէն էվելի մօտ
 են ան բազմալի նաւահանգստին . ուտտի Վը-
 րիստիանոս հաճեցաւ և մնաց : Երբոր արեւը
 ծագեցաւ , տանը տանիսը հանեցին դինքը՝ և
 ըսին որ դէպի հարաւային կողմը նայի : Վը-
 րիստիանոս դէպի ան կողմը նայեցաւ՝ ու մէյ-
 մալ տեսաւ՝ որ հեռուն շատ գեղեցիկ լեռ-
 նային երկիր մը կար , անտառներով՝ այգի-
 ներով՝ ամէն տեսակ պտուղներով՝ ծաղիկնե-
 րով՝ աղբիւրներով և առուններով զարդար-
 ված , որուն նայելը շատ զւարճալի էր .
 Եւրոպ . 17 . 16 , 17 : Ընատեն Վրիստիանոս ան
 երկիրին անունը հարցուց . ու անոնք պատաս-
 խան տրւին՝ թէ անիկա կրկոջվի Եմմանուէ-
 լին երկիրը . ու աս բլուրին պէս ան բոլոր ճամ-
 բորդներուն պատրաստըված տեղ մըն է ը-
 սին : Ու երբոր հոն երթաս ըսին՝ անկից Երկ-
 նաւոր Վաղաքին դուռը կրնաս տեսնալ , ինչ

պէս որ հոն բնակող հովիւները պիտի ցուցնեն քեզի * :

Հիմայ Վրիստիանոս մտածեց որ ալ աւտեն է ճամբայ ելլալու , և մէկալներն ալ հաճեցան որ երթայ . բայց ըսին թէ՛ Նկոր առաջ անգամ մըն ալ զէնքերուն տունը ելլալ թանք : Եսանկ ելան գացին , ու երբոր հոն մտան Վրիստիանոսը գլխէն մինչև ոտքը զինուորեցին † , որ ճամբան իր վրայ յարձակ մունք ըլլայ նէ զինուորված գտնրվի : Ուստի Վրիստիանոս ատանկ զարդարված իր բարեկամներուն հետը դուրս ելաւ ու տանը դուռը գնաց . և հոն Դունապանին հարցուց թէ արդեօք ճամբորդ անցամա մի անկից :

Դունապան . Ե, յո՛ . պատտախանեց մարդը :

Վրիստիանոս . Կազաջեմ քեզի՞ կըձան ճնայի՞ր մի անիկա :

* Եւս ամէնը ան հոգեոր ու ճշմարիտ տեսարաններուն նկարագրութիւնն է՝ որոնցմով Վրիստոսի զգալի եկեղեցիին մէջը շնորհաց խօսքին քարոզութեանը միջնորդութիւնովը հոգիները կը քաջալերին :

† Եւս Վրիստոնեական զրահաւորութեան ինչ ըլլալը տես Նշե՛ . 5 . 13, 14 :

Ղաւնապան • Իր անունը հարցուցի , և ինքը
ըսաւ թէ Հաւատարիմ կրկոյժի :

Վրիստինոս • Իրաւ , ես անիկա կրճանչ
նամ • ինքը իմ քաղաքացիս ու իմ մօտ գրա-
ցինս է • ինքը իմ ծնած տեղէս եկած է :
Երդեօք իրչափ առաջ գացած կրկարծես ա-
նիկա :

Ղաւնապան • Ենիկա հիմայ բլուրին ստորո-
ար հասած է :

Վրիստինոս • Ուրեմն՝ բարի Ղաւնապան ,
մնաս բարով • Տէրը քու հետդ ըլլայ , և ին-
ծի ցուցուցած բարերարութեանդ համար քու
բարութիւններդ անչափ էվել ցունէ * :

Ենատեն սկսեց առաջ երթալ իր ճամ-
բան • բայց Խոհականութիւնը՝ Վարեպաշտու-
թիւնը՝ Սէրը՝ և Խոհեմութիւնը ուզեցին որ
մինչև բլուրին ոտքը իր հետը երթան : Եսանկ
մէկտեղ սկսեցին առաջ երթալ՝ իրենց առջի
խօսակցութիւնները կրկնելով , մինչև որ ե-
կան ան տեղը հասան՝ ուրկից անդին բլուրին
վար պիտի իջնային : Ենատենը Վրիստինա-

* Վրիստինոսները Վրիստոսի պաշտօնեաները
կրտիրեն՝ ու կօրհեն զանոնք և կաղօթեն անոնց
համար , ինչու որ Տէրը օգտակար ըրած է զանոնք
իրենց հոգիներուն :

նոս ըսաւ . Ինտոր որ վեր ելլալը դժուարին էր , անանկ ալ՝ որչափ որ կըտեսնամնէ , վալ իջնալը վտանգաւոր է : Ը՛յո՛ , անանկ է , ըսաւ Խոհեմութիւնը . քանզի դժուարին բան մըն է մէկ մարդու մը Խոնարհութեան 'Ձորը իջնալ՝ ինչպէս որ դուն հիմայ կ'իջնասկոր , ու ճամբուն մէջը չի գլտորիլ . անոր համար ահա մենք եկանք քեզի ընկերութիւն ընելու : Բլուրնիվար : Ուստի Վրիտտիանոս սկսեց իջնալ՝ բայց շատ զգուշունալով . սակայն մէկ քանի անգամ մը գլտորեցաւ * :

* Վրիտտոնեայ մը շատ մասնաւոր ու յատուկ բարութիւններ վայելելէն ետե վտանգի տակ է որ փքանայ ու անոնց պատճառովը բարձրամտի : Ըսանկ պատահեցաւ մինչև անգամ Պօղոսին . ու ան պատճառովը Սատանայի հրեշտակը կըչարչարէր զինքը . ք . Կորնթ . Ժք . 7 : Մեր հիմակվան խաան վիճակին մէջը գիտէ Տէրը որ աղէկ չէ մեզի միշտ հոգևոր ուրախութեան լեռը բնակիլ . ուստի հոգիին աղէկութեանը համար մարմինը պարտինուածիլ ու ցած պահվիլ , որ չըլլայ թէ հոգևոր հպարտութիւնը անոր վրայ տիրէ : Տէրը իր ժողովուրդը լեռնիվար Խոնարհութեան 'Ձորը կ'իջեցունէ՝ կամ հոգևորապէս՝ անոնց յոյսերը մ'իծնցունելով , կամ մարմնաւորապէս՝ անոնց բարեկամները՝ առողջութիւնը կամ ստացուածքը իրենցմէ առնելով : Ըս գիպուածներուս մէջը դիւրութեամբ կըգլտորին անոնք . իրենց վատթարութիւնները կարթըննան . ոչ

Եւ միջոցէս երազեա մէջը տեսայ որ երբ Վրիստիանոս բլուրին ոտքը իջաւ, իբ բարիքն կերենքը իրեն հաց մը շեղէ մը գինի՝ ու ողկոյզ մը չամիչ տրւին, և անկէ ետեւ ինքը իբ ճամբան գնաց :

Բայց հիմայ՝ աս Խոնարհութեան Չորին մէջը խղճալի Վրիստիանոսը շիթութեան մէջ ինկաւ . քանզի միայն քիչ մը ճամբայ առաջ ոյ գնաց, տեսաւ որ զարդին վրայէն մէկ շաւրած ճիկ մը կուգար սէպի իրեն . ասոր անունը կը կոչվէր Բարդոն . Յայտ. Թ. 11 : Բնատենը Վրիստիանոս սկսեց վախնալ՝ ու մտմբտալ թէ արդեօք ե՞տ դառնայ, եթէ եղած տեղը կայնի * : Բայց անգամ մըն ալ մտածեց

միայն հպարտութիւնը՝ այլ անհամբերութիւնը՝ նախանձութիւնը՝ անհաւատութիւնը՝ ապստամբութիւնը և սրտին սերիշ գաղտնի չարութիւնները ևս երևան կեղան : Վիշերը կան որ Խոնարհութեան Չորը իջնան՝ ու տրանջելու և դժգոհանքի ու Բստորեօց նախախնամութեանը վրայ գանգատելու մէջ չիցնան :

* Սատանային փորձութիւնները գլխաւորաբար երկու կերպ են : Բռնաջին կերպ փորձութիւնները շատ կամ քիչ բոլոր հաւատացեալներուն հասարակ են : Ինչնամին կը ջանայ անոնց վատթարութիւնները ու անհաւատութիւնը արթնցունել, բայց անոնք կը կարողանան անոր դէմ կենալու, ու

որ իր կունակը զինուորված չէր . և անոր համար խորհեցաւ որ իր կունակը անոր դարձունելը եվելի պատահութիւն կուտայ անոր իր նետերովը դիւրութեամբ վիրաւորել զինքը . ուստի դէմ դնել վճռեց՝ ու եղած տեղը կայնեցաւ . քանզի ինքնիւրենը ըսաւ , կեանքս ազատելէն ուրիշ բան չըլլար նէ ալ իմ աչքս , ամէնէն աղէկը կայնիլն էր :

Մտուծոյ ուժովը յաղթութիւն կըստանան՝ թէպէտ և չէ թէ առանց վերքեր ընդունելու : Արկորդ կերպ փորձութիւնները առաւել ևս զարհուրելի են՝ երբոր թշնամին սովորաբար մարմինին կազմութեանը մէկ տկարութիւնովը բուն իսկ անոնց կարողութիւններուն վրայ կը յարձրկի ու կը թունաւորէ . երեւակայութիւնը կը մթնցունէ ու կը շփոթէ , ու անոնք վախով կը լեցունէ : Մտնք երբոր ուժգին ըլլան՝ դէմ կենալու կարողութենէն կը զրկեն հոգին , ու շատ անգամ մինչև յուսահատութեան կը մտնցունեն : Այց Մտուծոյ ժողովրդոցը շատերը աս փորձութիւններուն այնչափ անծանօթ են՝ որչափ որ ցամաքի վրայ եղողները Ավկիանոսին վրայ նաւարկողներուն վտանգները ու նեղութիւնները չեն գիտեր : Սելամաղձոտ անձինք Սատանային աս անդունդներէն եվելի նեղութիւն կը կրեն : Վրիստիանոսին Մպողիոնին հետ կռուիլը առաջին կերպ փորձութիւններուն կրնայ վերաբերիլ . երկրորդին քանի մը օրինակները իր Սահուան Շուքին Ձորէն անցնելուն կրտեսնըվին :

Աստուծոյ Վրիստիանոս առաջ գնաց , ու Մարտիրոսներ իր դէմը եկաւ : Հիմայ աս այլանդակը շատ սոսկալի տեսիլք մը ունէր . ճուկի նման թեփերով պատած էր , որ անոնցմով կը հպարտանար . վիշապի թևեր ունէր ու արջի ոտքեր , և իր փորէն կրակ ու մուխ կելլեր . ու իր բերանը առիւծի պէս էր : Երբոր եկաւ Վրիստիանոսին հասաւ , խոժոռած դէմքով մը անոր վրայ նայեցաւ , ու ասանկ սկսեց խօսիլ անոր հետը * :

Մարտիրոս . Ուրկից կուգասկոր , և ո՞ւր պիտի երթաս :

Վրիստիանոս . Ես կուգամկոր կործանման քաղաքէն՝ որ ամէն չարիքներուն տեղն է , ու Սիոն քաղաքը կերթամկոր :

* Թէ և Սատանայ քու դէմդ ելլայ՝ ու զարհուրելի կերպով քու վրագ յարձակի , մի վախնար . հապա աս միտքդ բեր՝ որ Սատանան ճանապարհորդ Վրիստիանոսին վրայ յարձակելու թոյլտուութիւն ունենալէն առաջ Տէրը զէնք պատրաստեց ու զրահաւորեց անիկա Մատուծոյ զրահովը , որով կրցաւ դէմ կայնիլ՝ յաղթել Սատանային՝ ու անոր բոլոր կրակոտ նետերը շիջուցանել : Սատանային հետը եղած բոլոր կռիւները Տէրոջը պատերազմներն են . իր զօրութիւնը մեզի կըհասնի յաղթելու անոր . ուստի հաւատքին լաւ պատերազմը պատերազմէ :

Լսողին . Լսով կըճանչնամ թէ դուն իմ հպատակներուս մէկն ես . քանզի բոլոր ատեր կիրը իմն է ; ու ես անոր իշխանը ու աստուածն եմ : Սերեմն աս ի՞նչ է որ դուն քու թագաւորէդ փախար : Ի՞նչ որ չի յուսայի թէ դուն ինձի էվելի ծառայութիւն կրնաս ընել , հիմայ մէկ հարուածով մը գետինը կըղարնէի քեզ :

Բերիսիան . Իրաւ՝ ես քու սահմաններուդ մէջը ծնած եմ , բայց քեզի ծառայութիւն ընելը գոհարին է , ու անանկ վարձք մը կուտաս որ անով մարդ չի կրնար ապրիլ . ինչու որ մեղքին վարձքը մահ է . Լուկ. Գ. 23 . ուստի երբոր կատարելութեան հասայ , ուրիշ խելացի անձինքներուն ըլածին պէս նայեցայ * որ ըլլայ թէ լաւագոյն տէր մը գտնամ :

* Լսոր բոլոր առաջ կուգայ Լստուծոյ բանին հաւատալէն՝ մեղքին վատթարութեանը վրայ մտքին համոզվելէն՝ մեղաւորին ինքրզինքը թշուառ վիճակի մէջ գտնալէն՝ ու Լստուծոյ Որդոյն շնորհքէն ու փրկութենէն : Սէկ մարդ մը աս ճշմարտութիւններուն հաւատք ընծայելուն պէս՝ սուտերուն հօրը ծառայութիւնը կըմերժէ , ու ճշմարիտ հաւատքով Սատանային դէմ կըզինուորի . քանզի հաւատքին փառաւորութիւնը է՝ բոլոր իր առարկութիւնները Լստուածային ճշմարտութենէն հանել :

Լ'աղբն . Չի կայ մէկ թագաւոր մը որ այն պէս անհոգութեամբ իր հպատակները կորսընցունէ , ոչ ալ ես տակաւին քեզ ձեռքէ Լ'աղբն ինչ պիտի հանեմ . բայց որովհետեւ հանգէ քու ըրած ծառայութեանդ ու ընդունած վարձքիդ վրայով զանգատ կընեսկոր , դուն ետ դառնալու կամք ըրէ , ու ես հոս տեղս կըխոստանամ թէ ինչ որ մեր երկիրը կուտայ նէ քեզի կուտամ :

Վրէպիտոս . Բայց ես ինքըզինքս ուրիշի մը տըրի , այսինքն՝ թագաւորներուն լիազաւորին . ու ինտոր կրնամ հիմայ իրաւամբ քու հետդ ետ երթալ :

Վրէի ծառայողն . Լ'սով դուն ան առակին ապուրէնը հակառակ՝ Լ'ընտանաց Տեճագոյնը իտրհամարհէ ընտրեցիք . բայց շատ անգամ անոնք որ ինքըզինքնին իր ծառաները ըլլալ խոստովանեցան նէ , քիչ մը ատենէն ետքը իրմէն ետ կիցան՝ ու նորէն ինծի դարձան * : Լ'կոր

* Ստեբրուն հայրը ահաւոր ճշմարտութիւն մը կըխօսի աս տեղս : Ինչ սարսափելի բան է մտածել թէ մէկ մարդ մը Հիսուսի ծառայ եղած ճամբայ ելլայ , ու կրկին Սատանային ծառայութեանը դառնայ . և սակայն քանի քանիներուն ասանկ կըպատահի : Բայց իրենց վախճանը չար է՝ ու իրենց մահը դատապարտութիւն :

դուն ալ տասնկ ըրէ, ու բոլոր քու ըրածդ պիտի ներեմ քեզի :

Վրիտիանա . Ես խօսք տրելի իրեն, ու ի ընն հպատակելու ուխտ ըրի . ուրեմն ինտոր կրնամ դառնուլ ասկից՝ ու իբրև ուխտադրուժ չի կախվիլ :

Լ. պողոն . Կուն ինձի ալ ան նոյն բանը ըրիր, և սակայն ես կը կամիմկոր բոլորը զանց ընել՝ թէ որ հիմայ նորէն դառնաւ ու ետ երթաս :

Վրիտիանա . Վեզի խոսաւցածս իմ դեռ կատարելութեան չի հասած ատենս էր . և անկից ՚ի զատ, անանկ կըսեպեմ որ ան թագաւորը՝ որուն զրօշակին տակը հիմայ կայնած եմ, կարող է զիս իմ խոսամունքէս արձրկել, ու նաև ներել ինձի որ քեզի ան խատմուքը ըրի : Եւ մանաւանդ՝ ո՞վ տարականիչ Լ. պողոն, ճշմարիտ խօսելով, ես իբ ծառայութիւնը՝ իր վարձքը՝ իր ծառաները՝ իր կառավարութիւնը՝ իր ընկերութիւնը և իր երկիրը էվելի կըսիրեմ քան թէ քուկինդ . ուրեմն ալ մէկդի ձգէ զիս համոզելը . ես իր ծառան եմ, ու իրեն պիտի հետևիմ :

Լ. պողոն . Երբոր կիրքդ իջնայ նորէն մըտ-

մըտայ ան բաներուն վրայ՝ որոնց պիտի պատահիս քու գացած ճամբուդ մէջը : Դուն գիտես՝ որ ըստ մեծի մասին իր ծառաներուն վեր

ճամբուն ջը դէշ կըլլայ, քանզի անոնք ինձի
բժոշոտրոն և իմ ճամբաներուս դէմ յանցա-
լիներ իւր կըզըտնըվին : Ինոնցմէ քան-
ցոցընէ՝ քանի անձինք ամօթալից մահով
սատկեցան : Եւ ան որ դուն իր ծառայութիւ-
նը իմինէս աղէկ կըսեպես, ինքը ե՛րբ իր ե-
ղած տեղը ձգեց եկաւ իրեն ծառայողներուն
մէկը իմ ձեռքերէս խալըսելու : Բայց իս ոչ
կըհարցունես նէ՝ քանի քանի անգամ ինձ
հաւատարմութեամբ ծառայողները թէ կա-
րողութեամբ և թէ խորամանկութեամբ ա-
զատեցի իրմէն և իրեններէն՝ ինչպէս որ բո-
լոր աշխարհ գիտէ : Եւ ահա ասանկ քեզ ալ
պիտի ոզատեմ ես * :

Վրիսիւսնոս . Է իմակվան իր համբերելը ան-
ոնք ազատելու՝ անոնց սէրը փորձելու համար
է, թէ արդեօք մինչև վերջը անոնք իրեն

* Եկատէ թէ Ե) ատանան որչափ նուրբ ճամբա-
ներ ու խորամանկ առարկութիւններ կըբանեցունէ
որ ճամբորդները Տէրոջը ճամբուն մէջ յարստե-
լէն արգիլէ : Երանի թէ Ե) ատանային խորամանկու-
թիւններուն անծանօթ ու անպատրաստ չըլլանք :

պիտի յարի՞ն մի : Եւ ան որ ըսիր թէ իւ
 ծառաներուն վերջը գէշ կըլլայ , առիկա ի-
 րենց առջին խիստ փառաւոր բան կըսեպէի :
 Վանզի անոնք աս հիմակվան ազատութեանս
 վրայ այնչափ յոյս չունին . ինչու որ իրենց
 փառացը կըսպասեն . ու երբոր իրենց թա-
 զաւորը իրեն և իր հրեշտակներուն փառքովը
 զալու ըլլայ , անատենը անոնք պիտի ընդու-
 նեն ան իրենց փառքը * :

Լպտիւն : Գուն արդէն անհաւատարիմ ե-
 ղար իրեն ծառայութիւն ընելուդ մէջը , ու
 ինտոր կրնաս խորհիլ թէ անկից վարձք պի-
 տի առնես :

Վրէպիանոս . Ի՞նչ բանի մէջ անհաւատա-
 րիմ եղայ իրեն՝ ո՞վ Լպտիւն :

Լպտիւն . Ի՞նչի ճամբայ ելլելուդ՝ երբոր
 Յուսաստանութեան փոսին մէջը գրեթէ կը
 խեղդըվէիրկոր նէ՝ անատենը տկարացար ,
 Գուն ճամբաներ երթալու աշխատեցար քու
 բեռէդ ազատելու համար , երբոր Յուսաստան
 քեզի կենալ պէտք էր մինչև որ Գուն ճեղ-
 քու թագաւորդ վերցուներ ան իկա : Եւ յէ

* Լհա քեզի հաւատքին պատուական առարկու-
 թիւնը : Լղէկ ըսաւ Պօղոս՝ թէ "Լհն բանի վրայ

Շարաչար քնացար և քուկին խիստ պատուա-
կան բաներդ կորսընցուցիցիր : Եւսև առիւծնե-
րը տեսնալուդ սեպէ թէ խելքդ պառկեցաւ
ես դառնալու : Եւ երբոր քու ճամբուդ վը-
րայով ու տեսած և լրած բաճեցուդ վրայով
խօսելու ըլլաս , ներսըվանց քու բոլոր լրած
ներուդ ու ըրածներուդ մէջը սնափսսուածեան
փափաք մը ունիս * :

Վրիստիննա . Բոլոր ասոնք ճշմարիտ են , և
ասոնցմէ, էվել ուրիշներն ալ կան որ դուն
ձգեցիր † . բայց ան խազաւորը՝ որուն նր ես

առէք հաւատքին վահանը , որով կարող ըլլաք չա-
րին կրակոտնետերը մարելու” . Եփէս . Գ . 16 :

* Սատանան արդարապէս կրկոզվի Վրիստոսի
եղբայրներուն չարախօսը . (Յոյս . ԺԹ . 10 . Ինչու
որ անոնց համար Լստուծոյ առջին ու իրենց խղճ-
մտանքներուն չարախօսութիւն կրնէ : Բայց անոնք
յօղթեցին անոր՝ Վառին արիւնովը , ու անոր
խօսքին վկայութիւնովը . (Յոյս . ԺԹ . 11 . Թէ Վր-
րիստոսի արիւնովը փրկութիւն գտան , այսինքն՝
մեղքերնուն թողութիւն . Եփէս . Կ . 7 :

† Սատանային մեր վրայ գտած յանցանքները եր-
բոր ճշմարիտ ըլլան՝ աղէկ է որ վրանիս առնենք
մանաւանդ թէ մեծցունենք ալ անոնք , որ Վրիս-
տոսի շորհաց առատութիւնը ամէն բանէ վեր անց-
նի , ամէնուն ձրի թողութիւն շորհելուն : Լսանկ
մենք զմեզ խոնարհեցունելով ու Վրիստոս բարձր-
ցունելով Սատանան չի կրնար առիթ մը գտնալ

կրծաւայեմ ու զինքը կը պատուեմ, ողորմած է՝ ու միշտ պատրաստ է ներելու : Իսկ սա թող մնայ . ամէն սա պակասութիւնները քու երկրիդ մէջը իմ վրաս եկան . ինչու որ ան տեղը ծծեցի ես անոնք՝ ու անոնց տակը հեծեցի . հոքը անոնց վրայով զը ջուտի եկայ, ու իմ թագաւորէս թողութիւն գտայ :

Անատենը Ապողիոն սաստիկ սրտմտութեամբ սկսեց ըսել . Ես թշնամի Ռաբլու-Րէ եմ աստ թագաւորին . ասելի են ինչ լեռն իւրեծի իր անձը՝ իր օրէնքները և իր ժազովուրդը . ես դիտմամբ դուրս ելայ որ քեզ արգիլեմ :

Իր խորհրդով . Ո՛վ Ապողիոն, զգուշ կեցիր ինելու բանիդ վրայով . քանզի ես թագաւորական պողոտային՝ այսինքն սրբութեան ճամբուն մէջն եմ . անոր համար դուն քեզի աղէկ նայէ :

Անատենը Ապողիոն ճամբուն բոլոր լայնութեանը վրայ իր ոտքերը բանալով ըսաւ . Ես սա քանիս վրայ մէկ վախ մը չունիմ . դուն քեզ մեռնելու պատրաստէ . քանզի իմ տար-

մեր վրայ, թէ և ասիկա մեզի դէմ կատղեցունէ զինքը :

տարուսական որջիս վրայ երդում կընեմ՝ որ
 ալ ասկից անդին չի պիտի երթաս . աս տեղս
 ես քու հոգիդ պիտի առնեմ : Եւ ըսելով՝ բոցի
 պէս վառած նետ մը նետեց անոր կուրծքին :
 Եւ այց Վրիստիանոս իր ձեռքը վահան * մը
 ունէր՝ որ ան նետին դէմ դրաւ , և ասանկ անոր
 տալու վնասը արգիլեց :

Հիմայ Վրիստիանոս իր Թուրը քաշեց ,
 քանզի տեսաւ որ բան տեսնալու ժամանակն
 էր : Եւ պողիոն ալ շուտով անոր վրայ հասաւ՝
 կարկուտի պէս նետերը նետելով , որով Վր-
 լիստիանոսին գլուխը ձեռքը և ոտ-
 քը վիրաւորեց , Թէպէտ և Վրիս-
 տիանոս կրցածին չափ աշխատեցաւ
 անվնաս մնալու : Եւ սիկա քիչ մը
 սկայրացուց Վրիստիանոսը . ուստի
 Եւ պողիոն կատաղութեամբ իր գոր-

Վրիստիանոս
 իր վրայ
 որով ինչ
 ինչ և աս
 ինչ և աս
 ինչ

* Եւ սիկա էր հաւատքին վահանը . այսինքն Վր-
 լիստոսի իրեն համար ըրածին՝ իրեն Վրիստոս ինչ
 ըլլալուն՝ իր վրայ Վրիստոս ինչ ընելուն՝ ու իր
 Վրիստոսով Թողութիւն արդարութիւն ու սրբու-
 թիւն գտած ըլլալուն հաւատալը : Հաւատքին
 փառաւոր զաւանութիւնը Վրիստոս կրպատուէ ,
 Սատանային բոլոր կրակոտ նետերը կրմերժէ ու
 կը շիջուցանէ , ու անիկա կը յաղթէ : Պետրոս ա-
 սոր կը յորդորէ ըսելով , “Արուն (Սատանային)

ծին ետեէն եղաւ . ու Վրիստիանոս նորէն քաջալերուեցին առաւ՝ ու կրցածին չափ աւրիաբար դէմ դրաւ անոր : Ըստ սաստիկ կռիւր կէս օրէն էվելի քշեց , մինչև որ Վրիստիանոս սեպէ թէ բոլորովին կարողութենէ ինկաւ : Վանդի պարտիս գիտնալ որ Վրիստիանոս իր վէրքերուն պատճառովը հետզհետէ հարկաւ պիտի տկարանար :

Եւ պողինն աս պատեհութիւնը տեսնալով սկսեց Վրիստիանոսին վրայ գալ , ու անոր հետը մարտնչելով գետինը զարկաւ անիկա , և ասով Վրիստիանոսին թուրը իր ձեռքէն թռաւ : Ենատենը ըսաւ Եւպողինն . շիմայ քեզ յաղթեցի . և անոր վրայ՝ սկսեց անանկ ճգնել անիկա մեռցունելու համար , որ Վրիստիանոս յոյսը կտրեց իր կեանքէն * : Իսայ Ես.

դէմ կենաք հաւատքով հաստատված՝ . ան . Պէր . Է . 9 :

* Կարելի է որ մտածենք թէ ասիկա շատ ծանր բան մըն է . ինչո՞ւ համար Վրիստիանոսայ մը այսչափ սաստիկ նեղութիւն պիտի կրէ Սատանայէն : Իսայ Եստուած ինչո՞ւ համար զէնք կուտայ մեզի , եթէ ոչ անով կուռելու՝ ու անոր պատուականութիւնը փորձելու՝ ու անիկա գործածելնուս իր ամենակարող զօրութեանը ու անփոփոխ սիրոյն ճաշակը առնելու . քանզի թէպէտ և մենք տկար ենք՝ բայց ինքը

տուժոյ կամելովը՝ երբոր Մպողինն իր վերջնն
 հարուածովը աս բարի մարգուն վերջը պիտի
 բերէր , Վրիստիանոս արագութեամբ մը
 ձեռքը երկնցուց իր թուրք առնել , ու անիկա
 յափշտակելով ըսաւ . Սի ուրախանար իմ
 վրաս՝ ո՛վ իմ թշնամիս , երբոր իշնամ՝ պիտի
 ելլեմ . Սիս . Է . 8 . և աս ըսելով սաստիկ մը
 Վրիստիան վիրաւորեց անիկա * , որով՝ իր մա-
 նասկը յառ ճացու վերքը ընդունող մէկի մը
 լի է պէս ետ քաշվեցաւ Մպողինն . Վր

ամենակարող է մեզի զօրութիւն տալու . անոր հա-
 մար պատուիրված է մեզի զօրանալ Տէրոջմով ու
 իր կարողութեանը զօրութիւնովը . Եփե . Է . 10 :

* Վրիստոնէին թուրը՝ որով իր հոգևոր թշնա-
 մին կը զարնէ , Մտուժոյ բանն է : Երբոր աս զէնքը
 չունենանք , թերահաւատութեան որս կը լլանք ,
 Մյսպէս եղաւ Վրիստիանոսին՝ երբոր ինքը Մպո-
 ղինին հետ ան զարհուրելի կռիւր կընէր : Թերե-
 հաւատութեան զօրութիւնովը իր թուրը ձեռքէն
 կորսնցուց , ու սկսեց իր կեանքէն յոյսը կտրել .
 բայց երբոր կրկին իր թուրը իր ձեռքը առաւ՝ իր
 թշնամիին մինչև սրտին թափանցեց , ու վերջա-
 պէս փախցուց անիկա : Սեր քաջայարժ զօ-
 րադուխն ալ երբոր Սատանային հետ պատերազ-
 մեցաւ , աս նոյն զէնքը գործածեց ու յաղթեց ա-
 նոր : Ս թէ որ իրեն հետևողները միշտ խելք ընէին
 ան նոյն զէնքը բանեցունելու , ամենևին անյաջող
 չի պիտի գտնուվէին :

ընտրանոս անիկա տեսնողով մէյմալ անոյ
վրայ յարձակեցաւ՝ ըսելով, Վր անէն թանե
ըուն մէջ էվելթք կըլաղթենք անով որ սիրեց
մեզ * . Հասկ . շ . 37 : Եւ որ վրայ Վրողուն
իր վիշապայիկ թևերը թացաւ՝ ու անանկ սկսեց
փախչիլ : որ Քրիստոսիանոս մէյմալ չի տե
սաւ անիկա . Յով . դ . 7 :

Բոլոր աս կռիւին ատենը Վրողունին հա
նած աղաղակները և սոսկալի մունջիւնները մէ
կը չի կրնար մտածել՝ թէ որ ինքը ինծի պէս
տեսած ու լսած չըլլայի՞ն անոնք : Ինքի վի
շապի պէս կըխօսէր . և ընդհակառակը ինչ
հառաջանքներ ու հեծութիւններ կելլէին Քր
րիստիանոսին սրտէն : Բոլոր ան ատենը բնա
չի տեսայ որ միայն մէկ հաճելի դէմք մը ցու
ցընէր՝ մինչև որ իմացաւ թէ իր երկու բերնէ
թուրովը Վրողունը վերաւորեց . անատենը ի
րաւցունէ խնդաց, ու դէպի վեր նայեցաւ † :

* Միտք առ որ Տէրը լոկ դիտողի մը պէս չի
կայնիր նայիր մեր կռիւններուն . հապա ամէն շար օ
րերու ու ամէն հաւատոյ պայտերազմներդ անկ
կըզորացունէ, ու վերջապէս իր սիրովը յազմութիւն
ստացած մեզ ետ կըզարձունէ :

† Քրիստիանոս խնդաց ոչ սնափառ ու անճա
պարձ՝ հապա խոնարհ ու շորհապարտ խնդու մով :

Իսայց ստեղծեմ անհնարապարհ կռիւ մին եր
ան : որուն նմանք բնաւ տեսած չէի ես :

Քրիստիանոս կռիւք լրմբնալէն ետքը զ
սառ : Վոհալթիւն պիտի մատուցանեմ սա տե
զըս՝ անոր՝ որ զիս աւերածին բեղմէն սպա
տեց : անոր՝ որ Վարդանին գէտ ինձի օգ
նութեան հասաւ : Եւ ստանկ ըրաւ ինքը՝ զ
սեւով :

Իմ չար թշնամոյս զորագրուիք
Կեծ Ռեւելզերուղ կործանուես ուրեց,
Եւտր համար սա շարաճըճիկք
Վ առած զինուորած իմ վրաս խրկեց :

Աւաս մոլեգմեալ դժոխայինը
Խիստ կատաղաբար զիս նեղը ձցեց .
Իսայց ես թաւրոյս փախուցի զինքը ,
Յ ինձի Վրիտոս օրհնես Տէրն սգնեց :

Ուստի Մտուծոյս ես մատուցանեմ
Մշտնջենաւոր գովարանութիւն ,
Ուր պրազան ամուսնը շնորհեմ
Ընդադար բերնով փառք և գոհութիւն :

Ընատենը մէկ ձեռք մը երեցաւ իրեն կե
նայց ծառին տերեւեկէն քանի մը հատ բանած ,
որոնք Քրիստիանոս առմեւով կռիւին մէջը

Վ եր նայեցաւ ու խնդալով իր ըրած յաղթու
թեանը բոլոր փառքը Տէրոջը ընծայեց :

իր բնգունած վերաբերան վրայ դրառ , և խսկոյն
բժշկելովեցաւ * : Են նոյն տեղը նաև նառա
հայ ուտելու , ու քիչ մը տաւաջ փրկն տրված
ան շնչէն խմելու . սասանկ կարգուրելով՝ իր
ձաճբորգու թեանը սրասրաւտովեցաւ , թուրք
իր ձեռքը բաշած բռնելով † . քանզի՝ լատ
թէ , Ի՞նչ զիտնամ , կարեղի որ մէկ ուրիշ
թշնամի մ'ալ կրբայ սնար . սակայն բոլոր
աս ձորին մէջը Լ'պողիանէն ուրիշ թշնամի մը
չի պատահեցաւ :

Գանթ որ՝ աս ձորին վերջը ուրիշ մ'ալ
կար՝ որ կրկոչվէր Սասնուան Ը աքին ձորը † ,
ու Վրթոսիանու հարկաւ անկից անցնելու էր ,
որովհետև Երկնային Քարտաքը երթնալու ձաճ
բան սնար մէջ տեղէն էր : Լիմայ աս ձորը

* Սասանային հետը կռուելնուս ինչ վերքեր որ
բնգունինը հոգ չէ . ինչու որ Սիսուս բոլորը կրբ-
ժրչկէ : Լայց ո՞վ պիտի բժշկէ ան վերքերը՝ որ ոչ
թէ չարին հետը կռուելնուս՝ հապա անոր հետը
միաբանելնուս քրմէն կրնգունինք :

† Սասանային հետ Կոնի ընկելը՝ Քրիտոսեանե-
րը կը հոգնեցունէ՝ ու կրպատճառէ անոնց Իրեւնց
թեալը յարակ , անանկ որ Լ'ոգիին թուրք Լ'առու-
նայ քանդ ձեռքերնին բռնած էր թան :

‡ Սասնուան Ը աքին ձորը կրնշանակէ հորին
միջնաքը ու Լ'քրմիլը :

մէկ շատ տխրագին անդ մըն էր : Երբ միա
մարզարէն ասանկ կրանորազրէ անկեա . Եւ
նապատ մը՝ աւերակներու և փոսերու երկիր
մը , ցամաքութեան և Մահուան Եւրփեւ եր-
կիրը , երկիր մը՝ ուրկից (Վրիստիանոսէն ի
զատ) մէկը չանցաւ . և ուր մարդ չի բնակե-
ցաւ * . Երեւոյթ . 6 :

Հիմայ Վրիստիանոսը առ ձորին մէջը է .
վեր զգոնարութիւն քաշեց՝ քան թէ Վարդ-
ղիոնին հետը կուտամ ատենը : ինտոր որ հե-
տևեալ պատմութիւնովը պիտի տեսնաւ :

Աստի երազիս մէջը տեսայ որ երբ Վրիս-
տիանոս Մահուան Եւրփեւ սահմանները մը-
տաւ , երկու հոգի ելան իր դէմը՝ իրանք բարի
երկրին վրայով գէշ լուր բերողներուն զա-
կրներն էին , իմ . . 47 . 32 . ու արտորայով ետ
կերթայինկոր † : Վրիստիանոս ասանկ սկսեց
խօսիլ անոնց հետ :

* Երբոր Բստուած իր երեսը ծածկէ՝ Վրիստի-
անին սրտին անանկ մեծ դառնութիւն է ան որ ու-
րիշ մէկը չի գիտեր :

† Յաճախ կրպատահեց ասանկներուն , որոնք
ճամբայ կելան մեղքի զգացում մը՝ ճշմարիտ
հաւատք մը՝ ստոյգ յոյս մը ու Վրիստիանոսի վը-
րայ անկեղծ սեր մը չունենալով . և ինչպէս որ

Վրիստիանոս . Ո՞ւր կերթաք կոր :

Պատասխան տըւին թէ , Ետ ետ . և կուզենք որ դուն ալ մեզի պէս ընես , թէ որ կեանքը կամ խաղաղութիւնը պատուական կը սեպես :

Ինչ՞աւ , ի՞նչ կայ , ըսաւ Վրիստիանոս :

Սուրբիւր . Ի՞նչ պիտի ըլլայ , մենք առ ճամբէն կերթայինք կոր՝ ինտոր որ գուն ալ կերթասկոր , և որչափ համարձակեցանք նէ գալցինք . և իրաւցունէ սեպէ . թէ ետ գառնալիք չանէինք . քանզի թէ որ քիչեկ մըն ալ առաջ գացած ըլլայինք , չի պիտի կրնայինք աս տեղս գալ քեզի լուր բերելու :

Բայց ի՞նչ բանի պատահեցաք , հարցուց Վրիստիանոս :

Սուրբիւր . Ի՞նչ կըսես , դքեթէ Սահուն Շուքին Չորին մէջը կըմտնայինք կոր , բայց բաղդերնիս բանելով առջևնիս նայեցանք՝ ու վտանգին մէջը չի մտած տեսանք սնիկա . Սուրբ . ԽԳ . 20 : 87 . 10 :

Բայց ի՞նչ տեսաք , կրկին հարցուց Վրիստիանոս :

Իրենց դաւանութենէն պիտի դառնան , սնանկ ալ Վրիստոսի թագաւորութեանը երթալու ճամբուն վրայով չար լուր պիտի բերեն :

Սարգիս . Ի՛նչ պիտի տեսնանք , բուն ան ձորը՝ որ կուպրի պէս մուլթ է : Ի՛ն տեղը տեսանք նաև տարտարոսին ուրուական երևոյթները՝ այծամարդները և վիշապները . նոյն ձորին մէջը լսեցինք նաև շարունակ հաչելու և ոռնայու ձայներ՝ որ կրնմանէր անպատմելի թշուառութեան տակ եղած ժողովուրդի մը ձայնը , որոնք տանջանքի և շղթաներու մէջ նստած էին հոն : Եւ, ոյն ձորին վրայ կիյնարկոր ևս խառնակութեան զարհուրելի ամպերը : Սահ՛ն ալ միշտ իրթևերը անոր վրայ կը բանայ կը տարածէ կոր : Եւրկան չընենք , ամէն կերպով սոսկալի տեղ մըն է , և ամենեին անկարգ . (Յօդ. 7. 5 : 7. 22 :

Ուրեմն՝ ըսաւ Վրիստիանոս , ես ձեր ըսածէն տակաւին ուրիշ բան չեմ իմանարկոր հապա ան որ իմ բաղձացած նուահանգստի ճամբան ասիկա է . Սաղ. ի7. 18, 19 : Երեմ. 6 :

Սարգիս . Վուկին ճամբադ ան թող ըլլայ . մենք անիկա մեր ճամբան ըլլալ չենք ուզեր :

Եւսանկ անոնք իրարմէ զատվեցան , ու Վրիստիանոս առաջ գնաց դէպի իր ճամբան .

բայց տակաւին թուրը քաշած իր ձեռքը բռնեւր էր , վախնալով՝ որ չըլլայ թէ մէկը իր վրան գայ :

Ընատենը երագլիս մէջը տեսայ՝ որ աս ձուրը մինչև ուր կըհասնէր նէ՝ իր աջ կողմը մէկ խիստ խորունկ խորխորատ մը փոս մը ունէր : Ըսիկա ան խորխորատն էր՝ ուր որ բոլոր դարերուն մէջը կոյրերը կոյրերուն առաջնորդելով ինկան , և հոն երկուքն ալ թշուառաբար կորսրվեցան : Գարձեալ նայեցայ ու տեսայ՝ որ ձորին ձախ կողմը մէկ խիստ վտանգաւոր ցեխոտ տեղ մը կար , որուն մէջը թէ և աղէկ մարդ մըն ալ իյնալու ըլլայ նէ՝ անոր յատակը չի գտնար որ իր ոտքերը դնէ ու կանգնի : Գաւիթ թագաւորը անգամ մը ան նոյն ցեխին մէջը ինկաւ՝ և անտարակոյս պիտի խեղդըվէր անոր մէջը , թէ որ ան Կարողը զինքը դուրս չի հաներ * • Սալ. կը . 15 :

* Ըջ կողմի փոսը կընշանակէ սխալ գաղափարները կամ ներքին մոլութիւնները՝ ուր որ կոյրը՝ սյսինքն հոգևոր ճշմարտութիւնները չի տեսնող կոյրերը՝ կառաջնորդեն կուրին՝ սյսինքն սնոնց որ բնաւ հոգևորապէս չի լուսաւորվեցան : Զախ կողմի փոսը կընշանակէ արտաքին մեղքերը ու չարութիւնները՝ ուր որ շատերը կիյնան : Կրկուքն՝ ալ

Աս տեղս քալելու ճամբան ալ չափազանց նեղ էր, և անոր համար բարի Վրիստիանոսը ելելոք շփոթութեան մէջ ինկաւ: Վանգի մութին մէջը * երբոր մէկ կողմի խորխորատէն փախչիլ ուզէր, մէկալ կողմի ցելխին մէջը իյնալու պատրաստ էր: Անանկ ալ երբոր ցելխէն փախչիլ ուզէր, առանց մեծ զգուշութիւն բանեցունելու խորխորատին մէջը իյնալու էր: Ենքը ասանկ առաջ երթալուն՝ լոկցի ուր դառնապէս կը հռաւաչէր. քանզի վեջը յիշլած վտանգներէն՝ ի զատ, քալելու ճամբան ալ աս տեղս անանկ մութ էր՝ որ շատ անգամ երբոր իր ոտքը կը վերցունէր առաջ երթալու, չէր գիտեր թէ ո՛ւր կամ ինչ բանի վրայ պիտի դնէ անիկա մեա քայլը առնելուն † :

Հաւասարապէս վնասակար են ճամբորդներուն, բայց Տէրը իր սուրբերուն ոտքերը պիտի պահէ:

* Իւրազգած խղճմտանքը նոյնչափ կը վախնայ խանգարեալ գաղափարներէն՝ որչափ մեղանչական գործքերէն: Ասիկա կը ցուցնէ հոգիին անկեղծութիւնը՝ թէ և մէկը մթութեան մէջ կը քալէ ալ:

† Իայց կարելի է հարցունել թէ Տէրը իր զաւկըները ինչո՞ւ ասանկ մութը քալելու կը թողու: Իր փառքին համար. ասիկա անոնց իր վրայ ունեցած հաւատքը կը փորձէ, ու իրեն աղօթելու կը



Մէյմալ տեսայ որ դժոխքին բերանը սեպէ թէ աս ճորին մէջ տեղը կիյնարկոր, ու ան ալ ճիշտ ճամբուն քովիկն էր : Վրիստիանոս ասիկա տեսնալով՝ ի՞նչ պիտի ընեմ ես հիմայ, ըսաւ իր մտքովը : Բոցը ու մուխն ալ շարունակ առատօրէն դուրս կուգար անկից կայծակներով և սոսկալի ձայներով . (առոնք անանկ բաներ էին՝ որ Վրիստիանոսին թուրը բանի տեղ չէին սեպեր, ինտոր որ առաջ Նպողիոնին դէմը բանի տեղ անցաւ անիկա .) ուստի Վրիստիանոս պարուաւորեցաւ իր թուրը տեղը դնել և ուրիշ մէկ զէնք մը ձեռք առնել՝ որ կրկոչվի Նիդադար Նորթթ . Եփ. 18, ուստի լսեցի որ կանչեց, Ո՛վ Տէր, կաղաչեմ քեզի, փրկէ իմ անձս . Սաղ. 86, 4 : Նսանկով ինքը խել մը ատեն առաջ գնաց, բայց տակաւին բոցերը դէպի իրեն հասնիլ կուզէին . նաև ցաւագին ձայներ ու անգին ասդին զարնըվելու ձայներ լըսեց, անանկ որ՝ երբեմն կրմամբուար թէ կտոր կտոր պիտի փառատվի, կամ փողոցներուն ցեխին պէս պիտի կոխկրուտրվի : Ինքը

գրգռէ . բայց իր անոնց վրայ սէրը ամենեին չի նուազիր :

աս սոսկալի տեսարանը տեսաւ և աս զարհուրեց ինչ ձայները լսեց՝ մինչև որ խել մը մզն տեղ առաջ գնաց . ու մէկ տեղ մը գալով՝ ուր որ կարծեց որ կըլսէր թէ դեւերու գունդ մը առաջ կուգակոր իր դէմը ելելու , հոն կանկ առաւ , ու սկսեց խորունկ մտածել թէ որն է աղէկ իրեն ընելու : Արբեմն կէս խորհուրդ մը ունեցաւ ետ դառնալու . անկէ ետև խորհեցաւ որ կարելի է թէ ճորին կէս ճամբան առած է : Ասոնցմէ ՚ի զատ նաև իր միտքը բերաւ թէ արդէն քանի քանի վտանգներու դէմ դրած է ինքը , և թէ՛ ետ դառնալու վտանգը առաջ երթալու վտանգէն էվելի կընայ ըլլալ : Ուստի միտքը հաստատեց առաջ երթալ , բայց տակաւին դեւերուն ձայները կըթրուէր թէ կըմտենանկոր : Բայց երբոր սեպէ թէ անոնք բոլորովին մտ եկան իրեն , ինքը բոլոր սրտովը կանչեց թէ , Տէր Աստուծոյ զօրութիւնովը պիտի քալեմ ես : Ենատենը ետ կեցան ու ալ առաջ չեկան անոնք :

Բան մ՞ ալ կայ որ չի պիտի ձգեմ : Կկատեցի որ խղճալի Վրիստիանոսը անանկ շը փոթութեան մէջ ինկեր էր՝ որ բուն իր ձայնը

չէր ճանչնարկոր : Եւ ասիկա աս կերպովս իմացայ : Երբոր ինքը ան վառած խորխորատին բերանը նոր անցեր էր , չար հոգիներուն մէկը իր ետեւը անցաւ՝ ու կամացուկ մը իր կունակին մօտ եկաւ , ու փսփսալով շատ սուկալի հայհոյանքներ խօսեցաւ անոր ականջէն վար : որ Վրիստիանոս ճշմարտապէս կարծեց թէ անոնք բուն իր մտքէն առաջ կուգան կոր * : Ու մտմըտալով՝ թէ ինքը հիմայ ինչ պէս կը հայհոյէկոր Վնոր՝ որնոր առաջ այնչափ կը սիրէր , եվելի շփոթութեան մէջ ինկաւ՝ քան թէ իրեն պատահած բոլոր առջի բաներովը : Եւ սակայն թէ որ ճարը գտնար՝ չի պիտի ընէր ան բանը . բայց իր ականջները բռնելով՝ կամ ան հայհոյութիւններուն ուրկից գալը գիտնալու չափ ընտրողութիւն չունէր :

Վրիստիանոս երբոր աս անմխիթար վիճա

* Մտուածոյ սիրելի զաւակներէն շատերուն ասանկ կը պատահի . Սատանային կրակոտ նետերը խիտ առ խիտ իրենց բոլորտիքը կուգան թռչելով : Չար ու հայհոյական խորհուրդներ կը մտնան իրենց միտքերուն մէջ , որոնք շատ անգամ մեծապէս կը շփոթեն ու կը վախցունեն զանոնք՝ որովհետեւ ան ատենը թշնամիին հայհոյական թելադրութիւնները բուն իրենց խորհուրդներէն չեն կրնար որոշել :

կիս մէջը խեղ մը ատեն ճամբորդութիւն ըրաւ, կարծեց թէ իր առջևէն դացող մէկու մը ձայնը կըլսէկոր՝ որ կըսէր, թէ պէտ և Սահուան Շուքին Ձորին մէջը քալեմ՝ նէ՛ չի պիտի վախնամ չարէն, ինչու որ զուն Տէր իմ հետս . Սուվ. իբ. 4 :

Ընատենը Վրիստիանոս ուրախացաւ * , և ան ալ աս պատճառներուն համար :

Ընաջին՝ քանզի ասկից քաղեց՝ թէ աս ձորին մէջը իրեն պէս մէկ քանիներ ալ կային՝ որոնք Մստուծմէ կըվախնային :

Երկրորդ՝ որ իմացաւ թէ Մստուած անոնց հետն էր, թէ և ան միջին և աղէտալի վիճակին մէջն էին : Եւ ինչո՞ւ համար Մստուած իմ հետս ալ չի պիտի ըլլայ, ըսաւ իր մտքէն, թէ և ես աս տեղի եղած արգելքներուն համար չեմ կրնարկոր իմանալ ան . Յե. Թ. 11 :

Երրորդ՝ որ յոյս ունեցաւ՝ թէ անոնց հասնելու կարող ըլլայ նէ շատ չանցած ընկեր պիտի ունենայ : Սատի ասանկ առաջ գնաց՝

* Սուրբերուն փորձառութիւնը մեծապէս կըքաջալերէ մարդս . ինչու որ կըգտնայ թէ իրմէն առաջ ուրիշները զարհուրելի՛ մութ և ամայի ճամբաներէ գացած են :

ու իրմէն առաջ եղողին հոռէն կանչեց, բայց ան չէր գիտեր թէ ի՞նչ պատասխան տայ, քանզի ինքն ալ զինքը մինակ կարծեր էր հոն : Մէյմալ նայիս որ արշալոյսը սկսեց ծագել, ու Քրիստիանոս անատենը ըսաւ . Սահուան շուքը առաւօտի դարձուց . Լ. Կ. Ե. 8 :

Գանք որ հիմայ առտու ըլլալով գարձաւ հտեը նայեցաւ՝ չէ թէ ետ դառնալու փափաք ունենալէն՝ հապա որ ցորեկվան լուսովը տեսնայ թէ գիշերը ի՞նչ վտանգներէ անցաւ : Լ. սանկ՝ էվելի կատարելապէս տեսաւ մէկ կողմին խորխորատը և միւս կողմին ցելսը, ու նաև տեսաւ թէ որչափ նեղ էր երկուքին մէջ տեղէն ինկած քայելու ճամբան : Կաւ տարտարոսին ուրուական երևոյթները՝ այծամարդերը ու վիշապները հիմայ աղէկ մը տեսաւ, բայց բոլորն ալ հեռուէն . քանզի արշալուսէն հոքը ալ իրեն մօտ չեկան, բայց տակաւին իրեն կերևային՝ ան գրվածին պէս որ կրսէ, ինքը խաւարին խորունկ բաները ցուցուց, ու մահուան շուքը լուսի հանեց . Լ. Կ. Ե. 22 :

Քրիստիանոս իր առանձին ճամբուն բոլոր վտանգներէն աս ազատութիւնը գտնալով մե-

Ճապէս ուրախացաւ հիմայ . քանզի թէպէտ և առաջ շատ կը վախնար ան վտանգներէն , բայց հիմայ էվելօք յայտնի տեսաւ անոնք . քանզի ցորեկվան լոյսը էվելի երևան հանեց անոնք իրեն : Եւ աս միջոցիս արեգակն ալ կը ծագէրկոր , ու աս ալ մէկ ուրիշ ողորմութիւն մը եղաւ Վրիստիանոսին : Վրանզի պարտիս գիտնալ՝ որ թէպէտ Սահուան Շուքին Ձորին առջի մասը վտանգաւոր տեղ էր , սակայն աս երկրորդ մասը՝ որնոր դեռ պիտի երթար , շատ էվելի վտանգաւոր էր անկից . ինչու որ հիմակվան իր կեցած տեղէն մինչև ձորին վերջը բոլոր ճամբան մէկ կողմէն որողայթներով՝ ծուղակներով՝ թակարդներով ու ցանցերով , և մէկալ կողմէն փոսերով՝ խորխորատներով՝ խոռունկ խոռոչներով և զառիվար տեղերով անանկ լեցուն էր , որ եթէ հիմայ առջի մասը անցած ատենին պէս գիշեր ըլլալու ըլլարնէ , թէ և հազար հոգի ունենար ինքը , ամէնն ալ իրօք պիտի տկարանային . բայց ինտոր որ ըսի , ճիշտ հիմայ արեգակը կը ծագէրկոր : Ուստի Վրիստիանոս ըսաւ . Իր ճրագը իմ գլխուս վրայ կը ծագէ : ու իր լուսովը խաւարին մէջը կը քալեմ . (Եւթ . իթ . 3 :

Ուստի Վրիստիանոս աս լուսովը մինչև ճորին ծարը եկաւ , ու ես հիմայ երազիս մէջը տեսայ որ ճորին ծարը արիւն՝ ոսկորներ՝ մոխիր՝ ու փառատված մարմիններ կային մարդոց , այսինքն՝ առաջուց աս ճամբայէն գացող ճամբորդներու : Եւ երբոր խորունկ կըմտածէի թէ ինչ պիտի ըլլայ աս բաներուն պատճառը , մէյմալ առջեւ մէկ քարանձաւ մը տեսայ , ուր որ առաջուց ելիու հատ հսկաներ կըբնակէին , այսինքն՝ Պապը ու Հեթանոսը . ահա անոնց իշխանութիւնովը և բռնակալութիւնովը ան մարդիկը անողորմաբար մահուան մատնըված էին , որոնց արիւնը՝ ոսկորները՝ մոխիրը և ուրիշ մասերը հոն մնացեր էին : Սակայն Վրիստիանոս աս տեղէս առանց շատ վտանգ քաշելու անցաւ , որուն վրայ քիչ մը զարմացայ . բայց վերջը իմացայ որ Հեթանոսը շատոնց մեռեր է , ու մէկալը՝ թէպէտ տակաւին ողջ է , բայց տարիքը առած ըլլալուն՝ ու նաև ատեն ատեն շատ սաստիկ ծեծեր ուտելուն իր յօդուածները անանկ թուլցեր թումեր են , որ հիմայ ուրիշ բանի կարողութիւն չունի՝ հապա իր քարանձաւին բերանը նստած անցնող ճամբորդներուն վրայ ակուաները կըկըծրտա-

ցունէ ու իր եղուզները կըկրծէ, որ չի կրնար
անոնց քովը գալ :

Լյսպէս տեսայ որ Վրիստիանոս սուաջ
գնաց իր ճամբան՝ բայց ան քարանձաւին բե-
րանը նստող ծերունի մարդը տեսնալուն՝ չէր
զիտեր ինչ մտածէ անոր վրայ . մանաւանդ
որ թէպէտ և ինքը Վրիստիանոսին հտեէն
չէր կրնար երթալ, բայց իրեն կանչեց՝ ը-
սելով թէ, Սինչև որ ձեզմէ ուրիշներն ալ
չայրին նէ, դուք բնաւ շիտակ ճամբուն չի պի-
տի դառնաք : Սակայն Վրիստիանոս ձայն չի
հանեց, և քաղցրութեամբ մը համբերեց . ու
ասանկ՝ սուանց վնասելու անկից անցաւ, և
անատենը ասանկ երգեց .

Ի՞նչ անձառելի սքանչելիք է՝
Որ ազատիմ հոս ամէն չարերէ,
Ի՛հ օրհնեալ է ան բարերար ձեռքը,
Որ պահպանեց զիս ամէն անոնցմէ :

Խաւարին մէջի ան վըտանգները՝
Սանդարամետը՝ դէերը՝ մեղքը՝
Լս ձորիս մէջէն անցած ատենըս
Չորս դիս պատեցին, դրոին զիս նեղը :

Ու ծուղակները՝ խորխորատները՝
Որոգայթները՝ լարված ցանցերը
Իմ ճամբուս վրայ պատրաստըվեցան,
Որ բռնըվի ինձ նման տրկարը :

Բայց որովհետև անոնց ամենէն
 Լինվնաս անցայ՝ որ կապրիմ արդէն,
 Յաղթութեան թագը Յիսուս թող հագնի,
 Օյ ան փրկեց զիս բոլոր չարերէն :

Հիմայ երբոր Վրիստիանոս առաջ կեր-
 թար իր ճամբան՝ մէկ բարձրկեկ տեղ մը եկաւ
 հասաւ, որնոր զիտմամբ շինված էր որ ճամ-
 բորդները իրենց առջևը եղածը տեսնան * :
 Ուստի Վրիստիանոս հոն ելաւ՝ ու դէպի ա-
 ռաջ նայելով տեսաւ որ Հաւատարիմը իր
 առջևէն իր ճամբորդութիւնը կրնէկոր : Լնա-
 տենը Վրիստիանոս բարձր ձայնով կանչեց .
 Մի մարդ՝ քեզի կըսեմ, կեցիր ես քեզի ընկեր
 ըլլամ : Հաւտարիմը աս ձայնը լսելով ետին
 նայեցաւ †, որուն նորէն կանչեց Վրիստիա-
 նոս . կեցիր, կեցիր, մինչև զամ հասնիմ
 քեզի : Սակայն Հաւտարիմը պատասխան

* Լստուած իր ժողովուրդը կը հոգայ . իր խօսքովը
 ու խոստմունքներովը անոնց ճամբուն վրայ տեսա-
 րանի ու մխիթարութեան բազմաթիւ փոքրիկ բլուր-
 ներ շինած է, որ զմայլելով ու զուարճանալով յա-
 ռաջ նային :

† Լղէկ է որ զգուշանանք ու հոգ տանինք թէ
 ինչ ընկերութեան մէջ կը մտնանք : Հատերը օգ-
 տակար ճամբորդներու ընկերանալնուն տեղը վնաս-
 սակար վարժապետներու յարեցան :

տըլաւ թէ , շէ , ես իմ կեանքիս փրկութեանը կը վազեմկոր , և արիւնին վրէժխնդիրը իմ ետևս է . թ. . . լէ . 12 :

Քրիստիանոս ասոր վրայ քիչ մը շարժեցաւ , ու բոլոր իր զօրութիւնը հաւքելով իսկոյն զնաց հասաւ Հաւատարիմին՝ ու նաև անիկա անցաւ ալ . ասանկ յետինը առաջին եղաւ : Անատենը Վրիստիանոս սնափառութեամբ մը խնդաց որ իր եղբօրմէն առաջ անցաւ . բայց աղէկ մը չըզուշանալով իր ոտքերուն՝ յանկարծ գլտորեցաւ ու ինկաւ , և չի կրցաւ նորէն ելլել՝ մինչև որ Հաւատարիմը եկաւ ու իրեն օգնեց * :

Ասկից հտքը երազիս մէջը տեսայ որ ասոնք սկսեցին շատ սիրով առաջ երթալ մէկ տեղ , ու անուշ խօսակցութիւններ ընել աւմէն ան բաներուն վրայ՝ որ իրենց ճամբորդութեանը մէջ իրենց պատահեր էր . և առաջ Վրիստիանոսը սկսեց այսպէս :

* Այրբոր մտածենք թէ ուրիշը գերազանցեցինք , հոգևոր հպարտութիւնը իսկ և իսկ իր անիծեալ գլուխը կը վերցունէ : Անատենը վտանգը մօտ է , իյնալը պատրաստ է մեզ խոնարհեցունելու համար : Ինչն ան մարդուն ձեռքին օգնութեանը կը կարօտինք , որմէն կը կարծէինք թէ գերազանցեցինք :

Վրբիստոս • Ո՛վ պատուական և սիրելի եղբայր Հաւատարիմ, ուրախ եմ որ քեզի հասայ, ու որ Մտուած մեր հոգիները անանկ իբար խառնեց՝ * որ աս բաղձալի ճամբուն մէջը իբրև ընկեր կրնանք մէկտեղ քալել:

Հաստոսի • Սիրելի բարեկամ, ես մտածեր էի որ բուն մեր քաղաքէն քու հետդ ընկերանամ, բայց գուն ինծմէ առաջ ճամբայ ելար. ուստի ստիպեցայ այսչափ տեղը մինակ գալ:

Վրբիստոս • Ո՛րչափ ատեն կործանման քաղաքը մնացիր ինծմէ ետև՝ մինչև ճամբորդութեան ելլալուդ ատենը:

Հաստոսի • Սինչև անատենը որ ալ չի կրցայ համբերել †. քանզի իսկոյն քու ճամ-

* Երկու հոգի մէկ տեղ չեն կրնար քալել երկնից ճամբուն մէջը՝ մինչև որ չի միաբանին թէ ողորմելի թշուառ մեղաւորներ են, թէ Վրբիստոս պատուական վրկիչ մըն է, և թէ՛ երկուքն ալ միօրինակ միայն իրմէն կը յուսան գտնալ փրկութիւն ու յաւիտենական կեանք:

† Մասնկ կը լլայ իւրաքանչիւր ճանապարհորդի՝ որ բարեպաշտութեան ճամբուն մէջ կը սկսի քալել: Իր վիճակին ու վտանգին վրայով Մտուած մէ ընդունած ան զօրաւոր յաղթահարութիւնները հարկաւորապէս կը ստիպեն զինքը գալու բարկութենէն փախչիլ: Սարդս չէ թէ իր ազատ կամբով՝ հապա Վրբիստոսի զօրութիւնովը օտար ու պան-

բայ ելլելէդ ետև մեծ շշուռնչ մը ելաւ թէ մեր քաղաքը քիչ ատենէն ետքը երկինքէն իջած կրակով պիտի էրի մոխիր դառնայ :

Վրիստիանոս . Ի՞նչ կրեսս , քու դրացիներդ ասանկ խօսեցան մի :

Հասարակ . Ե՛յո՛ . ատեն մը ամէն մարդու բերանն էր սա խօսքը :

Վրիստիանոս . Ի՞նչ սքանչելիք . ասանկ խօսեցան՝ ու անոնցմէ քեզմէ , ՚ի զատ մէկը ճամբայ չելա՞ն մի ան վտանգէն փախչելու :

Հասարակ . Թէպէտ և մեծ շշուռնչ մը կար ան տեղվանքը՝ ինչպէս որ ըսի , բայց ես չեմ հաւտար թէ անոնք աղէկ մը հաւտացին անոր : Վանդի խօսակցութիւնին տաքցած ատենը կըլսէի որ անոնցմէ ոմանք ծաղրաբանութեամբ կըխօսէին քու վրադ և քու ճամբորդութեանդ վրայ , որնոր իրենք անյոյս ճամբորդութիւն կըկոչէին : Սակայն ես հաւտացի և տակաւին կըհաւտամ որ մեր քաղաքին վերջը երկինքէն իջած կրակով ու ծծում

դուխտ կըլլայ երկրի վրայ : Ուստի՝ Ո՛վ Վրիստիանեայ , քու դէպի Սիօն ճամբորդութեան ելլալուդ բոլոր փառքը Վրիստոսի՝ ու իր ձրի շնորհացը ընծայէ :

Եւս կը կարծեմ որ Լստուած մինչև անգամ իր
Թշնամիները վերցուց անոր վրայ շնչելու ու
անիկա խայտառակ ընելու, ինչու որ ինքը
ան ճամբան երեսէ ձգեց. Երեմ. Իթ. 18, 19 :

Վրիստիանոս. Գուն ճամբայ ելլելէդ առաջ
իր հետը չի խօսակցեցար :

Հասարակ. Ընդամ մը փողոցը տեսայ զին
քը, բայց ան աչքին տակէն նայելով մէկալ
կողմը դարձաւ, իր ըրածին վրայ ամչցող մէ
կու մը պէս. ուստի ես ալ իր հետը չի խօ
սեցայ * :

Վրիստիանոս. Պինտ աղէկ. ես առջի ճամ
բայ ելլելուս ատ մարդուն վրայ յոյս ունէի.
Բայց հիմայ կը վախնամ որ քաղաքին կործա
նելու ատենը ինքը պիտի կորսըվի : Վանգի
ան ճշմարիտ առակին պէս պատահեցաւ ի
րեն՝ որ կըսէ, Թէ՛ «Շ ունը նորէն իր փսխա
ծին կը դառնայ, ու լուացված խողը տիղմին
մէջը Թապըլտըկելու» . Թ. Պար. Թ. 22 :

Հասարակ. Իմ վախերս ալ ասոնք են իր

* Վրիստոսի հաւատքէն դարձողներուն սրտերը
մինչև որ բոլորովին չի խստանան՝ ու խղճմտանքնին
չի խանձի՝ չեն կրնար համարձակ նայիլ Վրիստոսի
աշակերտներուն երեսը, ինչու որ միշտ խռովութեան
մէջ է մտքերնին :

վրայովը , բայց ըլլալու բանին ո՞վ կրնայ դէմ կենալ :

Վրիստիանոս . Եկոր՝ եղբայր Հաւատարիմ , զինքը թողունք , ու տն բաներուն վրայ խօսինք որոնք անմիջապէս մեզի կը վերաբերին : Հիմայ ինծի ըտէ թէ եկած ատենդ ճամբուն վրայ ի՞նչ բաներու պատահեցար : Վանզի գիտեմ որ քանի մը բաներու պատահած ես , չէ նէ հրաշքի տեղ գը վելու է :

Հաւատարիմ . Ես ան ցեխին մէջը իյնալէն ազատեցայ , որուն մէջը կիմանամ թէ դուն ինկար . ու առանց աս վտանգը քաշելու ան նեղ դուռը ելայ * . միայն թէ մէկու մը պատահեցայ՝ որ Ննպարկեշտ կը կոչվէր , ու մազ մնաց որ ինծի չարութիւն մը պիտի ընէր † :

* Նպարէն չի կայ մեղաւոր մը որ դալու բարկութենէն փախչելով փրկութեան համար Վրիստոսի գիմէ , մինչև որ Հօգին իր մեղաւոր ըլլալը ու Նստուծոյ բարկութեանը ու կորստեան՝ արժանաւոր ըլլալը իրեն չի ճանչցունէ . և սակայն ամէնը առջի ճամբայ ելլալուն միօրինակ ան զարհուրելի յուսահատութեանը մէջ չեն իյնար ասիկա ճանչնալնուն համար :

† Հաւատարիմ թէպէտ և զերծ մնաց Հոսահատութեան փոսէն՝ ուր որ իր ուղեկիցը ինկեր էր , բայց մարմնաւոր ցանկութիւնները զինքը պաշա-

Վրիստիանոս . Ըստ արեւի եղեր է անոր ուրոզայթէն ազատիլը . Յովսէփ շատ տառապանք քաշեց անկից՝ և քեզի պէս անկից ազատեցաւ : Բայց մազ մեաց իր կեանքը կը կորսընցունէրէոր . Օրնոր . Ըմ . 11—13 : Մակայն ի՞նչ ըրաւ քեզի :

Հասարակի . շէիր կրնար միտքէդ անցունել թէ որ փորձառու մարդ մը չըլլայիր՝ թէ ի՞նչպէս շողոքորդող լեզու մը ունի ինքը . շատ աշխատեցաւ որ զիս իր հետը ետ դարձունէ : Խոտասանալով՝ որ ամէն . կերպով զոհ պիտի ընէ զիս * :

րեցին , որոնցմէ զատ գուցէ բան մը չի կայ որ էվելի դարանակալ ըլլայ հոգիին՝ խռովութիւն տայ խղճմտանքին՝ ու աւելի դժուարին ըլլայ յաղթելու : Ինչնամին մեղաւորներուն զանազան խառնուածներուն յարմար խայծեր կըղնէ իր կարծին . մեղամաղձոտը՝ յուսահատութեան կըգրգռէ , ու արիւնայինը՝ մարմնաւոր ցանկութիւններու . ագահը՝ մեծամեծ շահերու , իմաստունները ու գիտնականները՝ հրապարտութեան ու անձնագովութեան , քաղաքավարը ու բարոյակածը՝ յանձնագրաստանութեան , ծոյլը ան չար կարծիքին՝ թէ Վրիստոսի արդարութիւնովը ինքը արդէն փրկըված ըլլալով բարեգործութիւն ընելու չի կարօտիր :

* Մարմնաւոր ցանկութիւնները զօրաւոր զատագովութիւններ կընեն . ու բարի բաներ կըխոս-

էի , որուն մէջը կըսէր թէ , Լ'նոր ոտքերը
 Վժոխքը կիջեցունեն . Լ'... . Ե . 5 : Ուստի աչ-
 քերս գոցեցի որ անոր երեսովը չի խաբվիմ .
 Յովթ . Լա . 1 : Լ'նատենը ինքը զիս ծաղը ընել
 սկսեց՝ ու ես իմ ճամբաս գացի :

Վրիստիննոս . Ուրիշ մէկ ղիպուածի մը չի
 պատահեցար ճամբուղ վրայ :

Հասարակ . Երբոր ան լեռանը տակը ե-
 կայ՝ որ Վժուարու թիւն կըկոչվի , մէկ խիստ
 ծերունի մարդ մը տեսայ , որ ինծի հարցուց
 թէ ո՞վ եմ և ո՞ւր կերթամկոր : Ես ալ իրեն
 ըսի որ ես Երկնային Վաղաքը գացող ճամ-
 բորդ մըն եմ : Լ'նատենը ծերունին ըսաւ թէ ,
 Վուն աղէկ տղայ մը կերեւասկոր . կուզե՞ս իմ
 քեզի տալու վարձքովս իմ հետս բնակել : Ես
 ալ անատենը իր անունը և իր բնակած տեղը
 հարցուցի իրեն : Պատասխան տրուա՝ թէ իր
 անունը Լ'ուաջին Լ'դամ է * , ու խաբէու-
 թեան քաղաքը կըբնակի . Եթե . 7 . 22 : Լ'սոր
 վրայ հարցուցի իրեն՝ թէ ի՞նչ է իր գործը ,
 և ի՞նչ է իր տալու վարձքը : Պատասխան

* Լ'սինքն սկզբնական մեղքը՝ կամ մեր ներսը
 բնակող վատթարութիւնը , որ ապականեց մեր բո-
 լոր բնութիւնը :

տրւաւ թէ իր գործը Շատ Բերեալ-Բերաներ են ,
 և իր վարձքը ան է՝ որ վերջը ես իրեն ժա-
 ուանգ պիտի ըլլամ : Կաև դարձեալ Հարցու-
 ցի իրեն թէ ինչ կերպ տուն կը պահէ , և
 ինչ ուրիշ սպասաւորներ ունի : Աստի ինքը
 ինծի ըսաւ թէ իր տունը աշխարհիս բոլոր
 փափկութիւններովը կը կերակրուի , ու իր
 ծառաներուն բոլորը ինքը ծներ է : Եսկից
 ետքը իրեն Հարցուցի թէ քանի՞ ղաւակ ունի .
 պատասխան տրւաւ թէ՝ միայն իրեք աղջիկ
 ղակերն են ունի , որ կը կոչվին՝ Յանկութիւն
 Սարմնոյ , Յանկութիւն Եւայ , և Եմբարտա-
 ւանութիւն Կենայ . Թ . Հօհ . Բ . 16 . և թէ որ
 ուզեմ նէ անոնց հետը կարգը վիմ : Ա՛րջը
 Հարցուցի թէ որչափ ատեն կուզէ որ հետը
 մնամ . ու ինքը ըսաւ՝ որչափ որ կապրիմ :

Բերեալ-Բերան . Եղէկ . վերջապէս ծերունին
 ու դուն ո՛ւր վերջացուցիք բանը :

Հասարակ . Ա՛ր վերջացունենք . պինտ ա-
 ռաջ ես զիս գտայ որ քիչ մը հակամիտեալ
 եմ ան մարդուն հետը երթալու . քանզի մը-
 տածեցի որ շատ դեղերիկ խօսեցաւ մարդը ,
 Բայց երբոր իր հետը կը խօսէի՝ իրեն ճակա-
 տը նայելով տեսայ որ հոն գրված էր թէ ,

Հին մարդը իր գործքերովը մերկացէք * ,
կող. 7. 9 :

Վրիստիննոս . Ս Էրջը՞ :

Հասարակ . Ս Էրջը իսկոյն կատարելապէս
իմացայ թէ ինքը ինչ որ ըսաւ՝ և ինչ շողո-
քորդութիւն որ ըրաւ , երբոր զիս իր տունը
տանի գերիի մը պէս պիտի ծախէ զիս : Աւս-
տի զըուցեցի իրեն որ խօսքը կըտրէ , քանզի
ես իր տանը դրանը մօտենալ չեմ ուզեր : Եւ
նատենը սկսեց նախատական խօսքեր խօսիլ
ինծի , ու ըսաւ ինծի թէ անանկ մէկը պիտի
խրկէ իմ ետեւս որ իմ ճամբաս իմ հոգիիս
պիտի դառնացունէ : Եսանկ ետ դարձայ ես
իւր քովէն մէկդի երթալու . բայց ճիշտ երբոր
ես զիս դարձուցի մէկդի երթալու անտեղէն ,
ինքը անանկ սաստիկ կամրթեց զիս՝ որ կար-
ծեցի թէ իմ մարմինիս մէկ կտորը փրցուց
իւր հետը տարաւ : Եսիկա ինծի կանչել տըւաւ՝
Ո՛հ , ինչ տառապեալ մարդ եմ ես † . Հասկ .

* Երանի ան մարդուն որ մարմինին ու արինին
տըւած խրատը մտիկ չընէր , հապա Տէրոջը գրածին
կընայի ու անոր կըհնազանդի :

† Վրիստոնէին փորձութիւնները երբեմն պն-
ջափ զօրաւոր են որ գրեթէ կըյաղթեն անիկա . ու
մեծ ցաւով կը լայ՝ որ ինքը յաղթէ անոնց : Եւ աս

է. 24 : Բայց աստիճանի լեռնի վեր իմ ճամբաստան երթալ :

Եւրո՞ երբոր լեռնի վեր ճամբաստան կէս ըրի՞ ետեւ նախիցայ , ու տեսայ որ իմ ետեւէս մէկ կը կուգար ինչ որ հովի պէս տրագ վազելով . ա սիկա եկաւ հասաւ ինձի ճիշտ ան տեղը , ուր որ ծառատունկ մը կայ :

Վրէստիսնո . Ես ալ ճիշտ ան նոյն տեղը նստայ որ ինքը զինքս հանգչեցունեմ . բայց քունը իս կոխելով ան նոյն տեղը իմ ծոցէս ձգեցի կորսնցուցի առ թուղթը :

Հաստատութի . Սակայն՝ ազնիւ եղբայր , ի՞նչ մտիկ ըրէ : Սարգը ինձի հասածին պէս յանդիմանելը ու պատժելը մէկ եղաւ , ինչու որ իսկոյն գիտինը զարկաւ զիս ու մեռելի պէս ձրգեց : Բայց երբոր քիչ մը կրկին ինքը զինքիս եկայ , հարցուցի իրեն թէ ինչո՞ւ ասանկ ըրաւ ինձի : Ինքն ալ ըսաւ՝ թէ իմ ծածկաբար Եւրոսին Երամին հակամիտելուս համար * :

Ներքին պատերազմն է որ Պողոսին նման կանչել կուտայ անոր՝ «Ես մէկ խղճալի մարդ մըն եմ . ո՞վ իս պիտի խալըսէ աս մահացու մարմինէն . Հաստատութի . է. 24 :

* Հաւատարիմին վրան եկողը վաբը բացատրված է թէ Սոփիէս է՝ կամ Եստուծոյ օրէնքը :

Եւ խօսքին վրայ ուրիշ սաստիկ հարուած մը տրւաւ իմ կուրծքիս , ու զիս կռնակիս վրայ գետինը զարկաւ . ուստի առջի անգամին պէս իբրև մեռեալ իր ոտքին տակը ինկայ : Երբոր կրկին ես ինծի եկայ՝ իրեն կանչեցի որ ողորմութիւն ընէ ինծի . բայց ինքը ըսաւ թէ՛ Ես չեմ գիտեր ողորմութիւն ցուցընել * . ու աս խօսքովը մէյմալ գետինը զարկաւ զիս : Եւ

Սի կարծեր թէ օրէնքը միայն արտաքին մեծամեծ գործքերուն կը հասնի . չէ . անիկա մինչև մտքին՝ ու սրտին խորհուրդներուն կը թափանցէ : Սարգուս յոյսը գետինը կը կործանէ՝ ու մահուան կը դատապարտէ զանիկա , մինչև անգամ միայն ծածկաբար ցանկութեան հակամիտելուն համար : Եւստուծոյ սուրբ օրէնքը ասանկ ճիշտ՝ ասանկ հոգևոր՝ ասանկ մաքուր է : Սուտի ամենեւին մէկը չի կրնար օրէնքին իր հնազանդութիւն ընելուն վստահիլ՝ ու արդարանալու համար՝ բուն իր արդարութեանը ապաւինիլ , բայց միայն անձնասէր փարիսեցիները՝ սնապարծ յիմարները :

* () օրէնքը ամենեւին ողորմութիւն չի ցուցընէր իրեն դէմ յանցաւոր գտնըվողներուն . իր խօսքը բնաւ չի փոխվիր , այլ միշտ կըսէ՝ «Ս ճարէ ինծի ունեցած պարտքը» , Սառ . ԺԸ . 28 , կատարեալ յատուկ՝ ու մշտնջենաւոր հնազանդութիւն . ու անիկա զանց ընողին վրայ իր ծանր անէծքը կը հրատարակէ՝ առանց բացառութեան , թէ «Ենիծեալ ըլլայ ամէն մարդ որ օրէնքին գիրքը գրվածներուն ամէնուն մէջ չի կենար բոլորը կատարելու . Կառ . 7 . 10 :

տարակոյս ինքը իմ վախճանս պիտի բերէր . միայն թէ մէկը անցաւ անկից , ու հրամայեց իրեն զեւ ձգել :

Բարեպաշտնոյ . Ո՞վ էր ան մարդը որ հրատան ըրաւ իրեն քեզ ձգելու :

Հասարակի . Եւջի բերանը զինքը չի ճանչցայ . բայց քովէս անցնելուն իր ճեռքերուն և կողին ծակերը տեսայ . անատենը ըսի թէ՛ Եւսիկա մեր Տէրը պիտի ըլլայ : Եսանկ՝ մինչև լեռանը գլուխը ելայ :

Բարեպաշտնոյ . Եւ քու ետեւէգ հասնող մարդը Սովսէսն է : Ինքը մէկը չի խնայեր . ()բէնիչ ոչ ալ ողորմութիւն ցուցընել զի Բնութիւնը տէ անոնց որ իր օրէնքին դէմ յանցանք կը նեն :

Հասարակի . Եւտ աղէկ գիտեմ անիկա . առջի անգամը չէր աս որ ինքը ինծի պատահեցաւ : Երբոր ես ապահով իմ բնակարանս կեցած էի՝ ինքն էր որ ինծի եկաւ ու ըսաւ թէ իմ տունս գլխուս վըսայ պիտի երէ՛ թէ որ ես հոն նստիմ նէ * :

* Սեղաւորը որ բնաւ չըզգաց՝ օրէնքին կիզանող սպառնալիքները , տակաւին իր մեղքին մէջը քընացած է՝ ու իր հոգիին մէջը ապահով է , թէպէտ և իրօք Եստուծոյ բոցակէզ օրէնքին բարկութեանը ու անէծքին տակն է :

Վրբխարիանոս . Բայց դուն Մոխեսէն զատվե-
լէդ ետքը՝ ան նոյն լեռանք դուրսը կայնած
տունը չի տեսար մի :

Հասարակի՛ . Ե՛յո՛ . տանը քովը չեկած ա-
նիկա տեսայ , ու առիւծներն այլ : Սակայն
առիւծները կարծեմ թէ քնացած էին , ինչու
որ կէս օրի ատենն էր . և ուրվհետև իմ առ-
ջևս տակաւին կէս օր ունէի , անոր համար
Պռնապանին քովէն անցայ՝ ու լեռնիվար ի-
ջայ :

Վրբխարիանոս . Ինքք Ճշմարիտ ըսաւ ինծի թէ
քաւ անցնիլդ տեսաւ . բայց երանի թէ ան
տունը մտնայիր դուն , քանզի անոնք այնչափ
հազուադիւտ բաներ պիտի ցուցընէին քեզի ,
որ հազիւ թէ մինչև մահուանդ օրը պիտի
մոռնայիր անոնք . բայց կաղաչեմ , ըսէ ինծի ,
խոնարհութեան Չորին մէջը մէկուն չի պա-
տահեցար մի :

Հասարակի՛ . Ե՛յո՛ . Տժգոհ անունով մէկու
մը հանդիպեցայ՝ որ շատ կուզէր համոզել զիս
իր հետը ետ դառնալու . իր պատճառը ան
էր թէ՛ ան ձորը բոլորովին անպատիւ տեղ
մըն էր : Կ,ակ ինծի զբուցեց թէ հոն երթա-
լովս ամէն իմ բարեկամներուս հաճութեանք

բորբուքեան ելայ ես՝ անոնք ուրացան զես , ու ես ալ երեսէ ձգեցի զիրենք . ուստի անոնք հիմայ ինծի անանկ են՝ որպէս թէ բնաւ իմ ցեղիս մէջը չըլլային : Վաւ իրեն ըսի՝ թէ աս ձորին վրայով ինքը բոլորովին ծուռ խմացած է քանը . քանզի պատիւէն աւաջ խոնարհու թիւնն է ; ու ի յնայէն աւաջ ամբարտաւան ոպի մը ունենայլը : Ուստի՝ ըսի իրեն , էվէլօք կողզեմ աս ձորէն անցնիլ երթալ ան պատիւ վն որ խիստ խելացիները պատիւ սեպեցին , քան թէ ան անարգ քաները ընտրիլ՝ որ ինքը խիստ արժանաւոր կրտսէ մեր սիրոյն :

Վրիստինն . Եւ ձորին մէջք ուրիշ քանի մը չի պատահեցամք :

Հասարակի՛ . Եւ յո՛ , մէկու մը պատահեցայ որուն անունը Եմօթ էր , բայց կարծեմ թէ իմ ճամբորդութեանս վրայ ինծի պատահած մարդիկներուն ամէնէն էվէլի ծուռ անուն մը ունի ինքը : Ուրիշները՝ թէ որ քիչ մը իրենց դէմ կենայի , կրձգէին զես . բայց աս կտշի երես Եմօթը բնաւ չէր ուզեր ձգել զիս :

Վրիստինն . Ինչո՞ւ համար , ի՞նչ լրաս բեզի :

Հասարակի՛ . Ի՛նչ լրաս ինծի , հաւատքի

ու կրօնքի դէմ հակառակեցաւ : Բ՛աւ Թէ մէկ մարդու մը անարգ՝ ցած ու նուատտ բան մըն է որ հաւատքի բաները բանի տեղ դնէ : Բ՛աւ Թէ դիւրագգած խղճմտանք ունենալը մարդ եղողին վայելուչ չէ . ու Թէ՛ մէկ մարդու մը իր խօսքերուն և բռնած ճամբաներուն վրայ զգուշութիւն ընելը՝ անանկ որ ինքրդինքը կարպէ արգիլէ ան պանծալի ազատութենէն՝ որն որ բոլոր քաջ մարդիկները կը գործածեն՝ զինքը բոլորին ծաղր ընել կուտայ : Ինքը նաև վիճաբանելով ըսաւ՝ Թէ ուժովներուն , հարուստներուն և գիտուններուն մէջէն միայն քիչերը կան որ իմ կարծիքս ունենան : Եւ ան քիչերն ալ իրենց խելքերը կորսնցունելէն ետև է որ ոչինչ բան մը ձեռք ձգելու համար բոլոր բաները կամքովին կուզեն կորսնցունել . Թ. Կրնի . Թ. 26 : Գ. 18 : Փիլ . Գ. 7—9 : Երհ . Է. 48 : Եսկից ՚ի զատ հակառակութիւն ըրաւ ան մարդոցը ցած ու խոնարհ վիճակին ու կարգին վրայ ալ՝ որոնք գլխաւորաբար իրենց ժամանակին ճամբորդներն էին , և դարձեալ ամէն բնական գիտութիւններու մէջ անոնց ունեցած տգիտութեանը ու խելքի կարօտ ըլլալնուն վրայ ալ : Մանաւանդ Թէ իմ

աս տեղս պատմած բաներէս շատ էվելի բաներու վրայ ալ ինծի դէմ վիճեց . ինչպէս ըսաւ թէ՛ ամօթ է լալով ու ողջալով քարոզի մը տակ նստիլը , ու ամօթ է հաւաքելով և հեծելով տուն երթալը . թէ ամօթ է իմ մանր մուկը յանցանքներուս համար իմ ընկերէս ներում խնդրելը , կամ ուր որ մէկէն բան մը առեր եմ նէ՛ անոր հատուցում մը ընելը : 'Նաև ըսաւ թէ Ղևտարանական բարեպաշտութիւնը մարդս մեծամեծներուն հետ ընկերութիւն ընելէն ետ կըձգէ անոնց քանի մը մանտրտիկ մոլութիւններուն համար , (որոնց ինքը գեղեցիկ անուններ կուտար .) ու անարգ անձերը պատուել և անոնք ընդունել կուտայ անոր՝ միայն անոր համար որ անոնք իրեն բռնած հաւատքին մերձուոր են : Նա ասիկա ամօթ չէ՞ մի , ըսաւ ինքը * :

* Եստուծոյ պատկերը կորսնցունելնուս ամենազօրաւոր փորձը ուրիշ բան չէ՛ քան թէ Եստուծոյ բաներուն վրայով ամչնալը , որ բնական է մեզի : Ես ամօթը մարդոցմէ ունեցած մեր վախուն հետ միանալով զօրաւոր թշնամի մըն է Եստուծոյ ճշմարտութեանը , Վրիստոսի փառքին , ու մեր հոգիին հանգստութեանը : Վաւազոյն է մէկէնիմէկ մեր ցաւէն ազատիլ՝ Վրիստոսի ու իր հաւատքին վրայ ունեցած մեր դաւանութիւնը համարձակ յայտնելու

Վրիստիանոս • Գուճ Ի՞նչ ըսիր անոր :

Հասարակ • Ի՞նչ ըսեմ • առաջ չէի գիտեր
 թէ ի՞նչ ըսեմ, մանաւանդ որ անանկ ամէջուց
 զիս որ արիւնս իմ երեսս կարմրեցուց • բուն
 աս Լմօթը իս ամէջուց ու գրեթէ բոլորովին
 յաղթեց ինձի : Իայց վերջը սկսեցի մտածել
 թէ ան՝ որ մարդոց առջևը բարձր սեպված
 է, Լստուծոյ առջևը պիղծ է • Վ՛հ • Ժ՛. 13 :
 Գարձեալ մտածեցի՝ թէ աս Լմօթը մարդոց
 ի՞նչ ըլլալը ինձի կըսէկոր, բայց Լստուծոյ՝
 կամ Լստուծոյ խօսքին ինչ ըլլալուն վրայ ա
 մենեկին բան մը չըսերկոր : Գարձեալ մտա
 ծեցի՝ թէ դատաստանին օրը մենք աս աշխար
 հիս պարծենցող հողիներուն ձեռքովը չի պի
 տի վճռւիլինք մահուան կամ կենաց՝ հապա
 Իարձրելոյն իմաստութիւնովը ու օրէնքովը :
 Ուստի, ըսի ինքնիրենս, ինչ որ Լստուած

ըով, քան թէ նոյն դաւանութեան ծայրը դողա
 ըով կայնի՛լ միշտ վախնալով որ մեր բարի անունը
 ու համբաւը չի կորսնցունենք : Ինչու որ Վրիս
 տոս ահաւոր խօսքերով կըսէ՝ «Ո՛վ որ իս՝ ու իմ
 խօսքերս ամօթ կըսեպէ աս շնացող ու մեղաւոր սղ
 գիս մէջ, Որդին մարդոյ ալ անիկա ամօթով պիտի
 բնէ երբոր իր հօրը փառքովը՝ գայ» • Ո՞րքի • ը • 38 :
 Ուրիշ բան է ամօթէն յարձակմունք կրելը, և ու
 րիշ բան է անկից յաղթրվիլը :

կրսէ թէ աղէկ է՝ աղէկ է, թէպէտ և աշխարհիս բոլոր մարդիկն ալ անոր դէմ ըլլան, Արդ՝ որովհետև Աստուած կրօնասէր ըլլալնիս կրնարէ, որովհետև Աստուած դիւրագգաժ խղճմտանքը կրնարէ, որովհետև երկնից թագաւորութեան համար ինքրզինքնին յիմար ընողները ամէնէն իմաստուններն են, ու որովհետև ան աղքատիկ մարդը որ կրսիրէ զՎրարիստոս, աշխարհիս մէջի ամէնէն հարուստէն ալ հարուստ է՝ որ կատէ զանիկա, կորսըվէ ուրեմն՝ ըսի մտօքս, ո՛վ Ամօթ . դուն իմ փրկուութեանս թշնամի մըն ես . իմ գերագոյն Տէրոջս կամքին դէմ քեզի հաճութիւն տամ մի, ինտո՞ր հապա ետքը իր գալուն իր երեսը նա յիմ ես . Սաբլ. շ. 38: Թէ որ ես հիմայ իր ճամբաները ու իր ծառաները ամօթ սեպելու ըլլամ նէ, ինտո՞ր կրնամ օրհնութիւն ընդունելու յոյս ունենալ: Իայց ճշմարիտ որ աս Ամօթը շատ կաշի երես անգգամ մըն էր . ճորով կըցայ ինծի հետ ընկերութիւն ընելէն թօթվել զինքը, իրաւ որ ամեննին չէր ուզել ձգել զիս, ու Վրիստոնէութեան հետ եղած նեղութիւններուն մէկը կամ մէկայլ միշտ կը փսփսար ականջէս վար: Սակայն վերջը իրեն

զըռուցեցի թէ ոչինչ բան է ալ ասոր վրայ աշխատութիւն կրելը . քանզի ան բաները՝ որոնք ինքը կարհամարհէր , էվելի փառաւորութիւն կրտսնայի ես անոնց մէջը . ասանկով վերջապէս աս ձանձրացուցիչ անձէն առաջ անցայ ես : Ու երբոր թօթվեցի զինքը՝ անատենը սկսեցի երգել .

Երկնային կոչման հնազանդ մարդուն
Յաճախ պատահած փորձութիւնները ,
Բաժնապատիկ են ու յարմար մարմնոյն ,
Ենդադար կուգան իրենց կարգով :

Որպէս զի հիմայ կամ այլ ատեն մը
Երունեն մեզ անոնք՝ յաղթեն՝ վար ձրգեն .
Եպա ժիր ըլլան թող ճամբորդները ,
Ու ինքզինքնին մարդու պէս բրունեն :

«Բիւրիւտն» . Ուրախ եմ՝ ո՛վ եղբայրս , որ ասանկ քաջութեամբ դէմ կեցար աս անզգամին . քանզի՝ ինչպէս որ ըսիր , ամէնէն ալ ծուռ անուն ունի ինքը . ինչու որ ինքը անսնկ կաշի երես է՝ որ ճամբաներուն մէջը ետեւնուս կուգայ ու կաշխատի որ մեզ բոլոր մարդոց առջևը ամչցունէ . այսինքն բարին ամօթ սեպել տայ մեզի * : Բայց թէ որ ինքը լերբ

* Եմենէին մէկը չի կայ ճշմարտութիւնը ընդու-

ըլլար նէ բնաւ չէր աշխատէր իր ըրածին պէս ընելու : Սակայն մենք շարունակենք իրեն դէմ դնելու . քանզի բոլոր իր մեծաբանու թիւններովը միայն յիմարները կրպատուէ , և և ոչ թէ մէկ ուրիշը : Սողոմոն ըսաւ՝ «Եւստտունները փառք պիտի ժառանգեն , իսկ անմիտները անարգութիւնը պատուեցին» . Լուս. 7 . 35 :

Հաստատելի . կարծեմ թէ Լճութիւն դէմ պարտինք օգնութիւն խնդրէլ անկից՝ որ կրկամի թէ երկրիս մէջը ճշմարտութեան վրայ քաջագոր ըլլանք մենք :

Վրիստիննոս . Ղշմարիտ կրսեսկոր . բայց

նողներուն կամ փառաց համար ճամբայ ելողներուն մէջ՝ որ ճամբուն վրայ ամօթէն յարձակմունք չի կրէ : Բայց ամօթին տեղի տալը շատ փառքէ կը զրկէ զՎրիստոս մեր Լճատուածը՝ որ մեզի պէս անիծեալ դժոխքի արժանաւոր մեղաւորները չամբռցաւ կոչել իրեն «Եղբայր» . ԼԵՐ . ք . 11 : Բայնէ . ամօթ մեզի . մեր ամօթը որ է մեր մեղքը՝ փառք կը սեպենք մեզի , ու նոյն ատենը ամօթ կրսեպենք զՎրիստոս՝ իր խօսքերը՝ ու իր ճամբաները , որոնք են՝ մեր ամենամեծ փառքը : Եղբայրք իմ , Վրիստոսի մեր ամենալաւ բարեկամին դաւանութեանը մէջ համարձակ ըլլալ խնդրենք Լճատուածէ , որ Լճութը իր անիծեալ գլուխը ծածկէ , ու իբրև մեր ամենամեծ թշնամին փախչի մեզմէ :

ան ձորին մէջը ուրիշ մէկու մը չի պատահեցար :

Հասարակ : Չէ , չի պատահեցայ . քանզի ատ ձորին բոլոր մնացած ճամբան ու նաև Սահուան Շուքին Ձորը արեգակին լուսովը անցայ * :

Վրէստիանոս . Վու բանդ աղէկ է եղեր . իրաւ որ շատ ուրիշ կերպ պատահեցաւ ինծի : Ես ատ ձորին մէջը մտնալուս պէս երկար աւտեն սոսկալի կուիւ մը ունեցայ ան չար թըշնամիին Վարդիտինին հետ . և մտածեցի թէ իրաւցունէ ինքը զիս պիտի մեռցունէր , մանաւանդ երբոր զիս գետինը զարկաւ ու իր տակը ճղմեց , որպէս թէ կտոր կտոր ընել կուզէրկոր զիս . քանզի ինքը իս վար զարնելուն թուրս ձեռքէս թրուաւ , և ինքը ինծի ըսաւ թէ ալ ազատելիք չունիմ . բայց ես Վստուծոյ կանչեցի , և ինքը ինծի լսեց՝ ու բոլոր նեղութիւններէն զիս ազատեց : Ենկէ ետև Սահուան Շուքին Ձորը մտայ , ու սեպէ թէ ճամբուն կէսը լոյս չունէի : Կարծեցի թէ

* Մնչին բաներ են հաւատքին քովը՝ ու կըթըին թէ յիշատակվելու արժանի չեն ան փորձութիւնները , որոնց մէջը Վստուծոյ երեսին լոյսը մեր վրայ կըծագէ :

կրկին կրկին պիտի սպաննե՞ր՞ էի հոն . բայց վերջապէս արշալոյսը ծագեց՝ ու արևը ելաւ, ու մնացած ճամբան շատ դիւրութեամբ ու հանգստութեամբ անցուցի :

Ասկից ետքը երազիս մէջը տեսայ ևս՝ որ երբ անոնք առաջ կերթային, Հաւատարիմը ըստ պատահման մէկ կողմը նայելով մտրդ մը տեսաւ՝ որ կրկնուէր Շատախօս, ու իրենց քովէն քիչ մը հեռուէն կը քալէրկոր . քանզի աս տեղս անոնց ամէնուն ալ քալելու համար բաւական տեղ կար* : Ինքը բարձրահասակ մտրդ մըն էր՝ ու քիչ մը էվելի բարեճե կերևար հեռուէն քան թէ մօտէն : Հաւատարիմ սկսեց աս մտրդուն հետը խօսակցել՝ աս հեհետագայ կերպով :

Հաւատարիմ . Ի՞նչ եկամ, ո՞ւր բարով : Երկնային քաղաքը կերթասկոր † :

* Արտաքին խաղաղութեան ժամանակ ամէն կերպ հաւատացեալները կը շատնան . ինչու որ հաւածում չըլլալով աստուածպաշտութեան կերպարանքը որ վրանին հագած են՝ վտանգի մը ենթակայ չընէր զիրենք :

† Ահա քեզի Շատախօսը՝ որ մեր օրերը գտնուած շատերուն մէկ անվրէպ պատկերն է : Աւետարանական ճշմարտութիւններուն վրայ յայտնի ու պատշաճաւոր կերպով կրնան խօսիլ, բայց զուրկ

կերպովս անցունելու հոգ կըտանին . հապա էվելօք կընտրեն որ անպիտան բաներու վըրայով խօսին , և ասիկա ինծի նեզութիւն մը եղած է * :

Հասարակ . Արդարև ասիկա անանկ բան մըն է՝ որուն վրայ ողջալ արժան է . քանզի որ բանը մարդուս բերնին և լեզուին գործածու թեանը այնչափ արժանաւոր է՝ երկրի վրայ , ինչպէս որ երկնից Աստուծոյն բաները :

Երկրային . Աքանջելի կերպով կըհանիմ ես քեզի , քանզի քու խօսքդ բոլորովին կըհամոզէ մարդը . և ատկից զատ ես ալ կըսեմ , թէ՛ Ո՛ր բանը այնչափ հաճելի , և որ բանը այնչափ օգտակար է , ինչպէս որ աստուածային բաներու վրայ խօսակցութիւն ընելը : Ո՛ր բանը այնչափ հաճելի է . այսինքն՝ թէ որ մարդ մը հրաշալի բաներու վրայով բերկրութիւն մը ունի նէ : () րինակի աղագաւ , թէ որ մարդ մը իրերուն պատմութեանը կամ ա նոնց գաղտնի խորհուրդին վրայով խօսիլը

* Կեղծաւոր հաւատացեալը շատխօսութեամբ ուրիշներէն կըգանգատի , ու իր անձին վրայով բան մը չի խօսիր : Անանկ չէ ճշմարիտ հաւատացեալը :

քերկրութիւն մը կրնէ իրեն, կամ՝ թէ որ մարդ մը հրաշքներու՝ սքանչելիքներու՝ կամ նշաններու վրայ խօսիլ կրսիրէ, ո՞ր պիտի գտնայ ինքը այնչափ զուարճալի կերպով պատմը վաճ և այնչափ քաղցրութեամբ գրված բաներ որչափ որ Սուրբ Գիրքերուն մէջը :

Հասարակ . Ղշմարիտ է ատ . բայց մեր խօսակցութեանը մէջ ասանկ բաներով շահելը՝ մեր գլխաւոր դիտաւորութիւնը ըլլալու է :

Երկրորդ . Իմ ըսածս ալ ատիկա էր . քանզի ասանկ բաներու վրայով խօսիլը խիստ շահաւոր է . քանզի ասանկ ընելով շատ բաներու վրայով տեղեկութիւն կրնայ ստանալ մարդս . ինչպէս ըսենք թէ՛ երկրաւոր բաներուն ու նայնութեանը ու երկնաւոր բաներուն շահաւետութեանը վրայով : Ատիկա ընդհանրապէս . բայց մասնաւորապէս խօսելով՝ ասով կը սորվի մարդս վերստին ծննդեան Երկրորդ հարկաւորութիւնը, մեր դործքեւ «ին գեղերուն քաւական չըլլալը մեր փրկուցի խօսքերութեանը համար, Բրիստոսի արդարութեանը կարօտութիւն ունենալը, և այլն : Սանաւանդ որ ասով՝ այսինքն խօսակցութիւն ընելով մէկ մարդ մը կը սորվի թէ ինչ է ապաշխարելը՝

հաւատալը՝ աղօթելը՝ համբերելը և ասոնց նման բաները : Եւսով մէկ մարդ մը կըստրվի և աթէ աւետարանին ան մեծ խոստմունքները և մխիթարութիւնները ինչ են , ու այնպէս կը մխիթարվի : Դարձեալ ասով մէկ մարդ մը կըստրվի սխալ կարծիքները ջրեւ , ճշմարտութեան ջատագով ըլլալ , ու նաեւ տգէտները վարժել * :

Լատարիէ . Եղլոյ ատոնք ճշմարիտ են , և ուրախ եմ՝ ան բաները քեզմէ լսելու :

Եւսովս . Եւսովս . ասոր պակասութիւնն է պատճառը որ այսչափ քիչերը կիրանան հաւատքին հարկաւորութիւնը , և յաւիտենական կենաց համար իրենց հոգիներուն մէջը Եւսուծոյ շնորհացը գործին հարկաւոր ըլլալը .

* Եսիկա ուղղափառ դասանութեան բուն օրինակը չե՞մի . բայց տես դուն որ մէկ անունով հաւատացեալ մը՝ թութակի պէս՝ կրնայ սորվիլ ողջամիտ վարդապետութիւննեղու վրայով քօտիլ ասոնց վրայ ուղիղ գատողութիւն ընել , որ տտեն սիրտ չունի իրօք ընդունելու զանոնք՝ սիրելու զանոնք՝ ու զգալու ասոնց զօրութիւնը ու ներգործութիւնը իր կիրքերուն ու վարքին վրայ : Եւստոյր կան որ հիմայ կըբաւանին թէ Վրիստոս իրենց վարդապետն է , բայց ան՝ հանդերձեալին պիտի դատապարտէ՝ զանոնք իբրև իրենց դատաւորը :

միայն թէ ազիտաբար օրէնքին զործքերուն յուսալով կապքին : որմնցմով մէկ մարդ աւանեւին չի կրնար երկնից թագաւորութիւնը ձեռք ձգել :

Հատարելի . Ինչո՞ք լնողութիւն կրնէք , առ բաներուն վրայով երկնաւոր գիտութիւն մը ունենալը Մտուածոց պարգեւն է . մարդկային ճարտարութիւնով կամ միայն անոնց վրայով խօսելով մէկը չի կրնար ստանալ զանոնք :

Շարահոս . Բնոնց բոլորն ալ շատ աղէկ գիտեմ ես . քանզի մէկ մարդ մը Ինչ առ է բան մը չի կրնար ընդունել թէ որ Շարահոս վերէն չի տրվի իրեն . բոլորը շը "Ե նորհքէ է" չէ թէ գործքէ : Բնիկա հաստատելու համար հարիւր վկայութիւն կրնայի բերել :

Հատարելի . Բնէկ . հիմայ ինչ նիւթ մը ձեռք առնենք , ու մեր խօսակցութիւնը անոր վրայ ընենք :

Շարահոս . Ինչ որ կուզես նէ . ես երկնաւոր բաներու վրայ ալ կը խօսիմ՝ երկրաւոր բաներու վրայ ալ . բարոյական բա . Ինչ առ է ներու վրայ ալ՝ աւետարանական Շարահոս : բաներու վրայ ալ . հաւատքի բա "Ե

ներու վրայ ալ արտաքին բաներու վրայ ալ .
անցեալ բաներու վրայ ալ՝ գալիք բաներու
վրայ ալ . օտար բաներու վրայ ալ մեր երկրի
բաներուն վրայ ալ . իրերուն հուժեանք վրայ
ալ՝ պարագաներուն վրայ ալ , միայն թէ բոլոր
խօսքը մեր օգուտին համար ըլլայ :

Հաւատարիմ սկսեց հիմայ զարմանալ . ու
դէպի Վրիստիանոսին գալով՝ որ բոլոր աս ա-
տենա ինքնիրենը կը քալէրկոր , կամաց մը ը-
սաւ անոր . Ի՞նչ քաջ ընկեր մը վաստըկե-
ցանք . անտարակոյս աս մարդը շատ աղէկ
ճամբորդ մը պիտի ըլլայ :

Եւ խօսքին վրայ Վրիստիանոս համեստա-
բար ժպտեցաւ՝ ու ըսաւ . Եւ մարդը՝ որուն
հետը դուն բռնըվեցար , աս իր լեզուովը
զինքը չի ճանչցող մարդիկներէն քսան հոգին
մէկտեղ կը խաբէ :

Հասարակի . Ուրեմն դուն զինքը կը ճանչ-
նան մի :

Վրիստիանոս . Կը ճանչնամ մի զինքը , ան-
շուշտ , իրմէն աղէկ ես գիտեմ զինքը :

Հասարակի . Ե՛ղէ ըսէ ինձի , ի՞նչ մարդ է
ինքը :

Վրիստիանոս . Իր անունը Շատախօս է . ին-

կերևայ ըսելու իմ միտքս կրբերէ մէկ նկարիչի մը գործքին մէջ տեսածս . աս նկարիչին գծած պատկերները հեռուէն շատ աղէկ կերևային , բայց խիստ մօտ որ բերվէին բոլորովին անհաճոյ էին :

Հասարակ . Բայց ես կրմտածեմկոր որ դուն աս խօսքերը միայն կատակ մը ընելու համար կրխօսիսկոր , քանզի ժպտեցար :

Վրիստինոս . Վաւ լիցի որ աս բանիս վրայ ծաղը կամ կատակ մը ընեմ ես , թէպէտ և ժպտեցայ , կամ՝ որ սուտ տեղը զըպարտութիւն մը ընեմ : Իր վրայովը էվել տեղեկութիւն մը տամ ես քեզի : Եւ մարդը ամէն ընկերութեան և ամէն խօսքի մէջ կրմտնայ . ինչպէս որ հիմայ ինքը քու հետդ խօսեցաւ , անանկ կրխօսի՛նաւ երբոր գինետունը նստած ըլլայ . և որչափ որ գինին իր գլուխը մտնայ այնչափ աս խօսքերը իր բերնէն կելան : Վրերիստոնէութիւնը իր սրտին կամ իր տանը և կամ իր խօսակցութեանը մէջ տեղ չունի . բոլոր իր ունեցածը լեզուին վրայ է , ու իր բռնած կրօնքը անով շաղակրատութիւն ընելու համար է * :

* Հիմայ ալ կան ասանկ հաւատացեալներ՝ ինչ-

Հասարակի՛ . Իրա՛ւ կրեսս . ուրեմն մեծա-
պէս խաբւեցայ ես աս մարդուն վրայով :

Քրիստոսն . Խաբւելն ալ խօսք է մի .
տարակոյս մի ունենար ատոր վրայ :

Սխտքդ բեր ան առակը որ կրես , ^{Հասարակի-}
«Ալըսեն ու չեն ըներ» . բայց Մ . ^{ը Խօսել}
տուճոյ Թագաւորութիւնը խօսքով ^{Գործել չ}
չէ , հապա ղօրութիւնով . Սասն . ^{Գիտել}

Ի՞նչ . Յ . Կրնն . Դ . 20 : Ինքը աղօթքի՛ զղջումի՛
հաւատքի և վերստին ծննդեան վրայ կրխօսի ,
բայց միայն խօսիլ գիտէ անոնց վրայով : Կս
իր ընտանեացը մէջը գտնելեցայ , ու զինքը
փորձեցի թէ՛ տանը մէջ և թէ՛ ղուրսը . ու
գիտեմ որ իր վրայով իմ ըսածս ճշմարիտ է :
Ինչպէս որ հաւկիթի մը ճերմկեցուցին մէջ
համ չի կայ , անանկ ալ իր տանը մէջ կրօնք
չի կայ : Ոչ աղօթք կայ հոն , և ոչ մեղաց վը-
րայ զղջում ընելու նշան : Ճշմարիտը՝ անբան

պէս որ միշտ գտնելք են : Կսանկները ամենապատ-
ուական Քրիստոնէութիւնը իր սիրտէն կրվե-
րաւորեն՝ ու ամէն փառաւոր ճշմարտութիւնները
անարգանքի մէջ կրձգեն : Կւելի վնաս կրկրվի ա-
սոնցմէ քան թէ բոլորովին տգէտներէն ու յայտնի
ամբարիշտներէն : Ուրեմն փախէք հեռացէք ա-
սանկներէն :

կենդանին իր տեսակին մէջը ասկից աղէկ ծառայութիւն կրնէ. Բատուծոյ : Բոլոր զինքը ճանչցողներուն քով կեդտ մը նախատինք մը և ամօթ մըն է ինքը կրօնքի . Լուսն . ք . 24 , 25 : Իր պատճառովը հազիւ թէ աղէկ խօսք մը կը խօսվի կրօնքի վրայ քաղաքին ան կողմը ուր որ ինքը կը բնակէ : Գ ինքը գիտցօղ հասարակ անձինք ասանկ կը կոչեն անիկա . « Իուրաք սուրբ , տունը սատանայ » : Իր խեղճ ընտանիքը ասանկ կը գտնայ զինքը : Ընանկ կձծի՛ անանկ գէշեզու և անանկ անիրաւ է իր սպասարհներուն , որ չեն գիտեր թէ ինչ ընեն՝ և ինչ խօսին իրեն : Իր հետը առուտուր ունեցողները կը սեն թէ , Ը առ աղէկ է շեթանտ սի մը հետ առուտուր ընել քան թէ անոր հետը , քանզի լաւագոյն առուտուր պիտի ունենան ձեռքերնին : Ը ս Ը առախօսը թէ որ հընար ըլլայ կուգէ խորամանկել՝ խարդախել՝ նենգել անոնց , ու խաբել զանոնք : Ը ս կից զատ իր զակրներն ալ կը մեծցունէ կոր իր ճամբուն հետեւելու . ու թէ որ անոնց մէկուն վրայ յիմարական երկչոտութիւն մը գըտնալու ըլլայ նէ , (քանզի ինքը դիւրագգած խղճմտանքի մը առջի երևոյթը այսպէս կը կո-

չէ ,) յիմար և անբան կրկոչէ զանոնք , ու գործի մը չի դներ , և ուրիշներուն քով չի գլ-վեր զանոնք : Ինծի կը հարցունես նէ , ես կը կարծեմ որ ինքը իր չար վարքովը շատերը գայթակղեցուց ու կործանեց , ու թէ որ Մատուած չարգիլէ , ուրիշ շատերուն ալ կործանմանը պատճառ պիտի ըլլայ * :

Հասարակ . Եղբայր իմ , ես կապված եմ քեզի հաւատալու՝ ոչ միայն ըսելու համար որ դուն անիկա դիտես , հապա անոր համար ևս՝ որ իբրև Վրիստոնեայ՝ մարդոց վրայով քու

* (Թող կարգան ասիկա ու դողան ամէն անոնք որոնք լեզուով միայն կը գաւանին Վրիստոսի հաւատքը , բայց իրենց հոգիներուն մէջը բնաւ չեն գիտեր Վրիստոսի սէրը ու շնորհքը : Ինչպէս անարգութիւն կընեն անոնք Մատուծոյ շնորհացը՝ Վրիստոսի մեր Տէրոջը՝ ու ճշմարտութեան սրբազան խօսքին : Ո՛հ , ինչ ահաւոր համար ունին տալու հանդերձեալին՝ մէկ սուրբ ու սիրտերը քննող Մատուծոյ մը : Ո՛վ դուք՝ Հիսուսի ճշմարիտ ճանապարհորդները , կարդացէք ասիկա՝ ու փառք տրէք ձեր Տէրոջը որ անպտուղ հաւատքին վրայ հաստատելէն՝ ու ճշմարտութեան վրայ կեղծաւոր շատխօսութիւն ընելէն ձեզ ազատեց . որ ճշմարտութիւնը կատարելապէս ձեզի ճանչցուց՝ ձեր սրտերուն մէջը ընդունելու զանիկա , ու անոր ազդու և սրբացուցիչ զօրութեանը տակ ապրելու ու կենցաղավարելու : Ո՛վ է որ ձեզ իրարմէ կը տարբերէ :

գիտցածդ կրպատմես : Վրանզի ես չեմ կրնար մտածել թէ դուն առ բաները չարակամութեւնէ կրբօսիսկոր : հապա թէ անոնք ճիշտ քու ըսածիդ պէս են :

Վրիստիանոս . Թե որ ես քեզմէ աղէկ չե՞ ճանչնայի զինքը , գուցէ իր վրայովը այնպէս պիտի խորհէի ինտոք որ դուն առաջ խորհեցար : Եւ մանաւանդ՝ թէ որ առ պատմութիւնը միայն կրօնքին թշնամի եղողներուն ձեռքովը լսած ըլլայի նէ , զըպարտութիւն ըլլալ պիտի խորհէի ան , որ չար մարդոց բերնէն բարի մարդոց անունին ու դաւանութեանը վրայ յաճախ կիյնայ : Բայց ամէն առ բաներով և մանաւանդ ասօնց պէս շատ ուրիշ գէշ բաներով կրնամ բուն իմ գիտնալովս իր յանցաւոր ըլլալը հաստատել : Եսկից զատ աղէկ մարդիկ իրենց ամօթ կրսեպեն զինքը . ոչ եղբայր կրնան կոչել ու ոչ բարեկամ . իրենց մէջը անոր անունը յիշելը անգամ զիրենք կամչցօնէ՝ թէ որ կրճանչնան զինքը :

Հասարակի . Հիմայ կրտեսնամկոր որ ըսելը և ընելը երկու բաներ են . ու ասկից հտքք աղէկ պիտի նկատեմ առ տարբերութիւնը :

Վրիստիանոս . Երդարև անոնք երկու բաներ

են, և այնպէս իրարմէ տարբեր են՝ ինչպէս որ հողին ու մարմինը . քանզի ինչպէս որ մարմինը առանց հողին ժիայն մեռած լինած ղի մըն է, անանկ ալ խօսքը՝ մի կատար նոսկ առանց գործքի միայն մեռած ղի մըն է : Կրօնքին հողին անոր գործնական մասն է * . Սուրբ ու անարատ կրօնաւորութիւնը լստուծ մէ ու շօրմէն՝ աս է, Որբերուն ու որբւարի ներուն տես երթալ իրենց նեղութեանը մէջ . անձերնին անարատ պահել աշխարհէն . (Յով. Թ. 27 . ու 22—26 : Շատախօսը ասոր վրայ տեղեկութիւն չունի . ինքը կրկարծէ որ լսե-

* Աշմարիտ Վրիստոնէի մը ամէնէն ստոյգ նշանը գործնական լստուածպաշտութիւնը կրղնէ շեղեանակը : «Իրենց պտուղէն պիտի ծանչնաք անոնք» . կրսէ Տէրն մեր : Լղէկ ծառը իր տերևներուն առատօրէն աճելէն՝ կամ գեղեցիկ ու չքնաղ ծաղիկներով զարդարված ըլլալէն չի ծանչցրվիր, հապա իր պտուղէն՝ որ ետքը կրբերէ : Լսոր պէս Վրիստոսի աշակերտները ըլլալուս նշանը չէ թէ դըրսը վանց Վրիստոնեայ ըլլալ դաւանեմնիս՝ կամ մեր փորձառութիւններուն վրայ գեղեցիկ պատմութիւն մը ընեմնիս է, հապա Վրիստոսի մեղի պատուիրած բաները ընեմնիս է : «Եւք իմ բարեկամներս էք», այսինքն՝ նշան է թէ դուք իմ բարեկամներս էք, «թէ որ ընելու ըլլաք ինչ որ ևս չձեղի կրպատուիրեմ» :

լով ու խօսելով բարի Վրիստոնեայ մը կը լայ մէկը, և ասանկով ինքը իր հոգին կը խաբէ : Լսելը ուրիշ բանի չի նմանիր՝ բայց միայն սերմը ցաննելու . ու միայն խօսելը չի ցուցնէր թէ սրտին ու վարքին մէջը ճշմարիտ պտուղ կայ : Եղէկ գիտնանք որ դատաստանին օրը մարդիկ իրենց պտուղներովը պիտի դատվին . Սաղմ. ԺԳ. 23 : Ենտեսնը չի պիտի ըսվի թէ՛ շաւտացիք մի դուք, հապա պիտի ըսվի թէ՛ Գործո՞ղ էիք մի, եթէ խօսող միայն . և անոր նայելով պիտի դատվին * : Եշխարհի վերջը

* Սեղաւորները թէպէտ և փրկված են՝ ու իրենց մեղքերը Վրիստոսի արինովը յաւիտեան լուացված է, թէպէտ և Վրիստոսի արդարութիւնովը կատարելապէս արդարացած են, թէպէտ և Յիսուս Վրիստոսի միջնորդութեամբը Եստուած յաւիտենական կեանքը անոնց պարգևած է, սակայն մէկը չի կրնար աս անգին բարութիւններուն հաղորդիլ՝ բայց անոնք որ Վրիստոսի պատուական հաւատքին հաղորդեալ են : Եւ աս հաւատքը՝ որ Եստուծոյ պարգևն է, կուզեմ՝ ըսել Եստուծոյ ընտրեալներուն հաւատքը՝ Եստուծոյ կամացը հնազանդութիւն ընելով ու ՚ի փառս Եստուծոյ բարի պտուղ բերելով յայտնի կը լայ : Երաւ սուրբերը չէ թէ իրենց գործքերուն պատճառովը՝ կամ իրենց գործքերը արդարութեան ու փրկութեան արժանաւոր ըլլալուն պատճառովը կարգարանան ու յաւիտենական կեանքը կը տրվի իրենց, բայց իրենց

մեր հունձերուն նմանեցուցած է . Մարտ . ԺԴ . 30 . և դուն գիտես որ մարդիկ հունձի ատեն ուրիշ բանի չեն նայիր հապա պրուղի : Ըսիկա որ կրթօսիմ չեմ կամիր ըսել թէ առանց հաւատքի գործը ընդունելի կըլայ . հապա որ ցուցընեմ քեզի թէ ան օրը ատ Շատախօսին դաւանութիւնը ինչպէս տկար պիտի ըլլայ :

Հատարի . Ըսիկա իմ միտքս կըբերէ Մովսէսին ըրած ստորագրութիւնը՝ սուրբ անասուններուն վրայով . Վ . Կ . Թ : Լ . Ե . Գ . ԺԴ : Սուրբ անասունը կճղակաբաշխ՝ կամ ոտքին պճեղը բաժնրված՝ ու որոճացող պիտի ըլլայ . չէ թէ միայն կճղակաբաշխ՝ կամ միայն որոճացող : Վապաստակը կըորոճայ՝ բայց

գործքերովը պիտի արդարանայ իրենց հաւատքը որ Տէրոջը վրայ ունին , որ է իրենց արգարութիւնը ու փրկութիւնը . որովհետեւ ինտոր որ կըդաւանին հաւատալ անոր՝ անանկ ալ անոր վրայ ունեցած իրենց սէրը կըցուցընեն անոր պատուիրանքներուն հնազանգութիւն ընելով : Սուտի մէկը թող չի խաբէ զինքը : Ենչու որ հաւատք առանց գործքի մեռած է , ու մեռած հաւատքը ամենեկին կենդանի յոյս մը չի ծնանիր յարուցեալ Վրկիչին վրայ , ու օգուտ մալ չընծայէր երբոր ինքը իբրև դատաւոր երևալու ըլլայ :

պիղծ է , ինչու որ կճղակաբաշխ չէ : Աւ ա սիկա ճշմարտապէս կընմանի Շատախօսին . ինքը կըրորոճայ , խոհական մարդու մը պէս խօսքին վրայ կըրորոճայ , բայց կճղակաբաշխ չէ . այսինքն՝ մեղաւորներուն ճամբէն չի զատ վեր . հապա նապաստակին պէս շունի կամ արջի ոտք ունի , ու անոր համար պիղծ է :

Վրիստինոս . Կարելի թէ դուն աս խօսքերուն ճշմարիտ աւետարանական նշանակութիւնը խօսեցար . ու մէկ բան մ'ալ ես պիտի վրայ բերեմ : Պօղոս մէկ քանիները՝ և մանաւանդ շատախօսներն ալ կրկոչէ ձայն հանող պղինձներ՝ կամ զնկուտացող ծնծղաներ . Թ . Կրիստոս . ԺԳ . 1—3 : ԺԳ . 7 : Այսինքն՝ ձայն տրուող անշունչ բաներ , ինտոր որ ինքը ուրիշ տեղ մը կըբացատրէ : Անշունչ բաներ՝ այսինքն՝ աւետարանական ճշմարիտ հաւատքը ու շնորհքը չունեցող բաներ . և հետեւապէս անանկ բաներ որ երկնից Թագաւորութեանը մէջ կենաց զաւկրներուն մէջը դրվելու արժանաւոր չեն . Թէպէտ և իրենց ձայնը՝ իրենց խօսակցութիւնովը իբր թէ հրեշտակի լեզու կամ ձայն ըլլայ :

Հատարիմ . Իրաւ որ՝ ո՛չ այնչափ իր ընկե-

ընթացին կը ցանկայի առաջ , որչափ որ հիմայ ձանձրացայ անկից . ի՞նչ ընենք իրմէն ազատելու համար :

Վրէստիանոս . Իմ խրատս բռնէ , ու քեզի ըսածիս պէս ըրէ , և պիտի գտնաս որ ինքն ալ շուտ մը պիտի ձանձրանայ քու ընկերութենէդ , թէ որ Աստուած իր սիրտը չի շարժէ կամ անիկա չի դարձունէ նէ :

Հասարակ . Ի՞նչ խրատ կուտաս ինձի որ ընեմ :

Վրէստիանոս . Կնա իրեն՝ ու կրօնքին զօրութեանը վրայով ջերմեռանդ խօսակցութեան մը մտիր իր հետը , ու պարզապէս հարցուր իրեն՝ (երբոր ինքը անիկա ընդունի , ինչպէս որ պիտի ընդունի .) թէ արդեօք իր սրտին՝ իր տանը՝ և իր կենցաղավարութեանը մէջ հաստատված է աս բանը * :

* Ասանց ասոր բոլորը դատարկ գաւառի՝ յոկ շունչ ու անօգուտ դաւանութիւն է : Սարգիկ հաւատքի տեղ երեւակայութիւնը՝ աստուածաշտութեան տեղ անոր կերպարանքը միայն վրանին կառնեն : Ղշմարիտ հաւատքը իր պտուղովը միշտ կը ցուցնէ : Ղշմարիտ դարձի եկողը իր վարքովը ու կենցաղավարութիւնովը յայտնի կը լայ : Սիխարիսի՝ Աստուած ծաղը չըլար լեզուով թէ որ սիրտը ուղիղ չէ իր վրայ սիրով ու հնազանդութիւնով :

Հասարակի՛ . Ընտանն Հաւատարիմը դարձեալ դէպի առաջ քալեց՝ ու ըսաւ Հատախօսին . Եկո՛ր նայինք , ի՛նչ լուր , ի՛նչպէս ես հիմայ :

Հասարակի . Հնորհակալութիւն քեզի , ադէկ եմ . ես կրկարծէի որ մինչև աս ատենախել մը խօսակցութիւն ըրած պիտի ըլլայինք :

Հասարակի՛ . Ըդէկ . Թէ որ կուզես , հիմայ սկսինք ընել . և որովհետև ինծի ձգեցիր ինչ բանի վրայ խօսակցութիւն ընելնիս որոջել , աս թող ըլլայ ան . երբոր Կստուծոյ փրկարար շնորհքը մարդուս սրտին մէջը ըլլայ նէ՛ ինտո՛ր կըցուցընէ ինքըզինքը :

Հասարակի . Ուրեմն կիսանամ որ մեր խօսակցութիւնը իրերուն զօրութեանը վրայ պիտի ըլլայ : Պինտ ադէկ . շատ լաւ խնդիր մըն է ատիկա , և կըկա՞մք ատոր պատասխանը տալ չեզը : Ըրո՞՛ համառօտաբար ասանկ կը պատասխանեմ : Եսխ՝ Երբոր Կստուծոյ շնորհքը մարդուս սրտին մէջը ըլլայ նէ , անիկա սրտին մէկ մեծ բողոք մը ընել կուտայ մեզքի դէմ : Երկրորդ ,

Հասարակի՛ . կեցիր , առաջ մէկին վրայալ

մտածենք : կարծեմ թէ էվելթը պէտք էր քեզի ըսել , թէ՛ Աստուծոյ շնորհքը ինքըզինքը կըրցուցնէ՝ բուն իր մեղքէն զզուելու հակամիտելով զհոգին :

Հարախօս . Ինչո՞ւ համար . ի՞նչ տարբերութիւն կայ մեղքի դէմ բողոքելուն՝ ու մեղքէ զզուելուն մէջ տեղը :

Հարախօսի . Ի՞նչ կըսես , շատ մեծ տարբերութիւն կայ : Սէկ մարդ մը Սէլի դէմ կընայ բողոք ընել մեղքի դէմ ինքը բողոք ընելով զինքը բարեպաշտ ցուցնելու համար . բայց չի կընար զզուել անկից , եթէ ոչ՝ Սուրբ Հոգին զօրութիւնովը անիկա ատելով : Ասելու եմ որ շատերը մեղքի դէմ կըբողոքեն ամպիոնին մէջը՝ որոնք տակաւին զանիկա աղէկ մը իրենց սրտին՝ տանը՝ և խօսակցութեանը մէջ կըկրեն : Հովսէփին տիկինը բարձր ճայնով բողոքեց մեղքի դէմ՝ որպէս թէ ինքը շատ պարկեշտ մէկն էր , բայց՝ թէպէտ և անանկ կանչեց , սակայն իր կամքովը պղծութիւն պիտի գործէր անոր հետ . Սինդ . լԹ . 15 : Սմանք մեղքի դէմ բողոք կընեն՝ ինչպէս որ մայր մը իր գրկի զաւակին դէմ բողոք կընէ չար և անզգամ կոչելով զաւակը ,

ու նոյն լուսկէին վաղիայելով և պագնելով ա-
նիկա :

Հարախօս . կիմանա՞մ որ ի՞նչ բռնե՞լ կուզես
դունն :

Հարախօս . Չէ , չէ . ես միայն բանը շե-
տակ կարգին դնել կուզեմ : Բայց ո՞րն է
ան երկրորդ բանը՝ որով սրտին մէջի շնոր-
հաց գործքը ինքըզինքը պիտի ցուցնէ :

Հարախօս . Ընտարանական խորհուրդնե-
րուն վրայով մեծ գիտութիւն ունենալը :

Հարախօս . Ընտարանական խորհուրդնե-
րուն վրայով մեծ գիտութիւն ունենալը .
այս թէ առաջին ըլլայ և թէ վերջին՝ մէկա-
րորդին պէս սուտ է : Վրանզի կարելի է
որ մէկը աւետարանական խորհուրդ-
ներէն նշան ներուն վրայով գիտութիւն՝ մեծ գի-
տութիւն ստանայ , և տակաւին իր
հոգւոյն մէջը շնորհաց գործ մը չունենայ * :

* Աշդիւ խօսելով կեղծաւորը որչափ որ մտաւոր
գիտութիւններով լեցուն ըլլայ , աստուածապաշ-
տութեան ճշմարիտ զօրութենէն զուրկ է , ու աւե-
տարանական խորհուրդներուն վրայով սակաւիկ
գիտութիւն ունենալու ընդունակ չէ : Իրաւ կրնայ
ստի՛լ անոնց վրայով խօսիլ , ու անոնց վրայով
բազմաթիւ գաղափարներով իր գլուխը լեցունել ,
բայց իր խօսքերուն յարմար գաղափարներ չունի :
() րինակի աղագաւ՝ ի ծնէ կշրը կրնայ խօսիլ ա-

Սանաւանդ՝ թէ որ մէկը բոլոր գիտութիւնը ունենայ , կարելի է որ դեռ ինքը ոչինչ ըլլայ , և հետեւապէս Մատուծոյ զաւակ չըլլայ . ա . Լուրն . ԺԳ . 2 : Վրիստոս երանութիւն կուտայ ոչ գիտցողներուն , այլ գործողներուն՝ ըսելով . « Երանելի էք թէ որ ընէք նէ ան » : Ինքը երանութիւնը ոչ գիտնալուն այլ գործելուն վրայ կը դնէ : Սէկ մարդ մը կարելի է որ հրեշտակի նման գիտութիւն ունենայ , ու տակաւին Վրիստոսեայ չըլլայ : Ուստի ասոր վերայով քու տըւած նշանդ ճշմարիտ չէ : Երաւ գիտնալը շատախօսները ու պարծենցողները կը հաճեցունէ , բայց ընելն է որ Մատուծոյ հաճելի է : Եւ թէ սիրտը առանց գիտութեան բարի կը ըլլայ՝ քանզի առանց գիտութեան ոչինչ է ան : Ուստի գիտութիւն կայ՝ գիտութիւն ալ կայ . գիտութիւն կայ որ իրերուն վրայ միայն կը խօսի , ու գիտութիւն կայ որ հաւատքի ու սիրոյ հետը ընկերանալով մարդս սրտանց Մատուծոյ կամքը կատարելու վրայ կը դնէ . ա .

րեգակին կամ ծիածանին վրայ , ուրիշներէն լսածը կրկնելով . բայց որովհետեւ ամենեւին տեսած չէ զանոնք , ոչ մէկին պայծառութեանը ու ոչ մէկալին գոյներուն վրայով գաղափար մը ունի :

սոնց առջինը շատախօսներուն բանին կուգայ . բայց ճշմարիտ Վրիստոնեայն առանց երկրորդին գոհ չըլլար : «Իմաստունն ըրէ զիս՝ ու քու օրէնքդ պիտի քննեմ , ու իմ բոլոր սրբտովս անիկա պիտի պահեմ” . Սաղմ. ճԺԹ. 34 :

Շատախօս . Կրկին զիս բռնեւ կուզես դուն . ասիկա մեր օգտին համար չէ * :

Հատաբարի՛ . Ընէկ . Թէ որ կուզես նէ մէկ ուրիշ նշան մը ցուցուր՝ Թէ շնորհաց աս գործը իր եզած տեղը ինչպէս ինքրզինքը կը ցուցնէ :

Շատախօս . Չէ՛ չեմ ուզեր . քանզի կրտես նամ որ չի պիտի համաձայնինք իրարու :

Հատաբարի՛ . Թէ որ դուն չես ուզեր նէ՛ կը Թողլու որ աս բանը ես ընեմ :

Շատախօս . Ըզատ ես . ուզածդ կրնաս ընել :

Հատաբարի՛ . Հոգիին մէջի շնորհաց գործը ինքրզինքը կը ցուցնէ՛ անիկա ունեցող անձին , կամ անոր մօտ կեցողներուն :

Ընիկա ունեցող անձին ասանկ կը ցուցնէ

* Իրաւ է՝ Շատախօս , որ կը բռնըվիսկոր , բայց ասիկա շատ օգուտ է քեզի՝ ինչու որ քու ինչ ըլլալդ անկից քեզի կը յայտնըվի : Վաւազոյն է այսպէս՝ քան Թէ սուտ յոյսերով ու հոգին խաբող բաներով շինութիւն ընդունելու ետեէ ըլլաս :

պէտ կըսեմ թէ ան շնորհաց գործը ինքըզինքը
 ասանկ կըցուցընէ ան անձին, բայց միայն
 հազիւ կըլլայ որ ինքը կարող ըլլայ վճռելու
 թէ անիկա շնորհաց գործն է : Վանդի իր ա-
 պականութիւնները և չարաչար գործածված
 իր բանականութիւնը հիմայ աս բանիս վրայով
 սխալ գատում ընել կուտայ իր մտքին : Ուս-
 տի ան գործը ունեցող անձը ասոր շնորհաց
 գործ ըլլալը հաստատութեամբ վճռելու կա-
 ղող ըլլալէն առաջ պէտք է որ կատարեալ
 դատողութիւն ունեցող մէկը ըլլայ . էջ . 4 . 47 .
 9 : Գալ . ք . 15 , 16 : Գործ . 7 . 12 : Սարբ . 5 . 6 :
 էջ . 10 . 6 :

Ուրիշներուն ալ ասանկ կըցուցընէ ինքըզին-
 քը : Վախ՝ Վրիստոսի հաւատքին յայտնի դա-
 ւանութիւնովը : Վրկրորդ՝ ան դաւանութեանը
 համեմատ կեանք վարելով մը . այսինքն՝ սրտի
 սրբութեան , թէ որ ընտանիք ունի նէ՝ ըն-
 տանեաց սրբութեան , ու աշխարհի մէջ կեն-
 ցադավարութեան վրայով սրբութեան կեանք
 վարելով մը , որ ընդհանրապէս կըսորվեցունէ
 իրեն ներսըվանց իր մեղքերէն և մեղքերուն
 պատճառովը ինքըզինքէն զաղտնաբար զուղիլ ,
 մեղքը իր ընտանեացը մէջէն բնաջինջ ընել :

ու աշխարհի մէջ սրբութիւնը զարգացունել . ոչ լոկ խօսքով ինչպէս որ կեղծաւոր և շատախօս անձինք կրնեն , հապա հաւատքով և սիրով Մատուծոյ խօսքին զօրութեանը գործնական հնազանդութիւն մը ցուցնելով * .

Յովթ . ԽԲ . 5, 6 : Սաղմ . ԽԹ . 23 : Լուքի . Ի . 43 : Սաղմ . Ե . 8 : Յովթ . ԺԴ . 15 : Լուքի . Ժ . 10 : Լուքի . ԼԳ . 25 : Փիլ . Թ . 27 : Գ . 17 : Լու հիմայ՝ պարոն , շնորհաց գործին վրայով աս համառօտ ստորազրութեանս դէմ հակառակելիք մը ունիս նէ հակառակէ . չէ՛ նէ՛ թող տուր ինձի որ երկրորդ խնդիր մը առաջարկեմ :

Մատուծ . Չէ՛ իմ գործս հիմայ հակառակել չէ , հապա ականջ դնել . ուստի ըսէ նայիմ քու երկրորդ խնդիրդ :

Լուքի . ԼԳ . Լու համար է ան : Մատուծոյ գործին վրայով աս ստորազրութեան առաջին մասը փորձով քու վրագ կրգտնան մի : Լուքու կեանքդ ու կենցաղավարութիւն Մատուծին նրդ նոյնը կրվկայե՞ն մի , կամ թէ որքէ՛ն մէ՛ք քու կրօնքդ խօսքով ու լեզուով է՛ աղէ՛ն շշտնը

* Սի միայն ասիկա է որ կրցուցնէ թէ մենք Վրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք : Մատուծապաշտութեան աս զօրութիւնը չունենանք նէ՛ անուամբ միայն կենդանի ենք , բայց աւետարանին

ու չէ թէ գործքով և ճշմարտութիւնով : Կա-
ղաչեմք քեզի՝ թէ որ ասոր վրայ ինծի պատաս-
խանելու յօժարութիւն ունիս նէ, էվելի բան
մի՛ ըսեր, հապա ան՝ որ դիտես թէ Մատուած
վերէն Մէն՝ այսինքն ճշմարիտ է պիտի ըսէ,
ու նաև ան՝ որուն մէջը քու խղճմտանքդ կըր-
նայ քեզ արդարացունել, քանզի չէ թէ ին-
քզինքը գովողը ընդունելի է՝ հապա ան որ
Տէրը կը դովէ զինքը : Կանաւանդ մեծ չարու-
թիւն է ըսել, թէ՛ Մա այսպէս և այնպէս եմ,
երբոր իմ կենցաղավարութիւնս և բոլոր ըն-
կերներս ինծի կըսեն թէ սուտ եմ* :

Կնատեն Շատախօսը առաջ սկսեց կար-
մըրիլ, բայց ինքըզինքը ժողվելով ասանկ
պատասխան տըլաւ : Գուն հիմայ փորձի՝
խղճմտանքի՝ և Մատուծոյ վրայ դարձուցիր
խօսքը. ու խօսված բաները արդարացունելու

գորութեանը մեռած ենք : Կնձերնիդ քննեցէք .
ճամբաներնուդ նայեցէք :

* Մասնկ հաւատարմութեամբ պարտինք վար-
վել մեր ընկերներուն հետ : Կրօնի թէ առաւել
գործածվէր աս բանս՝ թէ աշխարհի մէջ, և թէ ե-
կեղեցւոյ մէջ : Կնատենը դատարկասուները աշ-
խարհի մէջ պիտի ճանչցըվէին, ու եկեղեցիէն
պիտի արտաքսըվէին :

Համար իրմէն վկայութիւն կը բերես : Եւ չե՞ի յուսար որ աս տեսակը խօսակցութիւն պիտի ունենանք . ոչ ալ ասանկ խնդիրներու պատասխան տալու կը հակամիտիմ՝ քանզի ես զես աս բանիս կապված չեմ սեպեր՝ մինչև որ դուն քեզ իմ վարժապետս ըլլալ չի ցուցունես : Եւ թէ ո՞ր ցուցունես ալ՝ կրնամ քեզ ինծի գատաւոր չքնդունիլ : Բայց կազուչեմ՝ կրկամիս զրօւցել թէ ինչն ասանկ հարցմունքներ կրնեսկոր ինձի * :

Հարապարի՛մ . Ընոր համար՝ որ տեսայ քեզ թէ խօսելու համարձակ ես , և որ քիչ մը գիտէի թէ դուն երևակայութենէ՛ր զատ քան մը չունիս : Սանաւանդ՝ շիտակը խօսելով քեզ , քու վրայովդ լսեցի՝ թէ քու կրօնքդ խօսքի վրայ կրկայանայ , և թէ՛ քու կենցաղավարութիւնդ կը ցուցունէ թէ աս քու բերնիդ

* Սիրտը քննող՝ հոգին փորձող՝ ու վարքը հետազօտող խօսքերը կեղծաւոր շատախօսներուն բանին չի գար : Հաւատքով արգարանալու վրայ ձայն մը հանէ՝ ու պիտի միաբանին քեզի . բայց երբոր ճշգիւ խօսիս՝ թէ հաւատքը ինչպէս կազդէ սրտին ու կրնեբրգործէ վարքին՝ որ անձնուրացութեան հնազանդութիւնով մը Վրիստոսի հետեւինք , ապիկա շն կրնար տանիլ . քու վրադ կրնեղանան , քեզմէ կը փախչին , ու կրկոչեն քեզ օրինասէր :

դաւանութիւնը սուտ է . կըսեն թէ Վրիստոնէից մէջը կեղտ մըն ես դուն , և թէ՞ քու ամբարիշտ կենցաղավարութիւնովդ կրօնքը կանարգութիւնը . թէ ոմանք արդէն քու չար ճամբաներովդ զայթակեցան , և թէ անով շատերն ալ կործանելու վտանգին մէջ են : Վրոկրօնքդ՝ ու գինեփողնդ՝ և ազահոութիւնդ՝ և պղծութիւնդ՝ և հայհոյութիւնդ՝ և ստութիւնդ՝ և անպիտան ընկերութիւնդ՝ և այլն , ամէնը մէկտեղ կըկենան : Վրոկը վրադ կը ճշմարտի ան աւակը որ պունիկի մը վրայ ըսված է , թէ «ինքը բոլոր կնիկներուն նախատինք է» . այսպէս դուն ալ բոլոր հաւատացեալներուն նախատինք մըն ես :

Եւստիոս . Որովհետեւ այսչափ պատրաստ ես անոր ասոր շողակրատութիւնները առնելու՝ և այսչափ տմարդութեամբ դատողութիւն ընելու ինչպէս որ ըրիր , ուրիշ բան չեմ կրնար ընել՝ բայց եթէ վճռել որ դուն խորթաբարոյ և մեղաւոր մարդ մըն ես՝ ու հետդ խօսակցութիւն ընելու անյարմար մէկը . և այսպէս՝ մնաս բարով * :

* Ուր որ սիրաբ փտած է՝ յաղթահարվելէն կը փախչի , հաւատարիմ խրատողէն մէկ դի կըկենայ ,

Նիմայ Վրիստիանոս մօտ եկաւ և իր եղբորը ըսաւ . Ես քեզի ըսի թէ ինչ պատահելու էր . քու խօսքերդ և իր ցանկութիւնները չի կրցան իրարու համաձայնիլ : Ինքը առաւել կամեցաւ քու ընկերութիւնդ ձգել քան թէ իր վարքը շիտկել : Բայց ինքը՝ ինչպէս որ ըսի , գնաց . և թող տուր որ երթայ . կորուստը ուրիշ մարդու չէ՞ բայց իրենը : Ինքը մեղ իրմէն զատվելու աշխատութենէն ազատեց . ինչու որ ինքը ասանկ մնալով՝ ինտոր որ կրկարծենք թէ պիտի մնայ , մեր ընկերութեանը կեղտ մը պիտի ըլլար : Եսկից զատ առաքեալը կըսէ . «Եսանկներէն հրաժարվէ» :

Հաւատարիմ . Բայց ես ուրախ եմ որ աս կարճ խօսակցութիւնը իր հետը ըրինք . կարելի է որ անոր վրայով կրկին մտածէ . ինչևիցէ ես յայտնապէս խօսեցայ իրեն , և ասանկ՝ թէ որ ինքը կորսըվի , ես անպարտ եմ անոր արիւնէն * :

անիկա կըդատապարտէ ու ինքըզինքը կարդարացունէ : Հաւատարիմ խրատը անհաւատարիմ հոգիներուն բանին չի գար :

* Հաւատարիմին աս խօսքը նկատէ , ու աս իր օրինակին հետեւէ :

«Քրիստոսնա՛ս, Բ՛ղէ՛կ ըրիր որ ասանկ յայտնապէս խօսեցար իրեն՝ . հիմակու օրերս ասանկ հաւատարմաբար վարվիլ մէկու մը հետ քիչ կոյ , և ասկից է որ կրօնքը այսչափ շատերուն քիթին հոսած կուգայ . քանզի աս շատախօս յիմարներն են՝ որոնց կրօնքը միայն խօսքով է , և իրենց վարքը աստեղանտալ ու անարդ , որ բարեպաշտներուն ընկերութեանը մտած ըլլալով աշխարհը կը խառնէցունեն , ՎՐԻՄՈՒՆԵՐՈՒԹԻՒՆԸ կարատաւորին , ու հաւատարիմ անձը կը տրտմեցունեն : Երանի թէ ասանկներուն հետ ամէն մարդիկ քու վարվածիդ պէս վարվէին . անասոնը անոնք կամ էզէքք ինքքը լինէին կրօնքին պիտի յարէին , կամ սուրբերուն ընկերութիւնը չափազանց խիտտ պիտի վար իրենց :

Անասոնք Հաւատարիմը բռնու .

Ի՛նչպէս Շատախօսն առջի բերանը
Խր փետուրները կը ռուեցունէ .

Ի՛նչպէս քաջութեամբ կը խօսի ինքը ,
Ե՛մէնն իր առջին գետին կը զարնէ :

Բայց Հաւատարիմ երբոր կըսկըսի
Սրտին գործքերուն վրայով խօսիլ ,
Ինքն իբրև լուսին որ կընուազի՝
Սարը կը մտնայ , ալ չուզէր խօսիլ :

կան բարեկամս Մետարանիչն է : Ե՛հ : Իմի՛ն ալ պատուական բարեկամս է ան . ինքն է որ զիս ան նեղ դրանը ճամբան դրաւ : Եսոր վրայ Մետարանիչ իրենց հասաւ , ու ստանկ բարեւեց պանոնք :

Մետարանիչ . Խաղաղութիւն ձեզի՞ որկ կաթողին սիրելիք , ու խաղաղութիւն ձեզի օգնողներուն :

Վրիւստիմնոս . Բարի եկար , պատուական Մետարանիչս . քու դէմքիդ երևոյթը իմ յաւիտենական բարելաւութեանս համար քու ունեցած վաղեմի մարդասիրութիւնդ ու անխոնջ աշխատութիւնդ իմ միտքս կը բերէ :

Հազար բարի եկար , ըսաւ բարեսէր Հաւատարիմը . մեզի պէս ողորմելի ճամբորդներուն սրչափ բաղձալի է քու ընկերութիւնդ՝ որկ քաղցրաբարոյ Մետարանիչ * :

Ընտան Մետարանիչը ըսաւ . Բարեկամներ , մեր վերջին իրարմէ զատվելուս ետքը

* Ճանապարհորդի ոգի ունեցողին ստոյգ ու երջանիկ նշանը աս է . աւետարանի պաշտօնեաներուն վրայ անկեղծ ու կաթողին սէր մը ունենալ , ճանչնալով թէ մեր հոգիներուն օգուտին նպաստամատոյց են անոնք :

Խնչպէս եղաւ ձեր վիճակը . Խնչ բաներու պատահեցաք , և Խնչպէս կենցաղավարեցաք * :

Ուստի Վրիստիանոս ու Հաւատարիմ ճամբուն վրայ իրենց պատահած բոլոր բաները պատմեցին անոր . ու Խնչպէս՝ ու Խնչ դժուարութիւնով մինչև ան տեղը հասնելին զրուցեցին :

Մեծապէս ուրախ եմ՝ ըսաւ Մ. Էտարանիչ , չէ թէ փորձութիւններու պատահելուդ համար՝ հապա յաղթող գտնելիլուդ , և մինչև աս օրըս ճամբուն մէջը շարունակելուդ համար , թէպէտ և բազմապատիկ տկարութեամբ պաշարված :

Մեծապէս ուրախ եմ կրսեմ՝ աս բանիս վրայ , ու ան ալ միանգամայն ինձի համար և ձեզի համար : Ես սերմանեցի՝ ու դուք հնձե-

* Վրիստոսի հաւատարիմ պաշտօնեաներուն գործը ամէն ատեն պիտի ըլլայ ժողովուրդին հոգիներուն վիճակը իմանալ , ու անոնց օգտին ու լաւութեանը համար հոգալ . բայց՝ ո՛վ աղէտիս , ինչպէս զանցառութեան մէջ ձգված է աս բանը : Վրանի քանի անգամ Վրիստոսի պաշտօնեաները ժողովուրդին տես կերթան , ու անոնց հոգևոր խօսակցութիւն մը ընելու ետ կը դառնան :

ցիք . և ան օրը կուգակոր՝ որ ատեն սերմա-
նողը ու հնձողը մէկտեղ պիտի ուրախանան .
Յօհ. ք. 36 . այսինքն՝ թէ որ համբերեցիք ,
իր ժամանակին պիտի հնձէք առանց տկա-
րանալու . Վարդ. ք. 9 : Պսակը առջևնիդ է ,
և անիկա անսպական պսակ մըն է . անանկ
վազեցէք որ անիկա առնէք . Թ . կրնի . թ .
24—27 : Կան ոմանք որ սս պսակիս համար
ճամբայ կելլեն , ու անոր համար շատ հեռու
երթալնուն ետքը՝ մէկ ուրիշը կուգայ ու ա-
նիկա անոնցմէ կառնէ . ուրեմն պինտ բռնե-
ցէք ձեր ունեցածը , որ մէկը չառնէ ձեր պը-
սակը . Յայ. ք. 11 : Վուք տակաւին Սատա-
նային հրացանին հասնելու միջոցէն դուրս
ելած չէք . դուք տակաւին արիւն թափելու
չափ պատերասողմելով մեղքին դէմ չի կեցաք :
Մեքայութիւնը միշտ ձեր առջևը թող ըլ-
լայ , ու աներևոյթ բաներուն վրայով հաս-
տատուն հաւատք ունեցէք : Հանդերձեալ
աշխարհին ասգի կողմը եղած մէկ բանը ձեր
ներսի դիուն թող չի տիրէ : Ու ամէն բանէն
էվել աղէկ նայեցէք ձեր սիրտերուն ու անոր
ցանկութիւններուն . քանզի անոնք ամէն բա-
ներէն էվելի խաբեբայ են , ու տարապայման

չար : Կայլախազ քարի պէս ամուրցուցէք
երեսնիդ , երկնից ու երկրի բոլոր կարողու-
թիւնը ձեր կողմը ունիք * :

Քրիստիանոս շնորհակալ եղաւ իրեն իր
յորդորմունքներուն համար . բայց ըսաւ ևս
իրեն՝ թէ կուզեն որ մնացած ճամբուն մէջը
իրենց օգնութիւն ըլլալու համար քիչ մ'ալ
խօսի . և մանաւանդ որ աղէկ զիտէին թէ ին-
քը մարգարէական հոգի ունէր ու կրնար զլու-
ցել իրենց՝ իրենց պատահելու բաները , ու
նաև դէմ գնելու և անոնք յաղթելու կերպը :
Եւ խնդիրին շաւտարիմ ալ հաճութիւն
ցուցուց . ուստի այսպէս սկսեց խօսիլ Եւե-
տարանիչ :

Եւետարանիչ . Ի՛մ որդեակներս , աւետարա-
նին ճշմարտութեան խօսքերուն մէջը լսած
էք՝ թէ դուք շատ նեղութիւններով պարտիք

* Ո՛վ երջանիկ խօսքերուս . որ կը քաջալերեն՝ կը
զգուշացունեն ու կը յորդորեն՝ հաւատքով հաս-
տատուն , յուսով խնդապատար , սրտերնուս վրայ
հսկող , ու Տէրոջը գործին մէջ՝ առատ ըլլալու : Եւ-
տոնց ամէնը միշտ հարկաւոր են ճամբորդներուն :
Վրիտտոսի հաւատարիմ պաշտօնեաները խրատ
կուտան , ու ճամբորդ Վրիստոնեաները անոր հա-
մար անոնց շնորհակալ կը ըլլան :

մտնալ երկնից Թագաւորութիւնը . և դարձեալ Թէ ամէն մէկ քաղքի մէջ կապանքներ ու նեղութիւններ կրսպասեն ձեզի : Ուստի չէք կրնար յոյս ունենալ Թէ սուանց այս ինչ կամ այն ինչ նեղութեան երկար ատեն ձեր ճամբան պիտի երթաք : Վուք արդէն ձեր վրայ զտաք աս վկայութիւններուն ճշմարտութեանը մէկ քանի փորձերը , և ուրիշներն ալ իսկոյն պիտի հետեւին : Վանդի՛ ինչպէս որ կրտեսնաք , դուք հիմայ աս անապատէս սեպէ Թէ դուրս ելած էք , ու հետեւապէս շուտով պիտի հասնիք մէկ քաղաք մը՝ որնոր շատ չանցած ձեր առջևը պիտի տեսնաք . և ան քաղքին մէջը չարաչար պիտի պաշարիք Թշնամիներով , որոնք սաստկագոյն Զանբեր պիտի ընեն ձեզ սպաննելու . ու անշուշտ գիտցէք որ մէկերնիդ կամ երկուքդ ալ ձեր բռնած վկայութիւնը արիւնով պիտի կնքէք * . բայց սա-

* Ս' այ անոնց որ ձեռքերնին կրկապեն , ու հաստատուն ապահովութեամբ կրքնանան : Արտեսնաք Թէ տակաւին ինչ դժուարին գործ կայ աս ճամբորդներուն առջևը : Պէտք է որ միշտ յիշինք Թէ ասիկա մեր հանգիստը չէ : Պարտինք մենք մեզ առաջ քշել , հաւատքին լաւ պատերազմը պատերազմիլ , Մստուծոյ ժողովրդոցը համար մնացած

կայն հաւատարիմ կեցէք մինչև 'ի մահ , ու
 Թագաւորը կենաց պսակը պիտի տայ ձեզի :
 Ան՝ որ հոն պիտի մեռնի , Թէպէտ և իր մահը
 բնական չըլլայ , ու իր քաշած տանջանքները
 գուցէ մեծ ըլլան , բայց ինքը իր ընկերէն
 լաւ պիտի ըլլայ՝ չէ Թէ միայն անոր համար՝
 որ ինքը մէկայէն շուտով պիտի հասնի երկ-
 նային քաղաքը , հապա անոր համար ալ՝ որ
 շատ Թշուառութիւններէ ազատ պիտի մնայ ,
 որոնց որ մէկայը իր մնացած ճամբուն մէջը
 պատահելու է : Իսկ երբոր քաղաքը երթաք ,
 և իմ աս տեղս ձեզի պատմածներս լցված
 գտնաք նէ , անատենը ձեր բարեկամը յիշե-
 ցէք , ու դուք ձեզ մարդու պէս բռնեցէք ,
 ու ձեր հողիներուն պահպանութիւնը բարե-
 գործութեամբ Աստուծոյ յանձնեցէք՝ իբրև
 հաւատարիմ Ատեղծողի մը :

Ասկից ետքը երազիս մէջը տեսայ՝ որ ա-
 նապատէն դուրս ելլելուն՝ իսկոյն իրենց առ-
 ջւը քաղաք մը տեսան : Բաղաքին անունը
 Ունայնութիւն էր , ու անոր մէջը տօնավաճառ

ան հանգիստը մտնալու ջանալ , զգուշութիւն ընե-
 լով՝ որ չըլլայ Թէ Աստուծոյ շնորհքէն յետնեալ
 գտնըվինք . Իբր . Ժմ . 15 :

մը կըլլար , որ կըկոչվէր Ունայնութեան Տօնավաճառ , ու բոլոր տարին կրտուէր * : Ասիկա Ունայնութեան Տօնավաճառ կըկոչվել՝ չէ թէ միայն Ունայնութեան քապքին մէջը ըլլալուն համար , հապա նաև հոն ծախված կամ հոն եկած բոլոր քաներն ալ ունայնու-

* Էնդինակը Ունայնութեան Տօնավաճառի պլաքանական ստորագրութիւնովը կընկարագրէ աս աշխարհս իր կախարդական որոգայթներովը՝ շողջարդիչ ծիծաղներովը՝ խաբէական հրապոյրներովը ու սպառնական խոտոռադիմութիւններովը : Ի՞ր աւագութիւնները՝ հարստութիւնները՝ հեշտութիւնները և ունայնութիւնները խիստ սքանչելի կերպարանքով գեղեցկազարգ պճնրված են , մեզ որսալու ու գերի ընելու : Ստանան՝ աս աշխարհիս աստուածը՝ անդադար կըթելադրէ մեզի ինքըզինքնիս զգալի հեշտութիւններու տալ , ու բոլորովին անոնցմով յագուրդ առնել : Աշխարհիս իշխանը փառաց Տէրոջը վրայ ևս յարձակեցաւ՝ երբոր աս տօնավաճառէն կանցներ ան , բայց բան մը չի գտաւ անոր վրայ : Ինչէ՛ր վեր բազմապատիկ ջանքեր ալ ըրաւ Վրիստոնեսայ անուն կրողներուն վրայ , ու խիստ շատ անգամ յաջողութիւն գտաւ : Բայց Ճշմարիտ Վրիստոնեսայ ճանապարհորդը պիտի կապողանայ հաւատքով յաղթելու : Երբայեցոց գրված թուղթին մետասաներորդ գլուխը շատ երեւելի օրինակներ կուտայ մեզի անոնց վրայով , որոնք ինքըզինքնին երկրի վրայ օտար ու պանդուխտ սեպեցին :

Թիւն ըլլալուն համար , ինչպէս որ իմաստունը կրսէ , Թէ՛ Մէն գալու բաները ունայնութիւն է . Սող . կտ . 10 : Եղ . Ժտ . 8 : Տէս . Կտ . 2—4 : Բ . 11—17 : Եր . 17 :

Աս տօնավաճառը նոր բացված բան չէ , հապա հին ատենէ 'ի վեր հաստատված բան մըն է : Վեզի անոր սկիզբը ցուցնեմ ես :

Հինգ հազար տարիի չափ առաջ աս երկու համեստ մարդոցը պէս ճամբորդներ կային երկնային քաղաքը ճանապարհորդող . ու Ռէ- եղզեբուղը՝ Վպողիոնը ու Լէգէոնը իրենց ընկերներուն հետ մէկ տեղ ան ճամբորդներուն ոտքին շաւիղէն իմանալով Թէ անոնց երկնային քաղաքը երթալու ճամբան աս Ունայնութեան քաղքին մէջէն կլինայ , աս տեղս տօնավաճառ մը հաստատել խորհեցան . տօնավաճառ մը՝ որուն մէջը ամէն տեսակ ունայնութիւնները ծախվի , ու բոլոր տարին տուէ : Ուստի աս տօնավաճառին մէջը ամէն աս կերպը ապրանքներ կրծախվին . ինչպէս՝ տուններ , կալուածքներ , արհեստներ , պաշտօններ , պատիւներ , իշխանութիւններ , պատուանուններ , երկիրներ , Թագաւորութիւններ , ցանկութիւններ , հաճութիւններ ,

և ամէն տեսակ բերկրութիւններ՝ ինչպէս պոռնիկներ՝ կնիկներ՝ երթիկներ՝ զաւակներ՝ տէրեր՝ ծառաներ՝ մարմիններ՝ հողիներ՝ կէ- նաց զըաւումներ՝ արիւնհեղութիւններ . ար- ծաթ ոսկի՝ մարգարիտ՝ անդամանդ քարեր , և ինչ ըսես որ չի ծախվիր հոն :

Ասոնցմէ ՚ի զատ աս տօնավաճառին մէջը ամէն ատեն կրտսնըվին ամէն տեսակը աչք կապողներ՝ խաբէբաներ՝ զըօսանքներ՝ խաղեր՝ ծաղրածուներ՝ խեղկատակներ՝ անզգամներ՝ սրիկաներ :

Կառ հոս մէկը աւանց ստակի կրնայ տես- նալ արիւն թափելու չարի գողութիւններ՝ սպաննութիւններ՝ շնութիւններ՝ սուտ երդում ընողներ :

Եւ ինչպէս որ ուրիշ պղտի տօնավաճառ- ներուն մէջը զանազան թաղեր կամ փողոցներ կան յատուկ անուններով՝ ուր որ այս ինչ և այն ինչ ապրանքը կըծախվի , ասանկ հոս ալ տո տօնավաճառին ապրանքները շուտով գտնը- ւելներ վե՛լու համար յատուկ տեղեր՝ թա- ղեր՝ փողոցներ կան : Ասոր մէջն է արտիստները Քրիստոմոսցւոց թաղը , Կաղղիա- ցւոց թաղը , Բոսլացւոց թաղը , Ապանիացւոց

Թաղը , Վերմանացւոց Թաղը * : ուր որ դա-
նազան ունայնութիւններ կրճախվին : Եւ
ինչպէս որ ուրիշ տօնապաճառներուն ամէն
մէկին մէջք մէյմէկ տեսակ տպրանք ուրիշնե-
րէն շատ կը բոնորի : ասանկ աս տօնապաճա-
ռիս մէջն ալ Հռովմայի տպրանքը և իր ա-
սուտութիւնը շատ յաջողակ է . միայն մեր Ընդ-
դիացւոց ազգը քանի մը ուրիշ ազգերու հետ
զգրւանք մը ունեցան իր տպրանքներուն վը-
րայ † :

* Պընիան որ Ընդդիացոց համար գրեց իր գիր-
քը , միայն այսչափ Թաղեր կը թուէ . բայց կար-
գացողը կրնայ ինքիրմէն էփելցունել նաև Նունաց
Թաղը , Տաճկաց Թաղը , Պարսկաց Թաղը , Բրա-
բացւոց Թաղը , Հայոց Թաղը , և Սուսաց Թաղը :

† Ըստիկա կընշանակէ Հռովմական եկեղեցիին
աւերարգապաշտութիւնները , որոնցմով մէկը իբրև
թէ փոխանակութեամբ առուտուրի կրմանայ Ըս-
տուծոյ հետ , կարծելով թէ փրկութեան համար
քանի մը ուխտեր ու դաշինքներ ընելովը երկինքը
մտնալու իրաւունքը ծախու կառնէ , իր բարեգոր-
ծութիւններովը երկինքը կըստանայ , ու բոլն իր
հնազանդութիւնովը արդարութիւնը կըգնէ . բայց
ճշմարտապէս ստիկա միայն իր ամբարտաւանու-
թիւնը կըբարձրացունէ , ու Վրիստոսի կատարած
գործը ու անոր փառքը կընուաստացունէ : Ըփսո՛վ
որ աս ամբարտաւան՝ ու Սուրբ Վիրքերէն դուրս
եղած կարծիքները մեծապէս տիրապետած են մէ-
ջերնիս :

Արդ՝ ինչպէս որ ըսի, երկնային քաղաքը երթալու ճամբան ճիշտ աս քաղաքին մէջէն կանցնի, ուր որ աս մեծ տօնավաճառը բաց ված է. և ան՝ որ հոն երթալ կուզէ ու աս քաղաքէն չանցնիր, հարկաւ աշխարհէն դուրս ելլալու է. Թ. Արք. Բ. 10 : Իշխաններուն Իշխանը հոս եղած ատենը աս քաղաքին մէջէն անցաւ գնաց իր երկիրը, և ան ալ տօնավաճառի օր մը : Եւ ինչպէս որ կրկարծեմ, իհեղգեբուղը՝ աս քաղաքին գլխաւոր իշխանը զինքը հրաւիրեց իր ունայնութիւններէն ծախու առնելու, մանսւանդ թէ տօնավաճառին իշխանը ուզեց ընել զանիկա՝ թէ որ քաղաքէն անցած ատենը պատուէ նէ զինքը : Եւ մանսւանդ անիկա ասանկ պատուաւոր մէկը ըլլալուն համար՝ իհեղգեբուղ փողոցէ փողոց պըտըտցուց զինքը, ու քիչ մը ատենին մէջը աշխարհի բոլոր թագաւորութիւնը ցուցուց անոր՝ որ եթէ հնար է նէ հրապուրէ ան օրհնեալ անձը որ նայի՝ ու իր ունայնութիւններէն քիչ մը բան ծախու առնէ : Իայց անիկա ան ապրանքներուն վրայ միտք չունենալով՝ աս ունայնութիւններուն մինչև անգամ ստակ մը չի տըւած ձգեց քաղաքը գնաց. Սարք. Գ. 1—8 : Գլ. 1.

Լսոնք ՚ի բնէ Վանանի լեզուն կրխօսէին * : բայց տօնավաճառին ժողովուրդըր աս աշխարհիս մարդիկներն էին : Ուստի տօնավաճառին մէկ ծարէն մինչև մէկալը ասոնք անոնց և անոնք ասոնց Վարբարոս կը թըւէին . ան . կրի . ք . 7 , 8 :

Երրորդ՝ Բայց վաճառականները մեծապէս խայտառակ ընողը ան էր՝ որ աս ճամբորդները ամենեւին բանի տեղ չի սեպտցին անոնց ապրանքները : Սինչև անգամ անոնց վրայ նայելն ալ հոգերնին չըրին . ու թէ որ կանչը վէին բան մը ծախու առնելու , ասոնք իրենց մատերը ականջներնուն դնելով կրկանչէին , Վարձուր իմ աչքերս որ ունայնութիւնը չի տեսնամ . Սուլ . ճժժ . 37 . ու դէպի վեր նայելով կրսէին թէ իրենց տուրևաւը ու վաճառքը երկինքն է † . Փիլ . 7 . 20 , 21 :

* Վանան օրինակ էր երկնից . ու Վանանի լեզուն կրնշանակէ բարեպաշտ խօսակցութիւններ :

† Իրեք բան կայ՝ որ աշխարհս չի կրնար տանիլ Վրիստոնէի մը վրայ տեսնալ : Սէյմը՝ անոր հագուստը . այսինքն՝ Վրիստոսի արդարութիւնովը արդարանալու իր դաւանութիւնը : Արկորդ՝ իր լեզուն . այսինքն՝ ինչ որ ինքը կրնայ խօսիլ ան մեծամեծ բաներուն վրայ որ Լստուած իր հոգիին համար ըրաւ : Արրորդ՝ իր խորութիւնը՝ ինտոր որ

Մէկն ալ աս մարդոցը ընթացքը տեսնալով դէմերնին ելաւ ու ծաղրաբանութեամբ իրենց կըզուցէր . Ի՞նչ կուզէք գնել : Բայց անոնք ծանրութեամբ անոր վրայ նայելով ըսին . Սենք ճշմարտութիւն կըզնենք * . Եւ

անոնք կըկոչեն , այսինքն՝ անոնց սնտոի ու մեղանշական գործոցը չի խառնելու : Եւ պատճառովս հաւատացեալները թէ որ իրենց դաւանութեանը մէջ հաստատ ու շիտակ կենան , զարմանքի ու ծիծաղի ենթակայ են . և մանաւանդ անողորմաբար քամահրելու , ու երբեմն ծեծվելու՝ բանտարգրվելու՝ արքորվելու՝ և մինչև անգամ սպաննելու պարտին ակնունենալ :

* Ի՞նչ եօրանշան պատասխանի է աս . ի՞նչ կուզեն նշանակել ասով : Կուզեն նշանակել թէ իրենք ոչ կըվախնան ու ոչ կամշնան խոստովանելու իրենց հոգիներուն փնտրուած ան մի միայն առարկան , այսինքն ճշմարտութիւնը : Ետով իմացիր թէ բոլոր աշխարհ որ չարութեան մէջ է , ստուծութիւնով կըխաբվի , ու սուտերուն հօրը խաբէութեանը ենթակայ եղած է : Եւ որ հակառակ բոլոր Վրիստոսի հաւատացողները կըսվին թէ ճշմարտութեան են . Թ . 19 : Կիտեն ու կը հաւատան ան մեծ ճշմարտութեանը՝ որն որ Եւստուած երկինքէն խօսեցաւ , թէ՛ “Մտիկա է իմ սիրական Արդիս , որ իրեն հաւենք եմ” . Սաղմ . 17 : Իրենց բոլոր յոյսերուն հիմը աս ճշմարտութիւնն է , թէ Եիսուս Եստուծոյ Արդին է , ու մեր մի միայն վրկիչն է . ու իրենց փնտրուած մեծ

Կ. Իճ. 23 : Ըսիկա պատճառ մը եղաւ , ու սկսեցին ես առաւել նախատել ան մարդիկը . ոմանք ծաղր կընէին , ոմանք կըքամահարէին , ոմանք նախատանքով կըխօսէին , և ոմանք ուրիշներուն կըկանչէին որ ծեծ տան անոնց : Ա երջապէս տօնավաճառին մէջը բանը աղմուկի և մեծ խռովութեան դարձաւ , մինչև որ բոլոր կարգը խանգարեցաւ :

Ըս միջոցիս տօնավաճառին իշխանին իսկոյն լուր եկաւ , ու ինքը շուտով իջաւ՝ և իր խիստ հաւատարիմ բարեկամներէն քանի մը հոգի որոշեց որ աս մարդիկը բռնեն ու քննութիւն ընեն անոնց վրայ , որոնց պատճառովը տօնավաճառը գրեթէ տակնու վրայ եղած էր : Աւստի քննութեան բերվեցան մարդիկը , ու դատաւորները հարցուցին թէ ո՛ւրկից եկան , ո՛ւր կերթային , ու ի՛նչ կընեն անտեղը ասանկ

առարկան առաւել քան զառաւել անոր ծանօթանալն է , որն որ կըջանան ձեռք ձգել աշխատութեամբ՝ ջանքով ու ծախքով , բոլոր ուրիշ բերկրութիւնները ու հեշտութիւնները ուրանալով : Ըսոր համար աշխարհ կատէ զանոնք . ու Սատանան՝ որ թշնամի է աս ճշմարտութեանս , աշխարհ անոնց դէմը կըյարուցանէ . ինչու որ Վրիստոսի Տեառն մերոյ ըսածին պէս՝ անոնք “Ըս աշխարհէն չեն , ինտոր որ ես ալ աշխարհէ չեմ” . (Յոհ. ԺԷ. 16 ,

անսովոր հագուստով : Մարդիկն ալ անոնց ըսին՝ Թէ իրենք աշխարհի մէջ օտար և պանդուխտ են , ու կերթանկոր իրենց բուն երկիրը՝ որ էր երկնաւոր Լըրուսաղէմը . Լըբ . ԺԹ . 13—16 : Եւ Թէ՛ իրենք ո՛չ քաղաքին մարզոցը և ո՛չ վաճառականներուն պատճառ մը տըւած են ասանկ բռնաբարել զիրենք և իրենց ճամբայէն արզիլել , միայն Թէ ան կրնայ ըլլալ պատճառը որ երբ մէկը հարցուց իրենց Թէ ի՞նչ պիտի զնեն , իրենք պատասխան տըւին Թէ ճշմարտութիւն պիտի զնեն : Բայց անոնք որ զիրենք քննելու դրված էին , չէին հաւատար Թէ ուրիշ բան ըլլան անոնք՝ այլ խենթեր ու խելաւներ * , հապա Թէ չէ՛ Թէ տօնա

* Թէ որ բան մը չունինք վրանիս որ որոշէ մեզ աշխարհիս մէջի մնացածներէն որ չարութեան մէջ են , ու ան պատճառովը կատեն ու կանարգեն մեզ , չունինք պատճառ հաստատելու Թէ մենք Վրիստոս ճիսուսով նոր արարած եղած ենք : Թէ որ մենք Վրիստոսինն ենք՝ Վրիստոսի համար պարտինք յիմար ըլլալ ու խելացնոր համարվիլ անոնցմէ որ չեն ճանչնար զՎրիստոս . քանզի Թէ որ կենդանի ենք Վրիստոսի համար , պիտի խաչվինք աշխարհի համար : «Վ այ ձեզի, երբոր ձեր վրայովը աղէկ ըսեն բոլոր մարդիկ՝ ըսաւ Վրիստոս . Վ յ—ի . Գ . 26 :

վաճառին մէջը ամէն բան տակնուվայ ընելու համար եկած մարդիկ : Ուստի բռնեցին ծեծեցին անոնք՝ ու ցեխով պըլըշտըկեցին , ու ետքը վանդակապատ բռնտի մը մէջ գըլին , որպէս զի տօնավաճառին բոլոր մարդոցը խայտառակ ըլլան :

Լ՛րդ՝ ատեն մը հոն մնացին անոնք , ու ո՛ր իցէ մարդու ծաղրաբանութեանը՝ չարութեանը և վրէժխնդրութեանը ենթակայ եղան . մինչև անգամ տօնավաճառին իշխանն ալ բոլոր իրենց պատասխածներուն վրայ կըխնդար : Իայց մարդիկը համբերութիւն ընելով , ու բամբասանքի տեղ չի բամբասելով՝ հապա աւոր հակառակը օրհնելով , ու գէշ խօսքերուն դէմ բարի խօսելով , ու եղած վնասներուն տեղը մարդասիրութիւն ցուցընելով , տօնավաճառին մէջէն քանի մը հողի՝ որոնք մնացածներէն էվելի խոհական և անոնցմէ պակաս նախապաշարեալ էին , սկսեցին չեխել և մեղադրել ան ցած տեսակին մարդիկը իրենց ան մարդոցը ըրած անընդհատ բռնաբարութեանը համար * : Ուստի մէկալները սրտմտութեամբ

* Լ՛շխարհս սովորաբար տարբեր կարծիքներ ունի ճամբորդ Վրիստոնեաներուն վրայ : Վրիս-

անոնց վրայ յարձակեցան՝ բանտարգեալներուն նման գէշ մարդիկ սեպելով զանոնք, և ըսելով թէ մէկտըներուն դաշնակիցները կերևան կոր, և անոնց դժբաղդութեանը մասնակից պիտի ըլլան :

Պատասխան տըւին անոնք՝ թէ իրենց գիտցածին նայելով, անոնք հանդարտ և պարկեշտ մարդիկ էին, ու մէկու մը վնասելու միտք չունէին. և իրենց տօնավաճառին մէջը առուտուր ընողներէն շատերը կային՝ որ առաւել ևս արժանաւոր էին բանտարգրվելու, քան թէ ան իրենց բռնաբարտած մարդիկը : Նսանկ՝ շատ կերպ խօսքեր անցնէին ետքը իրենց մէջը՝ (որ ատեն բանտարգեալները շատ իմաստութեամբ և պարկեշտութեամբ բռներ էին ինքրզնքնին անոնց առջին,) սկսեցին ծեծկրվել իրարու հետ, և մէկըմէկու վնասեցին :

տոնէին վարքը ու կենցաղավարութիւնը քանի մը շարագործ մարդոց ծաղրաբանութիւնները կը պապանձեցունէ, ու երբեմն անոնցմէ մէկ քանիները կը շահի որ Վրիթտոսի կը հետեւին : Վ՛վ ճամբորդներ՝ զգուշացէք ձեր կեանքին՝ ձեր բնաւորութեանը ու վարքին որ կը ցուցնէք աշխարհիս մարդոցը, որոնք բոլոր տարին Սենայնութեան Տօնավաճառը բաց կը պահեն :

Հիմայ աս երկու խեղճ մարդիկը նորէն իրենց քննիչներուն առջևը բերվեցան, ու հոն ամբաստանվեցան՝ թէ տօնավաճառին մէջը եղած վերջին աղմուկը իրենք յարուցած են : Եւ յսպէս՝ չարաչար ծեծ քաշեցին անոնց, ու շղթաներով կսպեցին և տօնավաճառին մէջը վեր ու վար պըտըտցուցին ուրիշներուն օրինակ և վախ ըլլալու համար, որ չըլլայ թէ ումանք անոնց կողմանէ խօսին՝ կամ ինքըզինքնին անոնց յարեն : Սակայն և այնպէս Վըրիստիանոսը ու Հաւատարիմը հվելի իմաստութեամբ բռնեցին ինքըզինքնին, ու իրենց վրայ ձգված նախատինքը ու խայտառակութիւնը անանկ հեղութեամբ ու համբերութեամբ ընդունեցին, որ տօնավաճառին մէջ մարդոց մէն խել մը հոգի իրենց կողմին շահեցան, (թէպէտ և մնացածներուն հետը բաղդատելով քիչ էին անոնք :) Եւ բանս մէկալ կողմը առաւել ևս բարկութեան մէջ ձգեց. մինչև որ աս երկու մարդիկը սպաննել վճռեցին անոնք : Սատի սպառնալիք մը հանեցին՝ թէ ոչ բանտը և ոչ շղթաները հերիք են անոնց. հապա իրենց ըրած զրկանքին համար ու տօնավաճառին մարդիկը խաբէլնուն համար պարտին մեռնիլ :

Անտենը նորէն բանտը խրկըվեցան մինչև որ բանը աղէկ մը որոշվի : Աւատի ներս գրին զանոնք՝ և կոճեղներու մէջ ամուր մը պնդեցին :

Արդ՝ անոնք աս տեղս իրենց հաւատարիմ բարեկամէն Վետարանիչէն լսածնին նորէն միտքերնին բերին , ու իրենց պատահելու բաներուն վրայով անոր առաջուց զրուցածներովը էվելօք հաստատեցան իրենց բռնած ճամբուն ու քաշած նեղութիւններուն մէջ : Հիմայ սկսեցին իրար միտքարեւ ևս՝ Թէ որոն վիճակին իյնայ նէ մեռնիլ , ինքը պիտի ունենայ լաւագոյն մասը : Իւրաքանչիւրը գաղտուկ կը բաղձար՝ Թէ ինքը ունենայ ան պատիւը : Իայց սակայն ինքըզինքնին ամէն բաները կարգադրողին ամենիմաստ տնօրէնութեանը յանձնելով , մեծապէս գոհութեամբ մնացին իրենց եղած վիճակին մէջ , մինչև որ ուրիշ կերպով բանը որոշվի :

Գանք որ յարմար ատեն մը որոշված ըլլալով դուրս հանեցին զանոնք իրենց դատը տեսնալու , ու անոնք դատապարտելու : Երբոր ժամանակը հասաւ՝ Թշնամիներուն առջևը բերվեցան և ամբաստանվեցան : Վատաւորին

անունը էր՝ Իշխան Բարիատեաց : Իրենց վրայ եղած ամբաստանութեան գիրերը իրօք մի և նոյն էին , թէպէտ և քիչ մը տարբեր էին ձևով : Եւսիկա՛ էր ան գիրերուն մէջը պարունակվածը : «Եւ մարդիկը առուստուրին թշնամին ու խանգարիչն են . քաղաքին մէջը աղմուկ ու երկպառակութիւն ձգեցին , ու իրենց ամենավնասակար կարծիքներուն դարձուցին ժողովուրդին մէկ մասը՝ մեր թագաւորին օրինացը անարգութիւն ընելու համար» * :

Եւնատենը Հաւատարիմ սկսեց պատասխան տալ , թէ ինքը միայն ան բանին դէմ հակառակ կեցաւ՝ որ ինքըզինքը խիստ բարձրերէն բարձրագոյն եղողին դէմ հակառակ դրեր էր : Ու ան՝ որ աղմուկ յարուցանելու վրայ կրխօսիք , ես ատանկ բան չեմ ընէր՝ ը-

* Եկեղեցիին հաստատութենէն՝ ի վեր ամէն դարերու մէջ հալածանք որ ըլլայ՝ աս պատճառանքը կրգործածվի : Վրիստոնէութեան անաջին քարոզիչներուն վրայ դրված ամբաստանութիւնը էր՝ Եւսոնք են ան մարդիկը որ աշխարհս տակնուվրայ ըրին : Եւնէն դարերու մէջ բարի մարդիկ չարախօսութիւն կրելով կոչվեցան խռովարարներ , ապստամբներ , ընկերութեան խանգարիչներ , ու կայսրին թշնամիներ : Եկեղեցական պատմութեան մէջ շատ սասնկ օրինակներ կրգտնանք :

ուսւ , բուն ինքս խաղաղասէր մարդ ըլլալով :
 Ու անոնք որ մեր կողմը դարձան , մեր ճշմարտութիւնը ու անմեղութիւնը տեսնալով դարձան . որոնք միայն չարագոյնէն լաւագոյնի դարձած են : Ու ան՝ որ Թագաւորին վրայ կը խօսիք , որովհետեւ ինքը Բէհիզէբուղն է մեր Տէրօջը Թշնամին , ես բանի տեղ չեմ համարիր ո՛չ զինքը և ո՛չ բոլոր իր հրեշտակները :

Ընտանեւ մունետիկ մը ելլաւ Թէ անոնք որ ատենանը կայնող բանտարգեալին դէմ իրենց տէրօջը Թագաւորին կողմանէ բան մը ըսելիք ունին նէ իսկոյն երեւան ելլան , ու իրենց վկայութիւնը տան : Ուստի իրեք հատ վկաներ ներս մտան , այսինքն՝ Նախանձոտը Մնայաչտը ու Մարդահաճոյն : Հիմայ հարցը վեցաւ ասոնց՝ Թէ արդեօք ատենանը կայնող բանտարգեալը կրճանջնա՞ն մի , ու անոր դէմ ի՞նչ ըսելիք ունին իրենց տէրօջը Թագաւորին կողմանէ :

Ըն ժամանակը նախանձոտը առաջ եկաւ ու ասանկ սկսեց խօսիլ . Տէր իմ , ես ան մտքդը շատ ատենէ ՚ի վեր կրճանջնամ , ու աս արդարակորով ատենանին առջևը երդումով կրվկայեմ , Թէ ինքը

Վարդապետ . կեցիր—երդում ընել տըւէք իւրեն :

Ուստի երդում ընել տըւին իրեն , և ետքը ըսաւ . Տէր իմ , աս մարդը՝ թէ և ըստ երևուածին գովելի անուն մը ունի , մեր երկրին մէջը ամէնէն անարգ մէկն է . ինքը ո՛չ թագաւորը ու ո՛չ ժողովուրդը՝ ո՛չ օրէնքը ու ո՛չ սովորուածիւնը կըսեպէ , հապա բոլոր կըցածը կընէ որ ամէն մարդիկ իր մէկ քանի անիրաւ գաղափարներուն դարձունէ , որոնք ինքը ընդհանրապէս հաւատոյ և սրբութեան սկզբունքներ կըկոչէ : Աւ յատկապէս ես ինքնս անգամ մը իրմէն լսեցի որ կըհաստատէր՝ թէ Բարիստունէութիւնը ու մեր Ունայնութեան քաղքին սովորութիւնները ամենեւին հակառակ են իրարու , ու չեն կրնար միաբանիլ : Աս ըսելով տէր իմ , ինքը չէ թէ միայն մեր գովանի գործքերը մէկէն կըդատապարտէ , հապա մեզ ալ որ անոնք կըգործենք :

Հիմայ դատաւորը ըսաւ անոր . Ուրիշ բան մ'ալ ունի՞ս ըսելու :

Նոյնիպէս . Տէր իմ , շատ բաներ ալ կըրնայի ըսել , միայն թէ ատեանին ձանձրութիւն տալ չեմ ուզեր : Բայց թէ որ հարկաւորի՞

մէկալ պարոնները իրենց վկայութիւնը տալէն ետքը ասոր կեանքը վերցունելու համար բան մը պակաս չի մնալու համար ես իրեն հակառակ իմ ունեցած վկայութիւնս կը շարունակեմ : Եւսպէս հրաման եղաւ իրեն որ մէկդի կանգնի * :

Ընտանիքը յնապաշտը կանչեցին , ու ըսին իրեն որ ատեանը կայնող բանտարգետինն վրայ նայի : Հարցուցին ևս թէ ինչ կրնայ զրուցել անոր դէմ՝ իրենց տէրօջը թագաւորին կողմանէ : Ետքը երդում ընել տրւին իրեն . ու ասանկ ինքը սկսեց :

Ստուգար . Տէր իմ , ես աղէկ մը ծանօթու-

* Եւստանձութիւնը Սատանային յատուկ բնաւորութիւնն է : Բնական է ան մեզի ամէնուս ալ : Բայց աս աշխարհիս որդիքը Եստուծոյ որդոցը վայլած՝ հոգևոր բարիքներուն օտար ըլլալով՝ ինչո՞ւ համար պիտի նախանձին անոնց վրայ : Իրենք ոչ կուզեն ան բաները՝ ոչ ալ հոգ կրտանին անոնց համար , հապա ծաղը կընեն ու կարհամարհեն զանոնք : Եսով յայտնի է Սատանային բուն իսկ ոգին ու բնաւորութիւնը : Ինքը նախանձեցաւ Քրիստոսի վրայ՝ անոր Եստուծոյ Արդին ըլլալուն համար . ինքը գրգռեց Յուդան՝ մատնել զանիկա . Հրէաները նախանձութեան համար մատնեցին զանիկա . Սաղ. իէ. 18 . ու նոյն իսկ ոգին է որ Սատանայի բոլոր որդիքը Եստուծոյ որդոցը դէմ կը գրգռէ :

Թիւն չունիմ աս մարդուն հետ, ոչ ալ կրփա-
 փաքիմ ասկից էվել ճանչնալ զինքը . սակայն
 անցեալ օր իր հետը քանի մը բան խօսելէս
 աս գիտեմ՝ որ ինքը շատ անօրէն մէկն է .
 քանզի ան օրը իր հետը խօսելով լսեցի իրմէն
 որ կըսէր՝ Թէ մեր կրօնքը ոչինչ է, ու անանկ
 կրօնք մըն է որով մէկ մարդ մը ամենւին չի
 կրնար հաճոյանալ Մտուծոյ: Չեր տէրու-
 Թիւնը աղէկ գիտէ՝ տէր իմ, Թէ աս իր զրու-
 ցածէն հարկաւ ինչ կըհետևի. այսինքն՝ Թէ
 մենք տակաւին ոչինչ բան կըպաշտենք, ու
 տակաւին մեր մեղքերուն մէջն ենք, և վեր-
 ջապէս պիտի դատապարտուինք: Եւ աս
 ասիկա է իմ լսելէքս * :

* ՍնապաշտուԹիւնը կամ սուտ բարեպաշտու-
 Թիւնը դառնագոյն Թշնամի է Վրիստոսի ճշմար-
 տուԹիւններուն ու անոր աշակերտներուն: Սնա-
 պաշտին վկայուԹիւնը մէկ կողմանէ խիստ ճշմարիտ
 է. քանզի՝ ինտոր որ օրինականները Վրիստոսի
 վարդապետուԹեանը վրայ ըսին՝ «Սնապաշտ՝ ատ
 խօսքերը զուրցելով մեզ ալ վար կըզարնեսկոր,
 Վրի . Ժն . 45, ասանկ ալ սուտ բարեպաշտները
 որոնք ծէսերու՝ արարողուԹիւններու ու ստուե-
 րական բաներու վրայ հաստատված են, ոգով չափ
 կըվիրաւորին անոնց վրայ որոնք հոգիով կըպաշ-
 տեն զՄտուած, կըպարծենան Վրիստոս Հի-
 տուտով, ու մարմինով չեն պարծիր. Վրիէպ . ք . 3 :

Լսկէ ետքը Սարդահաճոյին երդում ընել տրւին , ու հրամեցին որ ատենանը կայնող բանտարգեալին դէմ իրենց տէլոջը Թագաւորին կողմանէ ինչ գիտէ նէ խօսի :

Սարդահաճոյ . Տէր իմ , և դուք ո՞վ ամէն պարոններդ , ես շատ ատենէ 'ի վեր աս թըշուառականը գիտեմ . ու անանկ բաներ լսեցի իրմէն խօսիլ , որ արժան չէ խօսելու : Բանզի ինքը մեր վեհափառ Թագաւորը Բէեղղեբուղը ծաղը կընէր , և նախատանքով կըխօսէր անոր արժանապատիւ բարեկամներուն վրայ , որոնց անուններն են՝ Իշխան շին Սեղէ-
 Սարգ , Իշխան Սարմնաւոր շաբուն պոր-
 Ճութիւն , Իշխան շեշտասէր , Իշխան
 խան Սնափառութիւն Սիրող , Իշխան
 խան Զանկասէր , Իշխան Բագահութիւն , բոլոր
 մեր ազնուականներուն մնացածներովը . ու ըստ
 աւ ևս՝ որ եթէ կարելի ըլլար թէ ամէն մարդիկ
 իր միտքը ունենային , անատենը աս ազնուականներուն
 մէկը չի պիտի մնար քաղբին

Ըսանկ վարքը անհնարին նախատինք կըթափէ մարմնաւոր մարդոց բոլոր պաշտամունքներուն՝ վարդապետութիւններուն ու սնապաշտութիւններուն վրայ :

մէջը : Լսկից 'ի զատ չի վախցաւ ձեզ ալ կշտամբել՝ տէր իմ, որ հիմայ իրեն դատաւոր կարգը ված էք, ամբարիշտ սրիկայ մը կոչելով ձեզ հանդերձ ուրիշ մուրեր քսելով վըրանիդ՝ որով կը պըլըշտը կէր նաև քաղաքին ազնուականներէն շատերը * :

Երբոր աս մարդահաճոյն իր պատմութիւնը լըմընցուց՝ դատաւորը իր խօսքը ատեանը կայնող բանտարգետալին դարձուց՝ ըսելով . Ո՛վ ուրացող՝ հերետիկոս՝ ու քու տէրօջը դէմ մատնութիւն ընող, լսեցի՛ր թէ աս արժանահաւատ պարոնները ինչ կը վկայեն քու վըրայովը :

* Ողորմելի մեղաւորը իսկոյն որ կըսէ, թէ՛ «Տէր՝ քեզմէ զատ ուրիշ մէկը չեմ գիտեր, ու քու անունդ կը գաւանիմ», Լուս. ից. 13. աշխարհիս կամակատար Սարդահաճոյները միշտ պատրաստ են անոր դէմը վկայելու թէ աշխարհիս իշխանին դէմ կը խօսի աս մարդը : Եւ ասիկա բարի վկայութիւն մըն է . անիկա՛ ստանալու համար ապրելու՝ ու անոր պատճառովը մեռնելու արժանաւոր բան մըն է : Թե որ մենք Վրիստոսի ճշմարիտ աշակերտներն ենք, պարտինք իրեն պէս վկայութիւն տալ աշխարհիս համար՝ թէ՛ անոր գործքերը չար են, ու աշխարհ իրեն պատճառովը պիտի ատէ մեզ . 304. է. 7 :

ուսածային հաւատք չի կրնար ըլլալ : Ուստի Վստուածային պաշտամունքին մէջը ինչ որ կը խօթվի՝ որ համաձայն չէ Վստուածային յայտնութեանը, ուրիշ կերպով չի կրնար ըլլալ՝ բայց եթէ մարդկային հաւատքով, որն որ չի կրնար օգտակար ըլլալ յաւիտենական կենաց :

Երբորդ՝ պարոն Սարգահաճոյին ըսածին վրայով կըսեմ թէ, (ձգելով սն խօսքերը որ ըսվեցաւ թէ ծաղը ըրերեմ և անոր նման բաներ,) սա քաղաքին թագաւորը բոլոր իր խառնիճաղանճ ամբոխովը՝ իր պաշտօնեաններովը՝ որոնց անուննին տրւաւ սա պարոնը, էվելլօք կը յարմարին դժոխքը բնակելու քան թէ սա քաղաքին ու երկրին մէջը : Եւ արդ՝ Տէրը ողորմութիւն ընէ իմ վրաս * :

Ընատեն դատաւորը Շուրիին † դարձուց

* Ըսիկա է Վրիստոնէին պատասխանատուութիւնը ու առ Վստուած ապաւինութիւնը : Երբոր ինքը գիտէ թէ ամբարիշտներուն աղիքը անողորմ են, Վստ. Ժբ. 10. գիտէ ևս թէ Վստուծոյ ամենողորմ մարդասիրութիւնը մեծ է, ու Տէրօջը ճշմարտութիւնը յաւիտեան կըմնայ. Սաղ. ճԺԷ. 1 :

† Շուրի Jury կընշանակէ տասներկու եգուսեալ դատաւորներ՝ որոնք ատեանը կայնած մտիկ կընեն յանցաւորին դատաստանը, ու վերջը իրենք

կրակոտ փուռը պիտի ձգվի • Վան. ք. 6 : Ուրիշ կանոն մ'ալ Տիւրոսի օրովը եղաւ որ ո՛վ որ ատեն մը իրմէն զատ ուրիշ Լստուծոյ մը պաշտօն մատուցանէ նէ , առիւծներուն գուբը պիտի ձգվի • Վան. ք. 7 : Ըիմայ աս ապստամբը աս օրէնքներուն իսկութիւնը կոտորեց՝ չէ թէ միայն մտքով որ անտանելի բան է , հապանակ խօսքով ու գործքով ալ , որ հարկաւ անտանելի բան պիտի ըլլայ : Քարաւոնին օրէնքը չարիքը արգիլելու մտօք եղած էր՝ որ ատեն տակաւին չարիք մը երևան չէր ելած , բայց հոս չարիքը երևան ելած է : Երկրորդին ու երրորդին վրայով՝ կրտսնաք որ ինքը մեր կրօնքին դէմ կը հակառակի • ու Թագաւորին դէմ գործած իր յանցանքին համար՝ որնոր ինքը խոստովանեցաւ , մահու մեռնելու արժանաւոր է :

Ընտանեկանները դուրս ելան , որոնց անուններն էին՝ Պարոն Կոյր , Պ . Ընպիւտան , Պ . Չարասէր , Պ . Զանկասէր , Պ . Զոփակեաց , Պ . Կամակոր , Պ . Բարձրամիտ , Պ . Իշնամի , Պ . Ստախօս , Պ . Ընգթութիւն , Պ . Նուսատեաց , և Պ . Ընհաշտեղի • որոնց ամէն մէկը իրենց մէջը իր ա-

հետը միաբանիլ . ուստի եկէք շուտով մահապարտ հանենք զանիկա :

Բսածնուն պէս ըրին . ու հետեւապէս իր դատապարտութեան վճիռը խօսոյն ելաւ՝ թէ իր կեցած տեղէն իր եկած տեղը տարվի , ու հոն ինչպէս խիստ անողորմ մահ մը կրնայ հնարվիլ նէ անով կատարվի :

Ուստի դուրս հանեցին զինքը որ իրենց օրէնքին հրամայածին պէս ընեն իրեն . և առաջ ծեծեցին զինքը , ետքը ապտակեցին , անկէ ետեւ դանակներով իր միսը խոցոտեցին , ետքը քարերով քարկոծեցին , վերջը իրենց թուրերովը ծակծրկեցին , ու ամէնէն ետքը ցիցին վրայ երեցին մոխիր ըրին զինքը : Ահա ասանկ հասաւ Հաւատարիմը իր վախճանին * :

Հիմայ տեսայ՝ որ ժողովրդոց բազմութեանը

* Ի՞նչ որ մէկը Վրիստոս Հիսուսով աստուածապաշտ կեանք մը վարէ , պարտի հալածանք կրել , ու թշնամիին չարութեանը մեր վրայ ըրածին համբերութեամբ տանիլ : Անգութիւնը փառքին ճամբան է : Ի՞նչ որ Վրիստոսի հետ թագաւորել կուզենք , պարտինք իր հետը խայտառակութիւն ու նախատինք քաշել , և մինչև անգամ՝ թէ որ վախճանուս իյնայ՝ մահ ալ ճաշակել :

ետեւը մէկ կառք մը և զոյդ մը ձի կայնած
 Հաւատարիմին կրսպասէին , որ (իր թշնամի-
 ները զինքը սպաննածին պէս) անոր մէջը
 յափշտակվեցաւ ու փողերու ձայներով ամ-
 պերուն մէջէն իսկոյն վեր տարվեցաւ երկին-
 քին դրանը խիստ մօտ ճամբովը : Բայց Վը-
 ռիստիանոսին քիչ մը թոյլտուութիւն ըլլալով
 նորէն բանտը դրվեցաւ , ու ատեն մը հոն մը-
 նաց : Բայց ան՝ որ ամէն բաները կրկառավա-
 րէ , անոնց բարկութեան զօրութիւնը իր ձեռ-
 քը ըլլալով անանկ կարգի դրաւ , որ Վրիս-
 տիանոս ան անգամին անոնց ձեռքէն փախաւ
 ու իր ճամբան գնաց * : Աւ երբոր կերթար՝
 կերգէր ըսելով ,

Ո՛վ Հաւատարիմ՝ նահատակ ընտիր ,
 Որ հաւատարիմ Տեառնըդ մընացիր՝
 Ի՞ր սուրբ անունը խոստովանելով ,
 Ի՞ր օրհնութիւնը պիտ' առնես՝ գիտցիր :

* Սխիթարական խորհուրդ մըն է աս : Վործը
 Տէրօջն է , ու ինքը կարող է իր ծառաները պահ-
 պանել , ու անոնց ազատութեանը ճամբայ մը հը-
 նարել : Ինքը մէկ քանիները կրկանչէ նեղութիւն
 կրելու պատիւը ունենալ , ուրիշները նոյն նեղու-
 թիւններէն կազատէ . և թէպէտ անոնց թշնամի-
 ները կրկուռին ու կրկատղին , բայց չեն կրնար
 յաղթել անոնց :

Երբոր բովանդակ անհաւասները
Իրենց սնտոի փափաքներովը
Պիտի լան՝ հեծեն՝ գողան ու գողեն ,
Տարտարոսական վիճակին մէջը :

Բ՛վ Հաւատարիմ՝ ծափաձայն ցնծա՛ ,
Ու քու անունըդ թող անմահանա՛ .
Օ՛, ի թէպէտ անոնք քեզ սպաննեցին ,
Եւլ գուն տակաւին ողջ ես աներկբայ :

Գանք որ երազիս մէջը տեսայ՝ թէ Վրիս-
տիանոս մինակ չէր երթար իր ճամբան . քան-
զէ մէկը կար Յուսալից անունով՝ որ (տօնավա-
ճառին մէջը Վրիստիանոսին ու Հաւատարի-
մին քաջած նեղութիւններուն ատենը անոնց
խօսքերը ու կենցաղավարութիւնը տեսնալով՝
քաջալերութիւն առած) ինքրդինքը անոր յա-
րեց , ու եղբայրական ուխտի մը մտնալով ա-
նոր հետը՝ ըսաւ իրեն թէ կրկամի ընկերանալ
իրեն * : Եւ յապէս մէկը մեռաւ ճշմարտու-
թեան համար վկայութիւն ընելու , ու անոր
մոխիրէն մէկ ուրիշը ելաւ Վրիստիանոսին ըն-
կեր ըլլալու իր ճամբորդութեանը մէջ : Եւ
Յուսալիցը ըսաւ ևս Վրիստիանոսին՝ թէ տօ-
նավաճառին մարդիկներէն շատ ուրիշներն ալ

* Սարտիրոսներուն արիւնը Լկեղեցիին սերմն է :

կան որ ատենին անոնք ալ իրենց ետևէն պիտի գան :

Այսպէս տեսայ որ ասոնք տօնավաճառէն դուրս ելլալուն պէս իսկոյն մէկու մը հասան որ իրենց առջևէն կերթարկոր , ու ինքը կը կոչվէր Օ՛ռուսիրտ * : Ուստի ըսին իրեն՝ Ո՞ր տեղացի ես՝ պատճառ , ու մինչև ո՞ր պիտի երթաս աս ճամբայէն : Պատասխան տրուաւ մարդը՝ թէ ինքը Գեղեցկախօսութեան քաղաքէն ելաւ ու Երկնային Վաղաքը կերթակոր , բայց իր անունը չըսաւ անոնց :

Գեղեցկախօսութեան քաղաքէն հա՛ , ըսաւ Վրիստիանոս . հոն բարի մէկը կը բնակի՞ մի :

Օ՛ռուսիրտ . Այո՛ , կը լուսամ թէ . ըսաւ Օ՛ռուսիրտը :

* Օ՛ռուսիրտը ժամանակի ծառայող մէկն է՝ աշխարհային մարդ մըն էր , որ իր սիրտը ամենևին Աստուծոյ վրայ հաստատած չէր . հապա իր խղճմտանքը իր անձին գիւրութեանը կը յարմարէր : Ո՞րչափ շատերը կարելի է գտնալ ամէն տեղ՝ աս նոյն նմանութիւնով , որոնք իրենց աշխարհային պատիւէն շահէն ու հանգստութենէն չեն կամիր ու չեն կրնար զատվիլ Վրիստոսի սիրոյն համար : Ասանկները կուզեն փրկրվիլ՝ բայց կուզեն որ բուն իրենց ընտրած ճամբով փրկրվին , չի ձգելով անձնուրացութեան գէ՛մ եղած մէկ քանի գործերը ու պարտաւորութիւնները :

Վրիստիննա . Ե՛ղէ , պարոն , ի՞նչ անունով
քեզ կրնամ կանչել :

Մատանի . Ես անձանօթ մէկն եմ քեզի ,
և դուն ալ ինծի : Թէ որ աս ճամ-
լը անունը բէն երթալու էք նէ՛ ուրախ պիտի
լըտահէ ըլլամ ձեզ ինծի ընկեր ունենա-
լուս , հապա թէ չէ՛ պարտիմ գոհ ըլլալ :

Վրիստիննա . Ես Վեղեցկախօսութեան քա-
ղաքին վրայով լսած եմ ես . ու ինչպէս կը
յիշեմ , կըսեն թէ հարուստ տեղ մըն է :

Մատանի . Ե՛յո՛ , ճշմարիտ կըսեմ քեզի՛
թէ անանկ է . ու ես շատ հարուստ ազգական-
ներ ունիմ հոն :

Վրիստիննա . Երբում կըշնորհէք համար-
ձակութեանս . ո՞վ են քու ազգականներդ
հոն :

Մատանի . Սեպէ թէ բոլոր բաղաբը .
բայց յատկապէս Իշխան փոփոխականը , Իշ-
խան Պատառաբոյժը , Իշխան Վեղեցկախօսը ,
որուն նախնիքներէն պիտո առաջ ատ բաղա-
բը իր անունը ընդունած է : Եւաև Պարոն փա-
ղաքշողը , Պարոն Երկուերեսէնը , Պարոն Եւ-
մէնբանը , ու մեր թաղին ժողովրդապետ Պա-
րոն Երկուլեզուէնը իմ մօրս խորթ եղբայրն

է * . և շիտակը ըսեմ քեզի , ես մէկ աղնուա-
կան մը եղած եմ . սակայն իմ պապուս պապը
միայն նաւավար մըն էր՝ որ մէկ կողմը կընայէր
ու մէկալ կողմը կըքաշէր † , ու ես ալ իմ
կալուածքներուս շատերը ան նոյն կերպովը
ստացած եմ :

Վրէստիանոս . կարգը վաճեմ ես դուն :

Ստեփանոս . Մ.Յ.Յ. , ու իմ կինս շատ համեստ
խաթուն մըն է , համեստ կնոջ մը աղջիկը .
որ ինքը կեղծուպատիր տիկինին աղջիկն էր :
Ուստի իմ կինս շատ պատուաւոր ցեղէ մը
եկած է . և ան աստիճանը կըթուլթեան հա-
սած է , որ արքային ու աղքատին հետը կեն-
ցաղավարելու կերպը գիտէ : Ղշմարիտ է որ
մենք երբեմն կրօնքով կըտարբերինք խըղ-
ճահար մարդիկներէն , բայց միայն երկու
պզտիկ մասերու մէջ : Մէյմը որ բնաւ հովին
ու ջուրին հոսանքին հակառակ չենք աշխա-

* Սեր հեղինակը շատ յարմար այլաբանական
անուններ կըհնարէ : Ստանկով ինքը շատ անգամ
քիչ խօսքերով շատ վարժութիւն կուտայ ըն-
թերցողին :

† Սեզգիացոց մէջ առակ մը կայ՝ որ կըսեն , կեղ-
ծաւորը կընմանի նաւավարի՝ որ մէկ կողմը կընայի
ու մէկալ կողմը կըթիւլարէ :

տիր : Երկրորդ՝ որ միշտ սաստիկ նախանձաւոր ենք երբոր կրօնքը իր արծաթ մուճակներովը ժուռ գայ . շատ հաճելի է մեզի փողոցներուն մէջը իր հետը քայլել, թէ որ արեգակը կը կըճառագայթէ ու ժողովուրդը կը գովաբանէ անիկա * :

Անտոն Վրիստիանոս քիչ մը զատկեցաւ դէպի իր ընկերին Յուսալեցին կողմը, ըսելով . Իմ միտքս կուգակոր որ ասիկա Վեղեցկախօսութեան քաղքին յուռսիրտ կոչվող մարդը պիտի ըլլայ . ու թէ որ անիկա է նէ՛ մեր ընկերութեան մէջը մէկը ունինք որ ինքը բոլոր աս կողմերը բնակողներուն ամենէն խորամանկն է : Անտոն Յուսալեցը ըսաւ . Իրեն հարցուր . ինձի կըթըւի որ ինքը իր անունէն չի պարտի ամչնալ : Ուստի Վրիստիանոս նո

* Ղշմարիտ հաւատացեալը աս կեղծաւորութիւնը չընէր . Ճշմարտութեան շողին կրսէ, «Ամէն անոնք որ Վրիստոս Յիսուսով աստուածպաշտութեամբ ապրիլ կուզեն, հալածանքի մէջ պիտի ըլլան» . Թ. Տի. Գ. 12 : Ղշմարտութեան շողին ստախօս կրնենք երբոր մեր վարքը ձեւի մը ճամբումը խօթելով ունայնութեամբ մտածենք թէ Վրիստոսի կըհետեւինք, և սակայն աշխարհիս փակած մնանք՝ որ թշնամի է իրեն : Ասիկա խիստ մահազուլակ ու հոգեպատիր սխալմունք մըն է :

ըէն անոր քովը գնաց՝ ու ըսաւ . Պարոն , հը
 րամանքդ անանկ կըխօսիսկոր՝ որ կիմացվի
 թէ բոլոր աշխարհի գիտցածէն էվել բան մը
 գիտես . և թէ որ չեմ սխալիւ նէ , կարծեմ
 թէ քու ո՛վ ըլլալդ պիտի գիտնամ . քու ա-
 նունդ Վեդեցկախօսցի Պարոն Նուռսիրո չէ՞
 մի :

Նուռսիրո . Ըսիկա իմ անունս չէ . բայց
 շիտակը նախատական անուն մըն է որ զիս չի
 քաշող քանի մը անձինք ինծի տըւեր են . ու
 պարտիմ գոհութեամբ իբրև նախատինք կրել
 անիկա , ինչպէս որ ուրիշ աղէկ մարդիկ ինծ-
 մէ առաջ իրենցը կրեր են :

Վրիստիանոս . Բայց դուն բնաւ պատճառ չի
 տըւի՞ր մարդոց առ անունը քու վրադ դնելու :

Նուռսիրո . Բնաւ , բնաւ : Սիայն իմ ը-
 րածս՝ որով անոնց պատճառ տըւի աս անունը
 ինծի տալու , աս էր՝ որ բաղդս միշտ իմ դա-
 տողութիւնս ժամանակին հիմակվան ճամբուն
 կըյարմարէր՝ ինչ որ էր նէ ան , ու անանկ
 կըպատահէր որ անով իմ շահս կէվելնար :
 Սակայն թէ որ աս յաջողութիւնները ասանկ
 ինծի կուգան , օրհնութիւն պիտի համարիմ ես
 անոնք . բայց անոնց պատճառովը չարասէր

անձինք նախատինքով թող չի բեռնաւորեն
զիս * :

Վրիստիննոս . Իրաւցունէ մտմտացի թէ դուն
ան մարդն ես՝ որուն վրայով լսեր էի . ու իմ
կարծիքս քեզի ըսեմ . Ես կը վախնամ որ աս
անունը էվելօք կը վայլէ քեզի , քան որչափ
դուն կուզես խորհիլ թէ կը վայլէ :

Մատթիոս . Եղէկ՝ թէ որ դուն ասանկ կը
մտածես , ինչ կը նամ ընել ես . դուն իս ա-
ղէկ ընկերու թիւն ընող մէկը ըլլալ պիտի
զտնաս , թէ որ քու ընկերու թեանդ իս ընդու-
նելու ըլլաս :

Վրիստիննոս . Թէ որ մեր հետը երթալ
կուզես , պարտիս հովին ու ջուրին հոսանքին
դէմ երթալ , որն որ կարծեմ թէ քու կար-
ծիքիդ հակառակ բան է : Եւս պարտիս
խոստովանիլ կրօնքը իր աղքատութեանը մէջ
ալ՝ ինտոր որ արծաթ մուճակներով ժուռ ե-
կաճ ատենն ալ . ու անոր հետը պիտի մնաս

* Որչափ ճարտարարուեստ՝ որչափ խաբէական
են ասանկ մարդոց տրամաբանութիւնները : Եղ-
բարք իմ , զգուշացէք աս ոգին ունենալէն : Ու ա-
սոր հակառակ՝ արթուն կեցէք ու ջերմեռանդու-
թեամբ աղօթեցէք որ երկմիտ չըլլաք , հապա
մինչև Վրիստոսի օրը անարատ մնաք :

երկաթներով կապված ատենդ ալ՝ ինտոր որ գովաբանութիւն ընդունելով փողոցներուն մէջը իր պըտըտելուն ալ :

Օրհնութիւնք . Պէտք չէ քեզի հրամայել կամ իշխել իմ հաւատքիս վրայ . իմ ազատութեանս ձգէ իս , ու թող տուր որ քու հետդ երթամ :

Քրիստոս . Ըսկէց անդին մէկ քայլ մը չի պիտի երթաս , թէ որ իմ առաջարկածս չընես նէ , ինտոր որ մենք կընենք :

Ընատեն Օրհնութիւնք ըսաւ . Ես իմ հին զաղափարներս բնաւ չի պիտի ձգեմ , որովհետեւ անվնաս են անոնք և օգտակար : Ի՞նչ որ ձեր հետը չեմ կրնար երթալ՝ պարտիմ ա՛նանկ ընել ինտոր որ դուք ինձի չի հասած կընէի , այսինքն՝ մինակ երթալ , մինչև որ մէկը զայ հասնի ինձի որ ուրախ պիտի ըլլայ իս ընկեր ունենալու :

Հիմայ երազիս մէջը տեսայ որ Քրիստիանոսը ու Յուսալիցը ձգեցին զինքը , ու անոր առջևը հեռուէն կըքայլէին * . բայց մէկեր-

* Վկատէ թէ աս ճամբորդները ինչպէս զգուշութեամբ վարվեցան աս խաբեբայ հաւատացեալին հետ : Ընէ թէ անխորհրդաբար իսկոյն չար կարծիք

նին իր ետևը նայելով իրեք հոգի տեսաւ որ Պարոն Նուռսիրտին ետևէն կուգային . ու մէյմալ երբոր եկան հասան անոր , ինքը խիստ ցածէն բարևեց զանոնք , ու անոնք ալ քաղաքովարութեամբ իր բարևը ընդունեցին : Եւ մարդոցը անուններն էին՝ Պարոն Լշխարհասէր , Պարոն Լըծաթասէր , և Պարոն Սլատ . մարդիկ՝ որոնց հետը առաջուց ծառնօթութիւն ունէր Պարոն Նուռսիրտը . քան զի իրենց մանկութեանը ամէնը մէկ դպրատուն կերթային , ու կըսորվէին Պարոն Յափշտակողէն , որ շիւսիսային կողմերը Լնչաքաղցութեան սահմանին մէջը Շտհասիրութեան վաճառաքաղաքին վարժապետն էր : Եւ վարժապետը սորվեցուցեր էր անոնց յափշտակութեան արհեստը՝ կամ բռնութեամբ , կամ խորամանկութեամբ , կամ շողրքորդութեամբ ,

մը ունեցան անոր վրայ . հապա երբոր անոր ինչը լլալը աղէկ մը փորձեցին՝ ալ մէկ բոպէ մը չի սպասեցին , այլ հաւատարմութեամբ վարվեցան՝ հետը , ու երկիւղածութեամբ ետ քաշվեցան իրմէն : Ահըր մէկ լուր մը լսելուն պարտի միշտ ծանր շարժիլ . բայց երբոր յայտնի կըլլայ թէ մարդիկ անանկ չեն ինչ որ կըխոստովանին ըլլալ , պարտի միշտ հաւատարմութեամբ վարվիլ :

կամ սուտ խօսելով , կամ բարեպաշտութեան կերպարանք մը վրանին առնելով . և աս չորս ազնուականները իրենց վարժապետին արհեստը անանկ ձեռք ձգեցին , որ բուն իրենք ամէն մէկերնին կրնային անանկ դպրատուն մը բանալ :

Արդ՝ ըսածիս պէս երբոր անոնք ասանկ իրար բարևեցին , Պարոն Արծաթասէրը հարցուց Պարոն Նուռսիրտին , թէ՛ ի՞նչ են անոնք ճամբուն վրայ մեր առջևը . քանզի Քրիստիանոսը ու Յուսալիցը տակաւին կրտեսներվէին :

Նուռսիրտ . Օոյգ մը հեռու աշխարհի մարդիկ են , որոնք իրենց կերպովը ճամբորդութեան կերթան :

Արծաթասէր . Ափսոս , ինչո՞ւ չի կայնեցան որ իրենց բարի ընկերութիւնը վայլէինք . քանզի անոնք՝ և մենք՝ ու դուն պարոն՝ ամէննիս ալ կըյուսամ թէ ճամբորդութեան կերթանքկոր :

Նուռսիրտ . Իրաւ ատանկ է . բայց աս առջևնուս գացող մարդիկը անանկ բիրտ են՝ ու այնչափ կըսիրեն իրենց կարծիքը՝ ու այնչափ առ ոչինչ կըդրեն ուրիշներուն կարծիքը , որ մէկ մարդ մը որչափ բարեպաշտ ալ ըլլայ՝ թէ

որ ամէն բանի մէջ իրենց հետը մէկ չըլլար նէ, բոլորովին դուրս կը ձգեն զանիկա իրենց ընկերութենէն ։

Վ. Լապտա . Եւստիկա զէչ բան է . բայց կրկարդանք մէկ քանիներուն վրայ՝ որ չտփաղանց արդար են * ։ ու ստանկ մարդոց բրտութիւնը իրենց վրայ կը տիրէ իրենցմէ, զոտ բոլոր ուրիշները դատել ու դատարարատել ։ Բայց անդէ, ի՞նչ է սփչափ բաներով իրարմէ տարբերուցար ։

Ն. Կուստիպա . Եւստիկ իրենց կամակոր եղանակովը վճուած են՝ թէ իրենց պարտաւորութիւնն է ամէն եղանակի մէջ առաջ վագել իրենց ճամբան ։ ու ես հովի և մակնճիտցութեան

* Այն որ քանի մը անձինք միաբանին աւելի բարեպաշտութիւն ունենալ քան որչափ ժամանակին ծորութիւնը կրնորէ, բիրտ ու սյլանդակ ըլլալու քամահրանաց տակը կիշնան ։ Արիչ մասի մը որչափ կոզղես նէ ուրիշներէն տարբերէ, մէկը չի վշտանար՝ ու այնպէս մէկը չի մեղադրեր զքեզ . բայց իսկոյն կրտոր Մուրը Կիրքը բեզի կանոն կրնես՝ ու անոր հաւանայն ապրելու դասն զքեզ կրվարժես, աշխարհի աստուծեանը ննթակայ կըլլաս, ու չտփաղանց արիար ըլլալու աններելի մեղքովք կամբաստանվիս ։

† Այնպէտ և Ն. Կուստիպա հաւատարիմ ճամբորդներուն առջին կրպագանձի, բայց իր ոգին ու

կրապատեմ : Լսոնք տալէն բաները վասն Լստուծոյ վստանգի մէջ կրճգեն , ու ես ամէն պատեհոլթիւնները ձեռք կառնեմ իմ կեանքս և ասացուածքս պահելու համար : Լսոնք իրենց կարծիքները կրբռնեն՝ թէպէտ և բոլոր մարգիկ ան կարծիքներուն դէմ բլլան . բայց ես կրօնքը կրպատեմ ինչ բանի մէջ՝ և որչափ որ ժամանակը ու իմ ազատութիւնս կրնայ տանիլ նէ : Լսոնք կրօնական են՝ կրօնքը ալքատութեան ու անարգութեան մէջ ալ բլլայ նէ . բայց ես երբոր անիկա արծաթ մուծակներովը՝ արեւին ծագելուն՝ և գովութիւն բնդունելով՝ պրտրտի նէ կրօնական եմ :

Լշտարհատէր . Իրաւ ես . ու պիտտ բանէ ատիկա՝ ո՛վ պատուական Պարոն Նուրսիրտ . քանզի իմ կողմանէս յիմար կրսեպեմ ես ան մարգը՝ որ իր ունեցածը պահելու ազատութիւն ունենայալ այնչափ անիմաստ բլլայ , որ հորսընցունէ զանիկա : ()ձի պէտ խորագէտ

բնատրութիւնը ունեցողներուն հետք համարձակութեամբ կրնայ խօսիլ : Ինչքէ , Բնչ անհնարին չար ու խարեքայ է մարդուս սիրտը : Ո՛վ կրնայ իմանալ անիկա : Ո՛չ մէկը՝ քայց միայն Լստուած սրտերուն քննողը :

ըլլանք մենք : Վաւագոյն է խոտ շինել՝ քանի որ արևը կը ծագէ : Կընայիս թէ մեղուն բոլոր ձմեռը ինտոր հանգիստ կը կենայ , ու միայն անատենը կաշխատի՝ երբոր շահը ու հեշտու թիւնը մէկտեղ կընայ քաղել : Ըստուած երբեմն անձրև կը խրկէ՝ և երբեմն արեգակը կը ծագեցունէ . թէ որ անոնք անանկ խելաւ ըլլան որ առջինին մէջէն ճամբորդութիւն ընեն , բայց մենք դեղեցիկ եղանակը մեզի հետ առնելու բաւականանանք : Ինծի կը հարցունես նէ՞ ես ան կրօնքը շատ կը սիրեմ՝ որ Ըստուծոյ մեզի պարգևած բարութիւններուն ապահովութեամբը կընայ պահվել : Վանզի՞ ան որ բանականութեամբ կը դատէ , կընայ ուրիշ կերպ խորհիլ , բայց միայն՝ թէ Ըստուած որ աս կեանքիս բարի բաները մեզի շնորհեց նէ , կուզէ որ մենք իրեն համար պահենք անոնք : Ըբրահամ ու Սողոմոն կրօնքի մէջ հարստացան . ու Յոր կըսէ՝ թէ բարի մարդը ոսկին հողի պէս պիտի դիզէ . ու չէ թէ աս առջևէն գացող մարդոցը պէս պիտի ըլլայ՝ թէ որ անոնք քու ստորագրածիդ պէս են նէ :

Սուրբ . Կարծեմ թէ աս նիւթիս վրայ ամէն նիս ալ միաբանած ենք , և անոր համար է վելի խօսք հարկաւոր չէ անոր վրայով :

Արծաթաւոր . Չէ . ճշմարիտ էվելի խօսք
 հարկաւոր չէ աս նիւթիս վրայով . քանզի ան
 որ ո՛չ Սուրբ Կրօնք և ոչ բանականութեան
 հաւատք կրնճայէ , (և կրտեսնանք որ մենք
 երկուքն ալ մեր կողմը ունինք .) ոչ իր ազա-
 տութիւնը դիտէ ու ոչ իր ապահովութիւնը
 կրվնտրուէ :

Մարտիրոս . Եղբարք իմ , մենք ամէնա ճամ-
 բորդութեան կերթանքկոր՝ ինտոր որ կրտես-
 նաք . ու դէշ բաներէն աղէկ մը ետ մնալնուս
 համար , թոյլտուութիւն շնորհեցէք ինձի ձե-
 ղն աս խնդիրը առաջարկելու :

Դիցուք թէ մէկ մարդ մը՝ եկեղեցական մը
 կամ արհեստաւոր մը՝ պատահութիւն մը ու-
 նենայ իր առջևը աս կեանքիս բարութիւննե-
 րը ստանալու , և սակայն անանկ ըլլայ՝ որ ու-
 ըրիշ կերպով չի կարենայ անոնք ձեռք ձգե-
 լու , բայց եթէ գոնէ դրսըվանց սաստիկ նա-
 խանձաւոր ըլլալ ցուցնելով ինքրզինքը՝ կը-
 րօնքին մէկ մասին մէջը՝ որուն մէջը ինքրզին-
 քը չէր խառներ առաջ . հիմայ ան մարդը իր
 վախճանին հասնելու համար աս միջոցը չի՞
 կրնար դործածել , ու տակաւին շիտակ հա-
 լատարիմ մարդ մը ըլլալ :

Արժանաւոր . կրտսնամկոր քու առաջարկութեանդ վախճանը . ու աս պարոններուն կամաւոր թոյլտուութիւնովը կըջանամ պատասխան մը ձեւացունել քեզի : Աւ նախ եկեղեցականի վրայով քու հարցումիդ պատասխանելու համար , դիցուք թէ եկեղեցական մը՝ արժանաւոր մարդ մը ըլլայ . բայց իր եկամուտը խիստ քիչ ըլլայ , և իր աչքը մեծագոյն եկամուտի մը ըլլայ՝ էվելի առատ ու էվելի պարարտ . նաև պատեհութիւն մըն ալ ունենայ անիկա ստանալու , սակայն անանկ որ ինքզինքը էվելօք ուսման տալով՝ էվելի՞ յաճախութեամբ և նախանձաւորութեամբ քարոզութիւն ընելով և ժողովրդոց բնաւորութեանը պահանջելուն համար իր գաղափարներուն մէկ բանիները փոխելով պիտի ըլլայ ան նէ , իմ կողմանէս ես պատճառ մը չեմ տեսնար թէ ինչո՞ւ համար մէկ մարդ մը չի կրնայ ընել սսիկա , և մանաւանդ ասկից էվել շատ ուրիշ բան ալ , ու տակաւին ինքը հաւատարիմ մարդ մը ըլլալ , թէ որ ինքը աս բանս ընելու հրաւեր մը իմացած է իր տերսիզին : Աւ ինչո՞ւ համար .

Ախա՛ որ մեծագոյն եկամուտի մը բաղձանք

ունենալը օրինաւոր է , (ասոր դէմ չի կեցւ
վիր) որովհետեւ Մատուծոյ նախախնամութիւ
նը իր առջին դրաւ անիկա . ուրեմն թէ որ
ձեռնհաս է նէ կրնայ ստանալ անիկա , խղճ
մտանքի խտրութիւն չընելով :

Երկրորդ՝ ասկից զատ՝ ան եկամուտին վը
րայով իր ունեցած բաղձանքը զինքը էվելի
ուսումնասէր՝ էվելի նախանձաւորութեամբ
քարոզող կրնէ , և այլն . ու այսպէս անիկա
լաւադոյն մարդ մը կրնէ . մանաւանդ թէ իր
միտքը լաւադոյն կերպով յառաջացունել կու
տայ անոր : որ Մատուծոյ մտացը համաձայն է :

Երրորդ՝ իր ժողովրդոցը բնաւորութեանը
հակամիտելուն վրայ՝ անոնց ծառայելու հա
մար իր զաղափարներուն մէկ քանին ձգելով ,
ասիկա կրցուցրնէ նախ՝ թէ ինքը անձնուրա
ցութեան բնաւորութիւն ունի . երկրորդ՝ թէ
բարեբարոյ ու շահեցող կենցաղավարութիւն
մը ունի . և երրորդ՝ թէ ասանկով էվելի յար
մար է եկեղեցական պաշտօնի :

Չորրորդ՝ ուրեմն կըհետեւցունեմ թէ մէկ
եկեղեցական մը որ պղտի բանը մեծի մը տեղը
կըձգէ , ասանկ ընելուն համար աղահ սեպվե
լու չէ . հապա՛ որովհետեւ անով իր ստաց

ուսածքը և ճարտարութիւնը կէվե՛նայ , էվե-
լօք իր կողմանը՝ ու բարիք ընելու համար իր
ձեռքը տրված պատեհութեանը հետևող մէկը
սեպվելու է :

Գանք հիմայ քու առաջարկութեանդ երկ-
րորդ մասին՝ որ կրվերաբերի արհեստաւորին ,
որն որ յիշեցիր : Վիցուք թէ ասանկ մէկը
միայն անպիտան գործառնութիւն մը ունենայ
աշխարհի մէջ , բայց կրօնականութեան դառ-
նալով կարենայ իր առուտուրը ծաղկեցունել .
գուցէ հարուստ կնիկ մը առնէ , կամ լաւա-
գոյն և առջինէն էվելի յաճախորդ ունենայ
իր խանութին . իմ կողմանէս պատճառ մը
չեմ տեսնար , հապա որ օրինաւոր կերպով
կրնայ ընել ասիկա : Ալ ինչո՞ւ համար .

Նախ՝ որ կրօնական ըլլալը առաքինութիւն
է , ինչ կերպով մարդ անանկ կրլայ թող ըլ-
լայ :

Երկրորդ՝ որ հարուստ կնիկ առնելը՝ կամ
իմ խանութիս էվելի յաճախորդ ստանալը
ապօրինաւոր չէ :

Երրորդ՝ մանաւանդ որ՝ ան մարդը որ կրօ-
նական ըլլալով աս բաներս կըստանայ , բա-
րին բարի եղողներէն կըստանայ իր բարի ըլ-

լալովը . ուստի ահա քեզի աղէկ կնիկ՝ և աղէկ յաճախորդներ՝ և աղէկ վաստակ , և ամէն ա սոնք կրօնական ըլլալով՝ որ ան ալ աղէկ է : Ուրեմն բոլոր աս բաները ստանալու համար կրօնական ըլլալը բարի է և օգտակար * :

Եւ պատասխանին՝ որ Պարոն Երծաթասէրը ըսաւ Պարոն Նուռսիլտին հարցմանը , բոլորէն ալ մեծապէս զովաբանութիւն ընդունեց . ուստի վերջապէս հետևցուցին թէ խիստ օգտակար ու քաջաղէպ պատասխանի էր ան : Եւ որովհետև իրենք կարծեցին որ մէկ մարդ մը կարող չէր հակառակելու անոր , և

* Եւ ա քեզի աշխարհային իմաստութիւն , դժուարային տրամաբանութիւն , ու Սատանայական փիլիսոփայութիւն : Եւ մէն օր աս խօսքը կը լսենք արծաթասէր հաւատացողներէն , որոնք զուրկ են հաւատոյ զօրութենէն ու աստուածապաշտութեան առարկութենէն : Եւ այց ասոնց ամէնուն հակառակ՝ Հոգին Սուրբ կրվկայէ թէ « Եւ մէն չարերուն արմատը արծաթսիրութիւնն է » , Թ . ՏԻ . Գ . 10 , ու ադահ մարդը կուսպաշտ է . Կող . Գ . 5 : Եւ երբ ասիկա ու դողացէք՝ ո՛վ ազահ հաւատացեալներ : Ու դուք՝ ո՛վ Վառին հետևողներ , յիշեցէք որ հըրամայված է ձեզի բարբերնիդ արծաթասէր չըլլալու . Եր . Ժ . 5 : Ձեր Տէրը կրվկայէ թէ դուք « Չէք կրնար Եստուծոյ ծառայել » ու մամոնայի . Գ . Ի . Ժ . 13 :

պոպէ՛հատե Վրիստիանոսը և Յուսալիցը տա-
կաւին այնչափ մօտ էին՝ որ կանչովէին նէ
կրնային լսել : միաբանեցան թէ անոնց հա-
սածնուն պէս խակոյն անանց տուջևը դնեն աս
խնդիրը . մանաւանդ անոր համար՝ այ անանք
քիչ մը առաջ Պարոն Նուռախրտին հետը
հարտակէր էին : Սէտի անոնց ետեէն կան-
չեցին , ու աննք կանկ աւին կայնեցան մինչև
որ մէկաճեւր իրենց հասան : Բայց ճամբուն
վրայ խորհուրդ ըրին որ ո՛չ Պարոն Նուռ-
սիրտը հապա ծերունի Պարոն Լճխարհատէրը
ան խնդիրը ուռաջարկէ անոնց , ինչու որ
մտածեցին թէ անոնց անոր տալու պատաս-
խանը պիտի ըլլայ առանց ան տարութեանը
որն որ իրենց և Պարոն Նուռախրտին մէջը
բորթքեր էր քիչ մը առաջ իրարմէ զատկել-
նուն :

Լյապէս իրարու հասան , ու կարծ՝ կերպով
մը իբար ըարևէնուն ետքը Պարոն Լճխար-
հատէրը առաջարկեց ան խնդիրը Վրիստիո-
նտին ու իր ընկերին , և ըսաւ որ եթէ կրնան
նէ անոր պատասխանը տան :

Լնատեն Վրիստիանոս ըսաւ . Սինչև
անգամ տղեկ մը կրօնքի մէջ՝ ասոնց նման տա-

կրօնքէն էին : Իրենց միջոցները էին երկան աղօթքներ ընել , բայց իրենց մտքերուն վախճանը որբւարիներուն տունները ուտել էր , ու իրենց դատաստանը մեծագոյն դատապարտութեան արժանանալ եղաւ Աստուծմէ .
Վրժ . Դ . 46 , 47 :

Երրորդ՝ Յուդան ան դէն ալ աս կրօնքէն էր . ինքը կրօնական էր գանձանակին համար՝ որ անոր մէջը ձգվածը յափշտակէ . սահայն ինքը կորսրվեցաւ անարդրվեցաւ՝ և բուն իսկ կորստեան որդի եղաւ :

Չորրորդ՝ Սիմոն կախարդն ալ աս կրօնքէն էր . քանզի ուղեց Հոգին Սուրբ ունենալ , որ անով ստակ ձեռք ձգէ , ու Պետրոսին բերնէն իրեն համար ելած վճիռը իր ուղածին վայելուչ էր . Վրժ . Դ . 19—22 :

Հինգերորդ՝ չի կրնար աս ալ իմ մտքս ելլել , թէ ան մարդը որ աշխարհի համար կը գործածէ կրօնքը , աշխարհի համար պիտի ձգէ կրօնքը . քանզի ինչպէս որ ստոյգ է թէ Յուդայի դիտաւորութիւնը աշխարհի վրայ էր կրօնական ըլլալուն , անանկ ալ ստոյգ է թէ ինքը կրօնքը և իր Վարդապետը նոյն բանին համար ծախեց : Ուստի ասանկ խըն-

դիրին ստորասաբար պատասխան տալը՝ ինտոր
որ կիմանամ թէ դուք տրւած էք , ու անանկ
պատասխանը իբրև օրինաւոր ընդունելը՝ հե-
թանոսական՝ կեղծաւորական և դիւական բան
է . ու ձեր վարձքը ձեր գործքերուն համեմատ
պիտի ըլլայ :

Ասոր վրայ կանկ առին անթարթափ իրա-
րու երես նայելով , բայց Վրիստիանոսին
պատասխան տալու բան մը չունէին : Հոսա-
լիցն ալ Վրիստիանոսին տրւած պատասխա-
նը ուղիղ ու բաւական սեպեց . ասանկ՝ անոնց
մէջը մեծ լուռութիւն մը ինկաւ : Ա երջապէս
Պարոն Նուսիրտը ու իր բարեկամները
տնտընալով ինքրդինքնին ետ ձգեցին , որ Վր-
րիստիանոսը ու Հոսալիցը անցնին երթան :
Անտենը Վրիստիանոսը իր ընկերին ըսաւ .
Թէ որ աս մարդիկը մարգոց խօսքին առջևը
չեն կրնար կենալ , ի՞նչ պիտի ընեն Աս-
աուծոյ խօսքին առջևը : Ալ թէ որ հողէ
ամաններուն հետ կենակցած ատեննին կըհամ-
բանան , ի՞նչ պիտի ընեն երբոր մաշեցուցիչ
կրակի մը բոցերովը յանդիմանվին * :

* Տես թէ ինչ մեծ բարութիւն մըն է Սուրբ
Վրոց վրայ քաջ տեղեկութիւն ունենալը , ու որ-
24 մ

Հիմայ Վրիստիանոս և Հուսայեց կրկին յառաջեցին զանոնք, ու այնչափ քաջին՝ մինչև որ եկան զուարճալի դաշտի մը մէջ մտան, որ կրկոչվէր Վիւրութիւն, ուր որ շատ քոհ սրտով կը բալէին. սակայն ան դաշտը կարճ ըլլալուն շուտով անցան անիկա: Վանք

Վրիստի-
անեց գի-
րո-նէ-րը
խորճար-
էն

որ դաշտին մէկալ կողմը պզտի բը-
լուր մը կար Սաստակ անունով, ու
ան բլուրին վրայ արծաթի հանք
մը, որ առաջուց ան ճամբան գա-
ցողներէն ոմանք անոր ազնուու-

թեանը պատճառովը անիկա տեսնալու դար-
ձան. բայց շատ մօտ երթալով փոսին բերնին՝
Սաստակ իրենց ներքեւ գետինը հաստատ
որ եւր իւր չըլլալուն պատուեցաւ, ու իրենք
սպաննը վեցան. ոմանց ալ տնդամները կը-

չափ հարկաւոր է առաքեալին տըլած յորդորանքը,
թէ՛ «Վրիստոսի բանը առատապէս ձեր մէջը բնա-
կի. Սալ. ք. 16: Վանքի Ստուծոյ բանը կենդանի
է ու զօրաւոր, ու երկու բերնէ թուրէն ալ սուր. ու
Սատանային բոլոր ճարտարարուեստ հնարքներէն՝
ու մարմնապաշտ հաւատացեալներուն հնարիմաց
խորամանկութիւններէն կանցնի, ու մարմինն երկ-
րաւոր առարկութիւնները մէկ դի կըզատէ հոգւոր
իմաստութենէն որ՝ի վերուստ կիջնայ:

տըրտեցան , և մինչև իրենց մահուան օրը չի կրցին նորէն ինքրդինքնին գտնալ * :

Մէյմալ տեսայ երազիւ մէջը որ ճամբէն քիչ մը դուրս արծաթի հանքին դիմացի կողմը կայներ էր 'Բեմար' ազնուականի կերպարան թով , ճամբորդները կանչելու որ երթան ու տեսնան : Աւտի 'Վրիստիանոսին և իր ընկերին ըսաւ . 'Մ'ի դուք , առ կողմը դարձէք , ու ես բան մը ցուցնեմ ձեզի :

'Վրիստիանոս . ի՞նչ կրնայ այնչափ արժանաւոր ըլլալ որ մեզ ճամբայէն դարձունէ :

'Գէնա . Հոս արծաթի հանք մը կայ , ու քանի մը հողի անոր մէջը կրփորենկոր գանձ հանելու . թէ որ գալու ըլլաք , քիչ մը աշ-

* Չի կայ բան մը որ աւելի վտանգաւոր ու որոգայթադիր ըլլայ հողիին՝ քան որչափ աշխարհային հարստութիւնները : Վանի քանի անձինք որ ձախորդութեան ամէն փոթորիկներուն դէմը կրփորային անշարժ կենալ , յաջողութիւնը իրենց վրայ յորդելուն յայտնապէս կորսընցուցին իրենց հաստատութիւնը : 'Վժուարին է հարստութիւն ունենալ՝ ու մեր սրտերը անոր վրայ չի դնել . ու Մտտուծոյ բանը կը հաւատարմացունէ մեզ թէ ամէն շարիքներուն արմատը արծաթսիրութիւնն է , որուն ոմանք հետեւելով հաւատքէն խոտորեցան , ու անհամար ցաւերով իրենք զիրենք ծակծրկեցին :

խատանքով շատ բան կրնաք հանել ձեզի համար :

Եկոր երթանք նայինք, ըսաւ Յուսալից :

Ես չեմ երթար, ըսաւ Վրիստիանոս . ես աս տեղին վրայով ու որչափ շատերուն հոս սպաննրվիլը՝ առաջուց լսած եմ . և ասկէց ՚ի զատ ատ գանձը անիկա փնտրուողներուն որոզայթ մըն է, քանզի անոնք իրենց ճամբորդութենէն կարդիլէ * :

Անատենը Վրիստիանոս կանչեց Գեմասը ըսելով . Ետ տեղը վտանգաւոր չէ՞ մի . ատիկա շատերը իրենց ճամբորդութենէն չարգիլեց մի . Ուլէ . 7 . 16—19 :

Գեմաս . Խիստ վտանգաւոր չէ, միայն թէ անոնց որ անգզոյշ են : Սակայն խօսած ատենը միանգամայն կարմրեցաւ ալ :

* Տեսա՞ր մի հաւատարիմ բարեկամին արժողութիւնը . բայց որչափ քիչերը ասանկ հաւատարմութեամբ կը վարվին իրենց ընկերներուն հետ : Հաւատացեալներէն որչափ քիչերը կը տանին ասանկ յորդորները : Ի՞նչ ըսել է կըսեն՝ ստակ վաստրկելէն մեզ արգիլել : Ո՛վ, որչափ քիչերը գիտեն թէ ազահու թիւնը կռապաշտութիւն է, ու միտք կը դնեն Վրիստոսի Տեառն մերոյ կրկնապատիկ զգուշութեանը, թէ՛ “Սայեցէք և զգուշ եղիք ամէն կերպ ազահու թեանէն” . Գ . 1 . 15 :

Վրիստիանոս . Ընտանիքս Վրիստիանոս ըսաւ Յուսալիցին . Չըլայ որ մէկ քայլ մը փոխենք , հոպա առաջ երթանք մեր ճամբան :

Յոսալից . Ես կը վկայեմ քեզի՝ որ երբ Նոուսիրտը հոն հասնի , թէ որ ինքը մեզի պէս հրաւիրվի նէ , պիտի դառնայ անիկա տեսնալու :

Վրիստիանոս . Ըտոր վրայ պէտք չէ տարակոյտ ունենալ , քանզի իր գաղափարները հոն կառաջնորդեն իրեն . ու հարիւրին իննըսուներկինը ստոյգ է թէ ինքը հոն կը մեռնի :

Հիմայ 'Վեմասը նորէն կանչեց' ըսելով . Իայց չէ՞ք կամիր գալ ու տեսնալ :

Ընտանիքս Վրիստիանոս խստութեամբ պատասխան տրլաւ՝ ըսելով . Ո՛վ 'Վեմաս' , դուն աս ճամբուն Տէրօջը շիտակ ճամբաներուն թշնամի մըն էս , ու իր տէրութեանը դատաւորներուն մէկովը արդէն դատապարտըված էս բուն քուկին ճամբայէն խոտորելուդ համար . ի . Տ՛՛ . 7 . 10 . և ինչո՞ւ համար կուզես որ մեզ ալ նոյն դատապարտութեանը տանիս : Սանաւանդ՝ թէ որ երբէք՝ ճամբայէն խոտորելու ըլլանք՝ անշուշտ մեր Տէրը թագաւորը պիտի իմանայ անիկա , ու խայտառակ պիտի

ընէ մեզ հոն՝ ուր որ համարձակութեամբ կուզենք իր առջևը կայնիլ :

Դեմաս նորէն կանչեց թէ ինքն ալ իրենց ընկերութենէն մէկն է . ու թէ որ քիչ մը ըստ պատեն նէ ինքն ալ անոնց ուղեկից պիտի ըլլայ :

Լնատենը Վրիստիանոս ըսաւ . Լնունդ ինչ է , ան նոյնը չէ՞ որով քեզ կանչեցի :

Գեհաս . Լյո՛ իմ անունս Գեմաս է . Լբւրահամի որդին եմ ես :

Վրիստիանոս . կը ճանչնամ քեզ . Գեեզին քու պապուդ պապն էր , և Յուդան քու հայրդ , ու դուն ալ անոնց ճամբուն հետեւեցար : քու գործածածդ սատանայական զուարճաբանութիւն մըն է . քու հայրդ իբրև մատնիչ կախվեցաւ , ու դուն անկից աղէկ վարձքի մը արժանաւոր չես . ք. թագ . Ե . 20—27 : Ասար . իղ . 14 , 15 , իէ . 3—5 : Լղէկ գիտցիր որ երբ թառազաւորին երթանք նէ , աս քու ըրածդ պիտի զրուցենք իրեն : Լս ըսելով անոնք իրենց ճամբան գացին :

Լս միջոցիս Օուուսիրտը և իր ընկերները նորէն տեսնըվեցան , ու առաջին ակնարկութիւն մը ընդունելուն անցան Գեմասին քով :

գացին : Լ՛րդ՝ փոսին բերանէն վար նայելնուն մէջը իյնալնին՝ կամ փորելու համար վար իջնալնին՝ կամ սովորաբար անոր յատակէն ելած վնասակար գոլորշիներովը խեղդելվելնին ստոյգ չեմ գիտեր ես , բայց աս նկատեցի՝ որ անոնք մէյմալ ան ճամբուն մէջը չի տեսնըվեցան * :

Լ՛նատենը Վրիստիանոս երգեց այսպէս .

Նուռսիրտն ու Ղեմաս արծաթասէրը

Սէկզմէկու հետ կըմիաբանին .

Սէկը կըկանչէ կըվազէ միւսը ,

Խաժանորդ ըլլալ անոր վաստակին .

Լ՛սանկով ասոնք աշխարհիս մէջը

Կըդադրին , ու չեն յառաջեր անգին :

Լ՛րդ՝ երազիս մէջը տեսայ թէ ճամբորդները աս դաշտին մէկալ կողմը մէկ տեղ մը եկան՝ ուր որ հին արձան մը կանգնած էր ճամբուն քովիկը . ասիկա տեսնալնուն երկուքն ալ շփոթեցան անոր տարօրինակ ձևին պատճառովը . քանզի անանկ թուեցաւ իրենց՝ թէ անիկա ատենօք կնիկ մը եղած ըլլայ , արձանի

* Տեսա՞ր մի աշխարհիկ մարդոց վտխճանը , որոնք ունայնութեամբ կըջանան մամոնայի սէրը Վրիստոսի սիրոյն հետ խառնել :

կերպարանք փոխված : Ուստի աս տեղս կանկ
առնելով անթարթափ աչքով անոր վրայ կը
նայէին , բայց ատեն մը չի կրցին իմանալ ա-
նոր ինչ ըլլալը : Ա՛րջը Յուսալիցը նկատեց
որ վերը անոր գլխուն վրայ անսովոր կերպով
գրված գիր մը կար . բայց ինքը գրոց աչա-
կերտ չըլլալուն համար Վրիստիանոսը կան-
չեց՝ (որովհետեւ գիտուն մարդ էր ան ,) որ
տեսնայ թէ կրնոյ արդեօք անոր նշանակու-
թիւնը իմանալ : Ուստի Վրիստիանոս եկա՛
ու քիչ մը ատեն գիրերը իրարու հետ կապե-
լէն ետեւ գտաւ որ ասիկա էր ան . « Ղովտին
կնիկը յիշեցէք՝ : Այլ ասիկա իր ընկերին
կարգալէն ետքը երկուքը մէկէն վճռեցին թէ
անիկա Ղովտին կնիկն է որ աղէ արձանի փոխ-
վեցաւ , Սողոմէն ելած ատենը ընչասէր սըր-
տով իր ետին նայելուն համար . (Ննդ . ԺԹ .
26 : Հիմայաս յանկարծ և զարմանալի երևոյ-
թը պատճառ ըլլալով՝ աս խօսակցութիւնը
սկսեցին ընել անոնք :

Վրիստիանոս . Մի , եղբայր իմ , ասիկա
յարմարաւոր երևոյթ մըն է՝ որ պատշաճա-
պէս պատահեցաւ մեզի Սաստակ կոչված ան
բլուրը անցնել տեսնալու համար Վեմասին

մեզ հրաւիրելէն ետքը . և թէ որ իրեն ուզածին պէս՝ ու քու երթալու հակամիտելուդ պէս գացած ըլլայինք նէ՝ եղբայր իմ , գիտցածս՝ մենք ալ մեզմէ ետքը գալիքներուն տեսնալու համար պատկեր մը տեսարան մը եղած պիտի ըլլայինք :

Յոսուէց . Երբաւիմ որ այնչափ յիմար էի՝ ու կըզարմանամ որ հիմայ Վոլտին կնոջը պէս չեմ . քանզի ի՞նչ տարբերութիւն կայ անոր և իմ մեղքիս մէջը : Ինքը միայն իր ետևը նայեցաւ , ու ես երթալու տեսնալու փափաքեցայ : Վոհութիւն ըլլայ Լստուծոյ շնորհացը , ու ես յաւիտեան ամօթով մնամ՝ իմ սըրտիս մէջը ասանկ բան մը ըլլալուն համար * :

Վրիստիանոս . Եկոր աս տեղը տեսածնիս միտքերնիս պահենք ասկից ետքը մեզի օգնու

* Լստուծոյ շնորհքը ահա՛ ասանկ ներգործութիւն կընէ . Վրիստոնեսայ ճանապարհորդին սրտին մէջը : Երբոր ինքը կըտեսնայ որ իր վատթար բընութիւնը ուրիշներուն գործած ամէն մէկ մեղքին յօժարութիւն ունի , կըխոնարհի . ու կըխոստովանի՝ որ չէ թէ բուն իր զօրութիւնովը ինքը պահված է , այլ միշտ ամէն փառքը ամէն շնորհքներուն Լստուծոյն կընծայէ , որուն զօրութիւնովը միայն իյնալէն պահված է : “Շաւաղով կեցեր ես . մի հպարտանար , հապա վախցիր” : Լուով . ԺԿ . 20 :

Թիւն ըլլալու համար : Ես կնիկը մէկ դատապարտութենէ մը ազատեցաւ , ինչու որ Սողոմի կործանումովը չի կորսրվեցաւ . և սակայն մէկ ուրիշով մը կորսրվեցաւ , ինչպէս որ կրտեսնանք թէ ինքը աղէ արձանի դարձած է :

(Գործք. ԴՂմարիտ է , ու ինքը մեզի միանդամայն զգուշութիւն և օրինակ կրնայ ըլլալ . զգուշութիւն՝ որ իր մեղքէն հեռու կենանք , ու օրինակ՝ որ աս զգուշութեամբը մեղքէ հեռու չի կեցողներուն վրայ ինչ դատապարտութիւն գալուն նշանք տեսնանք . ասանկ կորխը՝ Իսդանը ու Բիւրոնը ևս՝ իրենց մեղքերուն մէջը կորսրված երկու հաքիւր յիսուն հոգիներուն հետը մէկտեղ նշան մը կամ օրինակ մը եղան ուրիշներուն զգուշ կենալու . թմար. ԺՂ . 31 , 32 : իՂ . 9 , 10 : Բայց ամէն բանէն էվելի մէկ բանի մը կըզարմանամ . այսինքն՝ թէ Բեմասը և իր ընկերները ի՞նչպէս ան տեղը անանկ վստահութեամբ կրնանկոր կայնիլ ան գանձին սպասելու , որուն համար աս կնիկը միայն իր ետեւը նայելուն պատճառովը (քանզի չինք կարդար թէ ինքը մէկ քայլ մը ճամբէն դուրս կոխեց) աղէ արձանի դարձաւ . մանաւանդ՝ որովհետև անոր վրայ եկած դատապարտութի

նը անիկա օրինակ մը ըրաւ անոնց աչքին առջևը ուր որ իրենք կեցեր են . քանզի աչքերնին վերցուցածնուն պէս հնար չէ որ չի տեսնան անիկա :

Քրիստոս . Օգարմանալու արժանաւոր բան մըն է , ու կըրցուցնէ թէ իրենց սրտերը աս մասին ամուրցած են . և չեմ գիտեր թէ որո՞ն նմանցունեմ անոնք այնչափ պատշաճաբար , որչափ որ անոնց՝ որ բռնըված դատաւորին առջևը կայնած ատեննին ալ իրենց քովը կեցողներուն ծոցը կըբարպեն , կամ կախաղանին տակը կախվելու տեղերնին քսակահատութիւն կընեն : Սողոմի ժողովըոցը համար կըսվի թէ խիստ մեղաւոր էին , ինչու որ Տէրոջը առջևը մեղք գործեցին . այսինքն իր աչքին առջևը՝ և անոնց ցուցուցած մարդասիրութեանը վրայ . քանզի Սողոմի երկիրը Լստուծոյ դրախտին պէս էր . Օհնդ . ԺԳ . 10—13 : Ուստի աս բանը ևս տուաւել ՚ի նախանձ շարժեց Տէրը , ու անոնց պատուհասը այնչափ սաստկացուց որչափ որ Տէրոջը երկնաուաք կըրակը կընար ընել :

Եւ արժանի է իրաւամբ հետեցունել թէ ասանկ օրինակները տեսնալով և մանաւանդ

Թէ իրենց զգուշանալուն համար անոնք միշտ իրենց աչքին առջևը ունենալով մեղանչողները սաստկագոյն պատուհասներու արժանի պիտի ըլլան :

Յո՛ւսուէց . Մնտարակոյս ըսածդ ճշմարիտ է . բայց ի՞նչ ողորմութիւն է՝ որ ո՛չ դուն, և մանաւանդ թէ ո՛չ ալ ես ինքնս սա օրինակը եղած եմ : Մտիկա կըսորվեցունէ մեզի գոհանալ Մտուծմէ, վախնալ իր առջևը, և միշտ Վովտին կինը յիշել :

Ասկէ ետեւ տեսայ որ անոնք իրենց ճամբան երթալով մէկ զուարճալի գետի մը հասան * ,

* Մս ճամբորդները վաստակի համար շիտակ ճամբայէն խոտորելու փորձութեանը դէմ որ դրին, առատագոյն հոգևոր մտիթարութիւններ շնորհը վեցաւ իրենց . Սաբի . Ժ . 23—30 : Ղանապարհորդները աս տեղս զուարճալի գետի մը եկան, ուրկէց խմելով իրենց հոգնած հոգիները զօրացուցին : Մս գետը Մտուծոյ սիրոյն խորին ու անսահման ովկիանոսն է : Մս գետին առունները են՝ Թողութիւն, Խաղաղութիւն, ազատութիւն, որդեգրութիւն, արդարութիւն, սրբութիւն, աղօթից ունկընդրութիւն, Մտուածային բոլոր նսխախնամութիւններուն բարութիւնները, ու երկնից մէջ յաւիտենական յաղթութիւն : Եակ՝ աս առուններուն անցած ճամբան է՝ Յիսուս Վրիստոս Տէրն մեր : Հաւատացեալները իրմով ամէն հոգևոր օրհնու-

զուլթեամբ իրենց արիւնքը կը բոլորէին : Վե-
տին երկու կողմը կանանչ մարգագետին ալ
կար՝ զարմանալի կերպով գեղեցկացած շուշան
ծաղիկներով : ու բոլոր տարին կանանչ կը
մնար : Աս մարգագետինին վրայ ճամբորդնե-
րը պառկեցան քնացան : ուրովհետև աս տեղս
ապահովութեամբ կրնային պառկել . Սուլ .
իբ . 2 : Աստ . Ժ . 30 : Արբոր արթնցան՝ կըր-
կին ժողվեցին ծառերուն պտուղներէն : ու
կրկին խմեցին գետին ջուրէն : ու ետքը կըր-
կին պառկեցան քնանալու : Ասանկ անցուցին
քանի մը օր և քանի մը գիշեր . ու ետքը աս
երգը երգեցին .

Աս առուններուն յստակ ջուրերը
Վայեցէք ինչպէս կը ճառագայթեն ,
Ար ճամբորդներուն՝ ճամբանուն մէջը
Ախիթարութիւն սրտի ընծայեն :

Ան կանաչագեղ դալարիները
Բաց իրենց տըւած անուշ հոտերէն՝
Բազմաթիւ բարեաց առատ գանձերը
Ձրի կընծայեն անոնց որ հոս են :

Ու ան որ գիտէ թէ աս ծառերը
Ինչ բարի պտուղ տերև կը բերեն ,
Իսկոյն կը ծախէ իր ունեցածը ,
Ար ծախու առնէ աս դաշտը իրեն :

Երբոր ճամբայ ելլալ յօժարեցան՝ (քանզի
պեռ իրենց ճամբուն վերջը չէին հասած ,)
կերան ու խմեցին , և ճամբայ ելան * :

Հիմայ երազիս մէջը տեսայ որ շատ ճամ-
բայ չի գացած գետը ու ճամբան ատեն մը ի-
ջարմէ զատվեցան , որուն վրայ քիչ չի տրու-
մեցան ճամբորդները . սակայն ճամբէն դուրս
ելլալու ալ չի համարձակեցան : Կանք որ
գետէն անդին ճամբան խորտուբորտ էր , ու
իրենց ոտքերը ճամբորդութիւններնուն պատ-
ճառովը փափուկ . ասանկով ճամբորդներուն
գարշապարները շատ վնասեցան ճամբուն
դժուարութենէն - Թ. 107 . Ին . 4 : Ընոր համար

* Տէրը ճամբուն վրայ կազդուրելու ժամանակներ
կուտայ իր ժողովրդոցը . բայց հարկ է անոնց որ
յիշեն թէ տակաւին իրենց ճամբորդութեանը վախ-
ճանին հասած չեն , ու վտանգի զօրութենէն դուրս
չեն : Ըպարէն անոնք առաւել ևս զգուշանալու են
ասանկ ատենները . ինչու որ Սատանան զանոնք կը
դիտէ , ու անոնց արտօնութիւններուն վրայ կընա-
խանձի : Ինչպէս որ աւազակը աղքատիկ մարդը
անվնաս կըթողու անցնիլ՝ բայց իրենց հետը գանձ
ունեցողներուն վրայ կըյարձակի , ասանկալ Սա-
տանան երբոր ճամբորդները մխիթարութիւնով
լեցուն կըգտնայ՝ դարանակալ կըլլայ ծուռ ճամբու-
մը հրապուրելու զանոնք , որ վրանին յարձրկելով
զիրենք կողոպտէ :

քանի որ առաջ կերթային՝ լաւագոյն ճամբայի մը կը բաղձային* : Ըրդ՝ իրենցմէ քիչ

* Հաւատացեալները պարտաւորութեան ճամբուն մէջ քալած ատեննին ևս կարելի է որ զրկւիին ան միտիթարութիւններէն որ ճաշակեցին . ու թէ որ աս փորձութեանը հետ ժամանակաւոր կորուստներ ալ ունենան , ինչպէս աղքատութիւն՝ հիւանդութիւն՝ քարեկամներուն տմարդութիւնը կամ աշխարհի չարաչար վարմունքը , կարելի է որ մեծապէս լքանին : ու Սատանան կարենայ յատուկ պատհասութիւն մը ունենալ տժգոհութեան՝ երկմտութեան՝ նախանձութեան կամ ազահասութեան մէջ ձգելու զանոնք : Ըսանկով անոնք էվելի հակամիտած ըլլալով լաւագոյն ճանապարհի մը բաղձալու՝ քան թէ հաւատքներնուն ու համբերութիւններնուն առաւելութեանը համար ջերմեռանդութեամբ աղօթելու , կը դրդւիին ճամբայ մը գտնալ որով կարենան նեղութենէ ազատիլ՝ ու զիրենք հոգնեցունող դժուարութիւնը վրանուն թօթվել . ու շատ չանցնիր ժամանակաւոր հանգստութեան միջոց մը կելլայ իրենց առջևը : Պարտաւորութեան ճամբան դժուարին ըլլալով՝ ծուռ ճամբայ մը կելլայ առջևնին , որ կը թրբի թէ նոյն ճամբան կը հանէ զիրենք . բայց թէ որ անոնք ասանկով հոն դանան , թէպէտ և չէ թէ ցանկ՝ մը կամ պատ մը քակեն , բայց սանդուխէ մը ըլլայ պարտին անցնիլ : Ըստուծոյ պատուիրանքները սրբութեան ու ապահովութեան ճամբան կը ցուցնեն . բայց անոնց անվրէպ ուղղութենէն խոտորիլը կրնայ երբեմն անվնաս երևալ , ու բանին պարագաները կարելի է

մը առաջ ճամբուն ձախ կողմը մարգագետին մը կար, ու մէկ սանդուխ մը հոն անցնելու . և ան մարգագետինը կրկոյ՛էք՝ Նառճամբու Սարգագետին : Ընտան Վրիստիանոս իր ընկերին ըսաւ . Ի՞նչ որ աս մարգագետինը մեր ճամբուն վըայ կիյնայ, եկոր հոն անցնինք :

որ երևան թէ անոր կըհրաւիրեն : Սարգիկ կերևակայեն թէ այս ինչ կամ այն ինչ բանը Ըստուածակոյս կողմանէ ձեռնտուութիւն մըն է՝ որ հանգրստութիւն կուտայ հոգնածին . ու կրկարծեն՝ թէ իրենց տրված պատուիրանքը քիչ մը ընդարձակօրէն կրնսց մեկնրվիլ , թէ խոհեմութիւն պարտի գործածվիլ , և թէ պզտի բաներու վըայ խղճահարութիւն ընելը օրինասիրութեան ու աւերորդապաշտութեաննչան մըն է : Ըստպէս՝ Տերողմէն խրատ ուզելնուն տեղը բուն իրենց իմացողութեանը վըայ հաստատելով ու յատուկ իրենց սրտերուն ապահինելով , փորձողին ականջ կըղնեն : Եւ աս ալ անսովոր բան մը չէ՝ որ շաւաղոյն փորձառութեան տէր եղող ու հաստատագոյն համարում ունեցող Վրիստանեաները ևս երբեմն համբալկներուն սխալ կառաջնորդեն , հնազանգութեան ուղիղ գիծէն խոտորեցունելով զանոնք . ինչու որ Տէրը անոնք իրենք զիրենց կըթողու՝ իրենց յանձնապաստանութիւնը նուաճելու , ու զանոնք բողբոլին իրմէն կախեալ պահելու համար : և ասանկով նոր բարեպաշտութեան դարձողներուն կըսորվեցունէ որ էվելի չի հետեին մարգու մը՝ բայց եթէ որչափ որ անիկա Վրիստոսի կըհետեի :

Սէլի գործ-
յա-իւր Տէկո-
լէն ճամբայ
լեւեանայ

Ետքը ինքը սանդուխին գնաց տես-
նալու, և ահա ցանկին մէկալ կող-
մը դուրսի ճամբուն քովովը շաւիղ
մը կար * : Ըսիկա իմ ուզածիս
պէս ելաւ՝ ըսաւ Վրիստիանոս . դիւրագոյն
ճամբան աս է . եկոր բարի Յուսալից , եկոր
անցնինք ան կողմը :

Յուսալից . Բայց թէ որ աս շաւիղը մեզ ճամ-
բէն դուրս հանէ նէ ի՞նչ ընենք :

Ըսիկա հաւանական բան չէ , ըսաւ մէկա-
լը . նայէ դուրսի ճամբուն քովիկէն չե՞րթար-
կոր : Ըսպէս Յուսալիցը իր ընկե-
լիքն համոզվելով անոր ետեւէն սան-
դուխէն անցաւ : Երբոր երկուքն
ալ անցան ու շաւիղին մէջը մը-
տան , շատ դիւրին գտան անիկա
իրենց ոտքերուն . և միանգամայն դէպի առ-
ջենին նայելով մարդ մը տեսան որ իրենց
պէս կը քայլէրկոր , ու իր անունը Յանձնա-

* Պարտաւորութեան ճամբայէն առջի խտտ-
ումները գուցէ միայն պզտի բաներ երևան . բայց
քիչ քիչ ճամբան կը ծռի , ու մենք շուտով կը մո-
լորինք մինչև որ անկարող ըլլանք մենք մեզմէ դառ-
նալու : Ըն որ պզտի բաները առ ոչինչ կը համարի ,
քիչ քիչ պիտի կոնսայ :

պատան էր . ուստի անոր ետեւէն կանչեցին ու հարցուցին թէ ան ճամբան ո՞ւր կելլայ : Պատասխան տրեալ թէ՛ Նրկնային դուռը : Տեսա՞ր , ըսաւ Վրիստիանոս , ես ալ ասանկ չըսի՞ մի քեզի . ասով կըլտեսնաս որ մենք շտակ ենք : Նյսպէս անոնք անոր ետեւէն գացին , ու ան անոնց սուջեւէն : Բայց ահա գիշերը վրայ եկաւ , ու շատ մ'թնեց . անանկ որ ետեւը եղողները առջեւէն գացողը չէին տեսնար * :

* Նխոհանգնութիւն պիտի ըլլար Սատանային՝ հաւատացեալները առջի բերանը մեծամեծ մեղքերու հրապուրել , որոնց դէմ կրկենան անոնց սիրտերը . աս պատճառովը բաղմնապատիկ կեղծաւորութիւններով կըջանայ կաշխատի դարձունել զանոնք անանկ գովելի երևոյթ ունեցող մոլորութիւններու՝ որ կըթըլին թէ չար համարում մը կամ գէշ վախճան մը չունին : Բայց իւրաքանչիւր սխալ քայլափոխ էվելի փորձութիւններու ճամբայ կը բանայ , ու նոր մեղքերը ըստ երևութիւն հարկաւոր կըցուցընէ : Եւ թէ որ ամենափոքր բանի մը մէջ ամենափոքր պատուէր մը մարմնաւոր շարժառիթներէ կամաւորապէս կոտորվի , աս յանցանքին մէջը այնպէս ինքնակամութիւն՝ անհաւատութիւն՝ ապերախտութիւն ու աշխարհային կուսապաշտութիւն կայ , որ անտարակոյս հաւատացեալը մեծամեծ յանդիմանութիւններու ու սաստիկ պատիժներու տակ կրճգէ : Ընազանդութեան ճամբայէն

Ուստի Կաթողիկոս (Յանձնապատասխան անունով) իր առջևի ճամբան չի տեսնալով խորունկ փոսի մը մէջ ինկաւ, որն որ ան երկիրներուն տէրը դիտմամբ շինած էր հոն՝ սնափառ յիմարները անով որսալու համար. ու իյնալով կտոր կտոր եղաւ. * Լուս. Թ. 16:

խոտորողին համարձակութիւնը կեղծնայ սնափառ կրօնասէրներուն օրինակովն ալ՝ որոնց վրայ ինքք գուցէ չափէն աւելի բարի կարծիք մը ձեւացուցած է՝ անոնց հետը առջի անգամ տեսութեան մտնալուն. քանզի աս մարդիկը շատ անգամ խիստ զօրաւոր քաջալերութիւն կրցուցնեն՝ ու կը համարձակին Վրիստոսի պատուէրները կտրելու, կեղծաւորելով թէ անոր ձրի շնորհքին պատիւ ընծայելուն, ու իրենց ազատութիւնը ու արտօնութիւնը ճանչնալուն համար է որ ասանկ կընեն: Բայց մթութիւնը շուտով պիտի շրջապատէ ամէն անոնք՝ որոնք ասանկ առաջնորդներուն ետեւէ կերթան, ու անհնարին նեղութիւնները ու վտանգները շիտակ իրենց բռնած ճամբուն վրայ պիտի իյնան:

* Եւ դիպուածը կրնայ ցուցնել ան փրկաւէտ ներգործութիւնները՝ որ երբեմն յանցաւոր հաւատացեալներուն վրայ կը ծնանին սնափառ կեղծաւորի մը զարհուրելի մահուամբ, որուն չափէն է վելի ունկնդիր եղած են իրենք: Բայց Տէրը իր ծառաները մէկ կերպով մը կազատէ յանձնապատասխանութեան ժամանակաւոր բռնութենէն. որ ատեն յանդգնաբար մեղանշողները յուսահատութեան ու՝ մթութեան խորխորատին մէջը կը կորսըվին

Արդ՝ Վրբիստիանոսը և իր ընկերը անոր իյնալը լսեցին . ուստի զսցին որ բանին ինչ ըլլալը իմանան՝ ըայց պատասխան տրևող չի կար , հապա միայն հեծութիւն մը կըլսէին : Անպտեն Յուսալիցը ըսաւ . Ո՞ր ենք մենք հիմայ : Ասոր վրայ իր ընկերը լսեց՝ կասկածելով թէ ինքը շիտակ ճամբէն դուրս հանեց անիկա : Աւ հիմայ սկսեց զարհուրելի կերպով մը անձրեւել ու որոտալ և փայլատակել , ու սաստկութեամբ կըբարձրընար ջուրը * :

Անպտեն Յուսալիցը ինքնիրենը կըհաւաչէր ըսելով : Արանի թէ ես իմ ճամբաս յաւաջանայի :

Վրբիստիանոս . Ո՞վ կրնար մտքէն անցունել թէ աս ճամբան շիտակ ճամբէն դուրս պիտի տանի մեզ :

* Աստուծոյ սուրբ օրէնքը ամէն յանցաւորները կըդատապարտէ . ուստի երբոր Վրբիստոնեայն կամաւորապէս մեղքի մը մէջ իյնայ , շատ անգամ կը լայ որ վախնայ թէ իր հաւատքը մեռած է , թէ ինքը տակաւին օրէնքին տակն է , ու թէ՛ իր վարքին պէտիւր անձն ալ անոր արգար դատապարտութեանը ենթակայ եղած է : Այսպէս իբրև թէ նորէն ետ կըբերվի ինքը Սինա լեռանը փոթորիկներուն՝ որոտմանը ու փայլատակելուն :

Յոսուէց . Եւ առջի անգամին կասկած ունեցայ թառ բանին վրայ , ու անոր համար հեղութեամբ մը իմացուցի քեզի : Թէ որ դուն ինձմէ տարօք չըլլայիր՝ բացէ 'ի բաց պիտի խօսէի քեզի :

Վրիստիննոս . Պատուական եղբայր , մի նեղանար . կըրցաւիմ որ քեզ ճամբէն դուրս հանեցի , և որ ես քեզ ասանկ մօտահաս վտանդի մէջ ձգեցի : Կաղաչեմ , եղբայր , ներէ ինձի . ես աս բանը չար մտքով մը չըրի * :

Յոսուէց . Մխիթարութիւն ունեցիր , եղբայր իմ , քանզի ես կընեբեմ քեզի . ու հաւատա՛ ևս որ ասիկա մեր աղէկութեանը համար պիտի ըլլայ :

* Եւ այն որ ինտոր Վրիստոնեաները իրարու օգնական կըլլան՝ անանկ ալ զօրաւոր մոլորութիւններով մէկզմէկու վնասակար ըլլալու ենթակայ են : Բայց նկատէ թէ շնորհքը ինչ կընէ . յանցաւորը կըխոնարհեցունէ , հոգիին խոստովանել կուտայ իր յանցանքը՝ ու կըտրտմեցունէ իր դժբաղդութիւններուն վրայ : Եւ տեղս անոնք չէ թէ մէկզմէկ կընախատեն , հապա սիրով իրարու կարեկից կըլլան , ու մէկզմէկու վրայ իրենց անձերուն պէս հոգ կըտանին : Ո՛վ սքանչելի շնորհք և ճրմարտութիւն՝ որ չիսուս Վրիստոսի ձեռքովը եկաւ . ինչպէս անիկա մէկզմէկու կըկապակցէ հոգիները սիրոյն հաղորդութիւնով :

Վրիստիանոս . փառք Լստուծոյ որ ողորմած եղալսցր մը ունիմ իմ հետս . բայց պէտք չէ որ հոս կայնինք . եկոր ջանանք կրկին ետ երթալու :

Յոսաւէց . Բայց՝ պատուական եղալսցր , ես առջևէն երթամ :

Վրիստիանոս . Չէ , թէ որ կրկամիս նէ՝ թող տուր որ առաջ ես երթամ , որ եթէ վտանգ մը կայ նէ առաջ ես անոր մէջը իյնամ . քանզի իմ պատճառովս մենք երկուքս ալ ճամբէն դուրս ելանք :

Յոսաւէց . Չէ , առաջ դուն երթալու չես , քանզի քու միտքդ անհանդիստ ըլլալով կարելի է որ բեզ կրկին ճամբէն դուրս հանէ : Ընտանիքս իրենց քաջալերութեանը համար մէկու մը * ձայնը լսեցին որ կրսէր , Սիրտդ ետ ձգէ , ետ դարձիր դէպի ճամբան , ետ դարձիր . Լւբե՛ . Լա . 21 : Բայց մինչև հիմայ ջուրերը շատ յորգեր էին , և ան պատճառովը

* Ըսիկա Վրիստոս է . Վրիստոսի պատուական անձը , Վրիստոսի փառաւոր գործը , Վրիստոսի կատարեալ փրկութիւնը . ինքն է ճանապարհը՝ մի միայն ճանապարհը՝ արդարութեան ու սրբութեան արքունական ճանապարհը :

ետ դառնալու ճամբան շատ վտանգաւոր էր : (Ընտանեւոր իմ միտքս եկաւ թէ էվէլօթ դիւրին է ճամբէն դուրս ելլալ երբոր անոր մէջն ենք , քան թէ ճամբան մտնալ՝ երբոր անկէց դուրս ենք :) Աւ ստեպան համալսման կեցան ետ երթալ . բայց անանկ մութ էր՝ ու անանկ սաստիկ կոնծրեւէր , որ իրենց ետ դառնալուն ինը կամ տասը անգամ մաղ մնաց պիտի խեղդըվէին * :

* Արեւի է որ մտածվի թէ փորձառու Վրիստոնեայ մը մեղքի մը մէջ իյնալէն ետքը անիկա որ ճանչնայ , քիչ դժուարութիւն պիտի գտնայ իր պարտաւորութեանը դառնալու ու իր խաղաղութիւնը գտնալու : Բայց կամաւորապէս գործըված մեղքը որչափ պզտիկ ալ երևայ առջի բերանին , երբոր ետքը անոր վրայնայվի՝ անհնարին ապերախտութեան ու ծանր ապստամբութեան գործ մը ըլլալ կերևայ ան . անանկ որ՝ անանկ մթութիւն մը կը ձգէ հոգիին վրայ՝ ու անանկ յանցաւորութիւն մը խղճմտանքին վրայ , որ շատ անգամ՝ կը պատճառէ մարդուն կասկածիլ թէ ստութեամբ բռնած ըլլայ բոլոր իր կրօնքը : Աւ երբոր կը ջանայ նորէն իր ճամբան շիտկել՝ կրտեսնայ որ շատ տարվընէ՝ ի վեր իր ունեցած բոլոր անցեալ աշխատութիւնները ու ակնկալութիւնները ոչինչ դարձած են , ու քիչ յոյս կրնայ ունենալ ասկից ետքը լաւագոյն յաջողութիւն գտնալու . որովհետեւ ուրիշ միջոցները՝ կամ մեծագոյն ջանացողութիւնները ուրիշ

Եւ բոլոր իրենց ըրած ջանքովը չի կրցան ան գիշերը սանգուխին հասնիլ : Ուստի վերջ ջապէս մէկ պզտիկ ծածկոյթի մը տակ դադարելով մինչև արշալուսին ծագելունսն տեղը նստան . սակայն հոգնած ըլլալնուն պատճառովը քուններնին տարաւ * : Վանք որ ան

կերպով գործածել չի գիտեր՝ բայց եթէ ինտոր որ արդէն 'ի գործ դրած է զանոնք անօգուտ տեղը՝ ինտոր որ ինքը կրվախնայ : Աս հանգամանացս մէջը Սատանան ալ բնաւ չի պակսիր անոր հոգիին թելադրելու թէ իր վիճակը անյոյս է, ու Սատուած գութը գորովը մէկ դի դրած է : Հաւատացեալը իրաւ աս վախերովը չի յաղթըվիր իր ընթացքը նորոգելու համար բոլոր ջանացողութիւնները բոլորովին զանց ընելու . բայց շատ անգամ կրնմանի մարդու մը՝ որ խաւարին մէջը կրխարխարի ու չի կրնար իր ճամբան գտնալ , կամ մէկուն՝ որ խորունկ ու արագահոս գետէ մը կանցնի՝ ու սաստիկ կաշխատի իր գլուխը ջուրէն վեր պահել :

* Խղճալի ճամբորդները իրենց յետին ջանքը 'ի գործ դնելով չի կրցան ան գիշերը արքունական պողոտային հասնիլ , հապա փոքրիկ պատսպարան մը գտնալով անոր տակը հանգստանալու մտան՝ ու քնացան : Իրենց մեծ պակսութիւնը ան էր որ Վրիստոսէն՝ իրենց ճշմարիտ պատսպարանէն ետ կեցան : ()րէնքին կրվազեն օգնութիւն գտնալու , ու նորէն կրննջեն մարմնաւոր ապահովութեան բաղուկներուն մէջը : Խուովեալ խճղմտանքը թէ որ օրէնքին պարտաւորութիւնովը 'ի քուն դրվի

իրենց պառկած տեղէն հեռու չի գացած մէկ նամրոց մը կար , որ կրկոչվէր Մարոց Լերկբայութեան , և անոր տէրը կըսվէր Հսկայ Յուսահատութիւն . ու անոր երկրին վրայ էր որ ասոնք հիմայ կըքնանայինկոր . ուստի ինքը առտըվանց կանուխ ելլալով ու իր դաշտերուն մէջը վեր ու վար պըտըտելով , Վրիստիանոսը ու Յուսալիցը իր դաշտերուն վրայ քնայած բռնեց : Ընատենը մէկ ահարկու և զայրագին ձայնով մը հրամայեց անոնց որ

ու չէ թէ մաքրողական արիւնով խաղաղի , երբոր արթըննայ՝ անանկ զարհուրելի կերպով պիտի խօսի որուն նմանը բնաւ խօսած չէր : Ըսիկա ատանկ ըլլալ գտան աս Ղ'ամբորդները թանկագին փորձով : Հսկայ Յուսահատութիւնին ձեռքը ինկան՝ որ անանկ անողորմաբար վարեցաւ հետերնին , որ իրենցմէ մէկը պատրաստ էր կատարելու անոր տըւած անձնասպանութեան թելադրութիւնը : Ըս Ղ'ամբորդներուն պատահած բոլոր աս յուսահատութիւնը ու նեղութիւնը կարելի էր խափանվել թէ որ իրենց մեղանչելէն ետև անմիջապէս Վրիստոսի դիմէին , ու սուտ պատսպարանի մը տակ չի մտնային : Տէրը կատարեւապէս կըսորվեցունէ մեզի աս դասը , որ երբ մեղքով մը բռնըվինք , իսկոյն Վրիստոսի արեանը մաքրողական աղբիւրին դիմենք , ու միշտ յիշենք մեր փաստաբանը որ Հօր Ըստուծոյ քովն է , որ ինքը միայն է քառութիւն մեղաց :

արթըննան, ու հարցուց թէ ուրկից էին, և ի՞նչ բան ունէին իր երկրին վրայ: Ընոնք ալ իրեն ըսին թէ իրենք ճամբորդ էին և ճամբանին կորսընցուցեր էին: Ընատենը հսկան ըսաւ. «Վուք աս գիշեր ինձի դէմ յանցաւոր գտնըվեցաք իմ երկիրներս կոխկրուտելով և անոնց վրայ պառկելով, ու անոր համար պարտիք իմ հետս երթալ: Ուստի պարտաւորեցան երթալ, որովհետև ինքը անոնցմէ ուժով էր: Վաև շատ զըուցելիք ալ չունէին, քանզի իրենք իրենց յանցաւոր ըլլալը գիտէին: Ու ասնորոյ հսկան իր առջևը ձգելով քէց անոնք՝ ու իր ամբողջին մէջը մուծ ու խաւար բանտի մը մէջ դրաւ, որ աս երկու մարդոցը հոգիներուն խիստ զարշելի և զարշահոտ տեղ մըն էր ան: Ուստի անոնք աս տեղս Չորեքշաբթի առտըվընէ մինչև Շաբաթ իրիկուն առանց պատառ մը հացի ու կաթիլ մը ջուրի, առանց ճրագի ու առանց ինչպէս ըլլալնին հարցունող մէկու մը մնացին. ուրեմն շատ գէշ վիճակի մէջ էին աս տեղս, ու բարեկամներէ և մերձաւորներէ հեռու էին * . Սալմ. ձէ. 18: Լիմայ աս տեղը

* Ըս որոշեալ ժամանակը՝ Չորեքշաբթի առ-

Վրիստիանոս երկու ցաւ ունէր , որովհետեւ իր անխրատ խորհուրդովն էր որ աս նեղութեանս մէջը ինկան * :

Գանք որ Հսկայ Յուսահատութիւնը կնիկ մը ունէր , ու անոր սնունը Մնվստահութիւն էր . ասանկ երբոր ինքը անկողին մտաւ պառկելու՝ իր ըրածը կնկանը պատմեց . այսինքն՝ թէ երկու հոգի բռներ ու իր բանտը դրեր է

տրվընէ մինչև Շարաթ իրիկուն՝ գուցէ ան մտօքը նշանակած է հեղինակը՝ որ կրկարծէ թէ ասանկ վիճակի մը մէջ ընդհանրապէս այսչափ կրնայ ողջ մնալ մարդ :

* Ո՛վ զարմանալեացս . ի՞նչպէս աս բարեյաջող Վրիստոնեաները Արկրայութեան Միոցը ինկան : Խրա՞ւ է որ փրկութեան ճամբուն մէջը այսչափ յառաջանալնուն ետե՛՛ ճամբուն վրայ այնչափ փառաւոր բաներ տեսնալնուն ետե՛՛ իրենց Տէրօջ սէրը ու շնորհքը այնչափ վայելնուն ետե՛՛ ու անոր հաւատարմութիւնը շատ անգամ փորձելնուն ետեւ տակաւին Արկրայութեան Միոցը մտնան : ()տարտի բան մը չէ՞ աս : Չէ . հասարակ բան մըն է . ամենահաստատ Վրիստոնեաները սխալմունքի մէջ իյնալու՝ ու ճամբէն խոտորելու , ու ետքը ամենամեծ ու աղէտալի երկրայութիւններով պաշարվելու . ենթակայ են : Սակայն թէ և Արկրայութեան Միոցին մէջը ըլլան , բայց յատուկ ողորմութիւն մըն է իրենց յուսահատութեան երկաթ վանդակին մէջը չի բանտարգրվելնին :

որ իրենց Թշուառութեանը վրայ ողջան , ու իրենց տանջանքներուն տակը հեծեն . ուստի բոլոր ան օրը ուրիշ կերպով չանցուցին իրենց ժամանակը , հապա հաուաչանքներով և դառնակսկիծ ողբերով : Հետևեալ գիշերը հսկային կնիկը նորէն սկսեց հարցուփորձը . նեւ իր երկանը անոնց վրայով , ու իմանալով որ տակաւին ողջ են՝ խլիատ տըլաւ որ երթայ յորդորէ զանոնք որ ինքրզինքնին մեուցունեն : Առտըվանց լուսնալուն պէս հսկան անոնց բովը գնաց խոժոռած երեսով ինչպէս առջի անգամին , ու իմանալով որ առջի օրը իրեն բաշած ծեծին պատճառովը սաստիկ ցաւ կըզդային , ըսաւ անոնց՝ Թէ որովհետեւ բնաւին ան տեղէն դուրս ելլալու ճարը չի կայ , իրենց մի միայն բռնելու ճամբան աս է որ իսկոյն ինքրզինքնին սպաննեն , կամ դանակով կամ կախովելով և կամ Թունով : Վանզի՛ ըսաւ հսկան , կեանքը ապրիլը այսչափ զառնութեամբ լեցուն ըլլալէն ետքը ինչո՞ւ համար անիկա պիտի ընտրէք : Բայց անոնք աղաչեցին իրեն որ Թող տայ իրենց երթալու : Ասոր վրայ քիթն ու բերանը ծռելով անոնց վրայ նայեցաւ , ու վրանին վազելով անտարակոյս

ինքը անոնց վերջը պիտի բերէր . սակայն անանկ եղաւ որ իր ախտերուն մէկը վրան գալով մարեցաւ ինկաւ , (քանզի երբեմն պայծառ արևոտ եղանակներուն իր ախտերը զինքը կրբռնէին .) և ատեն մը չի կրցաւ իր ձեռքերը խաղցունել . անոր համար մէկզի քաշվեցաւ ու առջի անգամին պէս ձգեց անոնք * որ երթան ինչ ընելիքնին մտմտան : Ընատենը ճամբորդները սկսեցին իրենց մէջը մտածել , թէ արդեօք լաւագոյն է որ իր խըրատը բռնեն՝ թէ չէ . և ասանկ սկսեցին խօսակցիլ :

Եղբայր՝ ի՞նչ ընենք , ըսաւ Վրիստիանոս . հիմակվան մեր ապրած կեանքը թշուառ կեանք է : Իմ կողմանէս՝ ես չեմ գիտեր թէ արդեօք աղէկը ասանկ ապրիլն է , թէ իսկոյն մեռնիլը : Իմ հոգիս խեղդըրվիլը ապրիլէն է , վելի կընտրէկոր , ու գերեզմանը աս բանտէն էվելի հանգստութիւն է ինձի . Յօլք . է . 15 : Ըսկային խրատը բռնենք մի † :

* Յուսահատութիւնը հաղիլ թէ կտտարելապէս կրտիրէ մարդու մը վրայ աս աշխարհիս մէջ :

† Ողորմելի Վրիստիանոս , ինչ է ատ , դուն գրեզ կորսընցունելու գրգռվեցար : Ո՛վ Տէր ,

Յոսուէց . Իրաւ մեր հիմակվան վիճակը զար-
հուրելի վիճակ մըն է , ու մահը շատ էվելի
ընդունելի պիտի ըլլար ինծի քան թէ յաւի-
տեան ասանկ մնալը . բայց եկոր միտքերնիս
բերենք որ մեր երթալու երկրին Տէրը ըսաւ
թէ՛ Ս՛ի սպանաներ . այսինքն ուրիշ մարդու
անձին սպաննութիւն մընէր . ուրեմն ևս ա-
ռաւել արգիլված ենք մենք մեր անձը սպան-
նելու : Եսկից ՚ի զատ , ան որ ուրիշը կըսպան-
նէ , միայն անոր մարմինը կըսպաննէ . բայց
ան որ ինքրզինքը կըսպաննէ , մարմինը ու հո-
գին մէկէն կըսպաննէ : Եւ դարձեալ՝ եղբայր
իմ , դուն գերեզմանին մէջը հանգստութիւն
ըլլալու վրայ կըխօսիս . բայց մոռցա՞ր դժոխքը
ուր որ սպաննողները պիտի երթան առանց
տարակուսութեան . քանզի սպաննողը յաւի-

մարդը ինչ է : Բայց նայէ՛ ով յուսահատեալ հո-
գի , տեսան խօսքին ճշմարտութիւնը , թէ՛ “Ձեր
վրայ մարդկային փորձութենէ ՚ի զատ՝ ուրիշ չէ
պատահած . բայց Եստուած հաւատարիմ է որ ձեզ
փորձութեան մէջ չի ձգեր ձեր կարողութենէն է-
վել՝ հապա ան փորձութեանը հետ հնարքն ալ
կընէ , որ կարող ըլլաք համբերել” . Թ . Կորնթ .
Ժ . 13 : Եմենեին չի պիտի ձգէ Եստուած իր ժո-
ղովորդը՝ որ ինքը առաջուց ճանչցաւ . Լուով .
ԺԹ . 2 :

տենական կեանք չունի * : Եւ մէյմալ աս մտմտանք որ բոլոր զօրութիւնը Հսկայ Յուսահատութիւնին ձեռքը չէ . որչափ որ ես կիմանամ նէ՞ ուրիշներն ալ իրմէն բռնըվեցան մեզի պէս , և սակայն իր ձեռքէն փախան : Մի գիտէ , կարելի է թէ Մտուած՝ որ աշխարհս ստեղծեց , Հսկայ Յուսահատութիւնին կեանքը առնէ , կամ մէկ օր մը մոռնալ տայ անոր մեր վրայէն կղպելու , կամ թէ շատ չանցած իր ուրիշ մէկ ախտովը բռնըվի մեր առջևը , ու իր անդամները չի կրնայ բսնեցունել : Եւ թէ որ անդամ մըն ալ աս բանս պատահելու ըլլայ , իմ կողմանէս ես միտքս հաստատեր եմ որ քաջ մարդու՛մը պէս սրբտոտիմ , և իմ բոլոր կարողութեամբս ջանք ընեմ իր ձեռքին տակէն սլծելու : Յիմար էի ես որ առաջ չի ջանացի անիկա ընելու : Եւ այցինչև իցէ՞ եղբայր իմ , համբերութիւն ընենք

* Յուսալից անձնասպանութեան դէմ վճռական առարկութիւններ կրնէ : Մտարակոյս մարդիկ ընդհանրապէս աս զարհուրելի մեղքը գործելու կը համարձակին՝ կամ չի հաւտալով Սուրբ Վրոց վարդապետութեանը ապառնի ու մշտնջենաւոր հատուցման՝ վրայ , և՛ կամ մոռնալով անիկա :

ու ատեն մը տոկանք . կրնայ գալ ատեն մը որ մեզի երջանիկ ազատութիւն մը շնորհէ . սակայն մենք մեր անձին սպաննողները չըլլանք : Ըստ խօսքերովս Յուսալիցը առ այժմ իր եղծօրը միտքը խաղաղեց . այսպէս ան օրը մութ տեղը մնացին անոնք իրենց տրտում և տխուր վիճակին մէջը * :

Իրիկվան դէմ հսկան կրկին վար իջաւ բանտը որ տեսնայ թէ իր բանտարգեալները իրեն խրատը բռնեցի՞ն մի : Բայց երբոր հոն եկաւ՝ անոնք կենդանի գտաւ . ու ճշմարտապէս բոլոր մնացածը միայն կենդանութիւն էր . քանզի հիմայ անոնք անթուութիւնով ու ծարւութիւնով՝ ու հսկային ծեծելէն իրենց ցաւերուն պատճառովը շունչ առնելէն զատ հազիւ թէ բան մը կրնային ընել : Բայց ինտոր որ ըսի՝ անոնք կենդանի գտաւ . ասոր վըրայ սաստիկ սրտմտութեան մէջ ինկաւ , ու

* Ընոնք որ երկար ժամանակ երկարատե խաղաղութեամբ Ըստուծոյ ճամբաներուն մէջը քալեցին , երբոր մեզքը իրենց խղճմտանքները խայթէ , անփորձ հաւատացեալներէն աւելի կրվճտանան . մանաւանդ թէ որ ուրիշներուն ալ մեղանչելու պատճառ եղան , կամ աւետարանին վրայ նախատինք բերին :

ըստ անոնց՝ թէ իր տըւած խրատին հնազանդութիւն չընեն խոն համար փոշիման պիտի ընել տայ զիրենք իրենց ծնած ըլլալուն :

Աս խօսքին վրայ մեծապէս սարսափեցան անոնք, ու միտքս կուգայ թէ Վրիստիանոս մարեցաւ անատենը . բայց կրկին քիչ մը ինքըզինքին գալով հսկային տըւած խրատին վըրայով իրենց խօսակցութիւնը նորոգեցին, թէ արդեօք լաւագոյն է իր խրատը բռնել՝ թէ չէ : Հիմայ Վրիստիանոս դարձեալ կըթըւէր թէ ան բանը ընելու կըմտածէր . բայց Յուսալիցը իր երկրորդ պատասխանը ըրաւ աս հետեւեալ կերպովը :

Եզըայր իմ, ըստ ինքը, միտքդ չե՞ս բերեր թէ դուն մինչև հիմայ ինչպէս քաջասիրտ էիր : Ոչ Վրոզիոնը կըցաւ յաղթել քեզի, և ոչ ան ամէն բաները որ Սահուան Ըռքին Չորին մէջը լսեցիր կամ տեսար կամ զգացիր * : Ո՞րչափ դժուարութիւններէ դողերէ

* Ընցեալ փորձառութիւնները պարտինք միտքերնուս չի հանել, ու անոնց յիշատակութիւնը պարտի քաջալերել զմեզ որ ամէն պատահարներու մէջ առաւել ևս Տէրոջը ապաւինինք : Այս պատճառովը Յուսալից Վրիստիանոսին միտքը կըձգէ Վրոզիոնին վրայ անոր ստացած յաղթութիւնը,

և սարսափներէ անցար դուն արդէն . ու դուն հիմայ ուրիշ բան չես , հապա միայն երկի՞նդ : Երտեսնաս որ ես ալ քու հետդ աս բանտին մէջն եմ , ես՝ որ բնութեամբ քեզմէ շատ տըկար եմ : Եւ, ահ աս հսկան իս ալ վերաւորեց ինտոր որ քեզ . ու նաև իմ բերնէս ալ հացը ու ջուրը կտրեց , ու քու հետդ առանց լուսի կուլամ կողքամկոր : Սակայն եկոր քիչ մ'ալ համբերութիւն ընենք : Միտորդ բեր թէ Ունայնութեան Տօնավաճառին մէջը ինչպէս քաջասիրտ էիր . ո՛չ շղթայէն՝ ո՛չ բանտէն՝ և ո՛չ արիւնահեղ մահէն կրվախնայիր . ուստի եկոր որչափ որ կրնանք նէ համբերենք , զոնէ ազատ մնալու ան ամօթէն՝ որուն մէջը գտնը վիւ չի վայլեր Վրիստոնէի մը :

Արդ՝ ան օրն ալ իրիկուն ըլլալով՝ ու հրական ու իր կնիկը անկողինը ըլլալով , կինը բանտարգեալներուն վրայով հարցուց անոր թէ արդեօք իր խրատը բռնեցի՞ն մի : Պատասխան տըլաւ հսկան : Ենոնք պինտ գլուխ չարաճճիկներ են . էվելօք կրնտրեն բոլոր նէ

ու Ունայնութեան Տօնավաճառին մէջ անոր արիութիւնը . ու ասոնք անոր մարած մտքին քաջալերութեան առիթներ ըլլալ կըցուցընէ :

դուժխնները քաշել քան թէ ինքզինքնին
 սպաննել : Վնասուն կինը լուս . Վ ազր անոնք
 ամրոցին բակը հանէ , և քու մինչև հիմաց
 սպաննած անձինքներուց ոսկոյնները ու գլուխ
 ները ցուցուր , ու հաւտացուր անոնք թէ շա
 քաթ մը ջանցած կտոր կտոր պիտի ընես զի
 Կենք ինտոր որ առաջ իրենց ընկերները ըրեր
 էս * :

Վ յապէս առտը վանց լուսնալուն՝ հսկան
 նորէն անոնց զնաց , ու անոնք ամրոցին բակը
 հանեց , ու իր կնոջը իրեն լուսնին պէս ցու
 ցուց անոնց : Իսոնք ասեալք ձեզի պէս ճամ
 բորդներ էին՝ լուսնին բեր . ու ձեզի պէս ինծի
 ղէմ յանցանք փորձեցին իմ երկիրներուս վը
 լայ ոտք կոխելով . ու երբոր ուզեցի նէ կտոր
 կտոր ըրի զանոնք , և ձեզ ալ անանկ պիտի
 ընեմ տաւր տուր մէջը . գացէք , վար իջէք

* Ե առերկան որ ասնն մը բարեպաշտութեան
 ճամբուն մէջ յառաջմնալէն ետև մեղքէն ու աշ
 խարհէն կը յաղթըլին . ասանկիներուն ուրացու
 թիւնը ու սարսափելի վախճանը , ահա որ ապէս վը
 զարհուրեցունէ ուխտադրուժ՝ լքեալ և յանցաւոր
 հաւատացեալ , կրբոր իր խղճմտանքը նորէն կար
 թըննայ , ու Աստուծան թղքաւութիւն կը ստա
 նայ սաստկապէս յարձակել իր վրայ :

նորէն ձեր բանտը : Եւ աս ըսելով բոլոր ճամբան մինչև բանտը որ գացին նէ ծեծեց զանոնք : Ուստի անոնք բոլոր ան Շաբաթ օրը ողբալի վիճակի մը մէջ մնացին առջևքի պէս : Իրիկուն ըլլալուն՝ երբոր Մնվստահութիւն խաթունը ու իր էրիկը հսկան անկողին մտան , սկսեցին դարձեալ իրենց բանտարգէտներուն խօսքը ընել , ու ծերունի հսկան կըզարմանար որ ո՛չ իր քաշած ծեծերովը և ո՛չ իր խրատովը կըրցաւ անոնց վախճանը բերել : Եւսոր վրայ իւ կնիկը լսաւ թէ , Ս խնամ որ ատոնք մէկ յուսով մը կապրինկոր՝ թէ մէկը պիտի գայ զիրենք ազատելու . կամ թէ ատոնք կըրցապք բանալու գործիքներ ունին՝ քովերնին , որոնց միջնորդութիւնովը փախչիլ կը յուսան : Ի՞նչ կըսեսկոր , սիրելիս , ըսաւ հսկան . ուրեմն վաղը առտու վրանին պիտի նայիմ ես :

Գանք որ Շաբաթ իրիկուն կէս գիշերվան մօտ բանտարգէտները սկսեցին աղօթք ընել , և գրեթէ մինչև առտու շարունակեցին աղօթքը * : Երգ՝ արշալուսէն քիչ մը առաջ

* Տէրունական օրվան գալուստը՝ ու անոր սրբազան պաշտամունքներուն համար բարեպաշտօն անձանց ըրած նախապատրաստութիւնը շատ անգամ

բարի Վրիստիանոսը իբրև թէ ամբողջութեան մէջ ինկած մէկը՝ սկսեց աս եռանդուն խօսակցութիւնը ընել : Ինտոր յիմար եմ ես որ աս գարշահոտ բանտին մէջը նստեր եմ, կրուէր ինքը, երբոր ազատութեան մէջ կրնամ պլտրտիլ : Իննալի մը ունիմ իմ ծոցս Խոստմունք կոչված, որ անշուշտ գիտեմ թէ Լորկաբայութեան Լմրոցին մէջը որ կզպաքը ըլլայ նէ կըբանայ * : Լնատեն Յուսալիցը ըսաւ .

պատճառ կըլլան մեղաց ու յուսահատութեան մէջ իյնողները բժշկելու . և գուցէ Էդինսկնիս աս մտօքը աս բանտարգեաններուն աղօթքի սկսած ճիշտ ատենը Եբթի իրիկուն կէս գիշերին կուտայ : Սեղաց մէջ իյնողներուն բժշկութեանը համար բան մը չի կրնար ազդուութիւն մը ընել՝ մինչև որ անոնք ջերմեռանդութեամբ թախանձանօք ու յարատևութեամբ չի սկսին աղօթք ընելու : Էասարակ ժրութիւնը աս մասին անօգուտ է . ասոնք մարմիններնուն հանգստութիւն փնտրուեցին՝ որ ատեն պէտք էր իրենց արթուն մնալ ու աղօթել . ու հիմայ պարտին արթուն մնալ ու աղօթել՝ երբոր ուրիշները կըքնանան . ու պիտի ջանան անհանգիստ ըլլալ իրենց դժկամակութեանը դէմ, ու յարատևեն Լստուծոյ ողորմութեան ամոռին առջևը յաճախ իյնալու, մինչև որ իրենց խնդիրքը կատարվի :

* Վրիստոսով մեզի տրված փրկութեան ձրի խոստմունքն է ան մի միայն բանալին՝ որ անհաւա-

Ըտիկա թարի լուք է՝ պատուակաւն հղայր ,
հանէ անիկա բու ճոցէդ , ու փորձէ :

Քրիստիանոս բանիքը ճոցէն հանեց ու
ակեց բանտին դուռը փորձել , որուն կղպաքը
բանիքը դարձունելուն պէս ետ դնաց , ու
դուռը դիւրութեամբ մը բացվեցաւ , ու Քրի-
ստիանոսը ու Յոսափիցը երկուքն ալ դուրս
ելան : Ինչէ ետև դուրս դուռը դնաց՝ որ
ամրոցին բակը կրհանէր , և իր բանիքովը ա-
նիկա ալ բացաւ : Ա երջը երկաթ դուռը
դնաց , քանզի անիկա ալ պէտք էր բացվե-
լու . սակայն ան կղպաքը շատ սաստիկ դժ-
ուարութիւն տրուաւ , թէպէտ և բանիքը բա-
ցաւ անիկա * : Ընտանը քաջիցին բացին
դուռը՝ որ շուտով փախչին . բայց դուռը
բացվելուն անանկ ճութեցեց՝ որ Հսկայ Յո-
սահատութիւնը քունէն արթնցուց . և սա-

տութեան ու յուսահատութեան գաղտնածածուկ
կղպաքները կրնայ բանալ : Հաւատքն է ձեռքը՝ որ
կրթունէ խոստմունքին բանալին՝ կրդարձունէ ա-
նիկա կղպաքին մէջը՝ ու կրբանայ դուռը որ կապված
բանտարգեալը փախչի ազատի :

* Ինչնալին (խոստմունքը) յանցանք չունէր ,
հապա ձեռքը (հաւատքը) որ անիկա դարձուց :



կայն հսկան իր բանտարդեալներուն ետևէն իյնալու համար արտորնօք ցաթկեւ ելլալուն՝ իր անդամները թուլցան տկարացան . քանզի իր ախտերը կրկին բռնեցին ղինքը , անանկ որ մէկ կերպով մը չի կրցաւ անոնց ետևէն երթալ : Ըրդ՝ մէկալները առաջ գացին՝ ու նորէն եկան Թագաւորին պողոտային մէջը մտան , ու սասանկ ապահով եղան . քանզի հիւ մայ հսկային հրամայած սահմաններէն դուրս էին :

Հիւմայ երբոր ան սանդուխէն իջան , սկըսեցին իրենք իրենց մտածել՝ թէ անոր առջևը ի՞նչ ընեն , որ իրենցմէ հտքը գալու ճամբորդները չսկայ (Յուսահատութիւնին ձեռքը իյնալէն ազատ պահեն : Ուստի խորհուրդ ըրին արձան մը կանգնել ան տեղը , ու անոր վրայ աս վերտաւութիւնը փորագրել : « Ըս սանդուխին մէկալ կողմի ճամբան Երկբայութեան Ըմբոցը կերթայ , որուն տէրն է՝ չսկայ (Յուսահատութիւնը , որ երկնային քաղաքին Թագաւորը բանի տեղ չի սեպեր , ու իր սուրբ ճամբորդները կորսընցունել կըխնդրէ” : Ուստի ասոնցմէ հտքը եկողներուն շատերը աս

զրվածքը կարգացին ու ան վտանգէն ազատեցան * :

* Ըստ տեղս պէտք է յատկապէս նշանակվիլ թէ հաւատքը որ Ղամբորդները Հսկայ Յուսահատութիւնին ամրոցէն ազատեց , հաւանեցուց զանոնք առանց յամենալու հնազանդութեան շիտակ ճամբան դառնալու՝ ու առջինէն էվելի զգուշութեամբ անոր մէջը քալելու , անոր դժուարութեանը վրայ ալ գանգատ չընելով . ու պատճառեց անոնց որ ճար մը հնարեն ուրիշներուն իմացունելու որ չըլլայ թէ մէկը ան անցքէն ծուռ ճամբու մարգագետինը անցնի : Ըստ հակառակ մեռեալ հաւատքը ու անպիտան յանձնապաստանութիւնը մինչև անգամ արգելեալ գետնի վրայ ու Յուսահատութեան ամրոցին քովտանքը ևս ամէն երկբայութիւնները ու վախերը հալածական կրնէ , մինչև որ վերջապէս ողորմելի ու խաբված թշուառականը անակնկալ ժամու ու առանց ընդդիմանալու կը բռնելի ու անոր՝ որս կը լլայ : Բլ թէ որ Վրիստոնեայք Յանձնապաստանութեան ետևէ երթան՝ ու ջանան պահել իրենց յոյսը՝ որ ատեն իրենց յայտնի պարտաւորութիւնը զանց կրնեն , թող յիշեն որ (ուրիշները ինչ որ կուզեն թող ըսեն ,) ասանկով անշուշտ Ընվստահութիւնին հետ պիտի ծանօթանան , Լքրկբայութեան Ըմրոցին մէջը պիտի փակվին , ու զարհուրելի ծեծ պիտի ուտեն Հսկայ Յուսահատութենէն : Բլ չի պիտի ազատին՝ մինչև որ ցաւալի փորձառութիւններով սորվին թէ աներկեան յոյսը անքակտելի կերպով կապված է հաւատքին ու սիրոյ գործքերուն հետ :

Ասիկա որ եղաւ՝ սկսեցին աս հետեւալ
երգը երգել .

Ճամբէն դուրս ելանք ու գտանք անդին
Թէ ի՛նչ էր կոխել արգելեալ գետին .
Ըրդ անոնք որ մեր ետեւէն կուգան՝
Խրենց անձերուն թող զգուշանան ,
Որ չի բռնըվին յանցանք ընելով
Ու գերի ըլլան ան մեծ չարին քով ,
Որուն ամրոցը է Արկապուծին՝
Ու իր անունը Յուսահատութիւն :

Անկէ ետեւ անոնք իրենց ճամբան գացին՝
մինչև որ եկան Օլուարձալի լեռները , որոնք
ան բլուրին Տէրոջը լեռներն էին՝ որուն վրայ
առաջ խօսեցանք : Ուստի ան լեռներուն վը-
րայ ելան՝ որ ծաղկոցները ու պարտէզները՝
այդինները ու ջուրերու աղբիւրները տեսնան .
հոննաւ ջուր խմեցին ու զերենք լուացին , և
այգիներուն պտուղէն ազատաբար կերան :
Ըրդ՝ աս լեռներուն գլուխները հովիւներ
կային՝ որոնք իրենց հօտերը կարածէին , ու
իրենք ճամբուն քովը կայնած էին : Ու ասն
որոյ ճամբորդները դէպի անոնց գացին , ու ի-
րենց գաւազաններուն վրայ կրութ ընելով՝ (ինչ-
պէս որ հոգնած ճամբորդները մէկուն հետը

խօսելու համար ճամբուն վրայ կայնած ա-
տեննին կրնեն,) հարցուցին . Որո՞նն զուար-
ճալի լեռներն են ասոնք, և որո՞նն են ասոնց
վրայ արածող ոչխարները :

Հովհաննէս . Ըս լեռները Լյամանուէլին Ել-
կիրն են, ու իր քաղաքէն կըտեսնըվին ասոնք :
Վաւ ոչխարներն ալ անորն են, ու ինքը իր
կեանքը զրաւ անոնց վրայ * . (Յ . Ժ . 11—
15 :

* (Յանցաւոր Վրիստոնեաները երբոր խորին ա-
պաշխարութեան դառնան՝ կենդանի հաւատքին
դործերը նորէն ձեռք առնեն՝ ու իրենց զանցառու-
թեան ձգած անձնուրացութեան պարտաւորու-
թիւններուն մէջը կամաւոր հնազանդութիւն կա-
տարեն, Տէրը իր փրկութեանը ուրախութիւնը
կրկին կըշնորհէ անոնց, ու իրենց առջի միսիթա-
րութիւնները առաւել ևս առատ ու տւակաւ կըլ-
լան : Օրարճալի լեռները կըթըլի թէ կընշանա-
կեն խաղաղութեան ու միսիթարութեան ան ան-
վերդով ժամանակները՝ որ ամրապինտ հաւատա-
ցեալները յաճախ կըվայելեն իրենց ծերութեան
հասակին մէջ : Ընդք ըստ մեծի մասին ի-
րենց երիտասարդական կիրքերուն բռնութիւնը
անցուցած են, ու կեանքին բազմազաղ տեսա-
րաններուն մէջը իրենց մասին ինկածը արիւրաբար
կատարած են . երկարատե փորձառութեամբ պար-
զամտութիւնով հնազանդ ու հպատակ ըլլալ սոր-
ված են . Տէրը բարեգթութեամբ կազատէ զանոնք

Վրբխախանս . Երկնային քաղաքը երթալու
ճամբան ասիկա է :

Լուսնի . Ձեր երթալու ճամբան շիտակ
աս է :

Վրբխախանս . Ի՞րչապի հեռու է ասկից մինչև
հոն :

Ֆանր նեղութիւններէն ու փորձութիւններէն . Լստուծոյ պաշտօնեաներուն ու ժողովրդոցը հետ առաւել ևս կրճածօթանան , ու շատ պարտաւարժան բարեկամներէ պատիւ՝ վստահութիւն՝ ու սէր կը վայելեն . շատ պատեհութիւն ունին Լստուծոյ հետ հաղորդութիւն ընելու , ու կրօնքին անմիջական պաշտօնները կատարելու . ու շատ անգամ կը խօսակցին իրենց եղբայրը հետ Տէրօջ մարդասիրութեանը ու ճշմարտութեանը վրայ , մինչև որ սրտերնին իրենց ներսը կըճմլի : Լստապէս իրենց գաւաղաններուն վրայ կռթռնելով , այսինքն՝ հաստատուն հաւատքով ու յուսով Լստուծոյ խոստմունքներուն ու կատարելութեանցը ապաւինելով՝ անպատում ու փառաւորեալ խնդութեամբ իրենց ապառնի երջանկութեանը աչքերնին դրած կրապասն : Լուսնիները ու անոնց հօտերը , կընշանակեն Լստարանի Պաշտօնեայնեքու Վրխատոսի Իրէխաւոր Լուսնի Եկեղեցիները : Լս լեռները Լսմանուէլին Երկիրն են . քանզի աշխարհի հետ հաղորդակցութիւն ու միաբանութիւն ընելէն հրաժարված ըլլալով , ալ հիմայ անոնք իրենց ժամանակը գրեթէ բոլորովին Խաղաղութեան Խշխանին պորձքերուն մէջ ու իբր թէ անոր առաւել սեփահական ներկայութեանը կանցունեն :

Հովնաները . Չափազանց հեռու է ամէն ա-
նոնց՝ որոնց որ տրված չէ հոն հասնիլ * :

Վրիստինն . Ճանապարհը ապահով է ,
թէ վտանգաւոր :

Հովնաները . Եւրոպայի է անոնց՝ որոնց հա-
մար որ ապահով ըլլալու է . բայց օրինա-
զանցները անոր մէջը պիտի խնան † . Ովն .
Ժ. 10 :

Վրիստինն . Եւ տեղս հոգնած ու ճամբուն
մէջը մարած ճամբորդներուն համար սփո-
փութիւն մը կայ մի :

Հովնաները . Եւ լեռներուն Տէրը մեզի պատ-
ուիրեց որ օտարներուն հիւրընկալութիւն ը-

* Որչափ ճամբորդներ ճամբայէն կը հոգնին՝ կը
տկարանան՝ ու մինչև վերջը չեն հասնիր : Թէպէտ
և ճամբան շատ հեռու ըլլայ, շատ անձուկ ու շատ
նեղ ըլլայ շատերուն որ ճամբայ կեցնեն ու մինչև
վերջը բնաւ չեն շարունակեր, սակայն ամէն անոնք
որ շնորհաց բանէն ու ճշմարտութեան Հոգիէն
ծնած են՝ մինչև վերջը պիտի յարատեւեն, Եւստու-
ծոյ կարող զօրութիւնովը հաւատքով յաւիտե-
նական փրկութեան համար՝ պահված . Թ . Պէր .
Թ . 5 :

† Ընտրվածները պիտի հասնին , մնացածները
մեղքով ու անձնական արգարութիւնով պիտի կու-
րանան . Հովն . Ժ . 7 : Օգուշ կեցէք անձերնուդ .
Ե . 304 . 8 :

նեղ զանց չընենք . ուստի աս տեղին բարիքը
ձեր առջևն է . Եբր. 47. 2 :

Աս ալ տեսայ երազիս մէջը՝ որ երբ Հո-
վիւնները իմացան թէ անոնք ճամբորդ մար-
դիկներ էին ; իրենք ալ անոնց հարցումներ
ըրին , (որոնք ուրիշ տեղերը տըրած պատաս-
խանուն պէս պատասխան տըրին անոնց .)
ինչպէս ըսենք թէ՛ Ուրկի՛ց եկաք , և՛ Ի՞նչ
պէս ճամբան մտաք . և՛ Ի՞նչ միջոցներով ա-
սանկ յարատեցիք անոր մէջը . քանզի հոս
գալու սկսողներուն միայն քիչերը իրենց երե-
սը աս լեւներուն վրայ կըցուցընեն : Բայց
երբոր Հովիւները անոնց պատասխանը ըն-
ցին , մեծապէս հաճելով ան պատասխա-
նիներուն՝ շատ մարդասիրութեամբ նայեցան
անոնց վրայ , ու ըսին . Բարի՛ եկաք աս Օլ-
լարձալի՛ լեւները :

Աս հովիւները՝ որոնց անուններն էին Գի-
տութիւն , փորձաւորութիւն , Լըթնութիւն , և
Լնկեղծութիւն * , անոնց ձեռքերէն բռնեցին

* Հովիւներուն անունները կըցուցընեն Վրիս-
տոսի ճշմարիտ պաշտօնէին գլխաւոր հանգամանք-
ները : Վրիստոսի պաշտօնեայն աւետարանական
վարդապետութիւններուն վրայ պիտի ունենայ

ու իրենց տաղաւայները տալին : և ինչ որ ան ժամուն պատրաստ կրգտնըվէր նէ կեր-
ցունեւ տըւին անոնց : 'Կակ ըսին թէ' կուզենք
որ աստն մը հոս կենաք մեզի հետ ծանօթա-
նալու : ու աս Օ՛ւուարձալի լեռներուն բազիբ-
ներովը դուք ձեզ կվիլի գուարձացունեւ լու :
Ընաստն ճամբորդները ըսին անոնց թէ իրենք
հաւանութիւն ունին մնալու . և այսպէս ան
գիշերը հանգստանալու դային , քանզի աստնը
շատ ուշ էր :

Ասկից ետքը երազիս մէջը տեսայ՝ թէ աս-
տըվանց հովիւները Վրիտիանոսը ու Յու-
ասլիցը արթնեցուցին , լեռներուն վրայ ի-
րենց հետք պըտըտեւ լու : Ըստպէս 'ի միասին
տուրս ելան՝ ու աստն մը պըտըտեցան , ամէն
կողմէն գուարձալի տեսարան մը ունենալով :
Ա երջը հովիւները իրարու ըսին . Վրդեօք
քանի մը հրաշալի բաներ ցուցընե՞նք աս ճամ-
բորդներուն : Արբոր վճռեցին ըստճին ընել՝
մախ և առաջ առին տարին զանոնք Սորդու-

գիտութիւն , անոնց զօրութեանը վրայ՝ փորձառու-
թիւն , իրեն հոգողութեանը յանձնըված ժողո-
վարդին վրայ՝ արթնութիւն , ու հերոջմէն իր ըն-
դունածը անոնց քարոզելուն՝ անկեղծութիւն :

Թիւն կոչված բլուրի մը գլուխը՝ որուն մէկտէլ կողմը գահավէժ խորուժիւն ունէր, և հրամայեցին անոնց որ վար նային՝ բլուրին յատակը : Աւտոի Վրիստիանոս ու Յուսաբեց վար նայեցան՝ ու տեսան որ վարը խել մը մարդիկ ջարդուբուրդ եղած էին բլուրին յատակը անոր գլուխէն ինտրով : Ենատեն Վրիստիանոսը հաճեց թէ, Եթիկա ի՞նչ կրնշանակէ : Պատասխան տրւին շովիւները՝ և ըսին . Չի լսեցի՞ք զուք անոնց վրայով որ շիմենոսին ու Փիլետոսին մտիկ ընելով՝ մոլորեցան ան հաւատքէն, որ մարմինին յարուժիւն առնելուն վրայ է . ք . Տի . ք . 17, 18 : Պատասխան տրւին թէ, Եյո՛ : Ետքը շովիւները ըսին . Եսոնք՝ որ աս լեռանը ստորոտը ջարդուբուրդ եղած կը տեսնաքկոր, անոնք են . և ինչպէս որ կըսես նաք՝ մինչև աս օրս առանց Թաղվելու մնացին ուրիշներուն օրինակ լլկալու, որ զգուշ կենան չափազանց բարձրերը ելլալու ջանալէն, կամ աս լեռանը գահավէժ տեղին խիստ մօտենալէն * :

* Եմեն մոլորութիւնները վնասակար են . ոմանք վտանգի տակ կըձգեն, ոմանք բոլորովին կըկործանեն : Ենդինակին միտքը աս տեղս վերջի յիշված

Ասկից ետքը տեսայ որ ուրիշ լեռան մը գլուխը տարին զանոնք . և ան լեռանը անունը կըսվէր՝ Օգուշութիւն * , ու հրամայեցին որ

մոլորութիւններուն կընայի . ինչու որ ինքը կընկարագրէ հաւատքէ ապստամբ եղողներուն վիճակը , որոնք որ կիյնան ու բոլորովին կըկորսըվին :

* Էբղինակը աս տեղս կըխօսի համաձայն Սուրբ գրոց որ խրատներով ու զգուշութիւններով լեցուն են , ինչպէս Եբր . Կ . 4—6 : Ժ . 26 , 27 : Ժք . 15 , և ուրիշ տեղեր : Ըստ զգուշութիւնները չեն իմացուներ մեզի թէ ճշմարիտ հաւատացեալները կընան բոլորովին հաւատքէ իյնալ ու կորսըվիլ . սակայն երկու պատճառով խիստ հարկաւոր են . մէյմը՝ կեղծաւորները ու սնոտի յուսով խաբվածները արթընցունելու համար , որոնք եկեղեցիին անդամներուն հետ խառնըված են՝ առանց անոր ճշմարիտ անդամները ըլլալու . ու մէյմալ՝ ճշմարիտ քրիստոնեայները զգուշացունելով անոնց յարատեւութիւնը հաստատելու համար : () րինակի աղագաւ՝ հայրը իր որդին կըխրատէ՝ կըզգուշացունէ ու կը յորդորէ որ չիյնայ , թէպէտ և ինքը միշտ գիտէ թէ անոր ձեռքէն բռնած ըլլալով չի կընար իյնալ ան : Վարձեալ՝ ասիկա ուրիշ կերպով հաստատելու համար րսէնք թէ մէկ դիպուած մը կայ առջնիս որ բացարձակապէս սահմանված է թէ ինչպէս պիտի կատարվի ան . և սակայն անոր կատարվելուն համար բացարձակապէս հարկաւոր ըլլայ մէկ միջոց մը բանեցունել : Ինչպէս Պօղոս նաւին մէջը իր հետը եղողները հաւտացուց թէ անոնցմէ մէկուն կեանքին վնաս մը չի պիտի ըլլայ . Վարձ . իէ .

դէպի հեռուն նային . ասիկա որ ըրին՝ իրենց անանկ թլւեցաւ թէ կըտեսնանկոր որ խել մը մարդիկ հոն տեղը եղած գերեզմաններուն մէջը վեր ու վար կըպըտըտէին . ու իմացան որ մարդիկը կոյր էին . ինչու որ ատեն ատեն կըզլտորէին դերեզմաններուն վրայ կիյնային ու չէին կրնար անոնց մէջէն դուրս ելլել : Եւ նատեն Վրիստիանոս ըսաւ . Եսիկա ի՞նչ կը նշանակէ :

Պատասխան տըւին շովիւները թէ , Ես լեռներէն քիչ մը վարով մէկ սանդուխ մը չի տեսա՞ք դուք որուն մէկալ դին մարգագետին մը կար աս ճամբուն ձախ կողմը : Պատասխան

22—25 . ասիկա բացարձակապէս սահմանված բան մըն էր . սակայն երբոր նաւավարները նաւէն փախչիլ կուզէին , զինւորներուն ըսաւ թէ՛ թէ որ ատոնք նաւին մէջը չի մնան , դուք չէք կրնար ազատիլ . 31 համարը . ասիկա բացարձակապէս հարկաւոր միջոց մըն էր որ Պօղոս բանեցուց : Եսոր նման թէպէտ Վրիստոս իր ոչխարներուն յաւիտենական կեանք կըշնորհէ՝ ու անոնք ամենեւին չի պիտի կորսըվին , բայց ժուրթիւն ու արթնութիւն պէտք է՝ իբրև միջոց իրենց ազատութեանը : Եղբարք իմ , ահով ու գողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք . ինչու որ Եստուած է՝ որ ձեր մէջը կըյաջողէ կամելը ու ընելը իր հաճութեանը համար . Փիլ . ք . 12 , 13 :

տրւին թէ : Եւր : Կտքը Հովիւները ըսին .
 Ետ սանդուխին ներսի կողմէն ճամբայ մը կայ
 որ շտակ Լորկբայութեան Եմրոցը կը հանէ :
 որնոր Հսկայ Յուսահատութիւնին ձեռքն է .
 և աս մարդիկը՝ (գերեզմաններուն մէջնները
 ցուցնելով .) աստեօք ճամբորդութեան ելեր
 էին՝ ինչպէս որ դուք հիմայ , ու մինչև ան նոյն
 սանդուխը եկան : Եւ որովհետև ան նոյն տե-
 ղը շտակ ճամբան խորտուբորտ էր՝ մտածե-
 ցին որ անկից ելան մարդագետիներ անցնին ,
 ու Հսկայ Յուսահատութիւնէն բռնըվեցան և
 Լորկբայութեան Եմրոցին մէջը բանտարգը-
 վեցան : Հոն աստե՛ն մը բանտարգեալ մնալէն
 հտքը վերջապէս Հսկան անոնց աչքերը հա-
 նեց ու անոնք տարաւ ան գերեզմաններուն
 մէջը ձգեց որ հոն մինչև աս օրս թափառին ,
 որպէս զի իմաստունին խօսքը կատարվի . Ե-
 ռու . Իա . 16 : Հիմայ Քրիստիանոսը ու Յու-
 սալիցը մէկգմէկու կընայէին աչքերնուն ար-
 ցունք գալով , բայց բան մը չըսին Հովի-
 ներուն * :

* Այդէկ կրնան մեր աչքերը արցունքով փղծկիւ
 ու մեր սիրտերը ներսերնիս ճմլել , երբոր կրտս-
 նանք կամ կըլսենք թէ ռբիշները ան նոյն փոր-

Մէյմալ երազես մէջը տեսայ որ Հովիւները ուրիշ տեղ մը տարին անոնք ձորի մը մէջ , ուր որ բլուրի մը կողմը դուռ մը կար . ու դուռը բացին՝ և ըսին անոնց որ ներս նային : Ուստի ճանապարհորդները ներս նայեցան ու տեսան որ ներսը խիստ մութ էր և մութսոտ . նաև կարծեցին թէ հոն կրակի պէս շառաչիւնի ձայն մը ու չարչարանքի մէջ եղող մարդոց աղաղակը լսեցին , և թէ՛ ծծումբի հոտ առին : Բնատենը Վրիստիանոս ըսաւ . Բսիկա ի՞նչ կրնշանակէ : Հովիւներն ալ իրենց ըսին , թէ՛ Բսիկա դժոխքին մէկ կարճ ձամբան է , ձամբայ մըն է՝ ուրկից կեղծաւորները կերթան . այսինքն անոնք՝ որ Լսաւին պէս իրենց անդրանկութիւնը կրծախեն , անոնք՝ որ Յուդային պէս իրենց Տէրը կը վաճառեն , անոնք՝ որ Բղէքսանդրին պէս Լւետարանին կը հայհոյեն . և անոնք՝ որ Բնա

ձութիւններովը կործանեցան որոնցմով մենք ալ պաշարված էինք , բայց Բստուծոյ ողորմութիւնովը շնորհքով ազատեցանք : Եւստ հաւատացեալներ անանկ դիպուածներու կը պատահին որ իրենց անցած մեղքերը ու վտանգները միտքերնին կը բերեն , թէպէտ և կարելի է որ իրենց սխալմունքներուն վրայով լռեն :

նիային ու իր կնոջը Սափիրային պէս սուտ կը խօսին ու բան կը պահեն :

Հիմայ Յուսալիցը սկսեց խօսիլ Հովհաննէրուն հետ և ըսաւ . կարծեմ թէ ասոնք՝ մինչև անգամ ամէն մէկերնին իրենց վրայ ճամբորդի կերպարանք ունէին՝ ինտոր որ հիմայ մենք ունինք . անանկ չէ՞ մի :

Հովհաննէրը . Ե. յի . և երկար ատեն ալ ան կերպարանքը պահեցին :

Յուսալից . Ե. որեօք՝ մարդիկ ասոնց օրովը աս ճամբուն մէջը մինչև շր կրնային կեղծաւորութեամբ երթալ . ասոնք որ ասանկ թշուաւաբար կորսըված կը տեսնամ հոս :

Հովհաննէրը . Ոմանք ասկից հեռու կերթային , ու ոմանք մինչև աս լեռներուն ալ չէին կրնար հասնիլ * :

Ընտանիք ճամբորդները իրարու ըսին , կը

* Կեղծաւորները կրնան ատեն մը իրենց վրայ առնել կրօնքին պատմութեանը , ու աշխարհի աչքին առջև Վրիստոսի աշակերտ երևալ : Ոմանք խել մը ատեն ասանկ կրնան յառաջ երթալ իրենց կեղծաւորութիւնը իմացվելէն առաջ . մանաւանդ թէ ոմանք ալ կարելի է որ մինչև ՚ի մահ ան նոյն գովելի երևոյթը պահեն : Ստածէ ան հինգ յիմար կուսերուն վրայ :



Սուսանայն ան վերջին բանին յիշատակութիւն
 Խան էրիւնը նը իրենց ձեռքերը գողացուց , և
 աս արգելքին պատճառովը անվրէպ չէին
 կրնար նայիլ դիտակին մէջէն * . և սակայն
 իրենց անանկ եկաւ թէ դուռի պէս մէկ բան
 մը՝ ու նաև անտեղին քիչ մը փառքը տեսան :
 Անտեսնը ճամբայ ելան աս երգը երգել
 լով .

Աս հովիւները գաղտնի խորհուրդներ մեզի
 յայտնեցին ,

Արոնք որ բոլոր ուրիշ մարդոցմէ գաղտնի
 կը պահէին .

Այլէք ուրեմն դուք հովիւներուն որ կու
 զէք տեսնալ

Խորիմաց բաներ՝ և խորհրդաւոր , ու նաև
 ծածկեալ :

* Ս'եր բնութիւնը մինչև անգամ նորոգված վի-
 ճակի մէջ ալ անանկ տկար է որ գրեթէ անհնար
 է մեզի քաջութեամբ 'ի գործ դնել մէկ սուրբ յո-
 ժարութիւն մը առանց տկարանալու ուրիշի մը
 մէջը : Արբոր հաստատուն հաւատքով ու յուսով
 Աստուծոյ կապաւինինք , կարելի է որ պակասաւոր
 գտնըվինք զինքը յարգելու , խոնարհ և զգուշաւոր
 ըլլալու : Անդհակառակը մենք մեր տկարութիւնը
 իմանալը ու յետնեալ գտնըվելու երկիւղը երբեմն
 անանկ կը տկարացունեն Աստուծոյ վրայ մեր ու-
 նեցած հաւատքնիս , որ չենք կրնար տեսնալ

Երբոր իրարմէ պիտի զատվէին՝ շովիւնե-
լուն մէկը ճամբուն պատկերը կամ ստորա-
գրութիւնը տըւաւ իրենց : Սէկայը ապսպը-
թեց իրենց որ Շողորորդոյն զգուշ կենան :
Երբորզը պատուիրեց իրենց թը Երկրորդի
զուշանալ որ չըլայ թէ կախար զգուշի ի
զեալ Երկրին վրայ քնանան : Եւ չորրորդը
բարի յաջողութիւն ինչորեց իրենց : Եւ յսպէս
անոնք իրենց ճամբան դացին , ու ես ալ երա-
զէս արթընցայ :

Ու քնացայ՝ և նորէն երազես մէջը տեսայ
որ ան նոյն երկու ճամբորդները լեռներէն
վար կիջնային քաղաքը երթալու շտակ ճամ-
բայէն : Կանք որ աս լեռներէն քիչ մը վա-
րով ձախ կողմին վրայ կիյնար Ինքնահաճու-
թիւն կոչված երկիրը * , ուրկից ճամբորդ-
ներուն դացած շտակ ճամբան մանալու նեղ

մեր ապառնի ժառանգութիւնը՝ հաւատքին դի-
տակովը :

* Եւստիս ալ Ինքնահաճութեան երկիրը ծնած
ենք , ու ի բնէ ամէնս ալ տգէտ ենք : Սմանք երկար
ատեն կըման ան երկրին մէջ , ու շատերը իրենց
օրերը հոն կըվերջացունեն : Եւ թերցող , ան կրկ-
րէն ելա՞ր մի գուն : Տգիտութիւնը ելեր էր անկից ,
բայց իր հայրենի երկրին օդը կըշնչէր : Սեղաւորը
քանի որ կըմտածէ թէ ինքզինքը Եստուծոյ առ-

և ծուռումուն շաւիղ մը կար : Ուստի աս տեղս խիստ մէկ կայտառ պատանիի մը պատահեցան որ ան երկրէն կուգար , ու իր անունը էր Տգիտութիւն : Վրիստիանոս հարցուց իրեն թէ ո՞ր կողմերէն կուգակոր , և ո՞ւր կերթակոր :

Տգիտութիւն . Տէր իմ , քիչ մը ձախ կողմին վրայ աս տեղիկը ինկած երկիրը ծնած եմ ես , ու Երկնային քաղաքը կերթամկոր :

Վրիստիանոս . Բայց ինտո՞ր կըկարծես անոր դուռնէն ներս մտնալ , քանզի ան տեղը կարելի է թէ քիչ մը գծուարութիւն գտնաս . դուն :

Տգիտութիւն . Ինտոր որ ուրիշ բարի մարդիկ կըմտնան նէ :

Վրիստիանոս . Բայց ի՞նչ ունիս ցուցնելու ան դուռը , որ դուռը բացվի քեզի :

Տգիտութիւն . Իմ Տէրոջս կամբը գիտեմ , ու բարի կերպով ապրած եմ . ամէն մարդուն իրենը կուտամ . աղօթք կընեմ , ծոմ կըպահեմ , տասանորդ կըվճարեմ , ու ողորմութիւն

ջեր արդարացունելու համար կրնայ մէկ բան մը ընելու՝ իր անունը Տգիտութիւն է , ինքնահաճութեամբ լցված է , ու Վրիստոսի հաւատքէն զուրկ է :

կուտամ, և իմ երկիրս իմ երթալու տեղիս
համար ձգեցի * :

Վրբխախանոս . Սակայն դուն աս ճամբուն գը-
լուխը եղած նեղ դուռնէն ներս չի մտար .
դուն ան ծուռուճուռ ճամբայէն հոս մտար ,
և անոր համար կը վախնամ՝ Թէ դուն ինչ որ
կըխորհիս նէ քու վըայովդ , երբոր հաշիւ առ-
նը վելու օրը գայ , քաղաքը մտնալու Թոյլտը-
լու Թիւն ունենալուդ տեղը գող ու աւազակ
պիտի համարվիս . Յօհ . Ժ . 1 , 9 :

* Հասարակօրէն այսպէս չն՞ն խօսիր փարիսե-
ցիները : Մ.Յ՛ , ու շատերն ալ որոնք իրենց հաւատ-
քին հաստատութեանը վըայ մեծապէս կը պարծին :
Մասնկները յայտնապէս իրենց յոյսը կը հաստա-
տեն իրենց բարի ըլլալուն վըայ՝ ու իրենց առջի
վարքէն և ուրիշ մեղաւորներէն տարբերելուն վը-
րայ . փոխանակ զի պէտք էր իրենց որ Վրբխտոս
իրենց ինչ ըլլալուն՝ ու իրենք Վրբխտոսով ինչ
ըլլալուն վըայ հաստատէին զանի : Մայց ասանկ-
ներուն դաւանութիւնը տգէտ՝ յանձնապատան՝
ու ինքրզինքը արդարացունող սրտէ մը կըսկըսի ,
ու կը շարունակվի հպարտութեամբ՝ անձնասիրու-
թեամբ՝ ու մեծաբանութեամբ , և կը լախճանի ի-
րենց յոյսին ահաւոր կերպով դատարկ ելլալովը :
Մասնկները գող և աւազակ կը կոչէ Տէրն մեր .
ինչու որ անոնք իր ձրի շնորհացը փառքէն կը մեր-
կացունեն զինքը :

Տգլիւնքն . Պարոններ , դուք բոլորովին օտարական էք ինծի . ես ձեզ չեմ ճանչնար . բաւական սեպեցէք դուք ձեր երկրին կրօնքին հետևիլ , ու ես ալ իմ երկրիս կրօնքին : Կը յուսամ թէ ամէնուն ալ աղէկ պիտի ըլլայ : Եւ ան ձեր խօսած դրանը վրայով բոլոր աշխարհ գիտէ թէ անիկա մեր երկրէն շատ մը հեռու է : Չեմ կրնար կարծել ես թէ բոլոր մեր կողմերը բնակողներուն մէկը անոր ճամբան գիտնայ . ո՛չ ալ հոգերնին ըրած են թէ արդեօք անիկա գիտեն թէ չէ . որովհետև ինտոր կրտեսնաք , գեղեցիկ՝ զուարճալի ու կանաչ շաւիղ մը ունինք որ մեր երկրէն կուգայ կըխառնըվի աս ճամբուն :

Քրիստիանոս երբոր տեսաւ թէ ան պատանին ինքիր կարծեօքը զինքը իմաստունի տեղ դրած էր , հոսալիցին ականջնիվար ըսաւ . հիմարին վրայով էվելի յոյս կայ քան թէ ասոր . Լուկ . իղ . 12 : Եւս . ըսաւ , Ինմիտը երբոր ճամբան քալէ , իր իմաստութիւնը կը տկարանայ , և իր յիմար ըլլալը ամէնուն կը յայտնէ . Եւս . Թ . 3 : Ի՞նչ ընենք , ալ էվելի խօսի՞նք իր հետը , եթէ աս այժմ առաջ երթանք ու անանկ թող տանք զինքը որ իր

արդէն լսածին վրայով խորհի , ու ետքը նուրէն մէյուսով կայնինք իրեն համար ու ատենանք թէ կամաց կամաց ճամբու կրնանք մի բերել անիկա :

(3-րդը . կարծեմ թէ արդէկ չէ որ ամէնը մէկէն խօսինք իրեն . թէ որ կուզես անցնինք երթանք , և երբեմն խօսինք իրեն՝ որչափ որ ինքը կլինայ տանիլ * :

Հիմայ թող քիչ մը Տգիտութիւնը
խորհի միտք առնէ իրեն ըսվածը ,
Ու թող չի մերժէ բարի խրատը՝
Եւ թողոր սրտանց ընդունի նոյնը ,
Որպէս զի չըլլայ եթէ դեռ ինքը
Չիմանայ ի՞նչ է գլխաւոր շահը .
Ետուած ըսաւ թէ անիմաստները
Չի պիտի փրկէ , թ' և ըբաւ ինքը :

Եւ յայտն երկուքն ալ առաջ անցան , ու Տգիտութիւնը ետևնուն կերթար : Եւրդ՝ երբոր քիչ մը անցան անկից՝ մութ ճամբու մը

* Արդէկ է որ աս կերպը մարդոց հետ մէկէն շատ բան չի խօսվի , հապա քանի մը խրատներէն ետքը ձգվի որ իրենք իրենց երթան մտածեն . քանզի իրենց ինքնահաճութիւնը շատ անգամ առաւել ևս կաճի վիճաբանութեամբ՝ որուն մէջը ինքրզինքնին հմուտ ըլլալ կը համարին , թէ և իրենց խօսակցութիւնը որչափ զգուելի ըլլայ ուրիշներուն :

մէջ մտան , և հոն մարդ մը տեսան որ եօթը հատ դէեր եօթը հաստ չուաններով անիկա կապեր էին ու ետ կըտանէինկոր ան դուռը՝ որ բլուրին մէկ կողմը տեսեր էին . Սաղ. ԺԶ . 45 : Լուս. Ե . 22 : Հիմայ բարի Վրիստիանոսը սկսեց դողալ , ու անանկ ըրաւ նաև իր ընկերը (Յուսալիցն ալ : Եւ սակայն դէերը ան մարդերը քաշելնինի Վրիստիանոս նայեցաւ որ տեսնայ թէ անիկա կըճանչնայ մի . ու կարծեց թէ կարելի է որ Ուրացութեան քաղաքը բընակող Սոլորեալը ըլլայ : Բայց աղէկ մը չի տեսաւ երեսը , ինչու որ ինքը գլուխը վար կախեր էր բռնըված գողի պէս . բայց անցնելէն ետքը (Յուսալիցը անոր ետևէն նայեցաւ՝ ու անոր կոնակին վրայ թուղթ մը տեսաւ աս խօսքը դըված վրոն . «Նառակ աշակերտ , և դատապարտըվելու ուրացող» * :

* Սոլթ ճամբան կընշանակէ ամբարշտութեան զօրացած ատենը , ու Լստուծոյ ժողովրդօցը մեծ նեղութեան ժամանակը : Հեղինակը աս տեղս պատեհութիւն մը ձեռք կառնէ Տգիտութիւնը Սոլորեալին հետը բաղդատելու : Լսանկ մութ եղանակներուն Լնառակ աշակերտները շատ անգամ Դատապարտըվելու ուրացողներ կը ըլն , ու իրենց կեղծաւորութեանը յայտնըվիլը կամչոունէ զերնք զգուշաւոր հաւատացեալներուն մէջը երեսնին

Արդ՝ Վրիստիանոս իր ընկերին ըսաւ .
 Հիմայ ես իմ միտքս կրբերեմ ինչ որ ինծի
 զըուցվեցաւ աս տեղվանքը բարի մարդու մը
 պատահած բանի մը վրայով : Ատ մարդուն անունը
 էր՝ Թերեհաւատ . բայց ինքը աղէկ
 մարդ էր , ու Անկեղծութիւն կոչված քաղաքը
 կրբնակէր : Անոր պատահած բանը ասիկա
 էր : Աս մութ ճամբան մտնալու տեղը՝ Այն-
 ճամբուն-դուռնէն վար շաւիղ մը կիջնայ , որ
 կըսվի Մեռած-մարդու-շաւիղ : Ասիկա հասարակօրէն
 ան տեղը կատարված սպաննութիւններուն
 պատճառովը աս անունը ունի . և աս
 Թերահաւատը մեզի պէս ճամբորդութեան
 երթալով՝ անանկ պատահեցաւ որ ան տեղը
 նստի ու քնանայ : Արդ եղաւ որ անատենը
 Այն-ճամբուն-դուռնէն վար իրեք հատ չա-
 րածրձիկ սրիկաներ եկան՝ իրեք եղբայրներ ,

յայտնելու , որոնց վրայ առաջուց գերազանցութիւն
 մը կըցուցընէին : Արբոր մեղաց ճանաչումը կըգա-
 դարի՝ ու Վրիստոս իր Թագաւորութիւնը սրտին
 մէջը չի հաստատէր , պիղծ դէր իր առջի բնակա-
 րանը կըգառնայ , ու իրմէն չարագոյն ուրիշ եօթը
 դէեր ալ կառնէ իր հետը , որոնք մեղաց ու խա-
 բէութեան պարաններովը պնդագոյն կրկապին ո-
 ղորմելի մեղաւորը . անանկ որ իր վերջին վիճակը
 առջինէն ալ անյոյս կըլայ :

և իրենց անուններն էին՝ Վատասրտութիւն՝
 Կասկածոտութիւն և Խղճահարութիւն . ու
 Թերեհաւատը եղած տեղը տեսնալով արտոր-
 նօք վաղեցին եկան հոն : Եւ միջոցին բարի
 մարդը նոր արթընցեր էր իր քունէն , ու իր
 ճամբան երթալու կելլարկոր : Եւսանկ ամէնը
 մէկէն իր վրան եկան , ու սպառնական խօս-
 քերով հրաման ըրին որ կայնի : Եւսոր վրայ
 Թերեհաւատը կտաւի պէս ճերմըկեցաւ , ու
 ո՛չ կուուելու և ո՛չ փախչելու կարողութիւն
 ունէր : Ենատեն Վատասրտութիւնը ըսաւ .
 Վսակդ տուր . բայց ինքը անիկա ընելու չար-
 տորալով՝ որովհետև չէր կամէր իր ստակը
 կորսնցունել , Կասկածոտութիւնը իր վրան
 վաղեց՝ ու իր ձեռքը անոր դրպանին մէջ խօ-
 թելով արծաթ ստակի քսակ մը քաշեց դուրս
 հանեց : Ենատեն մարդը կանչեց , Վողեր ,
 Վողեր : Եւսոր վրայ Խղճահարութիւնը իր
 ձեռքի հաստը բիրովը Թերեհաւատին գըլ-
 խուն զարկաւ , և ան հարուածովը գետինը
 պառկեցուց անիկա , ուր որ ինկած մնաց
 գրեթէ մինչև ՚ի մահ իր արիւնը վազելով * :

* Էդինակը ան մտօքը աս տեղս Թերահաւա-
 տին ստորագրութիւնը մէջ կըխօթէ՝ որ տկար Վը-

Ի ոչոր աս միջոցին գողերը մէկ քով կայներ էին . բայց վերջը լսելով թէ ճամբուն վրայ մէկը կայ , ու վախնալով որ չըլլայ թէ Լ. ըիւ ութեան քաղաքը բնակող Մեծաշնորհը ըլլայ ան , սկսեցին ճամբայ առնել , ու աս բարի մարդը ձգեցին որ իր գլխուն ճարը ինքը մտածէ : Ուստի ատենէ մը ետեւ Խերահաւատը ինքըզինքին գալով ու ոտքի վրայ ելլալով ,

րիստոնեաները կեղծաւորներուն և ուրացողներուն վրայով խօսված ահաւոր բաներովը չի զարհուրին : Լ. սիկա է Մեռած—մարդուն—շաւիղը՝ որ ետ կը տանի Լայն—ճամբուն—դուռը : Իրաւ բոլոր ճըշմարիտ հաւատացեալները կորստեան դառնալէն կը պահպանվին . բայց հաւատքնին տկար եղողները թուլասիրտ ըլլալով՝ ու Լ. ստուծոյ հաւատարմութեանը ու խոստմունքներուն չի վստահանալով մեզանչական զանցառութեան ու սատանային թելադրութիւններուն տեղի կուտան : Երբոր հարկաւորապէս կը կարօտին արթուն և զգաստ ըլլալու , կը պառկին քնանալու . իրենց դաւանութիւնը կը ծածկեն՝ կամ գուցէ կուրանան , պարտաւորութիւննին կատարելու կը վախնան կամ զանց կընեն , կամ ուրիշ կերպերով իրենց խղճմտանացը դէմ կը գործեն . ու այնպէս մեղաց մէջ կիյնան : Լ. սանկ՝ Ստասարտութիւնը կը սպառնայ՝ ու վրանին կը յարձակի , Լ. սակածոտութիւնը կը կողոպտէ զիրենք , ու Խղճահարութիւնը գետինը կը զարնէ՝ ու գրեթէ իրենց կեանքէն յոյսերնին կարել կուտայ :

կամաց կամաց իր ճամբան երթալու ճարը նայեցաւ : Ասիկա էր անհա ան մարդուն վրայ յով եղած պատմութիւնը :

Յոսուէց . Բայց բոլոր իր ունեցածը իրմէն աւելին մի անոնք :

Վրիստինն . Ան տեղը՝ ուր որ իր գոհարները կային , բնաւ չի նայեցան անոնք . ուստի տակաւին անոնք իր քովն էին : Սակայն՝ ինտոր որ ինծի զրուցվեցաւ , բարի մարդը վշտացեր էր իր կորուստին համար . ինչու որ գողերը գրեթէ բոլոր իր ծախքի ստակի աւելի էին : Անոնց չաւածը՝ ինտոր որ ըսի , գոհարներ էին . անոնցմէ՝ ՚ի զատ քիչ մը ստակ ալ իր գրպանին տակը մնացեր էր , բայց հազիւ թէ բաւական էր ան զինքը իր ճամբուն վախճանին հասցունելու : Սանաւանգ թէ՛ թէ որ սըլխալ իմացած չեմ նէ , ճամբան մուրալու պարտաւորեր էր՝ զինքը ողջ պահելու համար . ինչու որ իր գոհարները չէր կրնար ծախել . և թէպէտ մուրաց և ինչ որ կրնար նէ ըրաւ , բայց այսու ամենայնիւ՝ շատ անօթի փորերով գնաց մնացած ճամբուն մեծ մասը .
 Թ . Գլ . Գ . Գ . 18 :

Յոսուէց . Բայց հրաջք չէ՞ որ իր վկայակա-

նը չեն առեր իրմէն , որով Երկնային Գուռը իր ներս մտնալու հրամանը պիտի ընդունէր :

Վրիստիանոս . Իրան հրաջք է . բայց չառին անիկա՝ Թէպէտ և չէ՛ Թէ իր մէկ աղէկ վարպետութիւն մը բանեցունելովը չի գտան ան . քանզի անոնց իր վրան գալովը գողի ու սարսափի մէջ իյնալով՝ ո՛չ կարողութիւն ունէր և ո՛չ ճարտարութիւն մէկ բան մը պահելու : Եւ սանկ՝ էվելի Մատուածային բարի նախախնամութիւնովն էր և չէ՛ Թէ իր ջանքովը որ աս բարի բանը չի գտան անոնք * . Բ . Տէր . Թ . 12—14 : Թ . Պէր . 5—9 :

Յոսի . Բայց հարկաւ մխիթարութիւն մը եղած պիտի ըլլայ իրեն՝ որ աս պատուական գոհարք չառին իրմէն :

Վրիստիանոս . Սե՛ծ մխիթարութիւն եղած պիտի ըլլայ՝ Թէ որ ըստ արժանոյն գործածէր անիկա . բայց աս պատմութիւնը ինձի ընող

* Ի՞նչ էր ան բարի բանը : Իր պատուական հաւատքը , որուն հեղինակը՝ կատարողը՝ ու առարկան է Յիսուս Վրիստոս պատուական Տէրը : Եւ որի որ ինքը հաւատոյ աս պատուական պարգևը կուտայ՝ Թէ և մանանեխի հատի չափ փոքրիկ ալ ըլլայ ան , աշխարհի ու դժոխքին բոլոր զօրութիւնները չեն կրնար յափշտակել զանիկա հաւատացեալին սրտիս մէջէն :

ները ըսին, թէ ինքը բոլոր մնացած ճամբուն վրայ շատ քիչ գործածեց անիկա, և ան ալ ան դողին սարսափին պատճառովը՝ որ իր ըստակը իրմէն սունե շուն ինքը ունեցաւ: Եւ իտակը՝ ինքը իր մնացած ճամբուն մեծ մասին մէջը մոռցաւ անիկա. և ասկից ՚ի զատ թէ որ երբեմն իր միտքը գար ալ նէ ան՝ և սկըսէր անով մխիթարվել ալ նէ, նորէն իր կորուստին վրայով նոր մտմըտուքները կուգային իր վրայ, և աս մտմըտուքները բոլոր իր մըխիթարութիւնը կըկորսընցունէին:

Յոսուէց. Եփսոս, խղճալի մարդ, ասիկա մեծ տրտմութիւն եղած պիտի ըլլայ իրեն:

Վրիստիննոս. Տրտմութիւն՝ անշուշտ, ճըշմարիտ տրտմութիւն մը: Ենանկ չի պիտի՞ ըլլար մեզմէ ամէն մէկերնուս թէ որ անոր վիճակին պատահէինք, կողոպտըվէինք ու վերաւորվէինք, և ան ալ օտար տեղ մը իրեն պէս: Ըրաջք է որ տրտմութենէն չի մեռաւ. տառապեալ հոգի: Ինծի ըսին թէ մընացած ճամբուն գրեթէ բոլորը ուրիշ բանով չէ անցուցեր հապա տրտմագին և դառնակըսկիծ հեծութիւններով. նաև ճամբան երթալուն բոլոր իրեն հասնողներուն կամ որի որ

հաւկիթին կեղւը՝ ուրկից որ ելար , տակաւին գլխուդ վրայ է : Ինչո՞ւ համար գրաւը պիտի դնէր անոնք , կամ որո՞ւ պիտի ծախէր անոնք : Բոլոր ան երկրին մէջ՝ ուր որ ինքը կողոպտու վեր էր , իր գոհարները բանի տեղ չէին սեպ վեր : Ո՛չ ալ ինքը ան օգնութիւնը կողդէր՝ որ անոնց ծախվելովը կրնային տրվիլ իրեն : Ես կից ՚ի զատ թէ որ իր գոհարները քովը չըլլային Լորկնային Վաղաքին դուռը հասնելուն , հոն մէկ ժառանգութիւն մը ունենալէն դուրս պիտի ձգվէր , որն որ աղէկ գիտէր ինքը . և ասիկա տասը հազար գողերու երևոյթէն և անզգամութենէն գէշ պիտի ըլլար իրեն :

Յոսուէց . Ինչո՞ւ ատանկ կծու կրխօսիս եղբայր իմ : Եսաւ իր անդրանկութիւնը ծախեց , և ան ալ քիչ մը ապուրի համար . Օննդ . իե . 32 . և ան անդրանկութիւնը իր ամենամեծ գոհարն էր : Եւ թէ որ ան ըրաւ , ինչո՞ւ համար կարելի չըլլայ որ Թերահաւատն ալ անանկ ընէ :

Վրէստիանոս . Իրաւ Եսաւ իր անդրանկութիւնը ծախեց , և իրմէն ՚ի զատ շատերն ալ անանկ կընեն , և անանկ ընելով ինքրզինքնին

կրգրկին ան մեծ օրհնութենէն ինչպէս որ ան
 Թշուառականը ըրաւ . բայց Նսաւին ու Թե-
 րեհաւատին մէջը՝ ու նաև անոնց վիճակներուն
 մէջը տարբերութիւն մը պարտիս դնել : Նս-
 սաւին անդրանկութիւնը ստուեր էր կամ օրի-
 նակ , բայց Թերեհաւատին գոհարները անանկ
 չէին : Նսաւին փորը իր Նստուածն էր , բայց
 Թերեհաւատին փորը անանկ չէր : Նսաւին
 պակսութիւնը իր մարմնաւոր ախորժակին վրայ
 էր , Թերեհաւատինը անանկ չէր : Գարձեալ՝
 Նսաւ իր փափաքը լեցունելէն անդին չէր կըր-
 նար նայիլ . Ինչու որ ահա կըմեռնի մկոր ես՝ և
 ի՞նչ օգուտ պիտի ընէ ինձի աս անդրանկու-
 Թիւնը՝ ըսաւ ինքը . Ծանօթ . ԻԲ . 32 : Բայց Թե-
 րեհաւատը՝ Թէպէտ և քիչ հաւատք ունէր ,
 իր քիչ հաւատքովը ասանկ այլանդակութենէ
 պահվեցաւ . և ան հաւատքը իր գոհարները
 պատուական սեպել տըլաւ իրեն՝ որ ծախել
 չուզեց զանոնք , Նսաւին իր անդրանկութիւնը
 ծախելուն պէս : Տեղ մը չեա կարդար դուն
 Թէ Նսաւ հաւատք ունէր . չէ՛ , չեա կարդար
 անոր քիչիկ մըն ալ հաւատք ունենալը . ուս-
 տի որին վրայ որ միայն մարմինը կըթաղաւ .

րէ , (ինչպէս որ իրաւ անանկ կըլլայ ան մարդուն վրայ որ հաւատք չունի ,) զարմանք չէ թէ ան անձը իր անդրանկութիւնը՝ և իր հոգին ու բոլորը ծախէ , և ան ալ դժոխքին դէտրուն : Ըսանկները երբոր միտքերնին իրենց ցանկութիւններուն վրայ դնեն , որչափ սուղ ալ ըլլան անոնք նէ պիտի գնեն . բայց Թերեհաւատը ուրիշ բնութեան տէր էր . իր միտքը երկնային բաներու վրայ էր . իր ապրուստը հոգևոր բաներու վրայ էր՝ և վերէն երկինքէն . ուստի ասանկ բնութեան տէր եղողը ի՞նչ վախճանի համար իր գոհարները պիտի ծախէ դատարկ բաներով իր միտքը լեցունելու , թէ և անոնք դնել սուղ մէկը ըլլար ալ նէ : Ո՞ր մարդը ստակ մը կուտայ իր փորը յարդով կշտացունելու . կամ կրնամ համոզել դուն տատրակը ազուաւի պէս մեռելոտիով կերակրըվելու : Թէպէտ և անհաւատ անձինք մարմնաւոր ցանկութիւններու համար կրնան իրենց ունեցածը զրաւը դնել կամ ծախել՝ իրենց անձնական օգուտին համար , սակայն անոնք որ հաւատք ունին , որ փրկարար հաւատք մը ունին , թէպէտ և քիչ

ըլլայ ան , չեն կրնար ասանկ ընել : Ուտի
 ահա քու սխալմունքդ հոս է՝ եղբայր իմ * :

Երեսուց . կրճանչնամ անիկա . և սակայն
 ան քու կծու խօսքդ մնազ մնաց պիտի բարկա-
 ցունէր զիս :

Վրիստիանոս . ինչո՞ւ համար . ես զքեզ միայն
 բանի մը աշխոյժ թուչուններու հետ բաղդա-
 տեցի , որոնց գլուխէն հաւկիթին կեղևը չին-
 կած անդին ասդին կըցաթկուտեն : Բայց ձգէ
 ատիկա , և մեր խնդիրը ինչ բանի վրայ է նէ
 անիկա մտածէ , ու մեր մէջը բոլորը լաւի պի-
 տի վերջանայ :

Երեսուց . Բայց՝ ո՞վ Վրիստիանոս , ես իմ
 սրտիս մէջը համոզված եմ որ աս իրեքը ու-
 ըրիշ բան չեն հապա վախկոտ հոգիներու ըն-
 կերութիւն մը : Ի՞նչ որ անանկ չըլլային՝ կը

* Շատ կեղծաւոր հաւատացեալներ դժուարու-
 թիւններու պատահելուն՝ աս ներկայ աշխարհիօ
 համար իրենց կրօնքը կըձգեն . բայց թէ որ մէկը
 ասկից առնելով ճմարիտ հաւատացեալները ա-
 նոնց նմանցունէ , կըցուցընէ թէ ոչ հաստատ դա-
 տողութիւն ունի՝ ու ոչ աղէկ ծանօթացած է
 աստուածահաճոյ վարքին բնութեանը , կամ անոր
 ծայրագոյն փափաքներուն ու սեփհական վախե-
 րուն ունեցած առարկաներուն :

կարծես թէ պիտի փախչէին , ինտոր որ ըրին՝
ճամբուն վրայէն եկող մէկու մը ձայնը լսե-
նուն : Ինչո՞ւ համար թերահաւատը արիագոյն
սիրտ մը չըստացաւ : Ինձի կըթըլի որ գոնէ
քիչ մը ատեն կրնար անոնց հետը ծեծկըվիլ ,
և երբոր ալ ճար չըլար՝ անատենը յաղ-
թըվիլ անոնց :

Վրիստիանոս . Ինոնց վախկոտ հոգիները ըլա-
լը շատերը ըսին , բայց քիչերը անանկ ըլալ
գտան անոնք փորձութեան ատենը : Եւ արիա-
գոյն սիրտ մը ունենալու վրայով՝ թերահաւա-
տը ատանկ բան չունէր . և ես քեզմէ կիմա-
նամ՝ եղզայր իմ , որ եթէ ան մարդուն տեղը
դուն ըլլայիր , դուն ինքնդ պիտի ըլլայիր
միայն քիչ մը ատեն ծեծկըվող ու ետքը յաղ-
թըվող : Եւ որովհետև դուն հիմայ անոնց
մեզմէ հեռուն ըլլալուն՝ միայն այսչափ քաջա-
սրտութիւն ունիս , ճշմարիտ կըսեմ՝ որ եթէ
անոնք քեզի երևնալու ըլլային՝ ինտոր որ անոր
երեցան , ուրիշ կերպ մտածութիւն ընել
պիտի տային քեզի * :

* Ինչպէս դիւրին կըխօսի մարդ թշնամիին չերե-
ցած ատենը : Եւ ատ անգամ մեծամեծ քաջութիւն-
ներ կատարելու կըխորհինք մենք մեզի , երբոր միշտ

Բայց աս ալ մտածէ որ անոնք համբակ գո-
ղեր են . անյատակ տարտարոսին Թագաւորին
ծառայութիւն կընեն իրենք , որ Թէ որ հար-
կաւորի ինքը կուգայ անոնց օղնութիւն ընե-
լու , և իր ձայնը մունչող առիւծի պէս է . ան .
Պէտ . է . 8 : Եւ ինքնա ասոր փորձը ըրի , և սոս-
կալի բան մը գտայ անիկա : Եւ իրեք չարա-
գործները իմ վրաս ալ եկան , ու ես Վր-
րիստոնէի պէս իրենց հետը կուուելու սկսե-
լով ձայն մը հանածնուն պէս իրենց տէրը ե-
կաւ : Եւնատեն իմ կեանքս պիտի կորսըվէր՝
Թէ որ Եստուծոյ տնօրէնութիւնովը քաջա-
պինդ զըահով զըահաւորված չըլլայի : Մանա-
ւանդ որ ասանկ սպառազինված ըլլալովս ալ
դժուարին գործ մը ըլլալ գտայ ինքըզինքս
մարդու պէս ազաւոտելը . մէկը չի գիտեր Թէ
ինչ բաներ կըլլան մեզի աս կուիւին մէջ ,

կրկարօտինք Եստուծոյ կարող ձեռքին տակը մենք
զմեզ խոնարհեցունել , գիտնալով Թէ մենք մեզմէ
ոչինչ ենք : Եւսիկա Վրիստոնէին կծուութեամբ
խօսիլ կուտայ , որատեն անիկա ուրիշներուն վրայ
անձնապարծութիւններ կըտեսնայ : Պօղոս շատ ան-
գամ աս կերպովը կըխօսի՝ Վրիստոսի փառացը
սաստիկ նախանձաւորութիւն ու անոր ճշմարտու-
թեանը վրայ ազդուսէր մը ունենալուն :

բայց միայն ան՝ որ բուն ինքը կուիին մէջը
գտնըված է * :

Եւրոպայ. Իրաւ ես . բայց կըտեսնաս որ ա-
նոնք փախան , երբոր միայն կարծեցին թէ
Ս՛եծաշնորհը ճամբուն վրայ է :

Վրիստինոս . Ղշմարիտ է . շատ անգամ
փախան իրենք ալ իրենց տէրն ալ՝ երբոր
Ս՛եծաշնորհը միայն զինքը երևցունէր . և ա-
սոր վրայ զարմանալու չէ , ինչու որ ինքը թա-
գաւորին քաջամարտիկ զօրականն է : Բայց
ես կըկարծեմ որ դուն թերեհաւատին ու թա-
գաւորին քաջամարտիկ զօրականին մէջ տեղը

* Ո՛վ կրնայ հաստատ կենալ փորձութեան չար
օրին՝ որատեն Ս՛ ատասրտութիւնը կասկածոտու-
թիւնը ու Խղճահարութիւնը իրենց իշխանին Սա-
տանային զօրութիւնովը դրդըված անոր վրայ յար-
ձակին : Ըրդարև ո՛չ ոք , բայց եթէ ան՝ որ Ըստու-
ծոյ կատարեալ զէնքովը զինուորված է . և մինչև
անգամ անատենն ալ ասանկ դժոխային թշնամի-
ներուն զօրութեանը դէմ պատերազմիլը դժուարին
պատերազմ մըն է Վրիստոնէին : Բայց աս է մեր
պարծանքը . “Տէրը մեր տեղը պիտի պատերազմի , ու
մենք պիտի լուռ կենանք” . պարտինք լուռ կենալ մեր
անձին՝ պարծանք մը ընծայելու կողմանէ , գիտնա-
լով որ մեր բուն թշնամիները մեր անձերն են , և թէ՛
էվելըք կը յաղթենք ամէն ասոնց՝ (միայն) անով որ
մեզ սիրեց . Լուով . ք . 37 :

տարբերութիւն մը կը դնես : Թագաւորին բռնոր հպատակները իր քաջամարտիկ զօրքերը չեն կրնար ըլլալ , ո՛չ ալ անոր պէս կրնան պատերազմիլ երբոր փորձը վնն : Կը վայլէ՞ մը տաժեւ թէ պզտի տղեկ մը Գողիաթին հետը կուռելու ելլայ՝ ինտոր որ Գաւիթ ըրաւ , կամ մէկ ճ՛նճիլուկ մը եզի չափ ուժ ունենայ : Ոմանք զօրաւոր են՝ ոմանք տկար . ոմանք շատ հաւատք ունին՝ ոմանք քիչ . առ մարդը տկար մէկն էր , և անոր համար աղէկ դէմ չի դըրաւ * :

Յոսուէց . Երանի թէ Սեծաշնորհը ըլլար անոնց բռնածը :

* Ո՛վ Վրիստոսի հօտին գառնուկները , աղէկ միտվընիդ առէք սասիկա դուք՝ որ սակաւ գիտութիւն ունիք , ու հաւատքնիդ տկար է : Ե՛մենեկին մի՛ կարծէք թէ Ե՛ստուած՝ որուն որ կը հաւատաք , ու Փրկիչը՝ որուն որ կը հետեւիք , խստասիրտ տէր մը ըլլայ՝ որ ձեր կարողութենէն աւելի բան խնդրէ ձեզմէ : Երբոր ինքը ձեզմէ ծառայութիւն մը կը խնդրէ , զօրութիւն խնդրեցէք իրմէն : Վրիստոսի կատարեալ բաւականութենէն յուսացէք բոլոր զօրութիւնը ու կարողութիւնը՝ ամէն բարի գործքերուն համար . որչափ որ իրմէն ընդունիք՝ այնչափ իրմով պիտի աճիք , ու անձերնիդ իրեն պիտի ընծայէք :

Վրիստիննա. թէ որ ինքը ըլլար, կարելի էր որ իր ձեռքերը գործով լեցուն պիտի ունենար: Վանգի պարտիմ ըսել քեզի, որ թէ պէտ Սեծաշնորհը աղէկ վարպետ է իր գէնքերը բանեցունելու, և քանի որ իր թուրովը հեռու կրպահէ անոնք՝ ազէկ բան տեսած է և աղէկ բան կրնայ տեսնալ: բայց թէ որ անոնք իրեն մօտ գան, մինչև անդամ Վատասրտու թիւնը կասկածոտութիւնը և կամ մէկայլ, խիստ կարելի է որ գետինը պիտի գարնեն զինքը: Եւ երբոր մէկ մարդ մը գետինը իյնայ, գիտես ան, ի՞նչ կրնայ ընել:

Ո՛վ որ Սեծաշնորհին երեսը աղէկ մը կը նայի, պիտի տեսնայ ան վէրքերուն և կրտրածներուն նշանները, որոնք դիւրութեամբ ապացոյց պիտի ըլլան իմ ըսածիս: Մսկից զարմանալին քեզի ըսե՛մ, անգամ մը ես լսեցի որ կըսէր, (և ան ալ կախին մէջը.) Սինչեանգամ կեանքէն ալ յոյսերնիս կտրեցինք: Մս շտրածճիկ սրիկաները և իրենց ընկերները ինտոր հեծել և ողջալ և աղաղակել տըլին Վալիթին: Վալ Վման. Սալ. ձէ: ան. Սոսոյ. ք. Ե: Ու Եզեկիա ալ՝ որոնք թէպէտ և իրենց օրովը քաջ զօրականներ էին, սակայն

պարտաւորեցան բոլոր զօրութեամբ աշխատիլ երբոր անոնք իրենց վրայ յարձակեցան . և դեռ աս իրենց քաջութիւնովը շատ ծեծ կերան անոնցմէ : Ընգամ մ'ալ Պետրոս ուզեց երթալ իր կրցածը փորձի դնել . սակայն՝ թէպէտ և ոմանք իրեն համար առաքելոց իշխանն է կրտեն , բայց անանք անանկ վիճեցան իր հետը՝ որ վերջապէս չնչին աղջիկէ մը վախցուցին զինքը :

Ասկից 'ի զատ՝ իրենց թագաւորը իրենց սուլելու ձայնը լսելու չափ մօտ է . ինքը բնաւ ձայներնին չի լսելու չափ չի հեռանար : Ալ թէ որ երբէք բաներնին գէշ երթայ , ինքը՝ թէ որ կարելի է նէ , կուզայ օգնելու անոնց : Ընոր կրվայլէ Վիսթանին վրայով ըսվածը . Թէ որ նետեր իյնան իր վրայ՝ զէկքերը ու նիզակները չեն յաղթեր անոր : Ինչու որ երկաթը յարդի պէս կըսեպէ , ու պղինձը փտած փտափ պէս : Պղինձէ աղեղը չի խոցոտեր ա նիկա . ումքաքարը խոտ կըհամարի : Ուռունքները եզեզի պէս կըսեպվին իրեն . կըսկոտ տէգերուն վրայ կըխնդայ . (Յով. Խ. 17—20 : Ուստի մէկ մարդ մը ի՞նչ կընայ ընել աս դիպուածիս պատահելուն : Ղշմարիտ է՝ որ ե

Թէ մէկ մարդ մը Յովբին ձին ունենայ՝ ու վարպետութիւն և քաջութիւն ունենայ անոր վրայ հեծնալու, նշանաւոր բաներ կրնայ ընել : Վրանդի անիկա դաշտին մէջը որոտում կը հանէ, ու դափր կը հատանէ. զօրութիւնով գաշտը կելլայ : «Նետերու պատահի նէ՞՞ ոչինչ կը սեպէ անոնք, ու երկաթէն չի դառնար : Իր վրայ կը շողշողան աղեղը ու սուրը, ու վահանին և նիզակին շարժումը : Բարկութիւնով երկիրը կապականէ : Ոչ ալ կը հաւատայ ան ձայնին երբոր փող չալվի, ու երբոր փողը չալվի՞ ինքը վա՛շ վա՛շ կը գոչէ : Պատերազմին հոտը հեռուէն կառնէ, ու կը վազէ և կը փռնչէ . (Յ. 19. 17. 21—25 :

Բայց մեզի պէս հետևակ մարդիկ՝ ինտոր որ դուն ու ես ենք, ամենևին չի փափագինք Թշնամիի մը դէմը ելլալու, ո՛չ ալ պարծենանք Թէ մենք լաւագոյն կրնայինք բան տեսնալ՝ երբոր ուրիշներուն յաղթը վե՛լը լսենք, ո՛չ ալ մեր քաջութեանը վրայ մտածելով ուրախանանք. քանզի սովորաբար ասանկներուն բանը խիստ գէշ կըլլայ երբոր փորձը վին * :

* Սեր հաւատակից ընկերներուն իյնալը արժան չէ որ մեզ հպարտութեամբ փբացունէ, կամ պատճառէ մեզի խորհիլ Թէ մենք անոնց տեղը ըլլայինք

Վայէ՛ Պետրոսը՝ որն որ առաջ յիշեցի . ինքը մեծաբանութիւն կրնէր այ՛ կըհպարտանար . ու ինտոր որ իր փառամով միտքը խօսել կուտար իրեն՝ լաւագոյն բան պիտի տեսնար ու բոլոր մարդոցմէ էվելի պիտի կայնէր իր յարգապետին համար . բայց ո՛վ այնչափ նուաճեցաւ և յողթըվեցաւ աս չարաճըճ իկներէն՝ որչափ որ ինքը :

Ուստի երբոր կըլսենք թէ Թազաւորին շատակ ճամբուն վրայ ասանկ գողութիւններ կըլնան , երկու բան կըվայլէ մեզի ընել :

Նախ՝ սպառազինված դուրս ելլալ , և անշուշտ վահան մը առնել հետերնիս . ինչու որ ճշմարտապէս թէ որ անիկա պակաս ըլլայ , թշնամին ամենեին չի վախնար մեզմէ : Ընոր համար ան խելացին ըսաւ , Ըմէն բանին վրայ շաւատքին վահանը առէք , որով կարող ըլլալաք չարին կրակոտ նետերը մարելու . Եւթե՛ . Գ . 16 :

Նէ լաւագոյն պիտի վարէինք : Վանզի չնք գիտեր թէ յատասարտութիւնը կասկածոտութիւնը ու խղճահարութիւնը ինչպէս շուտով մեր ներսիդին գլուխ պիտի վերցունէին , մեր վրայ պիտի յարձակէին , ու մեր մտիթարութիւններէն մեղ պիտի մերկացունէին՝ ու մեր ուրախութիւնները կողոպտէին :

Երկրորդ՝ աղէկ է ևս որ Թագաւորէն մեզ պաշտպանող առաջնորդ մը ուզենք . մանաւանդ թէ խնդրենք որ ինքը մեր հետը երթայ : Լսիկա ուրախացուց Վաւիթը երբոր ինքը Սահուան Շուքին Ձորին մէջն էր . ու Սովսէս էվելօք ուզեց իր եղած տեղը մեռնիլ , քան թէ մէկ քայլ մը առաջ երթալ առանց իր Լստուծոյն . Եւէյ . Լճ . 15 : Ո՞վ եղբայր իմ , թէ որ ինքը մեր հետը երթալ ուզէ , ի՞նչ կարօտութիւն ունինք վախնալու տասը հազար թշնամիներէն որոնք մեր դէմը պիտի ելլան . Սալմ . Գ . 5—8 : Ի՞նչ . 1—3 : Բայց առանց անոր ամենեւին բան մը չենք կրնար ընել * . Էջ . ԺԵ . 5 :

Իմ մասիս՝ ասկից առաջ ես ինքնս աս պա-

* Բայց ինչպէս հակառակ է ասոր ինքրզինքնին ճանապարհորդ խոստովանողներէն ոմանց՝ ընթացքը ու վարքը , որոնք կամաւորապէս ու ազատաբար Սատանային սահմանին մէջը կը պըտըտին , ու մարմնաւոր բերկրութիւններով և մեղանչական զօսանքներով իրենց հաճոյքը կը կատարեն : Լսանկները պարզիմաց խօսքով յայտնի կը ցուցնեն թէ Լստուծոյ ներկայութեանը չեն փափաքիր , հապանոր իրենցմէ հեռանալուն . բայց մէկ օր մը պիտի գայ՝ որ ստանկ բաներուն համար սարսափելի մտածութիւններու մէջ պիտի ձգէ իրենց միտքերը :

Ճամբուն պէս շիտակ կ'ընարկոր * • աս տեղս
 չէին գիտեր թէ երկու ճամբային ո՞րը բռնեն ,
 քանզի երկուքն ալ իրենց առջևը շիտակ
 կերևաին . վասն որոյ լուիկ կայնեցան հոն՝ որ
 մտածեն : Եւ երբոր ճամբուն վրայով կրմտա-
 ծէին , մէյմալ մարդ մը սև մարմինով բայց
 շատ ճերմակ հանդերձով ծածկըված իրենց
 եկաւ , ու հարցուց թէ ինչո՞ւ հոն կայներ է-
 ին : Պատասխան տրւին՝ թէ իրենք Նշրկնային
 Վաղաքը կերթանկոր , բայց չեն գիտեր թէ
 աս ճամբաներուն ո՞րը բռնեն : « Եւմ ետեւս ե-
 կէք՝ ըսաւ մարդը , իմ գացած տեղս ալ ան
 է » : Եւ յապէս անոնք անոր ետեւէն գացին ան
 ճամբայէն՝ որ նոյն տեղը իրենց ճամբուն կը
 խառնըվէր , որն որ իրենց երթալու բաղձա-
 ցած քաղաքէն քիչ քիչ անանկ դարձուց զա-
 նոնք , որ քիչ ատենին մէջը երեսնին բոլորո-
 վին դարձաւ անկից . բայց սակայն իրենք տա-
 կաւին անոր ետեւէն կերթային : Բայց շատ
 չանցած յանկարծ անիկա անոնց երկուքն ալ

* Ըս ճամբան՝ որ շիտակ ճամբուն պէս ուղիղ
 կերևար , կըցուցրնէ աւետարանական պարզ ճա-
 նապարհէն գովելի երևոյթ ունեցող ու սակաւ առ
 սակաւ խոտորումները , թէ վարդապետութեամբ և
 թէ գործքով :

որոգայթի մը մէջ ձգեց , որուն մէջը երկու-
քը անանկ խառնըվեցան որոգայթին հետ , որ
ինչ ընելին չէին գիտեր * . ան միջոցին ան
ճերմակ հանդերձը սե մարդուն կռնակէն ին-
կաւ : Ինտտենը տեսան իրենց ուր ըլլալը .
ուստի առեն մը կանչելով մնացին հոն , քանզի
ինքրզինքնին չէին կրնար հանել անկից :

Վրիստիանոս . Ինտտեն Վրիստիանոսը ըսաւ
իր ընկերին . Հիմայ ես զիս սխալմունքի մէջ
կըտեսնամկոր : Ըէ՞ որ Հովիւները պատուի-
րեցին մեզի Շողոքորդողէն զգուշ կենալ .
Ք . կոբն . ԺԿ . 13 , 14 :

Գոռուշ . Ինոնք նաև ճամբուն վրայով ըս-
տորագրութիւն մ'ալ տըւին մեզի , որ էվելի

* Ա՛գուշանալ պէտք է մեզի սպիտակ դէէն՝ սեէն
զգուշանալու չափ . ինչու որ Աստանան լուսաւոր
հրեշտակի կերպարանք կաննէ , ու իր պաշտօնեա-
ները արդարութեան պաշտօնեաներուն կրնամանին .
Ք . կոբն . ԺԿ . 14 , 15 : Իւ ինտո՞ր կըխարեն հո-
գիները : Շողոքորդութեամբ խղճալի մեղաւորնե-
րը գեղեցիկ կարծիքի մը մէջ կրճգեն թէ արգաւ-
րութիւն գործած են , մեծ յառաջագիմութիւն ըրած
են ու բարձր ժառանգութիւններու հասած են , և
մինչև անգամ թէ իրենք իրենցմէ կտաարիւիւ են ,
մեղքէ ազատ են , միայն սիրով լցված են , և այլն :
Ինոնք են սե մարդիկը՝ ճերմակ հանդերձ հագած :

ստուգութեամբ գտնանք անիկա . բայց մենք մոռցանք անիկա կարդալ , ու մենք զմեզ չե պահեցինք ապականիչին ճամբայէն : Ըյսպէս անոնք որոգայթին մէջը ինքրզինքնուն վրայ սուգ ընելով մնացին : Վերջը լուսաւոր մը տեսան որ դէպի իրենց կուգարկոր , ու բարակ չուաններէ խարազան մը ունէր իր ձեռքը * : Երբոր իրենց եղած տեղը եկաւ ան , հարցուց անոնց թէ ուրկից եկան , և ինչ կնէինկոր հոն : Պատասխան տրւին անոր՝ Սենք ողորմելի ճամբորդներ ենք որ Սիօն լեռը կերդալինք , բայց ճերմակներ հագած սև մարդու մը առաջնորդութիւնովը ճամբաներնուս դուրս ելանք , որ մեզմէ ուզեց իր ետեէն երթալ՝ քանզի ինքն ալ հոն կերթարկոր : Ընատենը

* Ըս լուսաւորովը իմացիր ան քաղցր Տէրը՝ Ըստուծոյ Սուրբ Հոգին , Վրիստոսի ժողովրդոցը առաջնորդը ու պահապանը : Երբոր անոնք կրմոլորին ու կրխոտորին Յիսուսէն՝ որ է ճանապարհը , ու կը դառնան իրմէն՝ որ է ճշմարտութիւն , Հոգին իր խրատին ու մեղքը ճանչցունելու գաւազանովը կուգայ որ հոգիները ինքրզինքնին արդարացունող հրպարտութեանը ու յիմարութեանը համար ձաղկելով Վրիստոսի դարձունէ , բոլորովին անոր յուսալու՝ միայն անոր ապաւինելու , ու քաղցր ընկերութեամբ անոր հետը քայելու :

ըրաւ անոնց որ պառկին . ու երբոր անանկ ըրին՝ աղէկ մը ծեծեց անոնք , որ սորվեցունէ անոնց ան ճամբան որուն մէջը պարտին քալել . ք . Ս՝նոց . զ . 27 . ու երբոր կրծեծէր զանոնք , կըսէր . Նա՛ անոնք որ կըսիրեմ , կը խրատեմ . նախանձէ՛ հիմայ , ու ապաշխարէ . Յայտ . 7 . 19 : Ասիկա լրանալուն՝ հրաման ըրաւ անոնց իրենց ճամբան երթալ , ու Հովիւներուն իրենց ապսպրած մէկալ բաներուն աղէկ զգուշանալ : Ասանկ անոնք շնորհակալ եղան իրեն՝ բոլոր իր մարդասիրութեանը համար , ու սկսեցին շիտակ ճամբուն մէջը հանդարտութեամբ առաջ երթալ ու երգել .

Աճդ դուք որ ճամբուն մէջը կըքալէք ,
 Ղ՛ամբէն ելողին վիճակը տեսէք .
 Անեղանելի ցանցի մէջ ինկան ,
 Ինչու որ բարի խրատը մոռցան .
 Այլ թեպէտ վերջը անկից դուրս ելան ,
 Այց կըտեսնաք որ սաստիկ ծեծ կերան .
 Աստի ասիկա միտվընիդ առէք ,
 Աւ ճամբանուդ մէջ միշտ զգուշ կեցէք :

Հիմայ ատենէ մը ետեւ հեռւվանց մէկը տեսան՝ որ կամաց կամաց ու մինաւոր կուգար մեծ պողոտայէն . իրենց դէմը ելլալու : Անատենը Վրիստիանոս ըսաւ իր ընկերին . Ահա՛

Վրիստիանոս . Բայց հանդերձեալ աշխարհին մէջը կայ :

Լուսարար . Երբոր ես իմ երկրիս մէջը իմ բնակարանս էի, ատ ձեր հաստատանքին պէս լսեցի, ու լսելովս ճամբայ ելայ տեսնալու . և սա քսան տարի է որ ան քաղաքը կրվնտըռէի, բայց էվելի բան մը չի գտայ քան որչափ առջի օրը որ ճամբայ ելայ . Եւր . 7 . 15 :

Վրիստիանոս . Մենք լսեցինք ալ՝ հաւատացինք ալ՝ թէ ասանկ մէկ տեղ մը կրգըտնելի :

Լուսարար . Ես ալ իմ տունս եղած ատենս չի հաւատայի նէ՝ այսչափ տեղ չէի գար փրնտրուելու . բայց բան մը չի գտնալով, (որ մինչև հիմայ պիտի գտնայի ես, թէ որ ասանկ տեղ մը գտնելու ըլլար, քանզի ես ձեզմէ հեռու գացի անիկա փնտրուելու .) նորէն ետ կերթամկոր, ու պիտի նայիմ ես զիս հանգըստացունելու ան բաներովը որ առաջ ես ան յուսերուն համար մէկ դի ձգեցի, որոնք որ հիմայ կըտեսնամ թէ չի կան :

Վրիստիանոս . Ենատենը Վրիստիանոս իր ընկերին Յուսալեցին ըսաւ . Ղշմարիտ է արգեօք ինչ որ սա մարդը ըսաւ :

Վրիստինոս . Լողջայր իմ , չէ թէ մեր հաւատքին ճշմարտութեանը վրայ ես ինքնա տարակոյս ունենալուս համար աս խնդիրը ըրի քեզի , հապա քեզ փորձելու՝ և քու տրտիղ անխարդախութեանը պտուղը քեզմէ քաղելու համար : Իսկ աս մարդուն վրայով՝ դիտեմ ես որ ինքը աս աշխարհիս աստուծմէն կուրացած է : Սենք մեր ճամբան երթանք , գիտնալով որ մենք ան ճշմարտութեանը վրայ հաւատք ունինք , ու ամէն ստութիւն ճշմարտութենէ չէ . Թ . Գ . Գ . Բ . 21 :

Գ . Գ . Գ . Գ . Ուրախ եմ ես հիմայ Մատուծոյ փառացը յուսովը : Մյսպէս անոնք մէկ դի դարձան ան մարդէն , և ան անոնց վրայ խընդալով իր ճամբան գնաց :

Իսկից ետքը երազիս մէջը տեսայ որ անոնք առաջ գացին՝ մինչև որ մէկ երկիր մը եկան , որուն օդը բնականաբար քուն կը պատճառէր մէկուն , թէ որ սորված չէր անոր : Ու աս տեղս նշուալիցը սկսեց թուլնալ ու ծանրընալ քնանալու . վասն որոյ Վրիստիաչ նոսին ըսաւ : Ես հիմայ կըսկըսեմկոր անանկ քուն ունենալ , որ հազիւ թէ կընամ աչքերս

բաց բռնել . եկոր պառկինք հոս , ու թեթե քուն մը առնենք :

Վրբխարխանս . Վրակ լեցի , ըսաւ մէկալը . որ չըլլայ թէ քնանալով ալ մէյմալ չարթըն նանք :

Յոսալեց . Ինչո՞ւ համար , եղբայր իմ . աշխատող մարդուն անուշ է քունը . կարելի է որ կազդուրինք թէ որ թեթե քուն մը առնենք :

Վրբխարխանս . Ս'իտքդ չե՞ս բերեր որ չովիւներուն մէկը մեզի ապսպրրեց որ կախարդեալ Նրկիրէն զգուշանանք : Ինքը աս խօսքով մեզի ըսել կուզէր որ քնանալէն զգուշ կենանք . ուստի՞ ուրիշներուն պէս չի քնանանք , հապա արթուն ու զուարթուն ըլլանք * . ան . թի . Ե . 6 :

Յոսալեց . կըխոստովանիմ որ յանցաւոր եմ . ու թէ որ ես մինակ ըլլայի , քնանալով մահուան վտանգին մէջ պիտի իյնայի : կըտես .

* Վրբխարխանս . եղբայր , զգուշ կեցիր կախարդեալ Նրկիրին վրայ քնանալէն : Երբոր ամէն բան դիրին՝ շիտակ ու աղէկ կը յառաջանայ , հոգինքնիս քունի կը պառկին : Բնատուծոյ բանին մէջը շատ զգուշութիւններ կըտրվին մեզի հոգևոր թմրութեան գէմ :

Նամ որ իմաստունին ըսածը ճշմարիտ է , թէ
 Լըրկուքը մէկէն աղէկ է . Եւ . 9 : Վու ըն-
 կերութիւնդ ողորմութիւն եղաւ ինծի մինչև աս
 տեղս . որ դուն քու աշխատութեանդ համար
 աղէկ վարձք մը պիտի առնես :

Վնեւածու . Եւրդ՝ ուրեմն քնէածութիւնը աս
 Բեան դեղ տեղս արգիլելու համար , աղէկ խօ-
 սակցութիւն մը ձեռք առնենք , ըսաւ Վրիս-
 տիանոս :

Բոլոր սրտովս ըսաւ մէկալը :

Վրիստիանոս . Ուրկից սկըսենք :

Յոսուէց . Ուրկից որ Եստուած սկսեց մեզի :
 Բայց թէ որ կամիս դուն կըսկըսի՞ս :

Վրիստիանոս . Վեզի առաջ աս երգը պիտի
 երգեմ .

Երբ սուրբերը քունով թմրին թող աս տեղ
 գան լսելու ,

Թէ ինչպէս աս ճամբորդները կըխօսակցին
 իրարու .

Հապա իրենք աս երկուքէն խոհեմաբար թող
 սորվին ,

Բաց և արթուն պահել իրենց քնով թըմ-
 րած աչքերնին :

Թէ որ աղէկ կառավարվի ընկերութիւնը
 սրբոց ,

Օ՛րենք արթուն կըպահէ ան՝ որ նախատինք
 է դժոխոց :

Եւոքը Վրիստիանոս սկըսեց , ու ըսաւ .
 Վեղի խնդիր մը պիտի հարցունեմ : Ի՞նչպէս
 եղաւ քեզի առաջ որ մտմտացիր աս քու հիւ
 մակվան ըրածդ ընել :

Յոսուէց . կուզես ըսել թէ ի՞նչպէս եղաւ
 առաջ իմ հոգիիս բարեւաւթիւնը փնտը
 ուել :

Վրիստիանոս . Ը,յո՛ւ , ատ կուզեմ ըսել :

Յոսուէց . Երկար ատեն մնացի ես մեր վա
 ճառանոցին մէջը տեսնւիլած ու ծախված բա
 ներուն զուարճութեանը մէջ , որոնք անանկ
 բաներ էին՝ որ կըհաւատամ թէ ես տակաւին
 անոնցմով մնացած ըլլայի նէ , հիմայ անոնք
 կորստեան ու կործանման մէջ զիս թաղած պի
 տի ըլլային :

Վրիստիանոս . Ի՞նչ բաներ էին անոնք :

Յոսուէց . Ըշխարհիս բոլոր գանձերը և հա
 ըրստութիւնները : Եւ ատ կըզուարճանայի ևս
 զեղևութիւնով՝ անառակութիւնով՝ արբեցու
 թիւնով՝ հայհոյութիւնով՝ ստուութիւնով՝ ան
 մաքրութիւնով՝ կիրակին չի յիշելով և ամէն
 ան բաներովը որոնք հոգին կորսնցունելու
 պատճառ կըլլան : Բայց Ըստուածային բա
 ները լսելով ու անոնց վրայ մտածելով՝ որոնք

շիտակը քեզմէ լսեցի՝ ինտոր որ սիրելի Հա-
 ւատարիմէն ալ, որ Ունայնութեան Տօնավա-
 ճառին մէջը իր հաւատքին և բարի կենցաղա-
 վարութեանը համար սպաննելեցաւ, վերջա-
 պէս գոայ թէ աս բաներուն վերջը մահ է, ու
 թէ՛ աս բաներուն համար Նստուծոյ բարկու-
 թիւնը անհնազանդութեան զակերներուն վրայ
 կուգայ. Հով. Է. 21—23 : Եւ. 6 :

Վրիստիննոս. Եւ անատենը իսկոյն կատարե-
 լապէս խելքդ պառկեցաւ ասոր :

Յոսուէց. Չէ. չէի յօժարէր իսկոյն ճանչ-
 նալ՝ ո՛չ մեղքին գէշութիւնը, և ո՛չ անոր կա-
 տարմանը ետևէն եկող դատապարտութիւնը.
 Բայց երբոր առաջ իմ միտքս սկսեց ցնցրվել
 Նստուծոյ բանովը, կը ջանայի անոր լուսին
 դէմը իմ աչքերս գոցել :

Վրիստիննոս. Բայց ի՞նչ էր պատճառը որ
 Նստուծոյ օրհնեալ Հոգիին քու վրադ ըրած
 առաջին ներգործութիւնները ասանկ բանե-
 ցուցիր դուն :

Յոսուէց. Պատճառները ասոնք էին : 'Նախ՝
 չէի գիտեր թէ ասիկա Նստուծոյ գործն է իմ
 վրաս : Բնաւ միտքէս չէի անցուցած թէ Նս-
 տուած առաջ մեղաւորին դարձը կըսկրտէ՝

մեղքին վրայով արթնութիւններ տալով աւտոր : Երկրորդ՝ մեղքը տակաւին շատ անուշ էր իմ մարմնիս , ու յօժար չէի անիկա ձգելու : Երրորդ՝ չէի գիտեր թէ ինտոր իմ առջի բարեկամներէս զատվիմ . անոնց ներկայութիւնը և գործերը շատ բաղձալի էին ինծի : Չորրորդ՝ ան ժամերը՝ երբոր իմ մեղաւոր ըլլալը ճանչնալը կուգար իմ վրաս , անանկ ճանճրալի և անանկ սիրտ դողացունող ժամեր էին , որ մինչև անգամ իմ սրտիս մէջը յիշելու չափ ալ չէի կրնար տանիլ անոնք :

Վրէստիանոս . Ուրեմն՝ ինտոր որ կերևայ , երբեմն քու նեղութենէդ կազատէիր :

Յոսաւէց . Եւ , անշուշտ . բայց նորէն աւտոր իմ միտքս կուգար . և անատենը առաջուց պէս՝ մանաւանդ թէ անկէց ալ գէշ կըլլայի :

Վրէստիանոս . Ինչո՞ւ համար , ի՞նչ էր որ քու մեղքերդ կրկին քու միտքդ կըբերէր :

Յոսաւէց . Ըլտ բաներ . ինչպէս՝

Թ . Թէ որ ճամբան ճշմարիտ հաւատացեալի մը պատահէի , կամ՝

Թ . Թէ որ մէկին Նստուածաշունչ կարգալը լսէի , կամ՝

Գ. Թէ որ գլուխս ցաւելու սկըսէր , կամ՝
 Գ. Թէ որ դրացիներուս մէկուն Տիւանդ ըլլալը լսէի , կամ՝

Ե. Թէ որ մեռելի մը համար չալված զանգակին ձայնը առնէի * , կամ՝

Զ. Թէ որ իմ մեռնիլս մտածէի , կամ՝

Է. Թէ որ լսէի Թէ յանկարծակի մահ պատահեր է ուրիշներուն :

Ը. Իայց մանաւանդ երբոր իմ վրայովս մտմը տայի Թէ շուտով պարտիմ դատաստանի երթալ :

Քրիստիանոս . Եւ միշտ դիւրութեամբ կրընայի՞ր ձգել խղճմտանքին խայթոցը , երբոր աս կերպերուն մէկովը անիկա քու վրադ պար :

Յոսուէց . Չէ , բնաւ . քանզի անոնք անատենը պնդութեամբ ձեռք կրզարնէին իմ խղճմտանքիս . և անատենը Թէ որ միայն միտքէս անցունէի մեղքին դառնալ , (Թէ և իմ միտքս անոր դէմ դարձած ըլլար ,) կրկնապատիկ տանջանք կրլար ինծի ան :

Քրիստիանոս . Ուրեմն ի՞նչ կրնէիր անատենը :

* Ըսիկա Ընգղիայի մէջ մէկ սովորութիւն մըն է , որ երբոր մէկը մեռնելու ըլլայ յատուկ եղանակով զանգակ կըչալի :

16 : « Երբոր բոլոր ձեզի հրամայվածները ընէք նէ , ըսէք թէ՛ Նախտան ծառաներ ենք » .
 Գլ . 1 . Ժէ . 10 : Եւ ուրիշ ասոր նման շատ խօսքերը : Նսկից սկսեցի ինքնիրէնս ասանկ խորհել : Թէ որ բոլոր իմ արդարութիւններս աղտեղի հանդերձներու նման են , թէ որ օրէնքին զործբերովը մարդ չարդարանար , ու թէ որ ամէն բանը ընէ ընուս տակաւին անախտան ենք , ապա ուրեմն յիմարութիւն է օրէնքին միջնորդութիւնովը երկինքը երթալու յուսալ : Նաև ասանկ ալ մտածեցի : Թէ որ մէկ մարդ մը հարիւր ոսկի պարտք ընէ վաճառականին , ու անկից ետքը բոլոր իր առած բաներուն ստակը հատուցանէ . բայց տակաւին թէ որ իր հին պարտքը առանց սրբրվելու կրկենայ տուամարին մէջը , վաճառականը անոր համար կրնայ դատաստանի կոչել անիկա՞ ու բանտը դնել տալ , մինչև որ իր պարտքը վըճարէ :

Վրիստիննոս . Պինտ աղէկ . և ասիկա՞ դուն ի՞նչպէս քու վրայովդ առիր :

Յոսուէց . Ինչպէ՞ս մի . ես ինձի ասանկ խորհեցայ : Ես իմ մեղքերովս Նստուծոյ տուամարին մէջը շատ պարտաւոր եղայ , և իմ հինակ

մին . ինչու որ աղէկ ծանօթ էինք իրարու : Եւ ինքը ինծի ըսաւ՝ թէ մինչև ձեռք չի ձգեմ առնանկ մէկ մարդու մը արդարութիւնը՝ որ բնաւ չի մեղանչեց , ո՛չ իմս՝ և ո՛չ բոլոր աս մեղաւոր աշխարհի արդարութիւնը կարող է զիս փրկել :

Վրիստինոս . Եւ կարծեցի՞ր որ ինքը ճշմարիտ կը խօսէր :

Յոսաօն . Երբոր բուն իմ ուղղութիւններու հակած և անոնցմով բաւականացած ըլլալի՞ ու թէ որ ինքը անատենը ասանկ ըսած ըլլար ինծի , յիմար պիտի կոչէի զինքը իր քաջած աշխատանքին համար : Բայց հիմայ որ տեսնամ իմ անձիս տկարութիւնը և իմ ամենալաւ գործքերուս մէջ սողացող մտնող մեղքը , պարտաւորած եմ իր կարծիքը ունենալ :

Վրիստինոս . Բայց երբոր ինքը առաջ ափկա քեզի ազդեց նէ՞ մտածեցի՞ր թէ կրգրտնրդի անանկ մարդ մը՝ որուն համար արդարապէս ըսդի թէ բնաւ չի մեղանչեց :

Յոսաօն . Պարտիմ խոստովանիլ՝ թէ առջի բերանը օտարոտի բան մը թուեցաւ ինծի ան խօսքը . Բայց իր հետը քիչ մալ խօսակցու-

Թիւն և ընկերութիւն ընելէն ետև կատարելապէս հաւտացի անոր :

Վրբխաբանութիւն . . . 11. Հարցուցիր իրեն թէ ո՞վ էր ան մարդը , և ի՞նչպէս արդարանալու էիր աշուտ :

Յոսուէց . Լ. 10 . և ինքը ըսաւ ինծի թէ Տէր Յիսուան է , որ Լ. մենաբարձրեալին աջ կողմը կընստի . Եւր. 7 . 12—21 : Եւ այսպէս՝ ըսաւ ինքը , դուն պարտիս իրմով արդարանալ , այսինքն՝ հաւատալով ան բաներուն ինչ որ իր մարմինին օրերուն մէջը ըրաւ , ու փատէն կախված ժամանակը քաշեց . Լուկ. 24 . 5 : Կոր. ա . 14 : ա . 11 . ա . 19 : Հարցուցի իրեն ևս՝ թէ առ մարդուն արդարութիւնը ի՞նչպէս կըրնայ ան զօրութիւնը ունենալ , որ Լ. ստուծոյ առջևը մէկ ուրիշը արդարացունէ : Ինքն ալ ինծի ըսաւ՝ թէ անիկա կարող Լ. ստուած էր , և ինչ որ ըրաւ նէ ըրաւ՝ ու նաև մահու մեռաւ , չէ՛ թէ իրեն համար՝ հապա ինծի համար . ու անոր ըրածները՝ և անոնց արժանաւորութիւնը ինծի պիտի համարվի , թէ որ ես իրեն հաւատամ :

Վրբխաբանութիւն . . . Եւ ի՞նչ ըրիր դուն անատենը :
 Յոսուէց . Հաւատալուս հակառակ իմ ընդ-

դիմութիւններս ըրի . քանզի կրկարծէի թէ
ինքը չի պիտի կամենայ փրկել զիս :

Վրէստիանոս . Եւ անատենը ի՞նչ ըսաւ քե-
զի Հաւատարիմը :

Յօսուէց . Ըսաւ ինծի որ անոր դիմեմ ու
տեսնամ : Ես ալ ըսի թէ յանդգնութիւն է ան
բանը : Ինքը ըսաւ , չէ՛ , ինչու որ հրաւիրված
եմ իրեն երթալու . Սաղմ . ԺԹ . 28 : Ընկէ ետեւ
Յիսուսի հրաւիրանաց դիրքը տըլաւ ինծի՝ որ
քաջալերէ զիս էվելի համարձակութեամբ եր-
թալ . և ան գրքին վրայով ըսաւ՝ թէ անոր ա-
մէն մէկ կէտը ու նշանախեցը երկինքէն ու
երկրէն ալ հաստատ է . Սաղմ . ԻԴ . 35 : Ընա-
տենը հարցուցի իրեն՝ թէ երբոր երթամ ինչ
պարտիմ ընել . և ինքը ինծի ըսաւ թէ ծուն-
կերուս վրայ բոլոր իմ սրտովս և հոգևովս ա-
ղաչելու եմ Հօրը՝ որ անիկա յայտնէ ինծի .
Սաղմ . ԶԴ . 6 : Գառն . Գ . 10 : Եւէմ իԹ . 12 , 13 :
Ընկէ ետքը իրեն հարցուցի ևս՝ թէ ինչպէս
պարտիմ աղաչել անոր . ու ինքը ըսաւ , զնո՛ս ,
և պիտի գտնաս զինքը ողորմութեան աթոռին
վրայ , ուր որ բոլոր տարին կրնաստի ներում և
թողութիւն տալու անոնց որ իրեն կերթան .
Եւս . ԻԵ . 22 : Գլխ . ԺԳ . 2 : Թա . Է . 89 : Եւս . Դ .

16 : Բսի իրեն՝ թէ երբոր երթամ , չեմ դիտեր ինչ ըսեմ . ու ան ինծի ապսպրեց ասանկ ըսեւ : « Բ՛ստուած , ողորմէ ինծի մեղաւորիս , ու տո՛ւր որ Յիսուս Վրիստոսը ճանչնամ , և ա՛նոր հաւատամ . քանզի կրօնեսնամ որ եթէ իր արդարութիւնը չըլլար նէ չկամ թէ որ ես ան արդարութեանը վրայ հաւատք չունենամ նէ , բոլորովին կորսըված եմ * : Ո՛վ Տէր , լսեցի որ դուն ողորմած Բ՛ստուած ես , ու անանկ կարգեցիր որ քու Որդիդ Յիսուս Վրիստոսը աշխարհի փրկիչը ըլլայ . ու նաև որ դուն կը կամիս ինծի պէս խեղճ մեղաւորներուն շնորհել անիկա : Ես ալ ճշմարտապէս մեղաւոր

* Բղէկնկատէ ասիկա՝ եղբայր : Ինքզինքը ճանչցող մեղաւորին գլխաւորաբար փնտրածը արդարութիւն է : Ինքը իր վրայ չունի անիկա . և ասիկա գիտէ ինքը : Ուրեմն ո՞ւր պիտի գտնըվի : Սիայն Վրիստոսի վրայ : Բսիկա Բ՛ստուածմէ յայտնըված ճշմարտութիւն մըն է . ու առանց հաւատալու ասոր՝ ամէն մեղաւոր պիտի կորսըվի : Ստածէ թէ քու հոգիդ կորստեանը պատճառ պիտի ըլլաս թէ որ Վրիստոսի արդարութիւնը մերժես , ու չի հաւատաս թէ նոյն արդարութիւնովն է՝ որ Բ՛ստուած ամբարիշտները կարգարացունէ առանց գործքի : Ո՛վ խստասիրտ՝ ու ինքզինքնիդ արգարացունող մեղաւորներ , արդարութենէ հեռու էք դուք : Իմացէք ասիկա՝ ու զարհուրեցէք :

եմ : Վասն որոյ՝ Տէր , աս պատեհութիւնը
 ձեռք ան , ու քու շնորհքդ մեծցուր իմ հոգիիս
 փրկութեամբը , քու որդիիդ (Իսուա Վրիս-
 տոսի միջնորդութիւնովը . Մ,մէն” :

Վրիստիննա . Եւ քեզի հրամայվածին պէս
 ըրի՛ր մի :

Յոսաւէց . Եւ յո՛ , կրկին , և կրկին , և կրկին :

Վրիստիննա . Ու շայրը յայտնե՞ց քեզի Ու-
 դին :

Յոսաւէց . Ո՛չ . ո՛չ առաջին՝ ո՛չ երկրորդ՝
 ո՛չ երրորդ՝ ո՛չ չորրորդ՝ ո՛չ հինգերորդ՝ և ո՛չ
 ալ վեցերորդ անգամին * :

Վրիստիննա . Ի՞նչ ըրիր անատենը :

Յոսաւէց . Ի՞նչ ըրի . ինչ ընե լիքս չէի գի-
 տեր :

Վրիստիննա . Եղօթքը ձգելու մտմտութներ
 չունեցա՞ր մի :

Յոսաւէց . Եւ յո՛ քանի մը հարիւր անգամ աս
 մտմտութքը ըրի :

* Սեղաւորը երբոր նախ կըսկըսի փնտրուել զՏէ-
 րը , իր սրտին մէջը շատ մեծ վախկոտութիւն կը
 ծնանի : Իայց Վրիստոսի հաւատարիմ խոստմուն-
 քը ունի ինքը , թէ՛ փնտրուեցէք ու պիտի գտնաք .
 Վ . ի . Ժ . Գ . 9 :

Վրբիստիանոս . Եւ ի՞նչ էր պատճառը որ չի ձգեցիր ան :

Յոսաֆէ . Հաւատացի թէ ինծի ըսվածը ճշմարիտ էր , այսինքն՝ թէ առանց աս Վրբիստոսին արդարութեանը բոլոր աշխարհ կարող չէր զիս փրկելու . և անոր համար՝ ըսի ես ինծի , թէ որ աղօթքը ձգեմ նէ անշուշտ պիտի մեռնիմ : Իայց թէ որ պիտի մեռնիմ նէ՞ շը նորհաց ակօղիս առջևը մեռնիմ : Ու ասով իմ միտքս եկաւ աս խօսքը . թէ որ ուշանայ նէ համբերէ անոր . ինչու որ ան որ պիտի դայ նէ՞ պիտի դայ , ու չի պիտի ուշանայ . Լճակ . ք . 3 : Եւ յապէս աղօթելը հանապազորդեցի , մինչև որ Հայրը իր որդին յայտնեց ինծի :

Վրբիստիանոս . Եւ ի՞նչպէս ինքը յայտնելուց ցաւ բեզի :

Յոսաֆէ . Սարմնաւոր աչքով ես զինքը չի տեսայ , հապա մտաց աչքով . Եւս . Թ . 18 , 19 . և ասանկ եղաւ անիկա : Սէկ օր մը շատ տըրտում էի , որուն պէս կարծեմ թէ իմ կեանքիս մէջը ուրիշ անգամ տրտմած չէի . և աս տրտմութիւնը իմ մեղքերուս անարգութեանը ու մեծութեանը նորոգ տեսութեամբը եղաւ : Եւ անատենը ուրիշ բանի ակնկալութիւն չու-

նէի՝ հապա դժոխքի ու իմ հոգիիս յաւիտենա-
կան դատապարտութեանը . մէյմալ յանկարծ՝
ինծի թուեցաւ թէ տեսայ Տէր Յիսուսը որ
երկինքէն վար կրնայէր իմ վրաս ու կըսէր ,
« Հաւատա՛ Տէր Յիսուս Վրիստոսին , ու պի-
տի փրկըվիս » . Կորնթ . ԺԿ . 31 :

Բայց ես պատասխան տըլի թէ , Տէր , ես
մեծ՝ շատ մեծ մեղաւոր եմ . ու ինքը ըսաւ ,
« Իմ շնորհքս բաւական է քեզի » . Բ . Կորնթ .
ԺԲ . 9 : Ընատենը ըսի թէ՛ Բայց՝ ո՞վ Տէր ,
ի՞նչ է հաւատալը : Ու ետքը աս խօսքէն որ
կըսէ՛ « Ըն որ ինծի կուգայ բնաւ չի պիտի ա-
նօթենայ , ու ան որ ինծի կըհաւատայ բնաւ չի
պիտի ծարաւի » . Եփ . Գ . 35 . տեսայ թէ հա-
ւատալը ու գալը ամէնը մէկ է . և թէ՛ ան որ
կուգայ , այսինքն՝ որ իր սրտովը և յօժարու-
թիւններովը Վրիստոսով եղած փրկութեանը
ետեւէն կըվազէ , ինքը ճշմարտապէս կըհաւա-
տայ Վրիստոսի : Ընատենը իմ աջքերս լե-
ցան , ու հարցուցի ևս , « Բայց՝ ո՞վ Տէր ինծի
պէս մեծ մեղաւոր մը իրաւ կրնայ՞ ընդունելի
ըլլալ քեզի , և փրկըվիլ քեզմով » : Ու լսեցի
որ կըսէր , « Ըն որ ինծի կուգայ , չի պիտի գուրս
հանեմ » Եփ . Գ . 37 : Թ . ՏԻ . Թ . 15 : և ես ըսի .

ըրս յորդեցան ան սիրովը՝ որ Յիսուս Վրիստոսի անունին՝ ժողովրդեանը ու ճամբաներուն վրայ էր :

Վրիստոս . Լսիկա արդարեւ Վրիստոսի քու հոգիիդ ըրած յայտնութիւնն էր . բայց մասնաւորապէս պատմէ՛ ինծի թէ ասիկա ինչ զօրութիւն ունեցաւ քու կիրքերուդ վրայ :

Յիսուս . Լսիկա ինծի տեսնալ տըլաւ թէ բոլոր աշխարհս իր ամէն ունեցած արդարութիւնովն ալ դատապարտութեան վիճակի մը մէջ է : Լսիկա ինծի տեսնալ տըլաւ թէ չայլ Լստուած թէպէտ ե ինքը արգար է , կրնայ արդարապէս արդարացունել իրեն դիմող մեղաւորը : Լսիկա մեծապէս ամէցուց զիս իմ առջի վարքիս անարգութեանը վրայ , ու խրաչնեցուց զիս իմ տգիտութիւնս ինծի իմացունելով . քանզի ասկից առաջ ամենեւին իմ սրբտիս մէջը խորհուրդ մը չի մտաւ որ Յիսուս Վրիստոսի գեղեցկութիւնը այսչափ ցուցնէր : Լսիկա սուրբ վարքը ինծի սիրցուց , ու Յիսուս Վրիստոսի անունին փառացր ու յատուոյն համար բան մը ընելու փափաք տըլաւ : Կանաւանդ թէ մտածեցի որ եթէ ես հիմա իմ մարմինիս մէջը հազար չափ արիւն ունե

նայի նէ , բոլորը կրնայի Թափել Տէր Յիսուսի համար * :

Ասկից ետքը երազիս մէջը տեսայ որ Յուսալիցը ետին նայեցաւ՝ ու տեսաւ որ կուգար Տգիտութիւնը , որն որ իրենք ետեւինն

* Վրիստոսի հաւատքը. Աստուծոյ վրայով նոր ծանօթութիւն մը կուտայ հոգիին . Վրիստոսի արդար Աստուած՝ և միանգամայն փրկիչ ըլլալուն գաղափարը կրմատուցանէ անոր : Աս հաւատքը մէկ քաղցր տրտմութիւն մը կը պատճառէ մեր մեղքերուն վրայ , և մանաւանդ մեր ներված մեղքերուն վրայ : Ամանուէլի անձին ու պաշտօններուն անզուգական գեղեցկութիւնը մեզի կը ցուցնէ , ու սրբութեան սիրով ու կենաց և մահուան մէջ զինքը փառաւորելու մեծափափաք տենչով մեզ կը լեցունէ : Ո՛վ որ աս նշանները իր ներսիդին ըլլալ կը զգայ , թէ պէտ և նուազ չափով մը , կրնայ հաւատալ թէ իր հաւատքը անկեղծ է , ու թէ մահէն կեանքի անցած է ինքը : Նայց թող իմանայ՝ որ թէպէտ Տէրը իր բոլոր ժողովրդոցը մի և նոյն ճամարտութիւնները կրճանուցանէ , և սակայն անոնց ամէնը միայն մէկ եղանակով մը չի առաջնորդեր ճշմարտութեան : Հատերը Աստուծոյ շնորհքովը՝ ու Վրիստոսի միջնորդութեամբը անոր ողորմութիւնովը աներկէան յոյսի մը հասած ըլլալով՝ ու հաւատաքով անոր սիրոյն մէջը արմատացած ու հաստատված ըլլալով , իրենց երբ ու ինչպէս դարձի գալերնուն վրայ ասանկ պատմութիւն մը չեն կրնար ընել , ինչպէս որ հոս Անուսալիցը կրնէ :

ձգեր էին : Եւ ըսաւ Վրիստիանոսին . Տե՛ս
 սրչափ հեռուն մեր ետեւը կըտնտընակոր ան
 տղան :

Վրիստիանոս . Իրաւ ես . կըտեսնամկոր զին-
 քը . ինքը մեր ընկերութեանը վրայ փոյթ
 չունի :

Յոսապէց . Բայց կարծեմ որ եթէ ինքը մինչև
 հոս մեր հետը քալեր նէ վնաս մը չի պիտի
 կրեր անկից :

Վրիստիանոս . Ղշմարիտ է ատ . բայց կըհաւ-
 տացունեմ քեզ ոյ ինքը ուրիշ կերպ կըմտա-
 ծէ :

Յոսապէց . Եւյո՛ւ , ատանկ պիտի ըլլայ . բայց
 ոյսու ամենայնիւ եկոր իրեն սպասենք : Եւ
 այսպէս ըրին անոնք :

Վերջը Վրիստիանոս ըսաւ անոր . Եւաջ
 եկոր՝ մարդ , ինչո՛ւ այդչափ ետ մնացիր :

Տգիստիան . Ես իմ զուարճութիւնս շատ է-
 վելօք կըքաղեմ առանձին քայելով քան թէ
 ընկերութեամբ . միայն թէ խիստ ըաւ ընկե-
 րութիւն մը գտնամ նէ կուզեմ :

Եւնատենը Վրիստիանոս Յուսապիցին կա-
 մաց մը ըսաւ . Վեզի չըսի՞ որ ինքը մեր ընկե-

տուժեանք վրայ փոյթ չունի : Բայց և այնպէս եկոր քովը երթանք , ու աս առանձին անապատիս մէջը ժամանակը խօսակցութեամբ անցունենք : Սերջը էր խօսքը Տգիտութիւնին դարձունելով լրաս , Եկոր նայինք՝ ինտոր ես . ինչպէս է հիմայ բանը Եստուծոյ և քու հոգիիդ մէջը :

Տգիտութիւն . Կըյուսամ որ աղէկ է . քանզի միշտ բարի ազդումներով լեցուն եմ , որոնք իմ միտքս կուգան ճամբուս մէջը զիս մխիթարելու * :

Վրիստոնէն . Կաղաչեմ քսէ մեզի՝ ինչ բարի ազդումներ :

* Տգիտութիւնը իր յոյսը ու մխիթարութիւնը իր բարի խորհուրդներուն վրայ հաստատած էր , բայց բողոքովին զուրկ էր բարի խղճմտանքի մը ընծայած խաղաղութենէն : ()րինասէր փարիսեցիին երջանկութիւնը միայն իր անձէն կըծագի . բայց ճշմարիտ Վրիստոնէին երջանկութիւնը միայն Վրիստոսի հաւատքէն՝ յառաջ կուգայ : Եւաջինը իր փրկութեանը բոլոր ակնկալութիւնները իր մտքին զգացումներէն կըհանէ , իր ըրածներէն կամ քաջածնորէն կըհետևեցունէ . բայց երկրորդը իր ապանի երջանկութեանը բոլոր յոյսերը Վրիստոսի ըրածին ու քաջածին վրայ կըհաստատէ , միայն իր Վրիկիչովը ուրախանալով , ու իր մարմնոյն չի վստահանալով :

Տգիստ-Բի-ն . Ի՛նչ մի , Եստուծոյ ու երկնից վրայ կրմտածեմ :

Վրիստիանոս . Ետանկ կընեն դւերը ու դատապարտեալ հոգիներն ալ :

Տգիստ-Բի-ն . Բայց ես անոնց վրայ կրմտածեմ՝ ու անոնց կրփափաքիմ ալ :

Վրիստիանոս . Ետանկ կընեն շատերն ալ որ հաւանականաբար բնաւ չի պիտի երթան հոն . «Ի՛մէն վատերը կրփափաքին՝ բայց կարօտութեան մէջ են» . Եւստի : ԺԳ . 4 :

Տգիստ-Բի-ն . Բայց ես անոնց վրայ կրմտածեմ՝ ու անոնց համար ամէն բան կը ձգեմ ալ :

Վրիստիանոս . Ետոր վրայ տարակոյս ունիմ . ինչու որ շատ զժուարին բան է ամէն բաները ձգելը . այո՛ , դժուարագոյն բան մըն է ան՝ քան որչափ շատերը կիմանան : Բայց ինչո՞ւ կամ ինչո՞վ համոզված ես դուն՝ թէ ամէն բաները ձգած ես Եստուծոյ ու երկնից համար :

Տգիստ-Բի-ն . Իմ սիրտս ասանկ կը վկայէ ինձի :

Վրիստիանոս . Իմաստունը կըսէ թէ , «Ի՛ն որ իր սրտին յուսացած է , անզգամ է » . Եւստի . Ի՛՞՞ . 26 :

Տգիստ-Բի-ն . Ետիկա չար սրտի վրայով ըսված է . բայց իմն բարի սիրտ է :

Վրիստիանոս . Այ՛ո՛ . բարի սիրտ է ան՝ որ բարի խորհուրդներ ունի . ու բարի վարք է ան՝ որ Աստուծոյ պատուիրանքներուն կը համաձայնի . բայց ուրիշ բան է ճշմարտագէտ աս բաները ունենալը , և մէկ ուրիշ բան մը սխալն ասանկ համարելը :

Տփրոս-Բիւն . Վրէ՛ ըսէ , զոր խորհուրդները կը սեսես որ բարի են . և զոր վարքը կը սեսես թէ Աստուծոյ պատուիրանքներուն համաձայն է :

Վրիստիանոս . Այլևայլ կերպ բարի խորհուրդներ կան . կան որ մեր վրայովն են , կան որ Աստուծոյ , կան որ Վրիստոսի , և կան որ ուրիշ բաներու վրայով :

Տփրոս-Բիւն . Որո՛նք են մեր վրայովը եղած բարի խորհուրդները :

Վրիստիանոս . Ընոնք որ Աստուծոյ Ռանին համաձայն են :

Տփրոս-Բիւն . Ե՛րբ կը համաձայնին Աստուծոյ Ռանին՝ մեր վրայովը ունեցած մեր խորհուրդները :

Վրիստիանոս . Ընատենը՝ երբոր մենք մեր անձին վրայ ան նոյն դատաստանը կընենք , ոչն ոչ Աստուծոյ Ռանը կընէ : Բսածս բացասութիւն համար՝ Աստուծոյ Ռանը բնական վիճակի մէջ

եղած անձանց համար կրսէ թէ շի կայ մէկ արդար մը . չի կայ մէկը որ բարի ընէ . Լուկ . 11, 12 : Եւ դարձեալ կրսէ , Լուկն մարդ իր սրտին մէջը ամէն օր չար կըխորհի . Մատթ . 5 : Եւ դարձեալ Սարգու սրտին խորհուրդը իր մանկութենէն չար է . Մատթ . 21 : Եւրդ՝ ուրեմն երբոր ասանկ կըխորհինք մեր վրայովը՝ անիկա զգալով , անատենը մեր խորհուրդները բարի են . ինչու որ Եստուծոյ Բանին համաձայն են :

Տգիտութիւն . Ես բնաւ չեմ կրնար հաւատալ թէ իմ սիրտս անանկ դէշ է * :

Վրիստոս . Ետոր համար բնաւ մէկ բարի խորհուրդ մը ունեցած չես քու վրայովը քու կեանքիդ մէջը † : Բայց թող տուր որ իմ

* Բնականապէս մէկը չի կրնար հաւատալ թէ իր սիրտը գէշ է : Բայց ասիկա ստոյգ նշան մըն է թէ երկնից լոյսը սրտին վրայ ծագած չէ , ու անոր տարապայման չարութիւնը յայտնի ըրած չէ : Եսկից է որ սգէտ հաւատացեալները իրենց անձին մէջը բարի ըլլալու կարծիքովը շարաշար կըխաբովին , ու թողութիւն գտնալու համար բոլորովին Վրիստոսի ըրած քառութեանը՝ ապաւինելէն՝ և արդարանալու համար միայն անոր արդարութեանը յուսալէն ետ կըմնան :

† Բնաւ չենք սկսիր բարի խորհուրդ մը ունենալ

խօսքս առաջ տանիմ : Եստոր որ Լստուծոյ Ռանը մեր սիրտերը կըղատէ , անանկ մեր ճամբաներն ալ կըղատէ . և երբոր մեր սիրտերուն ու ճամբաներուն խորհուրդները կըհամաձայնին ան դատաստանին՝ որն որ Լստուծոյ Ռանը երկաքանչիւրին վրայ կընէ , անատենը երկաքանչիւր խորհուրդներն ալ բարի են , որովհետև Լստուծոյ Ռանին համաձայն են :

Տգիտութիւն . Բացայայտէ ինծի քու միտքդ :
 Վրիստինոս . Պինտ աղէկ . Լստուծոյ Ռանը կըսէ՝ Թէ մարդոց ճամբաները ծուռ ճամբաներ են . բարի չեն , հապա չար . կըսէ Թէ բնականաբար բարի ճամբայէն դուրս են անոնք՝ որ չեն ճանչնար զանիկա . Սող . Ճիգ . 5 : Լուս . ք . 15 : Լուս . 7 . 17 : Երբ երբոր մէկը ասանկ կըխորհի իր ճամբաներուն վրայով , կուզեմ ըսել՝ երբոր զգալով և խոնարհ սրբտով ասանկ կըխորհի , անատենը ինքը իր ճամբաներուն վրայով բարի խորհուրդներ ունի . ինչու որ իր խորհուրդները հիմայ Լստուծոյ Ռանին դատաստանին հետը համաձայն են :

մինչև որ չի սկսինք մենք մեր վրայ գէշ խորհիլ , ու ճշմարտապէս իմանալ մեր յետին չարութիւնը , Էստոր որ Լստուծոյ Ռանը կըվկայէ մեր վրայ :

ՏԳԻՒՄ-ԸԻՆ . Որո՞նք են Լստուծոյ վրայով եղած բարի խորհուրդները :

Վրբխարևանա . Ղիշտ ինչպէս որ առաջ մեր վրայով ունեցած խորհուրդներնուս համար ըսի , երբոր Լստուծոյ վրայով մեր խորհուրդները համաձայն են ատոր՝ ինչ որ Բանը կրակէ իրեն համար . այսինքն երբոր իր էութեանը և ստորագիշտներուն վրայ անանկ կըխորհինք ինտոր որ Բանը սորվեցուց , որուն վրայ հիմայ չեմ կրնար երկար խօսիլ : Վարձեալ անատենը շիտակ խորհուրդներ կունենանք Լստուծոյ վրայով՝ երբոր կրմտածենք թէ ինքը լաւագոյն գիտէ մեզ քան որչափ մենք զմեզ գիտենք , և մեր վրայ մեղք կրտեսնայ երբոր և ուր որ մենք մեղք մը չենք տեսնար վրանիս . երբոր կրմտածենք թէ ինքը մեր ներքին խորհուրդները գիտէ , և թէ մեր սիրտը բոլոր իր ծածուկներովը իր աչքերուն առջևը միշտ բաց է . նաև երբոր կրմտածենք թէ բոլոր մեր արդարութիւնը զգուելի է իր առջևը , և թէ ինքը մեր բոլոր ամենալաւ դորձքերովը չի կրնար տանիլ որ առանց Վրխստոսի մեզ իր առջևը կայնած տեսնայ :

ՏԳԻՒՄ-ԸԻՆ . կըկարծես դուն որ ես անանկ

յիմար ըլլամ՝ որ մտածեմ թէ Մատուած ինծմէ էվելի չի կրնար տեսնալ . կամ թէ իմ ամենալաւ գործքերովս Մատուծոյ առջևը ելլալ ուզեմ :

Վրիստիանոս . Հապա զուն ինտոր կրմտածես աս նիւթիս վրայ :

Տգիտո-Նի-ն . Կարճ խօսքով, կրմտածեմ թէ արդարանալու համար Վրիստոսի պարտիմ հաւատալ :

Վրիստիանոս . Ինտոր . կրմտածես թէ Վրլիստոսի պարտիս հաւատալ՝ երբոր չես տեսնար քու իրեն ունեցած կարօտութիւնդ : Կուն ո՛չ քու սկզբնական և ո՛չ ներգործական պակսութիւններդ կրտեսնասկոր . հապա անանկ կարծիք մը ունիւր քու վրայովդ և քու ըրածիդ վրայով, որ յայտնապէս կըցուցնէ քեզ անանկ մէկը ըլլալ . որ բնաւ տեսած չես Վրիստոսի արդարութեան հարկաւորութիւնը, Մատուծոյ առջին քեզ արդարացունելու : Ուրեմն ի՞նչպէս կըսես թէ Վրիստոսի կըհաւատամ * :

* Մհա աս տեղս կրտեսնանք թէ մարդուս իր արդար ըլլալու կարծիքը ինչպէս բնականաբար կը կուրացունէ իր աչքերը՝ ու կարգիլէ իր սիրտը հա-

Տգիտութիւն . Լճէն աս ըսածներովը ըստ բա-
ւականին լաւ կը հաւատամ ես :

Վրիտտիւն . Ենտոր կը հաւատաս :

Տգիտութիւն . կը հաւատամ թէ Վրիտտո
մեղաւորներուն համար մեռաւ . և թէ Լստու-
ծոյ առջևը պիտի արդարանամ անէծքէ՛ իր
օրէնքին ըրած իմ հնազանդութիւնս իր շնորհ-
քովը ընդունելովը : Կամ թէ այսպէս . Վր-
րիտտոս իմ բարեգործութիւններս որ բարե-
պաշտօնական գործքեր են՝ իր արդէանցը զօրու-
թիւնովը ընդունելի կընէ իր օրը , և այսպէս
պիտի արդարանամ * :

ւատալու թէ Վրիտտոսի արդարութիւնը միայն
կարդարացունէ մեղաւորը Լստուծոյ առջևը . և
սակայն ասանկ շատերը կան որ կը խօսին Վրիտտո-
սի հաւատալու վրայ , բայց իրենց հաւատքը միայն
երազ է : Վրիտտոսի արդարութեանը չեն հաւա-
տար , հապա կը կարծեն թէ մէկ կերպով մը արդէն
ունին կամ պիտի ստանան արդարութիւն մը որ
յատկապէս իրենցն է : Լստոս , ինչ սարսափելի
խաբէութիւն է աս որով շատերը կը խաբվին :

* Տգիտութիւնին խօսքը ճիշտ յարմար կուգայ
Վրիտտոնեայ կոչվողներէն շատերուն վարդապե-
տութեանը , որոնք բանիւ չեն ուրանար փրկիչին
արդարութիւնը , բայց իրենց ըրածները անոր հետ
խառնելով կը ընչացունեն անոր զօրութիւնը : «Թէ
որ շնորհքով , անանկ է նէ ալ գործքերէն չէ .

Վրիստինոս . Վերէ ինձի քու հաւատքիդ աս դաւանութեանը պատասխանը տալ :

ա . Այլընդայլոյ հաւատքով մը կը հաւատաս կոր դուն . ինչու որ Մատուծոյ Ռանին մէջը աս հաւատքը մէկ տեղ մը նշանակված չէ :

բ . Սուտ հաւատքով մը կը հաւատաս կոր դուն . ինչու որ ատ քու հաւատքդ Վրիստոսի արդարութենէն արդարանալը կառնէ , ու անիկա քու կիներդ կը նծայէ :

գ . Աս հաւատքը Վրիստոս քու անձիդ արդարացունողը չընէր՝ հապա քու գործքերուդ , և քու գործքերուդ պատճառովը քու անձիդ , որ սուտ է :

դ . Այնորոյ աս հաւատքը խտրեբայ է , մանաւանդ թէ անանկ հաւատք մը՝ որ Մենակարող Մատուծոյ օրը բարկութեան տակ պիտի ձգէ քեզ . քանզի ճշմարիտ արդարացուցիչ հաւատքը՝ հոգին իր կորուսեալ վիճակը օրէնքին միջնորդութիւնովը ղգացածի պէս Վրիստոսի արդարութեանը դիմել կուտայ ա-

հապա թէ չէ՝ շնորհքը ալ շնորհք չըլար : Բայց թէ որ գործքէն , անանկ է նէ ալ շնորհքէն չէ . հապա թէ չէ գործքը ալ գործք չըլար” . Հով . Ժ . 6 :

պատանարան գտնալու . բայց աս իր արդարու-
թիւնը չէ թէ շնորհաց գործ մըն է՝ որով ինքը
քեզ արդարացունելու համար քու բարեգոր-
ծութիւնդ ընդունելի կընէ Լստուծոյ , հապա
իր անձնական հնազանդութիւնն է օրէնքին ,
մեզի համար ընելով և քաշելով ան բաները
որ մեր ձեռքերէն կը պահանջուվէին . Ճշմարիտ
հաւատքը աս արդարութիւնը կընդունի՝ որուն
հովանաւորութեանը տակը հոգին պաշտպան-
վելով , և անով Լստուծոյ առջևը անարատ
կայնելով ընդունելի կըլլայ , ու դատապար-
տութենէ կազատի * :

ՏԳԻՒՄ-ԸԻՆ . Ի՛նչ , կուզես որ մենք ան բա-
նին ապաւինինք որն որ Վրիստոս առանց մե-
զի ինք իր անձամբը գործեց : Լս կարծիքը

* Լս չորս պատասխանիները շատ աղէկ կը յայտ-
նեն աս մասին վրայ եղած յանդգնական և խիստ
վտանգաւոր մոլորութիւնը : 'Նմանապէս կըցու-
ցընեն թէ ի՛նչ է Ճշմարիտ հաւատքին բնութիւնը,
ու Լստուծոյ առջևը արդարանալու և ընդունելի
ըլլալու համար անոր հաստատած մի միայն հիմը :
Ո՛վ ընթերցող՝ քու պատուական հոգիիդ համար
զգուշացիր քու դրած հիմիդ . նայէ որ քու անձիդ
վրայ բան մը չի շինես , հապա բոլորը Լստուծոյ
դրած հաստատուն հիմին , այսինքն՝ իր սիրելի Արդ-
ւոյն ու անոր կատարեալ արդարութեանը վրայ :

մեր ցանկութիւններուն երասանակը կը բաղկէ և
ու թող կուտայ մեզի որ ուզածնուս պէս ապ-
րինք , քանզի ի նչ փոյթ է ինտոր ապրելինիս
թէ որ կրնանք ամէն բաներէն արդարանալ
Վրիստոսի արդարութիւնով՝ միայն անոր հու-
ւատալով * :

Վրիստոսու , Վու անունը Տգիտութիւն է և
և քու անունը ինտոր է նե զունալ անանկ ես .
և մինչև անգամ աս քու պատասխանիդ կը
ցուցնէ ի նչ որ ես ըսի : Տգէտ ես զուն ար-

* Հ նորհաց վարդապետութիւնները ամէն դա-
րերու մէջ անընդունելի եղան , կարծովելով թէ ա-
նապատեան զուռ կրթանան անոնք : Բայց աս
հակառակութեանս առաքեալը թող պատասխան
տայ . “Մտուծոյ շնորհքը” կըսէ “բոլոր մարդոց
երևցաւ . որ մեզ կը խրատէ՝ որ ամբարշտութիւնը
ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք .
զգաստութիւնով և արդարութիւնով ու աստուած-
պաշտութիւնով ապրինք աշխարհիս մէջ” . Տե՛ր .
Է . 11, 12 : Երբոր աս շնորհքը պայծառապէս
յայտնելի մտքին մէջը՝ ու անկեղծութեամբ ընդու-
նելի ըլլայ սրտին մէջը , ազատութիւն չի տար մեզի
մեր ցանկացածին պէս ապրելու՝ ինտոր որ Տգիտու-
թիւնը աս տեղս կը կարծէ . այլ բոլորովին հակա-
ռակը կընէ : Սրբութեան ամէն պարտաւորութիւն-
ները՝ որոնք որ ուրիշ կերպով ձանձրալի՝ և մա-
նաւանդ թէ՛ անգործածելի պիտի ըլլային , դիւրին
և զուարճալի կընէ :

դարացուցիչ արդարութեան , և նոյնպէս տը
գէտ ես անոր հաւատքովը քու հոգիդ փրկելու
Լստուծոյ ծանր բարկութենէն : Սանաւանդ
թէ Վրիստոսի աս արդարութեանը ապաւի-
նող փրկարար հաւատքին ճշմարիտ զօրութիւն
ներուն ալ տգէտ ես , որ է սիրտը խոնարհե-
ցունել և Լստուծոյ ընծայել Վրիստոսի
միջնորդութիւնովը , անոր անունը՝ խօսքը՝
ճամբաները ու ժողովուրդը սիրել , և ո՛չ թէ
ինտոր որ դուն տգիտաբար հիմայ ըսիր :

Յօդակց . Հարցուր իրեն թէ Վրիստոս բը-
նաւ երբէք յայտնըվեցա՞ւ իրեն երկինքէն * :

* Բնական կամ մարմնաւոր մարդը արտառոց
բան կը համարի ասիկա . բայց հոգևոր մարդը ասոր
երջանկութիւնը կը ճանչնայ , ու ասոր մխիթարու-
թիւնովը կը քննծայ : Վժուարին խնդիր մըն է աս .
ի՞նչ կրնանք իմանալ ասով : Լնտարակոյս ինչ
որ Պօղոս կիմանար երբոր ըսաւ , թէ՛ « Լստուած
ուզեց որ իր Արդին ինծմով յայտնի ընէ » . Վառ .
ա՛մ . 16 . պսիւքն՝ թէ Վրիստոսի վրայ ու անոր ձեռ-
քովը եղած փրկութեանը վրայ անանկ ներքին՝
հոգևոր՝ ու հաւաստի տեսութիւն ու ծանօթու-
թիւն ունեցաւ , որ իր սիրտը զանիկա ընդունեց՝ իր
հոգին անոր յարեցաւ՝ իր անձը անով ուրախացաւ՝
ու իր բոլոր մարդը անոր սիրոյն մէջը ընկղմեցաւ .
անանկ որ իր հոգւոյն ուրախութեանը մէջ կաղա-
ղակէր , Լսիկա է իմ սիրելիս՝ իմ բարեկամս , իմ

ՏԳԻՒՄԻՆՆԻ . ԻՆՆ . դուն տեսիլքներու մարդ ես , հա : Ես կրկարծեմ թէ ինչ որ դուք երկուքդ և ձեզի պէս բոլոր ուրիշները կրսեն , միայն ցնորեալ միտքերու ճնունդ են :

ՅՈՒՄԻՆ . ԻՆՆ կրսես՝ մարդ . Վրիստոս այնպէս ծածկբլած է Մատուցոյ մէջ բոլոր մարմիններուն բնական իմացումներէն , որ չի կրնար մէկը ճշգիւ ճանչնալ զինքը , մինչև որ չայրն Մտուած անիկա անոր չի յայտնէ :

ՏԳԻՒՄԻՆՆԻ . Երիկա ձեր հաւատքն է , բայց իմինս չէ . և սակայն իմս չեմ տարակուսիր որ ձերինին պէս լաւ է , թէպէտ և ես իմ զըլ խուս մէջը ձեզի չափ օտարոտի խորհուրդներ չունիմ :

ՎՐԻՍՏԻՆՆՈՍ . Երե՛ք ինձի մէկ խօսք մը խօսիլ : Պէտքը չէր քեզի աս նիւթիս վրայով ասանկ արհամարհանօք խօսիլ . քանզի համարձակութեամբ կրհաստատեմ ես՝ ինտոր որ իմ բարի ընկերս ըրաւ , թէ մէկ մարդ մը չի կրնար գիտնալ Յիսուս Վրիստոսը , բայց

Փրկիչս՝ իմ Մտուածս՝ ու իմ փրկութիւնս : Վրիստոսի վրայ ճիշտ և հաւաստի կերպով բան մը չենք գիտեր մենք մինչև որ ինքը հաճի ասանկ մեզի ճանչցունել զինքը . Սափ . Ժա . 27 :

եթէ շօրը յայանութիւնովը . մանուսանդ թէ
 հաւատքը ևս՝ որով հոգին Վրիստոսի կըյարի ,
 թէ որ ուղիղ ըլլայ նէ , իր կարող զօրութեա-
 նը տարապայման մեծութեամբը պարտի առաջ
 եկած ըլլալ . Մատթ. Ժ. 27 : ան . կարնի . Ժ. 3 :
 17—19 . և սա հաւատքին գործու-
 ղութեանը վրայով կարծեմ թէ տգէտ ես դուն՝
 ո՛վ ողորմելի Տգիտութիւն : Ուրեմն արթըն-
 ցիր՝ տես քու թշուառութիւնդ , ու Տէր Յի-
 սուսի դիմէ . ու իր արդարութիւնովը՝ որ Նս-
 տուծոյ արդարութիւնն է , քանզի ինքը Նստ-
 ուած է , դատապարտութենէ պիտի փրկը-
 վիս * :

Տգիտութիւն . Ղուք շուտով կերթաք կոր , ես
 ձեր հետը չեմ կրնար քալել . առաջ անցէք
 դուք , ու ես ետեւէն կուգամ † :

* Աստարեւոյ պէս արթընցած չէ ան մեղաւորը՝ որ
 չի տեսնար Վրիստոսի արդարութեանը կարօտ ըլ-
 լալը : Ո՛չ ալ ինքը կենդանացած է՝ որ չի դիմեր
 Վրիստոսի իբրև օրէնքին վախճանին , որով ամէն
 հաւատացողները պիտի արգարանան . Լուով .
 Ժ. 4 :

† Այդծաւոր տգէտները հոգևոր ճամբորդներուն
 հետ ուղեկցութիւն չեն կրնար ընել . ու չեն կրնար
 սիրել ան վարդապետութիւնը թէ արդարանալու
 և փրկըվելու համար մի միայն Վրիստոսի պէտք է

Անատենը մէկալնէրը ըսին .

Սինչև ե՞րբ՝ ո՞վ Տգիտութիւն, յիմարաբար
կըքալես ,

Ու տասն անգամ քեզի տրված բարի խրատը
զանց կառնես .

Թէ որ այսպէս յամառելով դեռ անիկա դուն
մերժես ,

Վու ըրածիդ չարութիւնը շուտով պիտի
միտք առնես :

Յիչէ՛ ո՞վ մարդ՝ իր ատենին , ու խոնարհէ մի՛
վախնար ,

Բարի խրատը լաւ ընդունված՝ փրկութիւն է ,
'ի միտ առ .

Բայց թէ որ դեռ յարատեւես անարգել զայն՝
անդադար ,

Վեզի ըսենք՝ Տըգիտութիւն , կըկորսըվիս
չարաչար :

Անկէ ետև Վրիստիանոս խօսքը իր ընկե-
րին դարձունելով ըսաւ . Եկոր նայինք , ո՞վ
բարի Յուսալից , կիմանամկոր որ դուն ու ես
նորէն ինքնիրենուս պիտի քալենք :

Այսպէս երազիս մէջը տեսայ որ անոնք ա-
րագ արագ առջևէն կերթային , ու Տգիտու-
թիւնը կաղ 'ի կաղ ետևնուն կըքալէր : Ան

նայվիլ , թէ մեղաւորը ամեննին բան մը չէ , և թէ
իր ըրածներովը չի կրնար փառք մը ստանալ իրեն :

ատենը Վրխատիանոս իր ընկերին ըսաւ .
 « Կտ կրմեղբընամ աս խեղճ մարդը . անտա-
 րակոյս վերջը գէշ պիտի ըլլայ իրեն :

Յոտաւից . Մահ . մեր քաղաքը իր վիճա-
 կին մէջը եղող շատերը կան . լման ընտանիք-
 ներ , մանաւանդ թէ լման թագեր , և ամէնն
 ալ բարի մարդիկ կարծրված են : Եւ թէ որ
 մեր կողմերը այսչափ շատերը կան , որչափ
 շատ կրկարծես թէ պարտի ըլլալ հան՝ ուր որ
 ինքը ծնած է * :

Վրխատիանոս . Իրաւցունէ , Մտուծոյ Բանը
 կրսէ թէ , անոնց աչքերը կուրցուց որ չի
 տեսնան . և այլն . Յօհ . Ժբ . 40 :

Բայց դուն՝ հիմնոյ որ մենք մեզի հեք , ի՞նչ
 կըխորհիս ասանկ մարդոց վրայով : Կրկարծես
 որ բնաւ չի պիտի ըլլայ թէ մեղքերնին ճանչ-
 նան , ու հետեւապէս վախնան թէ իրենց վե-
 ճակը վտանգաւոր է :

* Տգիտութիւնը փրկութեան վրայով ան նոյն
 բնական գաղափարները ունէր որոնցմով ծնած էր ,
 միայն թէ սորվեր էր ճարտարարուեստ փիլիսո-
 փայութեամբ զարդարել զանոնք : Մէն գարեբու-
 մէջ ասանկ կեղծաւորներ շատ կրգտնըվին : Բայց
 ինչ ողորմութիւն է անոնցմէ ազատ մնալը , հոգեու-
 րապէս լուսաւորված ու հիսուսով եղած ճշմար-
 տութիւնը սորված ըլլալը :

Յոսուէ . Ըտ խնդիրին պատասխանը դուն քեզի տուր , ինչու որ դուն ինձմէ տարօք մարդ ես :

Վրիստինոս . Ուրեմն ես կըսեմ՝ Թէ երբեմն (ինտոր որ ես կըխորհիմ) կընայ ըլլալ . բայց իրենք բնականաբար տգէտ ըլլալով չեն հասկընար Թէ ասանկ իրենց մեղքերը ճանչնալին իրենց աղէկութեանը կօզնէ . և անոր համար յուսահատութեամբ կընային խափանել անիկա , և յանդգնաբար կըշարունակեն իրենց սրտերնուն ճամբովը ինքրզինքնին շողոքորդել :

Յոսուէ . Ես կըհաւատամ՝ ինտոր որ դուն կըսես , Թէ վախը շատ կօզնէ մարդոց աղէկութեանը՝ ու անոնց շիտկըվելուն՝ իրենց ճամբորդութեան սկզբնաւորութեանը :

Վրիստինոս . Ըռանց տարակուսի անանկ կընէ , Թէ որ շիտակ վախ ըլլայ նէ . ինչու որ ասանկ կըսէ Բանը . Տէրօջը վախը իմաստութեան սկիզբն է . Յօբ . իբ . 28 : Սող . ճԺ . 10 : Ըսուի . ան . 7 : Թ . 10 :

Յոսուէ . Ի՞նչպէս կըստորագրես գուն շիտակ վախը :

Վրիստինոս . Ղճմարիտ կամ շիտակ վախը իրեք բանով կըյայտնըվի :

Նախ՝ իր ծագումովը . ինչու որ կրպատ-
ճառի մեղքին փրկարար ճանաչումէն :

Երկրորդ՝ հոգին կըքշէ պինտ բռնելու ըզ-
Վրիստոս փրկութեան համար :

Երրորդ՝ հոգիին մէջը մեծ յարգութիւն մը
կըծնանի և կըհանապազորդէ Աստուծոյ վրայ՝
իր խօսքին և ճամբաներուն վրայ . զգուշ պա-
հելով և վախցունելով զանիկա աջ կողմը
կամ ձախ կողմը դառնալու անոնցմէ մէկ ու-
րիշ բանի մը որ կրնայ անպատիւ ընել զԱս-
տուած , աւրել իր խաղաղութիւնը , տրտմ-
ցունել Հոգին , կամ Թշնամիին պատճառ-
տալ նախատանքով խօսելու :

Յոսուէց . Բղէկ խօսեցար . կըհաւատամ Թէ
ճշմարիտ է ըսածդ : Հիմայ մենք կախարդեալ
Երկրէն բոլորովին անգին անցա՞նք մի :

Վրիստիանոս . Ինչո՞ւ . ճանճրութի՞ւն տըլաւ
քեզի աս խօսակցութիւնը :

Յոսուէց . Իրաւ որ չէ , բայց կուզէի գիտ-
նալ Թէ ո՞ւր ենք :

Վրիստիանոս . Երկու մղոնէն էվել ճամբայ
չունինք հիմայ անոր վրայ քալելու : Բայց մեր
նիւթին դառնանք մենք : Երդ՝ տղէտ մարդի-
կը չեն գիտեր Թէ ասանկ ճանաչումները՝ որ

ձեռնտու կըլլան վախի տակ դնելու զիրենք ,
իրենց աղէկութեանը համար են . և անոր հա-
մար կընային որ խափանեն զանոնք :

Յոսուէ . Ի՞նչպէս կընային անոնք խափա-
նելու :

Վրիստինն . ա . Կրմտածեն թէ ան վախերը
դեւը կըպատճառէ , թէպէտ և ճշմարտապէս
Լստուած է անոնք պատճառողը . և ասանկ
մտածելով հակառակ կրկենան անոնց իբրև
անանկ բաներու՝ որ շիփշիտակ իրենց կործան-
մանը կօզնէ : բ . Կրմտածեն ևս թէ աս վախե-
րը իրենց հաւատքը եղծանելու կօզնեն , (որ
ատեն՝ ասիսոս իրենց՝ ողորմելի՛ մարդիկ , որ
ամենեւին հաւատք չունին .) և անոր համար ի-
րենց « իրտելը կըկարծրացունեն անոնց դէմ :
գ . Կրկարծեն թէ պէտքը չէ իրենց վախնալ .
և անոր համար իրենց վախերուն հակառակ
յանդգնաբար կըհամարձակին : դ . Կրտեսնան
որ ան վախերը իրենց անզիտան հին անձնա-
կան արդարութիւնը իրենցմէ վերցունելու
կօզնեն , և անոր համար բոլոր իրենց կարո-
ղութիւնովը դէմ կրկենան անոնց :

Յոսուէ . Լսոր վրայով քիչ մը բան գիտեմ

ես , քանզի ինքըզինքս ճանչնալէս առաջ ինձի ալ ասանկ կըլար * :

Վրիստիանոս . Ըղէկ՝ ալ հիմայ մեր Տգիտու թիւն բարեկամը ինքնիրեն ձգենք , ու մէկ ուրիշ օգտակար խնդիր մը ձեռք առնենք :

Յասաւեց . Բոլոր իմ սրտովս . բայց կրկին դուն պիտի սկսես :

Վրիստիանոս . Պինտ աղէկ . տասը տարիի չափ առաջ ձեր կողմերը բնակող յամանակաւոր անուանով մէկը կըճանչնաս , որ ան ատենը կըլրօնքի մէջ յառաջադէմ մարդ մըն էր :

Յասաւեց . կըճանչնամ , անշուշտ . ինքը կը բնակէր Վալաշնորհ ըսված քաղաքը , որ Պարկեշտութեան քաղքէն երկու մղոնի չափ հեռու է ու կրկենար թիկնադարձ անուն մէկու մը քովի գուռը :

Վրիստիանոս . Ե իտակ է . բայց ինքը անոր

* Ըղէկ է որ մտքերնիօ բերենք թէ բնական վիճակի մէջ բոլորովին տգէտ ենք մենք . որպէս զի ասիկա մեր սրտերը խոնարհեցունէ՝ ու շնորհակալ ըլլալ տայ մեզի Վստուծմէ որ տարբերեց մեզ ուրիշներէն , ու մեզ գթութեան շարժէ անոնց վրայ որոնք կը քալեն բնութեան՝ ամբարտաւանութիւնովը՝ անձնական արդարութեամբ ու յանձնապաստանութեամբ :

Հետը մէկ ծածկոյթի մը տակ կը բնակէր . աս մարդը անգամ մը շատ արթընցաւ . կարծեմ թէ ինքը ան ատենը իր մեղքերուն և անոնց արժանաւոր եղած վարձքերուն վրայով տեսուցիւն մը ունեցաւ :

Յոսուէց . Եւ աս քու մտքէդ եմ . քանզի իմ տունս իրմէն իրեք մղոնի չափ հեռու չըլլալով ինքը շատ անգամ ինծի կուգար , և ան ալ շատ արցունքներով : Եւ ճշմարտապէս կը մեղքընայի մարդը , և բոլորովին առանց յոյսի չէի իր վրայովը . բայց հոս կը տեսնանք՝ թէ չէ ամէն մէկը որ կը կանչէ Տէր Տէր , պիտի փրկուի :

Վրիստինոս . Եւ անգամ մը ինքը ըսաւ թէ միտքը հաստատած է ճամբորդութեան երթալ , ինտոր որ հիմայ մենք . բայց յանկարծ ինքնափրկիչ անդն մէկու մը ծանօթացաւ , ու անկէ ետեւ օտար մը եղաւ ինծի :

Յոսուէց . Էիմայ՝ որովհետեւ անոր վրայ կը խօսիմք կոր , եկոր անոր և անոր պէս ուրիշներուն յանկարծ ուխտադրուծ ըլլալնուն պատճառը քիչ մը փնտրուենք :

Վրիստինոս . Եւ տիկա շատ օգտակար կընայ ըլլալ . բայց գուն սկսէ ան :

Յոսուէց . Ուրեմն իմ դատմամբա չորս պատ-
ճատ ունի ան :

ա . Թէպէտ և ասանկ մարդոց խղճմտանքները
արթընցած են , բայց տակաւին իրենց միտ-
քերը նորոգված չեն . ուստի երբոր մեղքին
զօրութիւնը մէկդի կերթայ , ան որ զիրենք
կրօնական ըլլալու գրգռեց նէ կրդադարի . ա-
նոր համար իրենք բնականաբար իրենց հին
ճամբուն կրկին կրդառնան . Ճիշտ ինտոր որ
կրտեսնանք Թէ իր կերածովը հիւանդացած
շունը քանի որ հիւանդութիւնը իր վրան կրտի-
րէ բոլորը կրփսխէ դուրս կրհանէ : հիմայ չէ
Թէ շունը ասիկա ազատ մտքով մը կրնէ (Թէ
որ կրնանք ըսել Թէ շունը միտք ունի ,) հա-
պա անոր համար որ հիւանդութիւնը իր ստա-
մոքսը կրնեղէկոր . բայց երբոր իր հիւանդու-
թիւնը անցնի , և անանկ իր ստամոքսը հան-
գստանայ , իր փափաքը իր փսխածէն ամենեւին
հեռացած օտարացած չըլլալով , անիկա կը
դարձունէ , ու բոլորը կըլափէ : Եւ այսպէս
ճշմարիտ է ան գրվածը , Թէ Շ շունը կրկին իր
փսխածին կրդառնայ . ք . Պե . ք . 22 : Եւ այսպէս
երկնից վրայ փափաք մը ունենալով միայն
դժոխքի տանջանքներուն վախուն զօրութիւ-

նովը , ինտոր որ իրենց դժոխքի զգացումը ու
դատապարտութեան վախը կրպաղե ու կըցըր-
տանայ , ասանկ իրենց երկնից ու փրկութեան
փափաքներն ալ կրպաղին : Ըսանկով վերջա-
պէս կըլայ՝ որ երբ իրենց յանցաւորութիւնը
և վախը կերթայ , երկնից ու երջանկութեան
վրայով իրենց փափաքները կըմեռնին , ու ի-
րենց առջի ճամբան կըդառնան * :

բ. Մէկ ուրիշ պատճառն ալ աս է որ ծա-
ռայական վախերը կըտիրապետեն իրենց վը-
րայ . հիմայ իմ խօսքս ան վախերուն վրայ է ,
որ մարդոցմէ ունին անոնք , ու մարդոցմէ ունե-
ցած վախերնուն համար պիտի կործանին . Ը-
սուի . իթ . 25 : Ուստի թէպէտ և կերևայ որ երկ-
նից վրայ փափաք մը ունին քանի որ դժոխքի

* Կեղծաւոր հաւատացեալներուն վիճակին ճըշ-
մարիտ ստորապրութիւնն է աս : Ըս տեղս կըտես-
նանք շատերուն իյնալուն պատճառը : Ըսկից ոմանք
պատեհութիւն մը ձեռք կառնեն Ըստուծոյ սուր-
բերուն յաւիտենական փառաց համար յարատե-
լու վարդապետութիւնը ուրանալու : Բայց ասանկ
ընելովնին իրենց սրտերուն ամբարտաւանութիւնը
ու Ըստուծոյ բանին տգէտ ըլլալնին կըյայտնեն .
միանգամայն Ըստուծոյ խոստմունքները տկարա-
ցունելով , ու իր շնորհաց աւետարանը շողփաղ-
փութիւն մը ըլլալ ցուցնելով :

բոցերուն ձայնը իրենց ականջներուն մօտ է ,
և սակայն ատ վախը քիչ մը անցածին պէս ի-
րենց խորհուրդները կը փոխեն . այսինքն՝ Թէ
աղէկ է խորագէտ ըլլալ՝ և ունեցածնուն թող-
րը կորսընցունելու՝ կամ գոնէ ինքըղինքնին
անխորշելի և անհարկաւոր նեղութիւններու
մէջ ձգելու վտանգին չի վազել . և ասանկ նո-
րէն աշխարհի բաներուն ձեռք կը զարնեն :

ք. Կրօնքին հետը եղած ամօթն ալ իրենց
ճամբուն վրայ խոչընդոտ մըն է . հպարտ ու
գոռող են իրենք , ու կրօնքը իրենց աչքին աւ-
ջը նուաստ ու արհամարհելի բան մըն է . ուս-
տի դժոխքին ու գալու բարկութեան վրայով
իրենց ճանաչումը կորսընցունելուն կրկին ի-
րենց աւջի ճամբուն կը գառնան :

դ. Յանցաւորութիւնը՝ ու վախը մտածելը նե-
ղութիւն կուտան իրենց . չեն ուզեր տեսնալ
իրենց Թշուառութիւնը գեռ անոր չի հասած .
Թէպէտ և կարելի է Թէ նախատեսութիւնը՝
Թէ որ ընդունին զանիկա , կարենայ զիրենք հոն
դիմել տալ ուր որ արդարները կը դիմեն , ու
ապահով են . բայց որովհետեւ յանցաւորու-
թեան ու վախին խորհուրդներէն կը փախչին ,
ինտոր որ աւաջ նշանակեցի , անոր համար

երբոր միանգամ Մտուծոյ բարկութեանը ու վախերուն վրայով իրենց արթնութիւններէն կազատին, ուրախութեամբ կըսկըսին իրենց սիրտերը խտացունել, և անանկ ճամբաներ կընտրեն որ առաւել քան զառաւել պիտի խտացունէ զանոնք :

Վրիստինոս . Բաւական մօտեցար դուն բանին, բայց ամէնուն արմատը է իրենց մտքին և կամքին մէջը փոփոխութիւն մը ունենալու պակասութիւնը : Եւ անոր համար կընմանին անոնք դատաւորին առջևը կայնող չարագործին, որ կըդողայ և կըսարսափի, և կըթրելի թէ բոլոր սրտանց կապաշխարէ, բայց ամէնուն արմատը կախաղանի պարանի վախն է . ինքը չէ թէ ըբաժ չարագործութիւնը կատէ, ինչպէս որ յայտնի է . քանզի թող տուր աս մարդը որ իր ազատութիւնը ունենայ, ու ինքը պիտի ըլլայ գող մը, և այնպէս տակաւին չարագործ մարդ մը . բայց ասոր հակառակ թէ որ իր միտքը փոխվէր, ուրիշ կերպ պիտի ըլլար ինքը :

Յոսուէց . Ես հիմայ անոնց ետ դառնալուն պատճառները ցուցուցի քեզի . կըկամիս դուն ալ անոնց ետ դառնալուն միջոցները ցուցընել ինձի :

Վրիտիանոս . Յօժար կամքով կրկամիմ այդ պէս ընել :

ա . Իրենց միտքերը բոլոր կրցածնուն չափ կը հեռացունեն զՄտուած՝ մահը՝ ու հանդերձ եալ դատաստանը յիշելն :

բ . Անկէ ետքը կամաց կամաց մէկ դի կը ձգեն իրենց առանձին պարտաւորութիւնները , ինչպէս ծածուկ աղօթք ընելը , ցանկութիւններն ին սանձահարելը , հսկելը , մեզաց համար տրամելը , և ասոնց նման բաները :

գ . Անկէ ետև աշխոյժ և ջերմեռանդ Վրիտտոնեաներուն ընկերութենէն կը փախչին :

դ . Ետքը կը ցրտանան իրենց յայտնի պարտաւորութիւններէն , ինչպէս Մտուծոյ Բանը լսելն՝ կարդալն՝ բարեպաշտական խօսքերէն , և ասոնց նմաններէն :

ե . Անատենը կը սկսին բարեպաշտօն անձանց վրայ սատանայաբար պակսութիւններ գտնալ , որպէս զի (անոնց վրայ նկատած քանի մը տրկարութիւններուն պատճառովը) կրօնքը պախարակելով մէկդի ձգեն * :

* Հաւատացեալ մը երբոր ինքըզինքը խոնարհեցունելու ու իր պակսութիւններուն վրայ լալու տեղը ուրիշներուն պակսութիւնները ու մեղքերը տես-

Է. Ընկէ ետե կըսկըսին մարմնաւոր՝ ցովա-
կեաց և անառակ մարգոց ինքըզինքնին յարել,
և անոնց հետ ընկերանալ :

Է. Ետքը գաղտուկ տեղը մարմնաւոր և անա-
ռակ խօսակցութիւններ ընել կըսկըսին . և
կուրախանան թէ որ պարկեշտ համարված ան-
ձանց մէկուն վրայ ասանկ բաներ տեսնան, որ
պէս զի իրենք անոնց օրինակովը էվելի հա-
մարձակութեամբ կարենան ընել անիկա :

Ը. Ասկից ետքը կըսկըսին մանտրտիկ մեղքե-
րուն հետը յայտնապէս խաղալ :

Թ. Եւ վերջապէս խստանալով ինքըզինքնին
եղածնուն պէս կըցուցընեն : Ասանկ նորէն
Թշուառութեան անդունդին մէջը իյնալով՝
մշտնջենաւորապէս կըկորսըվին իրենց խաբէ-
ութիւններովը, թէ որ Աստուծոյ հրաշալի շը-
նորհքը չի խափանէ անիկա * :

նայու և խստութեամբ դատելու ոգի մը կըցուցընէ,
գէշ նշան մըն է :

* Տես թէ ինչպէս կամաց կամաց՝ քայլ առ քայլ
ետ կըզառնան ուխտադրութենքը : Իրենց ուխտա-
դրութուլիւնը առաջ սրտերնուն մէջը կըսկըսի թի-
րեհաւատութեամբ, ու ետքը վարքերնուն մէջը
վախճան կառնէ յայտնի մեղքերով : Ինչո՞ւ համար
հրամայված է աշխարհիս սէրը մերժել, ինչո՞ւ հա-
մար ազահութիւնը կռապաշտութիւն կըկոչվի :

տատրակին ձայնը երկրին մէջը : Եւ երկրին մէջը արեգակը գիշեր ցորեկ կը ծագէր . տնոր համար Սահուան Շուքին ձորէն անդին կիշնար , ու Հսկայ Յուսահատութիւնին իշխանութենէն դուրս էր ան , ոչ ալ Երկբայութեան Եմրոցը աս տեղէս կը տեսնըվէր : Եւ տեղէն ճանապարհորդները իրենց երթալու քաղաքը կրնային տեսնալ . ու նաև հոս անոր մէկ քանի բնակիչներուն պատահեցան . քանզի աս երկրին մէջը սովորաբար կը պըտրտէին լուսաւոր էակներ , ինչու որ անիկա երկինքին սահմանակից էր : Եւ երկրին մէջը Հարսին ու Փեսային մէջը եղած պայմանը նորոգված էր . մանաւանդ թէ , հոս ինտոր որ փեսան ուրախ կըլլայ հարսին վրայ , անանկ ալ իրենց Եւստուածը ուրախ կըլլար անոնց վրայ : Եւ տեղս իրենք ցորենի ու գինիի կարօտութիւն չունէին . և աս տեղս առատութեամբ կը գտնային ինչ որ իրենց բոլոր ճամբորդութեանը մէջ կը փնտրուէին : Եւ տեղս կը լսէին քաղաքէն եկած ձայները՝ ան բարձր ձայները , որ կըսէր . Բսէք Սիօնին աղջկանը , թէ՛ Մհա քու փրկիչդ կուգայկոր , ու իր վարձքը իր հետն է : Եւ տեղս ան երկրին բոլոր բնակիչները կը կոչէին

զանոնք՝ Սուրբ ժողովուրդ . Տերոջմով փըր-
կըված * . :

* Լըջանիկ ճանապարհորդները շնորհաւորել պարտինք որ հիմայ ապահովութեամբ անցեր էին կախարդեալ երկիրէն , ու նոր սահման մը կըմըտնային զուարճութիւններու , որ կըկոչվէր Բլլա , այսինքն ամուսնացեալ : Եւ տեղս անոնք Վրիստոսի իր հարսին վրայ ունեցած սիրոյն ամենաբաղձալի յայտնութիւնները վայելեցին , ու անոր մէջը քաժին ունենալին հաստատութեամբ զգացին : Եւ երկրին օդը անուշ էր ու հաճելի . այսինքն՝ մեղքէն ու Սատանայէն գոլորշիքներ չէին ելլար իրենց հոգիներուն լուսաւորութիւնը խաւարեցունելու՝ աղօթքին քաղցր ժամերուն մէջ : Եւ տեղս թռչուններուն երգը անգագար կըլավէր . այսինքն՝ շնորհակալութեան երգեր ու հոգևոր մեղեդիներ անդագար կըտրվէին իրենց Եստուծոյն ու Վրկիչին : Նաղիկները երկրին վրայ ամէն օր կըտեսներվէին . այսինքն իրենց սրտին ատեն մը ամուլ և անբեր անդատանին մէջ շնորհաց սերմերը Երգարութեան Երեգակին կենդանացուցիչ ճառագայթներովը կը բուսնէին ու գեղեցիկ ծաղիկներ կըբանային : Տատրակին ձայնը երկրին մէջ կըլավէր . այսինքն երկնաւոր աղանիին՝ Եստուծոյ Սուրբ Հոգիին ուրախարար խոստմունքները իրենց հոգիներուն կուգար : Եւ զուարճալի երկրիս մէջը փառաւորեալ Երեգակն Երգարութեան բոլոր երկրայութիւններու ու վախերու ամպերը փարատելով զորացուցիչ պայծառութեամբ իրենց հոգիներուն վրայ կըծագէր : Եւ տեղս հաւատքով հաղորդութիւն ունէին հրեշտակաց անհամար ընկերութեանը հետ , ու իրենց

Հիմայ երբոր իրենք աս երկրին մէջը կը քալէին , աւելի ուրախութիւն ունէին քան որ չափ ան տեղուանքը որ իրենց երթալու թագաւորութեան սահմանէն էվելի հեռու էին . և էվելօք Վաղաքին մօտիկնալով , էվելի կատարեալ կըտեսնային զանիկա : Սարգրիտով ու պատուական քարերով շինված էր ան , և

գարձին սկզբնաւորութեանը եղած ամուսնական ուխտը նորոգվեցաւ ու հաստատվեցաւ իրենց սրտերուն ուրախութիւնը էվելցունելու : Ա՛րջապէս՝ Վրիստոս ու իրմով եղած պատուական խոստմունքները իրենց կերակուրը և ըմպելիքը եղան , անանկ որ իր տանը պարարտութիւններովը առատապէս յագեցան , ու իր հաճութիւնները գետի պէս խմեցին : Ա՛յնպէս որ Մատուծոյ ժողովրդոց բոլորը ասանկ մեծ շնորհքներու չեն պատահիր իրենց ճամբորդութեանը վերջի տարիներուն , ու շատ պատճառներ կրնան ընծայվիլ անոնց չի պատահելուն . բայց՝ ո՛վ ընթերցող , թէ որ կրփափաքիս աս քու վերջին օրերդ Վելայի մէջ անցունել , գիտցիր որ պարտաւորութեան ճամբան է որ կըտանի ապահովութեան՝ ու հանգստութեան : Սիտք դիր ճամբուն ստորագրութեանը՝ այսինքն Սուրբ Վիրքին . ժրացիր քու կոչումդ և ընտրութիւնդ հաստատ պահելու . ու հսկէ՝ աշխատէ՝ և աղօթէ բարի խղճմտանք մը ունենալու առ Մատուծ և առ մարդիկ . անատենը աղէկ պատճառ պիտի ունենաս յուսալու թէ աս երջանիկ ճամբորդներուն վայլածը դուն ալ պիտի վայելես :

անոր փողոցները ոսկիով յօրինված էին . ա-
նանկ որ Վաղաքին բնական փառացը ու արե-
զակին անոր վրայ ծագած ճառագայթներուն
ցորացմանը պատճառովը , Վրիստիանոս իր
փափաքովը հիւանդացաւ : Հոսալից ալ ան
նոյն հիւանդութեամբը քանի մը անգամ բըռ-
նըվեցաւ . անոր համար անոնք աս տեղս կե-
ցան մնացին , ու իրենց տառապանքին պատ-
ճառովը կրկանէին թէ , ի՞նչ որ տեսնաք իմ
սիրելիս , ըսէք իրեն թէ սիրով հիւանդացած
եմ ես * . Երգ . Ե . 8 :

Բայց քիչ մը զօրութիւն առնելով ու իրենց
հիւանդութիւնը կրելու լաւագոյն կարողանա-
լով , առաջ գացին իրենց ճամբան ու հետզհե-

* Երջանիկ հոգիներ . որչափ որ երկնային նպա-
տակին կրմօտենան , այնչափ կը գտնան որ իրենց
իղձերը էվելի կընդարձակին՝ իրենց յօժարութիւն-
ները էվելի հոգևոր կըլլան , ու իրենց հոգիները՝ է-
վելի կրփափաքին վայելել զՎրիստոս իր թագա-
ւորութեանը մէջ : Նշանաւոր բան մըն է թէ Վա-
ւիթի Սաղմոսներուն առջի մասերը խոստովանու-
թիւններով բողոքներով երկիւղներով ու նեղու-
թեան և տառապանաց սրտեռանդ աղաղակներով
լեցուն են . բայց դէպի վերջը մօտենալուն հետզհե-
տէ վստահութեան՝ երախտագիտութեան և ուրա-
խութեան կը դառնան , ու անխառն փառաբանու-
թեան և զօհութեան երգերով կըլերջանան :

տէ կվելի մօտ եկան ուր որ կային պարտէզներ՝ այգիներ ու ծաղկոցներ , և անոնց դուռները շիտակ ճամբուն վրայ կը բացվէին : Ըրդ՝ երբ որ տնոնք աս տեղվանքը եկան , մէյմալ նախիս որ պարտիզպանը ճամբուն վրայ կայնած էր , ու ճամբորդները անոր ըսին . Ըս գեղեցիկ այգիները ու պարտէզները որի՞նն են : Պատասխան տըլաւ , թէ՛ թազաւորինն են , ու հոս տնկըված են անոնք յառկապէս իր զուարճութանը՝ ու նաև ճամբորդներուն կազդուրելուն համար : Ըսյապէս պարտիզպանը այգիներուն մէջը տարաւ զանոնք , ու ըսաւ որ անոր բարեհամ բերքերովը ինքըզինքնին զովացունեն : Ըն նաև ցուցուց անոնց թազաւորին պըտըտելու ճամբաները ու հովանոցները՝ ուր որ ինքը կը զուարճանայ ըլլալ . և հոս անոնք մնացին ու քնացան :

Գանք որ երազիս մէջը նկատեցի որ անոնք հիմայ կվելի կըխօսէին իրենց քունին մէջը քան որչափ երբէք խօսեցան իրենց բոլոր ճամբորդութանը մէջ , և ասոր վրայ զարմանքի մը մէջ իյնալով՝ պարտիզպանը ըսաւ ինձի . Ինչո՞ւ համար կը զարմանաս աս բանիս վրայ . աս այգիներուս խաղողներուն պտուղին բնու-

Թիւնն է՝ անանկ անուշութեամբ վար երթալ , որ քնացող անձանց շրթունքներուն բարբառիլ կուտայ * . Երգ . Է . 9 :

Այսպէս տեսայ որ երբ անոնք արթնցան , ինքրզինքնին պատրաստեցին Վազաքք ելլալ : Բայց ինտոր որ ըսի՝ արեգակին ճառագայթներուն քաղաքին վրայ ցոլացումը (որովհետեւ քաղաքը մաքուր ոսկիէ էր . { Եսայ . ԽԾ . 18 .) այնչափ կարգէ դուրս պայծառափայլ էր , որ տուակին բաց երեսով չէին կրնար նայիլ անոր , հապա գործիքի մը միջնորդութիւնովը՝ որ աս դիտուողութեան համար շինված էր . Թ . Կրնն . 7 . 18 : Ուստի տեսայ որ առաջ երթալնուն երկու մարդու պատահեցան ոսկիի պէս փայլուն հանդերձներով , ու իրենց երեսներն ալ լուսի պէս կրփայլէինկոր :

Աս մարդիկը հարցուցին ճամբորդներուն

* { Յաւիտենական աւետարանին գինին հաւատացելոց պուկունքներուն բարբառիլ կուտայ , որոնք Տէրոջմով կը հանգստանան . Սող . ՃԺԵ . 5 : Վըրիստոսի ու իր շնորհաց փառաբանութիւնը երգել , ու Լստուծոյ իրենց համար ըրած մեծամեծ բաները յայտնի ընել կուտայ անոնց : Ու ան հոգիները՝ որոնք առատորէն կրխմեն աս բաժակը , խիստ յաճախութեամբ կրփառաւորեն զՎրիստոս ու կը բարձրացունեն իր շնորհքին մեծութիւնը :

Թէ ո՛ւրկից եկան , ու անոնք ըսին անոնց :
 Լարցուցին ևս թէ գիշերները ո՛ւր իջան . ինչ
 դժուարութիւններու և վտանգներու , ինչ մը
 խիթարութիւններու և զուարճութիւններու
 պատահեցան ճամբուն մէջը , ու անոնք ըսին
 անոնց : Ընտանիք ան իրենց պատահած մար-
 դիկը ըսին իրենց , թէ՛ Միայն երկու դժուար-
 ութիւններու ալ պիտի պատահիք զուք , ու
 անկէ ետքը քաղաքին մէջն էք * :

Քրիստիանոս և իր ընկերը անտանը խնդ-
 րեցին ան մարդոցմէն որ իրենց հետը ելլան .
 անոնք ալ իրենց ըսին թէ կրկամին : Բայց
 զուք անիկա բուն ձեր հաւատքովը պարտիք
 ստանալ . ըսին անոնք : Ըյսպէս երազիս մէ-
 ջը տեսայ որ անոնք մէկ տեղ առաջ գացին ,

* Ինչ են աս երկու դժուարութիւնները . մէկը
 դրսը վանց մահ՝ ու միւսը ներսը վանց թերեհաւա-
 տութիւն է : Ըս վերջինիս պատճառովը առաջինը
 դժուարին կուգայ մեզի : Եղբարք իմ՝ ջերմեռանդ
 սրտիւ խնդրենք ունենալ զօրաւոր հաւատք մը , աշ-
 խարհի յաղթող՝ մեղքը նուաճող՝ ու մահը նկուն
 ընող հաւատք մը , թէ՛ կեանքերնուս մէջ և թէ
 մահուան ատեննիս : (իսո՛ւս Ա՛րդապետ , միայն
 խօսքով ըսէ , ու մեր թերահաւատութիւնը պիտի
 փախչի , մեր հաւատքը պիտի զօրանայ , ու մեր յոյսը
 պիտի հաստատի :

մինչև որ եկան ան տեղը ուրկից կրտսնը վեր գուռը :

Լսկից զատ տեսայ ևս որ իրենց ու դրանը մէջ տեղը գետ մը կար , բայց անոր վրայէն անցնելու կամուրջ չի կար . ու գետն ալ շատ խորունկ էր : Սևտի ճանապարհորդները աս գետը տեսնալնուն մեծապէս խուովեցան . բայց իրենց հետ գացող մարդիկը ըսին , թէ՛ Պարտիք գետին մէջէն անցնիլ , չէ՛ նէ՛ չէք կրնար դրանը հասնիլ * :

Լնատներ ճանապարհորդները սկսեցին հարցուփորձ ընել թէ արդեօք ուրիշ ճամբայ մը չի կար՝ դրանը երթալու : Լսոր պատասխան տրւին մէկալները՝ ըսելով . Լ. յ՛ , բայց աշխարհի սկիզբէն հետէ երկու մարդոցմէ՛ այսինքն Լնովքէն ու Լղիայէն զատ մէկու մը թոյլտուութիւն չեղաւ ան ճամբէն անցնելու ,

* Էիմայ ճանապարհորդները պիտի պատահին իրենց վերջին թշնամիին՝ որ է մահը , ու պիտի մարտնչին անոր հետը : Երբոր անիկա իրենց առջին երևան ելայ՝ իրենց վախերը կարթըննան : Բայց պարտին անցնիլ գետէն : Սևտի ի՞նչ բանի վրայ պիտի դնեն իրենց աչքերը . իրենց անձի՞ն կամ իրենց ըրածի՞ն վրայ : Չէ : Սիայն ան նոյն հիսուսին որ մեզի համար մահը յաղթեց , ու կարող է մեր վրայի մահուան վախն ալ յաղթել :

որչալ մինչև վերջին փողը հնչելուն պիտի ըլլայ : Ուստի ճամբորդները՝ մանաւանդ Վրլրիստիանոսը սկսեց իր մտացը մէջ յուսահալ լինախորժ է տիլ, ու ասդին և անդին կրնայէր, իսկուհի բայց մէկ ճամբայ մը չէին կրնալ բնութեանը դտնալ որով կարող ըլլային ան գետը անցնելէն ազատելու : Լնատենը հարցուցին մարդոցը թէ արդեօք ջուրը ամէն տեղ մի և նոյն խորութիւնը ունի : Պատասխան տրւին . չէ . սակայն և այնպէս մենք աս մասին չենք կրնար օգնութիւն ընել ձեզի : Վանգի՛ ըսին լուսաւորները, ձեր ան տեղի խաղաւորին վըրայ ունեցած հաւատքնուդ նայելով էվելի խորունկ կամ էվելի ծանծաղ պիտի գտնաք անիկա * :

* Վրիստոնեաք իրենց վերջին թշնամին մահը կը յաղթեն՝ իրենց խօսքին վկայութիւնովը, ու լսատուօր Վառին արիւնովը . այսինքն հաւատքով վրկիչին չարչարանքներուն ապաւինելով : Ու իրենց հաւատքը որչափ տկար կամ որչափ զօրաւոր ըլլայ անոր վըրայ՝ որ իր անձին մէջը մահը յաղթեց, նոյն չափովը իրենց յաղթութիւնը սակաւ կամ առաւել կը լլայ : Բայց Վրիստոսի շնորհքովը ամենատկար Վրիստոնեայն մահուան գետէն ապահովութեամբ պիտի անցնի, թէպէտ և զօրաւորին չափ հանգստութեամբ չսնցնի ալ :



Ասկից հոքը անոնք ինքզինքնին պատրաստեցին ջուրը մտնալու . ու մտնալով Վրիստիանոս սկսեց ընկղմիլ , ու իր բարի ընկերին հուսալեցին կանչելով կրսէր . «Կտրուենկ ջուրերուն մէջը կընկղմիմկոր . ալիքները իմ գլխէս կանցնինկոր , բոլոր իր ալիքները իմ վրայէս կանցնինկոր . Սէլ» * . Սուրբ . Խաչ . 8 : 47 . 3 :

Անատենը մէկալը ըսաւ . Ուրախ եղիլ՝

* Վրիստիանոս թէպէտ և աւելի փորձառու ու հաստատուն հաւատացեալ էր , բայց մահուան մօտենալուն աւելի շարժած ու ահաբեկած ցուցված է հոս : Ասիկա իմաստուն դիտաւորութեամբ ասանկ ցուցված է՝ չէ թէ որ միշտ ասանկ կրպատահի բանը , հապա որ երբեմն ասանկ կըլլայ : Արբոր Տէրը ասանկ կրկարգադրէ , անտարակոյս կենդանիներուն խրատվելուն համար է ան : Աստուածապաշտ Վրիստոնէի մը վրայ նայելուն պատրաստ ենք մտածելու թէ ընդարդոյս պատուականութիւն մը ունէր ինքը , ու կը յուսամք թէ հանգստութեամբ վախճանելու արժանաւոր էր : Բայց Տէրը մեղաւոր մարդուն պարտականութիւն չունի : Ամէնէն աղէկ անձինք իրենց ներքը բաւական պղծութիւններ ունին զիրենք վախցունելու , թէ որ իրենց հաւատքին պայծառութիւնը ամպով մթննայ , ու թշնամին մօտենայ : Ասանկ օրինակներով կըսորվինք թէ մեր մահուանը ժամուն մեր յոյսը ամէն բաներէն մէկ զի վերցունելով հիսուսի արիւնին ու արդարութեա-

եղբայր իմ, ես գտայ յառակը, ու աղէկ է ան :
 Ու Վրիստիանոս ըսաւ . Ո՛հ, բարեկամ իմ,
 մահուան ցաւերը իմ չորս կողմս պատեցին .
 չի պիտի տեսնամ ես ան երկիրը որ կաթ ու
 մեղը կը բղխէ : Ըստ խօսքին վրայ մեծ մթու-
 թիւն մը ու սարսափ մը ինկաւ Վրիստիանո-
 սին վրայ, անանկ որ իր առջևը չէր կրնար
 տեսնալ : Ըստ տեղս ինքը նաև մեծապէս կոր-
 սրնցուց իր զգայութիւնները . անանկ որ՝ ո՛չ
 կրնար յիշել և ո՛չ կարգաւ խօսիլ ան անուշիկ
 մխիթարութիւններուն մէկին վրայով որոնց որ
 ինքը իր ճամբորդութեանը մէջ պատահեցաւ .
 հապա բոլոր իր խօսած բառերը տակաւին կը
 ցուցնէին թէ ինքը մտքի սարսափ ու սրտա-

նը՝ ու իր խոստմունքները կատարելու իր հաւատա-
 րիմ ըլլալուն վրայ պարտինք հաստատել : Եւ թէ-
 պէտ մեռնելու հաւատացեալը կարելի է որ մթու-
 թեան պատահի իր ճամբուն վրայ, բայց սովորա-
 բար ան մթութիւնը կրփարատի, ու իր մեկնելէն
 առաջ լոյսը վերստին կը ծագէ : Ո՛վ Տէր՝ քու պա-
 տուական խոստմունքներուդ վրայ հաստատէ մեր
 հաւատքը . թէ որ քու օրհնեալ կամքդ ըլլայ, մեր
 մարդ մտնալու արևը թող պայծառ ըլլայ . բայց թէ
 որ չէ՝ օգնէ մեզի որ ըսենք՝ Վրու կամքդ ըլլայ : Եր-
 բոր մեր մարմինները ու մեր սիրտերը կը տկարանան,
 դուն մեր սիրտերուն զօրութիւն՝ ու մեր յաւիտենա-
 կան բաժինը եղի՛ր . ամէն :

դողեր ունի թէ ան գետին մէջը պիտի կորսը վի , ու բնաւ չի պիտի հասնի ան դուռնէն ներս մտնալու : Եւ տեղս ինքը՝ ինտոր որ քովը կայ նողները կիմանային , նաև շատ վշտալի խորհուրդներու մէջ ինկաւ ան մեղքերուն վրայով որ ինքը դործեր էր՝ թէ ճամբորդութեան ըսկըսելէն առաջ և թէ անկից ետքը : Կրնկատուէր ևս թէ ինքը ուրուական տեսիլքներու և չար ոգիներու երևոյթովը կրտանջուվէր . քանզի միշտ և յաճախ այսպէս կը ցուցնէր ինքը իր խօսքերովը :

Վասնորոյ Յուսալիցը շատ աշխատութիւն կը կրէր աս տեղս իր հղօքը դլուխը ջուրէն վեր պահելու . մանաւանդ թէ երբեմն բոլորովին Վրիստիանոս կրնկղմէր , ու ետքը շատ չանցած կրկին վեր կելար կիսամբու : Յուսալիցը կը ջանար ևս մխիթարել զանիկա՝ ըսելով . Ն՛ղճայր՝ կը տեսնամ կոր դուռը , ու մեզ ընդունելու համար անոր քովը կայնող մարդիկը . բայց Վրիստիանոս պատասխան կուտար , թէ՛ յ՛ուռն ես , դուռն ես ան՝ որուն համար անոնք կըսպասենկոր . քանի որ ես քեզ գիտցայ նէ՛ դուռն յուսալից էիր : յ՛ուռն ալ անանկ էիր , ըսաւ ինքը Վրիստիանոսին : Ե՛հ , ե՛ղճայր ,

ըսաւ Վրիստիանոս , անտարակոյս թէ որ ես շիտակ ըլլայի , ինքը հիմայ ինձի օգնելու պիտի ելլար . բայց իմ մեղքերուս համար ինքը որոգայթի բերուալ զիս ու ձգեց զիս : Ընատեն Հոսալիցը ըսաւ . Եղբայր իմ , դուն բոլորովին մոռցար ան խօսքը որ ամբարիշտ մարդոց համար ըսված է , թէ՛ Ընոնց մահը ցաւ չունի . ուրիշ մարդոց նեղութեանը մէջ չեն , և ուրիշ մարդոց հետ չեն տանջուվիր * . Սուր . հք . 4 , 5 : Ըս նեղութիւնները ու տանջանքները որ դուն աս ջուրերուն մէջ կրքաշես , նշան

* Պէտք է որ՝ միշտ մէկ անձի մը վիճակը իր մահունանը եղանակէն հետեցունենք : Կեղծաւորները կարելի է որ խաղաղ մահով մը մեռնին յաւիտենական կենաց յուսովը , բայց վերջը իրենց յոյսէն զրկուվին : Տգիտութիւնը շուտով անցաւ գետէն՝ Վրիստիանոսին և Հոսալիցին քաշած դժուարութիւններուն կէսը չի քաշած : Սնայնայոյսին նաւակովը գետէն անցաւ . բայց երբոր երկնային քաղաքը մտնալու յուսով սկսեց դուռը զարնել՝ ընդունելութիւն չի գտաւ : Այսպէս չունէր , և սնոր համար չի կրցաւ ներս քաղաքը մտնալ : Ըսոր հակառակը ճշմարիտ Վրիստոնէին արեգակը երբեմն կերեայ թէ խաւարած մարը կըմտնայ , և սակայն մշտնջենաւոր օրվան մը պայծառութիւնովը կը ծագի՝ նոր հորիզոն մը լուսաւորելու , ու ալ բնաւ մարը չի մտնալու : Արեմն բան մը իր ժամանակէն առաջ չի դատենք :

Եւ ասոր վրայ Վրիստիանոս բարձր ձայնով մը աղաղակեց՝ ըսելով . Ո՛հ, կրկին կըտեսնամ կոր զինքը , և ինքը ինձի կըսէ . Երբոր ջուրերէն անցնիս՝ ես քու հետդ եմ . ու գետերը քեզ չի պիտի ծածկեն * . Երբոր ջուրերէն երկուքն ալ քաջալերեցան , ու անկէ ետքը Թշնամին քարի պէս լուս մնաց , մինչև անոնց անդի կողմը անցնիլը : Ուստի Վրիստիանոս իսկոյն գետին յատակը գտաւ վրան կայնելու . ու անանկ հետևեցաւ որ գետին մընացածը ծանծաղ էր : Ես անկ անոնք անդի կողմը անցան :

* Վրիստիանոս թէպէտ և մեծ նեղութեան մէջ էր, բայց իր բոլոր թերեհաւատական երկբայութիւններէն ազատեցաւ Վրիստոսի խոստմունքին հաւատալով : Վրիստոսի հաւատքը միայն կարող է մեր վախերը հանդարտեցունել ու մեր մահուան ցաւերը թեթևացունել : Ի՞նչ որ հաւատանք թէ Հիսուս մեռաւ ու յարեաւ , մահը կրկորսընցունէ իր տալու սարսափը, կըփոխէ իր խոժոռ դէմքը . խընդում երեսով մը սիրոյ պատգամաւոր կուգայ : Վանզի՛ թէպէտ և մահուան խայթոցը մեղքն է՝ ու մեղքին զօրութիւնը օրէնքը, բայց Հիսուս օրէնքին անէծքէն գնեց մեզ՝ ինքը մեզի համար անէծք ըլլալով , և հետևապէս մերկացուց մահը իր խայթոցէն : Ասան պարտիկ՝ գոհութիւն Եստուծոյ որ մեզի յաղթութիւն կուտայ , Տեառն մերոյ Հիսուսի Վրիստոսի ձեռքը :

Հանդերձն ալ ետեւնին ձգեր էին՝ գետին մէջը . քանզի թէպէտ անոնք ան հանդերձներովը հոն մտան, բայց առանց անոնց անկէց դուրս ելան : Ըս պատճառովը էվելի դիւրութեամբ և արագութեամբ վեր կելլային աս տեղէն, թէպէտ և քաղաքին հիմը ամպերէն ալ բարձր էր : Ուստի անոնք օդին սահմաններէն վեր կելլային, անուշ խօսքեր ընելով իրենց երթալուն, մխիթարվելով՝ որ անվտանգ անցան գետէն, և ասանկ փառաւոր ընկերներ ունեցան իրենց օդնելու :

Իսկ ան խօսակցութիւնը որ լուսաւորներուն հետը ըրին, ան տեղին փառքին վրայ էր . որոնք իրենց պատմեցին թէ անոր փառքը ու գեղեցկութիւնը անճառելի է : Ընէ է՛ ըսին անոնք՝ Սիօն լեւը, երկնային Երուսաղէմը, հրեշտակաց բիւրաւոր բանակները, ու կատարեալ եղած արդարներուն հոգիները . Եբր. Ժբ. 23—24 : Ըիմայ դուք կերթաք կոր ըսին անոնք՝ Ըստուծոյ դրախտը, ուր որ պիտի տեսնաք կենաց ծառը, և պիտի ուտէք անոր անթաւամ պտուղները : Եւ երբոր հոն երթաք ճերմակ պատմուճաններ պիտի տրվին ձեզի . ու ձեր պըտըտիլը և խօսակցիլը թա-

գաւորին հետը պիտի ըլլայ ամէն օր, նաև բոլոր յաւիտենականութեան օրերը . (Յայր . ք . 7 : ք . 4 , 5 : Իբ . 5 : Ըն տեղը դուք չի պիտի տեսնաք մէյ յմալ անանկ բաժներ՝ որոնք վարի սահմանին մէջ երկրի վրայ եղած ատենիդ տեսաք . այսինքն , տրտմութիւն , հիւանդութիւն , նեղութիւն , և մահ . քանզի առջինը անցաւ . (Յայր . Ին . 4 : Հիմայ դուք կերթաքկոր Լբրահամին՝ Իսահակին՝ ու Յակոբին՝ և մարգարէներուն , որոնք որ Լստուած դալու չարիքներէն փրկեց , ու հիմայ անոնք հանգիստ են , ու ամէն մէկը իր արդարութիւնովը կըքալէ :

Ընատենը մարդիկը հարցուցին , թէ՛ Սինք ան սուրբ տեղը ի՞նչ պարտինք ընել : Որոնց պատասխան տրվեցաւ , թէ՛ Դուք ան տեղը բոլոր ձեր աշխատանքին հանգստութիւնը պիտի ընդունիք , ու բոլոր ձեր տրտմութիւններուն տեղը ուրախութիւն պիտի ունենաք : Չերցանածը պիտի քաղէք . այսինքն՝ ճամբուն վրայ թագաւորին համար ձեր քաջածներուն՝ արցունքներուն՝ և աղթքներուն պտուղը . (Իսղ . ք . 7 , 8 : Ըն տեղը դուք ոսկեղէն թագեր պիտի հագնիք , ու Ըմնասուրբի՛ դէմքը ու տեսութիւնը մշտնջենաւորապէս պիտի վայել

Լէք . քանզի հոն պիտի տեսնաք դուք զինքը՞
 ինտոր որ է . Թ . Ն . Վ . Գ . Զ . Վ՛ն տեղը նաև հա-
 նապազ պիտի ծառայէք իրեն փառաբանու-
 թիւնով , ցնծութիւնով ու շնորհակալութիւ-
 նով , որուն որ երկրի վրայ կը ծառայէիք՝ թէ-
 պէտ և շատ դժուարութեամբ , ձեր մարմնոյն
 տկարութեանը պատճառով : Վ՛ն տեղը պիտի
 զմայլին ձեր աչքերը Վ՛մենակարողին տեսու-
 թիւնովը , ու ձեր ականջները անոր հաճոյա-
 կան ձայնովը : Վ՛ն տեղը պիտի վայելէք դար-
 ձեալ ձեր բարեկամները որոնք ձեզմէ առաջ
 հոն գացին . և նոյն տեղը ուրախութեամբ պի-
 տի ընդունիք ամէն անոնք որ ձեզմէ ետև ան
 սուրբ տեղը կուգան : Վ՛ն տեղը ևս պիտի հագ-
 վիք փառքով ու պատուով . ու պիտի զար-
 դարվիք անանկ սպառազինութիւնով որ փա-
 ռաց թագաւորին հետը հեծելութեան ելլալու
 պիտի յարմարիք : Երբոր ինքը փողի ձայնով
 ամպերուն մէջը իբրև թէ հովի թևերով գայ
 դուք ալ իր հետը պիտի գաք . ու երբոր ինքը՞
 դատաստանի աթուր նստի՞ դուք ալ իր քովը
 պիտի նստիք : Եւ մանաւանդ՞ երբոր ինքը չա-
 րագործներուն վճիռը կտրէ՞ թէ՛ հրեշտակներ
 եղեր են անոնք և թէ՛ մարդիկ , դուք ալ ան

դատաստանին մէջը ձայն մը պիտի ունենաք , որովհետև անոնք իրեն և ձեր թշնամիներն էլին : Եւսե երբոր ինքը կրկին Վաղաքը դառնայ , դուք ալ փողի ձայնով պիտի երթաք , և միշտ իր հետը ըլլաք . Թ . ԹԵ . Դ . 3—17 : Յո . Գ . Ժ . 15 : Վառ . Է . 9 , 10 : Թ . Կարնի . Գ . 2 , 3 :

Երբ՝ երբոր անոնք ատանկ գէպի դրանը կը մտտենային , մէյմալ երկնային զօրաց զինուորութիւն մը դուրս ելլալ ասոնց դէմը գալու . ու մէկալ երկու լուսաւորները ասոնց ըսին . Եսոնք են ան մարդիկը որ մեր Տէրը սիրեցին՝ երբոր իրենք աշխարհի վրայ էին , ու իր սուրբ անուանին համար ամէն բաները ձգեցին . և ինքը մեզ խրկեց ասոնք բերելու , ու մենք իրենց բաղձացած ճամբորդութեանը մէջ՝ մինչև աստեղս բերինք զիրենք , որպէս զիներս մտնան և իրենց փրկիչը ուրախութեամբ դէմ առ դէմ տեսնան : Ենատենը երկնային զօրքերը մեծաւ ձայն ցնծութեամբ գոչեցին ըսելով . Երանելի են անոնք որ Վառին հարսանեաց ընթրիքին կանչուած են . Յո . Գ . Ժ . 9 : Ես միջոցիս նաև դուրս ելան ասոնց դիմաւորելու Թազաւորին փող չալողներուն մէկ քանինները՝ ճերմակ ու

պայծառափայլ հանդերձներով հաղված , ուրոնք քաղցրանուազ բարձր աղաղակներով մինչև անգամ երկինքներուն արձագանք հանել տրւին իրենց ձայնովը : Աս փող չալողները բարևեցին զՎրիստիանոսը և իր ընկերը տասր հազար անգամ «Վարեաւ եկաք աշխարհէն»՝ ըսելով անոնց . և ասիկա անոնք ըրին ցնծութիւնով ու փողի ձայնով :

Ասիկա ընելնուն ետքը ամէն կողմէն շրջապատեցին զանոնք . ոմանք առջևնուն կերթային , ոմանք ետևնուն , ոմանք աջ կողմերնուն և ոմանք ձախ կողմերնուն , (իբր թէ վերին սահմաններուն մէջը անոնք պահպանելու համար ,) շարունակ երգելով իրենց երթալուն՝ քաղցրանուազ ձայնով , բարձր եղանակով . անանկ որ ան նոյն տեսարանը անանկ կուգար անիկա տեսնալու կարող եղողին՝ որպէս թէ բուն երկինքը վար իջած էր զանոնք գիմաւորելու : Ուստի ասանկ ամէնը մէկ տեղ առաջ գացին . և երբոր կերթային՝ աս փողահարները ատեն ատեն ցնծալից ձայներով իրենց նըլադարանները նայվածքներնուն և շարժուածքներնուն հետ խառնելով տակաւին կըլայտնէին Վրիստիանոսին և իր ընկերին թէ ինչ

պէս բարեալ եկած էին անոնք իրենց ընկերու-
թեանը մէջ, և որչափ ուրախութեամբ իրենք
ալ եկած էին զանոնք դիմաւորելու : Այլ հիմայ
աս երկու մարդիկը տակաւին երկինքը չեկած
իբրև թէ հոն եղածի պէս հրեշտակներուն տե-
սութեամբը և անոնց քաղցրանուագ եղանակ-
ներուն լսելովը զմայլեցան : Այս տեղս նաև
բուն Վաղաքը աչքերնուն երևան ելաւ, ու
կարծեցին որ անոր բոլոր զանգակներուն չալ-
վելը կը լսենկոր իրենց հոն մտնալը բարևելու :
Բայց ամէն բանէն էվել ան եռանդուն և ցըն-
ծալից խորհուրդները՝ որ ասանկ ընկերներու
հետ իրենց ան տեղը բնակելուն վրայ ունէին,
և ան ալ յաւիտեանս յաւիտենից անպատմելի
են . և ո՞ր լեզու կամ գրիչ կրնայ բացատրել
անոնց փառաւոր ուրախութիւնը : Այսպէս ա-
նոնք ելան վեր Վաղաքին՝ Վուռը :

Արդ երբոր դրանը առջին եկան, անոր վը-
րայ ոսկեղէն գիրերով գրված էր,

“Արանելի՛ էն անոնք որ անոր պատու-իբանանէրը ին-
պահէն, անոնք իշխանու-լի-ն ունին ինչոց ծառ-էն
ուսուլու, աս աստուծին գոտանելէն հարաւու” . (Յայտ .
իբ . 14 :

Ասկից ետքը երազիս մէջը տեսայ որ լու-

սաւորները իրենց ըսին որ դուռը չալեն . և երբոր ասիկա ըրին՝ դրանք վրայէն քանի մը անձինք նայեցան , որոնք էին՝ Լոմօք , Սոմսէս , ու Լոդիա , և այլն : Լուսաւորներն ալ անոնց ըսին , թէ՛ Լոմս ճամբորդները կործանման Վաղաքէն եկած են , աս տեղիս խաղաւորին վրայ իրենց ունեցած սիրոյն համար : Լոմստենը ճամբորդները իրենց Սկայականը տըւին որն որ սկիզբէն ընդունելու էին . և անոնք խաղաւորին տարվեցան որ երբոր կարդաց անոնք՝ ըսաւ . Սոմսէս ան մարդիկը : Պատասխան տրվեցաւ իրեն , թէ՛ Վրանը դուրսի դին կայներ են : Լոմստեն խաղաւորը հրաման ըրաւ բանալու ան դուռը , որ արդարութիւն պահող և ճշմարտութիւն պահող ժողովուրդները ներս մտնայ՝ Լոմս . ինչ . 2 . ըսաւ * :

* Սոմսէս աս արդար ժողովուրդը : Սոմսէս պիտի ըլլայ . իրենց անձերը արդարացունող փարիսեցիները կըսեն թէ անոնք են որ իրենց բարի և արդար գործքերովը ինքրզինքնին ուրիշներէն տարբերեցին , ու ասանկով Լոմստեճոյ առջին արդարացան : Սոմսէս համար պիտի հրամայէ Տէրը որ փառաց դուռը բացվի , բայց եթէ աս բարի՝ արդար ժողովուրդին համար : Լոմս Պետրոս մեզի կըսէ՝ թէ արդար ժողովուրդը սեփական ժողովուրդ մըն է , աշխարհիս մնացածներէն զատված , տարբեր սերմէ ու սերունդ :

Արդ տեսայ երազիս մէջ որ երկու մարդիկ կը դռնէն ներս մտան . ու ահա՛ մտածնուն պէս այլակերպեցան , ու անանկ հանդերձ վրանին հաղան որ ոսկիի պէս կը փայլէր : Այլին ևս որ քնարներով ու թագերով իրենց դէմը ելան , ու անոնք անոնց տըւին . քնարները անոնցմով գովաբանութիւն ընելու , ու թագերը պատուոյ նշան ըլլալու : Ընկէ ետեւ երազիս

դէ առջ եկած : Արոնք իրենց վրայ արգարութիւն չեն տեսնար , այլ հեզ և խոնարհ և նուաստ են իրենց աչքերուն առջևը . Ճշմարտութեան Ռանէն ծնած ու Ճշմարտութեան Հոգիէն վերանորոգված՝ Հիսուսի Ճշմարտութիւնը կը նդունին ու կը սիրեն : Իրմով կը փառաւորին ու իր արգարութիւնովը կը պարծենան , քսնզի իրմով եղած են իրենք Աստուծոյ արգարութիւն . անոր արգարութիւնն է իրենց փրկութեան պատմութեանը , ու Աստուծոյ արքայութեանը իրենց իրաւունքը : Աս Ճշմարտութիւնովս կը պահպանին , աս Ճշմարտութիւնովս իրենց կեանքը ու ընթացքը կը կարգադրեն , ու աս Ճշմարտութիւնը ամուր կը բռնեն իրենց կեանքին մէջ ու կը պահեն իրենց մահուանը : Այս պէս Ճշմարտութեան հաւատքին մէջը ապրելով ու մեռնելով՝ Պողոսի հետ կը համարձակին ըսել , Հաւատքը պահեցի , ու ասկէ ետեւ կայ կը մնայ ինծի արգարութեան պսակը , որն որ Հիսուս դառնակսկիծ ցաւերով ինծի համար ստացաւ ու ձրիապէս պիտի շնորհէ ինծի : Այլ Տէր՝ իմ հաւատքս թող մտեցունէ ան տեսարանը՝ ու իմ յոյսս թող փափաքի ան ժամուն որ պիտի ըսես , Ատիրքու Տէրոջդ ուրախութեանը :

մէջը լսեցի որ Վաղաքին բոլոր զանգակները կրկին չալվեցան ուրախութեան համար , ու որ անոնց ըսվեցաւ . Ստէք ձեր Տէրոջը ուրախութեանը . Սաղ. ին. 23 : Լսեցի ևս որ ան մարդիկն ալ բարձր ձայնով կը գոչէին ըսելով . () րհնեալ բարձրացեալ և փառաւորեալ է ան որ աթուին վրայ կը նստի , ու Վառնը , յաւիտեանս յաւիտենից . Յայտ . Է . 13 :

Լըդ՝ մարդիկը ներս առնելու համար դուռները բացվելուն պէս , անոնց ետևէն ներս նայեցայ , և ահա արեգակի պէս կը ճառագայթէր քաղաքը . փողոցներն ալ ոսկիով յօրինված էր , և անոնց մէջը կը պրտըտէին շատ մարդիկ՝ գլուխներնին թագ հագած , ու ձեռքերնին արմուկնի բռնած և ոսկեղէն քնար , փառաբանութիւն երգելու անով : Կային հոն նաև անոնցմէ ալ որ թևեր ունէին , ու ամէնը միաբան անդադար կը գոչէին ըսելով , Սուրբ Սուրբ Սուրբ է Տէր : Եսկից ետքը դուռները գոցեցին , որն որ երբոր տեսայ , փափաքեցայ որ ես ինքնս ալ անոնց մէջը ըլլայի :

Հիմայ երբոր ամէն աս բաներուն վրայ կը մտածէի , գլուխս դարձուցի ետիս նայելու , ու տեսայ որ Տգիտութիւնը Վետին եզերքը

եկեր էր . բայց ինքը շուտով դիմացը անցաւ ,
 և ան ալ մէկալ երկու մարդոցը քաշած դըժ-
 ուարութեանը կէսն ալ չի քաշելով : Վանգի
 անանկ պատահեցաւ որ անատենը ան նոյն տե-
 ղը Ունայնայոյս անուէնով լաստավար մը կար
 որ իր լաստովը դիմացը անցուց զանիկա * .
 ասանկ ինքն ալ մէկալ տեսածներուս պէս
 բլուրն՝ ի վեր Վաղաքին՝ Վուռը ելաւ . միայն
 թէ ինքը մինակ եկաւ հոն , ու ամենեւին քա-
 ջալերութիւն մը տըւող մէկը չի պատահեցաւ
 իրեն : Արբոր ասանկ Վրանը առջևը ելաւ՝ ա-
 նոր վրայի գրվածքին նայեցաւ ու սկսեց չա-
 լել , կարծելով թէ շուտով թոյլտուութիւն
 պիտի ըլլայ իրեն ներս մտնալու . բայց դրանը

* Ընդունայն յոյսը միշտ յիմարներուն սրտին մէ-
 ջը կրճնակի , ու միշտ պատրաստ է տգէտներուն օգ-
 նելու : Տգիտութիւնը իր վախճանին անոր կարօ-
 տացաւ ու գտաւ զանի : Ընիկա իր կեանքին մէջը իր
 ընկերն էր , ու չի պիտի ձգէ զինքը իր մահուան ժա-
 մուն : Արտեսնաք որ Տգիտութիւնը իր մահուանը
 ոչ կնճիռներուն էր , ոչ վախեր՝ երկբայութիւններ՝
 ու տրտմութիւններ , ոչ թշնամիէ երկիւղ , հապա
 ամէն բան հանդարտ ու խաղաղ էր . Ունայնայոյսը
 իր լաստավարն էր , ու ինքը՝ ինտոր որ կըսվի՝ գառ-
 նուկի մը պէս մեռաւ : Բայց ասանկ գառները թէ որ
 տեսնային Ունայնայոյսը զերեւը գետէն անցունելէն
 ետև իրենց պատահելիքը , առիւծի պէս պիտի գո-
 չէին :

վրայէն նայող մարդիկը հարցուցին իրեն ,
 Թէ՞ Ո՛ւրկից կուգաս դուն , և ի՞նչ կուզես ու
 նենալ : Պատասխան տրւաւ մարդը . Ես թա
 գաւորին առջևը կերայ ու խմեցի , ու ինքը
 մեր փողոցներուն մէջը սորվեցուց . 'Վ . Վ . Ժ .
 26 : Ընտանիք անոր Վ կայականը ուղե
 ցին , որ ներս երթան թագաւորին ցուցնեն
 անիկա . այսպէս ինքը ձեռքը ծոցը խոթեց ու
 կրփնտրուէր , բայց բան մը չի գտաւ : Ընտ
 տեն մէկալները ըսին . Վ կայական չունիս .
 բայց մարդը ամենեւին մէկ խօսք մը պատաս
 խան չի տրւաւ : Ուստի գացին թագաւորին
 պատմեցին , բայց ան չուղեց վար իջնալ ա
 նիկա տեսնալու , հապա Վրիստիանոսը ու
 Յուսալիցը քողաքը տանող ան երկու Վուսա
 ւորներուն հրաման ըրաւ՝ որ դուրս ելլան բըռ
 նեն Տգիտութիւնը ու անիկա ձեռքերէն ու ոտ
 քերէն կապեն ու մէկ դի տանին : Ուստի վե
 րուցին զանիկա ու օղին մէջէն տարին ան 'Վու
 ուր որ լուրին մէկ կողմը տեսեր էի , ու հոն
 անիկա ներս դրին : Ընտանիք իմացայ Թէ ին
 տոր որ Վործանման քողաքէն , անանկ մինչև
 անգամ երկինքին դունէն ալ դժոխքը ճամբայ
 կար : Ըսանկ քունէս արթընցայ , ու ահա ե
 րազ է եղեր տեսա՞ս :

892.9 B88

0

